


ISSN 1829-4340

# ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ

# X

# ՀԱՐՑԵՐ





01  
2h-86  
h2.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 10

5195

Նվիրվում է ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի  
ծննդյան 60-ամյակին



YEREVAN

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

**ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ**

(Периодический сборник научных статей)

№ 10

*Посвящается 60-летию академика Рубена Сафрастяна*

Ереван  
Издательство ЕГУ  
2015

YEREVAN STATE UNIVERSITY

**PROBLEMS OF ORIENTAL STUDIES**

(scholarly periodical journal)

№ 10

*Dedicated to the 60<sup>th</sup> birthday anniversary of the full  
member of ANAS Ruben Safrastyan*

YEREVAN  
YSU PRESS

2015



Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Ժողովածուն հրատարակվում է «Գուրգեն Մելիքյանի  
Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»  
հովանավորությամբ**

**Ժողովածուի 10-րդ համարը խմբագրել և հրատարակության  
և պատրաստել Ռուբեն Մելքոնյանը և  
Վահրամ Տեր-Մաթևոսյանը**

Խմբագրական խորհուրդ՝	
Մելիքյան Գուրգեն -	բ. գ. թ., պրոֆեսոր (նախագահ)
Ասատրյան Գառնիկ -	բ.գ.դ., պրոֆեսոր
Խաչիկյան Մարգարիտա -	բ.գ.դ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ -	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Կարաբեկյան Սամվել -	բ.գ.թ., դոցենտ
Հովհաննիսյան Լավրենտի -	բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Մելքոնյան Ռուբեն -	բ.գ.թ., դոցենտ (համարի պատասխանատու)
Ոսկանյան Վարդան -	բ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն -	պ.գ.դ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր -	պ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆրաստյան Ռուբեն -	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Տոնիկյան Սոնա -	բ.գ.թ., դոցենտ

© ԵՊՀ հրատ., 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ ..... 7

Անուշ Հովհաննիսյան

«ԱՐՏՈՆՅԱԼ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ» (HAYRIYE  
TÜCCARLARI) ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ

«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱՑՄԱՆ»  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(19-րդ դարի սկզբին օսմանյան կայսրությունում  
թուրք/մուսուլման ձեռներեցությունը խթանելու փորձի  
շուրջ) ..... 17

Կարոլինա Մահակյան

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՇՐՋԱՆՆԵՐԻ (ԿԻԼԻԿԻՍՅԻ) ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄԸ  
(1865-1867 թթ.) ..... 51

Ռուբեն Մելքոնյան

ԽՍՀՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԹՈՒՐՔԻՍՅԻ  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ  
ՈՐՈՇ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ  
(1945-1965 թթ.) ..... 65

Վարուժան Գեղամյան

«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԴԸ».  
ԱՆՁԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ԵՎ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ  
ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԻՍՅԱՆՈՒՄ 1938-1950 թթ. .... 76



**Վահրամ Տեր-Մաթևոսյան**

ՁԱՆԳԱՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ..... 97

**Լևոն Հովսեփյան**

ԹՈՒՐԲԻԱ-ՀՈՒՆԱՍՏԱՆ ՈՒԺԱՅԻՆ  
ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ..... 138

**Ալեքսանդր Մաֆարյան**

ՁԻՅԱ ԳՅՈՔԱԼՓԸ՝ ԹՈՒՐԲԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ..... 150

ՌՈՒԲԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ..... 175

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՇՌԱՍԱՆՔՆԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 177

**ՀՀ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ Է. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ  
ՈՒՂԵՐՁԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ  
60-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Ջերմորեն շնորհավորում եմ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի տնօրեն, ՀՀ Գիտությունների ազգային ակադե-  
միայի ակադեմիկոս, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր և  
հասարակական գործիչ Ռուբեն Մաֆրաստյանին՝ ծննդյան  
60-ամյակի կապակցությամբ և ողջունում այդ առթիվ «Արևե-  
լագիտության հարցեր» գիտական պարբերականի հատուկ  
համարի լույս ընծայումը:

Ռ. Մաֆրաստյանը պատվավոր տեղ է զբաղեցնում հայկա-  
կան արևելագիտական դպրոցի ճանաչված անունների շար-  
քում: Նա ոչ միայն այդ դպրոցի արժանի սանն ու ավանդույթի  
շարունակողն է, այլև իր անգնահատելի նպաստն է բերել Հա-  
յաստանում արևելագիտության, մասնավորապես թուրքագի-  
տության զարգացման գործում: Ռ. Մաֆրաստյանի հեղինա-  
կած բազմաթիվ մենագրությունները և աշխատությունները  
ծանրակշիռ ներդրում են հայ արևելագիտական շտեմարա-  
նում: Ինձ համար, որպես Հայաստանի արտգործնախարարի,  
կրկնակի հաճելի է վեր հանել Ռ. Մաֆրաստյանի կենսագրու-  
թյան այս կողմը, քանի որ Արտաքին գործերի նախարարության  
աշխատակիցների շարքում քիչ չեն նրա կողմից դասավանդ-  
ված և նրա աշխատություններով կրթված մասնագետները:

Ուրախությամբ կարող եմ արձանագրել, որ Ռուբեն Մաֆ-  
րաստյանի գործունեության շնորհիվ առավել սերտացել է  
Արևելագիտության ինստիտուտի և Արտաքին գործերի նախա-  
րարության միջև ավանդաբար առկա ակտիվ համագործակ-  
ցությունը:



ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը բարձր է գնահատում Ռ. Սաֆրաստյանի ղեկավարած Արևելագիտության ինստիտուտի կողմից իրականացվող բարձրորակ աշխատանքը: Աշխարհաքաղաքական ներկա վայրիվերումների, հարավփոխոխ միջազգային հարաբերությունների արդի դարաշրջանում հատկապես խիստ է զգացվում ճշգրիտ գնահատականի և վերլուծության անհրաժեշտությունը:

Ռ. Սաֆրաստյանն իր մասնագիտական ավունով, եռանդով և աշխատասիրությամբ օրինակ է ծառայում արևելագետի մասնագիտական ճանապարհն ընտրած հազարավոր երիտասարդ գիտնականների և ուսանողների համար: Արևելագիտական խոր գիտելիքները, լեզվագիտական և պատմագիտական բարձր պատրաստվածությունը և հետազոտական ու վերլուծական անվիճելի կարողությունները Ռ. Սաֆրաստյանին թույլ են տվել հայ արևելագիտական դպրոցը մեծ պատվով ներկայացնել արտերկրում, տարբեր գիտական և կրթական շրջանակներում:

Գիտությանն ու հայրենիքին անմնացորդ նվիրվածություն ունեցող Ռուբեն Սաֆրաստյանին՝ ստեղծագործական բուռն ծաղկման շրջանում գտնվող հոբբեյարին, մաղթում եմ բեղուն գործունեություն, բազում նոր գաղափարների ձեռնարկում և քաջառողջություն՝ նույն նվիրումով և եռանդով դրանք կյանքի կոչելու համար:

**Հարգանքով՝**

**ՀՀ արտաքին գործերի նախարար  
Էդվարդ Նալբանդյան**

**ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻ ԵՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ  
ՈՒՂԵՐՁԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ  
60-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հարգարժան հոբբեյար,

Սիրելի Ռուբեն Սաֆրաստյան,

Ձեր հոբբեյանական տարեդարձն առիթ է՝ վերհիշելու և վերաբարձնորելու այն կարևոր դերը, որ խաղացել էք հայրենի գիտության ու կրթության զարգացման, մեր պետության արտաքին քաղաքականության որոշ ուղղությունների գիտատեսական հիմքերի մշակման գործում: Երևանի պետական համալսարանի ողջ կոլեկտիվի և ուսանողության անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ հոբբեյանական տարեդարձի առթիվ ու բարեմաղթում քաջառողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ և ամենայն բարին: Տարեդարձն առիթ է նաև՝ արտահայտելու հպարտությունս առ այն, որ ի դեմս Ռուբեն Սաֆրաստյանի՝ հայ գիտական հանրույթն ունի բազմաշնորհ գիտնական, խորաթափանց հետազոտող, գիտական գործի հմուտ կազմակերպիչ և իր անձի մեջ լուսավոր կերպար պարունակող, հայրենասեր, բարոյական անհատականություն:

Ակներև է, որ գիտական ստեղծագործության փայլուն ունակությունները Ձեզ տրվել են ժառանգաբար. մինևույն ժամանակ չափազանց ուրախալի է, որ Ձեր գիտական գործունեությունը հատկանշվում է ոչ միայն ստեղծագործական արժեքավոր արդյունքներով, այլև նշված ունակությունները կրտսեր գործընկերներին և սովորողներին փոխանցմամբ: Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատողից մինչև ինստիտուտի տնօրենի



պատասխանատու պաշտոնն ստանձնելն ապահովվել է Ձեր տքնաջան ու նվիրված աշխատասիրության, աշխատանքի յուրովի ոճի ու գիտական սկզբունքայնության, այլև մարդկային բարձր ու գովելի հատկանիշների հաջող համադրության շնորհիվ: Հիրավի բարի համբավ ու հեղինակավոր անուն կերտելու օրինաչափ ու բարոյական ճանապարհը սա է, և շատ կփափագենք, որ նման դեպքերն ընկալվեն որպես օրինաչափություն գիտակրթական լայն հանրայթի կողմից: Միաժամանակ պետք է հատուկ նշեմ, որ հեղինակավոր գիտնական դառնալու դժվարին զառիվերը հաղթահարելիս Ձեզ առաջնորդել է ոչ թե փառքի ու հեղինակության հասնելու մղումը, այլև աշխատանքն ինքնին, ավելին՝ այդ աշխատանքն ազգին ծառայեցնելու բարձր գնահատելի մոտիվը:

Ավելի քան երեսունհինգամյա ստեղծագործական աշխատանքի արդյունքում հայ արևելագիտական ու հայագիտական միտքը հարստացրել էք Թուրքիայի պատմության և արտաքին քաղաքականության, Հայոց ցեղասպանության ուսումնասիրման հարցերին նվիրված մեծարժեք աշխատություններով, Ձեր ունակությունները հաջողությամբ հանդես եք բերել նաև մեր երկրի արտաքին քաղաքական խնդիրների լուծմանն ունեցած մասնակցությամբ՝ Հայաստանի Գերագույն Խորհրդի միջազգային հարաբերությունների գծով ավագ փորձագետի, ՀՀ Նախագահի աշխատակազմի վերլուծական բաժնի վարիչի տեղակալի, Բոննում ՀՀ դեսպանության խորհրդականի պարտականությունները կատարելիս:

Ձեր բազմամյա գիտական, մանկավարժական, պետական ու հասարակական գործունեության բոլոր շրջաններում մշտապես ամուր եք պահել կապը Ձեր համալսարանի՝ Մայր

բուհի հետ, որտեղ դասավանդում եք և որի պրոֆեսորի կոչումը հպարտությամբ կրում եք: Ուրախ կլինենք Ձեզ երկար տարիներ տեսնելու Համալսարանում դասավանդելիս, Ձեր գիտելիքներն ու հմտությունները, դավանած բարձր արժեքները սովորողներին փոխանցելիս:

Ձեր վաստակաշատ ստեղծագործական աշխատանքի տարիներին ստացած պարգևները՝ «Մովսես Խորենացի» մեդալը, պետական, գերատեսչական և այլ պարգևները, խոսուն վկայությունն են մեր երկրի պետական, հասարակական ու գիտակրթական շրջանակների կողմից Ձեր հանդեպ տածվող մեծ հարգանքի, սիրո և վստահության:

Եվս մեկ անգամ շնորհավորելով Ձեր նշանակալի տարեդարձը՝ մաղթում եմ, որ լինեք առողջ, երջանիկ, կորովի, ստեղծագործական ավյունով լեցուն ու հաջողակ:

**ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,  
պրոֆեսոր Ա. Հ. Միմոնյան**



## ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՂՈՐ ՈՒԺԸ

### (անվանի թուրքագետ Ռուբեն Արամի Սաֆրաստյանի ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյա հորեյանների կապակցությամբ)

Ամեն մի ժողովրդի անցած քաղաքակրթական ուղի ձևավորվել է դարերի ընթացքում, սերունդների անդուլ ու քրտնաջան աշխատանքի, մաքառումների ու անմնացորդ նվիրումների շնորհիվ: Այդ ճանապարհն ազգերն ակոսել են ինչպես հավաքական, այնպես էլ անհատական ջանքերի գործադրմամբ: Հաճախ յուրաքանչյուր անհատ, տվյալ դեպքում՝ անհատականություն, այդօրինակ ուղեգիծը թողել է ժառանգականության հզոր ուժով՝ իր ծնողներից ու պապերից անմիջականորեն ստանձնելով ազգին իր Բաժին պարտքը տալու պատրաստակամությունը:

Այդ իմաստով տեղին է հիշատակել խորհրդային տարիներին հայ արևելագիտական դպրոցի կարևորագույն բնագավառներից մեկի՝ թուրքագիտության ոլորտի ռահվիրաններից Արամ Սաֆրաստյանին, ով հայագետների սեղանին դրեց Հայաստանի ու հայերի մասին թուրքական աղբյուրներում առկա նյութերի ծանրակշիռ ժողովածուները՝ դրանով իսկ ուսումնասիրողներին հնարավորություն ընձեռելով հաղորդակից դառնալու թուրքալեզու բազմաթիվ եզակի սկզբնաղբյուրների: Ուստի պատահական չէ, որ իմ սերնդակիցների համար ուսանողական ու ասպիրանտական տարիներին Սաֆրաստյան եզակի ազգանունն անմիջապես հիշեցնում էր մեծ թուրքագետին: Հատկանշական է, որ ով առիթ էր ունենում արդեն ծանո-

թանալու նրա արժանավոր թոռանը՝ նույն դժվարին ու հույժկարևոր բնագավառի հետազոտական ուղին բռնած Ռուբեն Սաֆրաստյանին, առանց հապաղելու փորձում էր պարզել ավագ Սաֆրաստյանի հետ Ռուբենի ազգակցական կապը: Որպես կանոն, իրականությունն իմանալուց հետո որոշակի բավարարվածություն էր ապրում ինչպես հարցի հեղինակը, այնպես էլ պատասխան տվող երիտասարդ Սաֆրաստյանը:

Անցան տարիներ, և Ռուբեն Սաֆրաստյանն անցավ իր ինքնուրույն ու ինքնատիպ ուղին, դարձավ Հայաստանում բուրքագիտական դպրոցի ճանաչված դեմքերից, Հայոց ցեղասպանության պատմության լավագույն ու խորագիտակ մասնագետներից մեկը: Շատերն այլևս Ռուբենին վերոհիշյալ ավանդական հարցը չէին տալիս: Բայց ոչ թե այն պատճառով, որ թոռան ճանաչումը «սովերել» էր պապի վաստակը, այլ բորբին բերել էր նույն համոզմանը՝ ժառանգականության ուժի կարևորության գիտակցությանը:

Ռուբեն Արամի Սաֆրաստյան գիտնականի ու ակտիվ հասարակական գործչի անցած ուղին պատիվ է բերում հայոց գիտությանը, հպարտության զգացում փոխանցում նրա աշխատանքային ընկերներին ու մեր ժողովրդի կյանքում կենսական նշանակություն ունեցող հարցերի շուրջ նրա պարզաբանումներին մշտապես հետևող բազմահազար հայրենակիցներին:

Ջերմագույն շնորհավորանքներով ու նորանոր ձեռքբերումների մաղթանքներով՝

**Աշոտ Մելքոնյան**

**Պարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

**ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս**

**ՀՀ ԳԱԱ Պարմության ինստիտուտի տնօրեն**



## ՌՈՒՔԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ.

### ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Ռուբեն Սաֆրաստյանին գիտեմ դեռ ուսանողական տարիներից: Պետք է նշեմ, որ նա այն ուսանողներից էր, որոնք անգամ այդ տարիքում, իրոք, առանձնանում, տարբերվում էին ուրիշներից իրենց լրջախոհությամբ: Իմ հիշողության մեջ հատկապես տպավորվել է այն, որ Ռուբենը միշտ մտահոգ էր թվում, սակայն իր մտահոգությունները ոչ թե երիտասարդական առօրյայի, կամ կենցաղային կյանքի մտահոգություններ էին, այլ ապագա գիտնականի մտահոգություն, այսինքն՝ աշխարհին մի փոքր այլ կերպ նայելու, աշխարհը, կյանքը, իրականությունը ճանաչելու, հասկանալու և վերլուծելու վաղաժամ ձգտում ու ջանք: Չափազանցրած չեմ լինի եթե ասեմ, որ արդեն այդ ժամանակ ինձ համար պարզ էր, որ նա ապագայում խոշոր գիտնական է լինելու: Այսօր, արդեն, տարիներ անց, ինձ համար շատ ուրախալի և, միևնույն ժամանակ, հետաքրքիր մի զգացողություն է, երբ տեսնում եմ, որ իր լրջախոհությամբ աչքի ընկնող ուսանող Ռուբեն Սաֆրաստյանը դարձել է թուրքագիտական մի ամբողջ դպրոցի ղեկավար ու հասել գիտական նշանակալից բարձունքների:

Ռուբեն Արամի Սաֆրաստյանի գիտական գործունեությունը իր կարևոր հետազոտումներն ունի մեր արևելագիտության ասպարեզում: Նրա գիտական ձեռքբերումները, թուրքագիտական խոր և հանգամանալից ուսումնասիրությունները իրենց գիտական և քաղաքական կարևորությամբ ու նշանակությամբ վաղուց արժանացել են գիտական, քաղաքական և հասարակական գրեթե բոլոր շերտերի համընդհանուր բարձր գնահատա-

կանին: Ես ուզում եմ սակայն, հատուկ շեշտել Ռուբեն Սաֆրաստյանի նաև բազմաբեղուն մանկավարժական գործունեությունը հատկապես ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում, որտեղ մեծանուն գիտնականը դասավանդում է արդեն երկար տարիներ: Սաֆրաստյան մանկավարժը ևս իր մնայուն և արժանի տեղն ունի այս ասպարեզում: Իր դասավանդած առարկաները, իր վարած դասընթացները միշտ էլ աչքի են ընկել իրենց հրատապությամբ և արդիականությամբ: Հարկ է շեշտել, որ Սաֆրաստյանի գիտական ու մանկավարժական գործունեությունը ընթացել է միասնաբար, դրանք փոխադարձաբար լրացնելով միմյանց՝ էականորեն նպաստել են թուրքագիտության զարգացմանը: Մեծատաղանդ գիտնականի մասնագիտական ձեռքբերումները դարձել են դասավանդվող առարկաների առանցքը, դրանց հաղորդելով արդիական շունչ և հազորակից դարձնելով ուսանողներին արդիական գիտությանը: Նաև այդ հանգամանքի շնորհիվ է ձևավորվել հայ թուրքագետների մի քանի սերունդների գիտական օբյեկտիվ աշխարհայացքը որոշակի խնդիրների նկատմամբ:

«Արևելագիտության հարցեր» գիտական հոդվածների պարբերական ժողովածուի 10-րդ հոբեյանական և արտահերթ հատորի հրատարակումը ուրախալի զուգադիպությամբ համընկավ Ռուբեն Սաֆրաստյանի 60-ամյակի հետ: Խմբագրական խորհրդի որոշմամբ այն նվիրվում է այդ կարևոր տարեդարձին: Անսքող ուրախությամբ և հպարտությամբ եմ ուզում նշել, որ ժողովածուում տեղ գտած հոդվածների գերակշիռ մեծամասնությունը հեղինակել են Ռուբեն Սաֆրաստյանի աշակերտները, ինչը նաև նրա ստեղծած գիտական դպրոցի խոսուն ապացույցներից է: Հոդվածներում արծարծված պրոբլեմատի-



կան աչքի է ընկնում իր թարմությամբ, արդիականությամբ, իսկ հողվածագիրները՝ իրենց վերլուծական բարձր ունակությամբ:

Միրելի Ռուբեն, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ քո ծննդյան 60-ամյակը, մաղթում եմ առողջություն, անձնական և մասնագիտական հաջողություններ: Քո ուղին և՛ որպես մանկավարժի, և՛ որպես գիտնականի եղել է բեղուն, ազգօգուտ, արգասավոր և ռդենշային: Վստահ եմ, որ այդ ուղին դեռ երկար պետք է շարունակվի՝ ի փառս հայ գիտության և մասնավորապես հայկական արևելագիտության դպրոցի զարգացման:


**ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկան,  
ՀՀ վաստակավոր մանկավարժ, պրոֆեսոր  
Գուրգեն Մելիքյան**

**«ԱՐՏՈՆՅԱԼ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ» (HAYRIYE  
TÜCCARLARI) ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ  
«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱՑՄԱՆ»  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**(19-րդ դարի սկզբին օսմանյան կայսրությունում  
թուրք/մուսուլման ձեռներեցությունը խթանելու փորձի  
շուրջ)**

*Քանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Սելիմ III և  
Մահմուդ II, բարեփոխումներ, բերաթ, ոչ մուսուլման «եվ-  
րոպական» վաճառականներ, արտոնյալ մուսուլման «հայ-  
րիյե» վաճառականներ, հարկային խտրականություն,  
տնտեսության թուրքացում*

19-րդ դարի վերջի – 20-րդ դ. սկզբի Օսմանյան կայսրության տնտեսությանը նվիրված արևմտյան, խորհրդային/ռուսական, թուրքական ամենատարբեր պատմագիտական ուղղությունները ներկայացնող՝ թե՛ ազատական, թե՛ ձախակողմյան, թե՛ ազգայնական հետազոտությունների գերակշռող մասում առկա են կարծրատիպ դարձած մտեցումներ ոչ թուրք բուրժուազիայի և նրա որոշակի «բացասական» դերի մասին օսմանյան կապիտալիզմի զարգացման բնագավառում: Այսպես, օրինակ, արդիականացման տեսության (Theory of Modernization) կողմնակից Չարլզ Իսավլին գտնում է, որ օսմանյան տնտեսության մեջ առկա «էթնոկրոնական աշխատանքի բաժանումը»՝ երբ առևտրով զբաղվում էին ոչ մուսուլմանները, պայմանավորում էր կայսրության մուսուլման բնակչության





այն «դառը մտավախությունը», որ երկրի տնտեսական զարգացմանն ուղղված թանձրմաթյան բարեփոխումներից շահում են միմիայն օտարերկրացիները և ազգային փոքրամասնությունները<sup>1</sup>: «Կախվածության տեսության» կողմնակիցները (Dependancy theory) դիտարկում են թուրքերի ազգային տնտեսությունն ստեղծելու ջանքերը որպես հակազադուրային պայքար՝ ընդդեմ արևմտյան իմպերիալիզմի և տեղական կոմպրադորական բուրժուազիայի: Հայերի և հույների տնտեսական հաջողությունները, նրանց կարծիքով, ինչ-որ ձևով «դրդեցին» թուրքերին դիմել բռնությունների<sup>2</sup>: Ֆերոզ Ահմադն էլ իր հերթին գրում է, որ ոչ մուսուլմանական տնտեսական էլիտան, բացի հրեականից, լինելով իր բնույթով կոմպրադորական՝ սեփական շահերը կապել էր բացառապես Եվրոպայի հետ և նպաստում էր օսմանյան պետության թուլացմանը<sup>3</sup>: Խորհրդային պատմագրությունը, որի տեսակետներից շատերը այս հարցում ժառանգել է նաև արդի ռուս թուրքագիտությունը<sup>4</sup>, ելնելով մարքսիստական հակաիմպերիալիստական և դասա-

<sup>1</sup> Չզիսես ինչու Իսամին անտեսում է հարուստ փորձ ունեցող ոչ թուրք մուսուլման-վաճառականներին՝ արաբներին, պարսիկներին, տե՛ս Isawwi Ch., *An Economic History of the Middle East and North Africa*, New York: Columbia Univ.Press, 1982, p. 89.

<sup>2</sup> St' u Ergil D., "A Reassessment: The Young Turks, their Politics and Anti-Colonial Struggle", in *Balkan Studies*, vol.16, Thessaloniki, 1975, p. 28.

<sup>3</sup> St' u Ahmad F., "Unionist Relations with Greek, Armenian and Jewish Communities of the Ottoman Empire, 1908-1914", in *Christians and Jews in the Ottoman Empire: The Functioning of a Plural Society*, ed. Benjamin Braude and Bernard Lewis, vol.1, New York: Holmes & Meier, 1982, pp.401-443; տե՛ս նույնի *The Making of Modern Turkey*, Routledge: Taylor & Francis Group, L-NY 1993, digital printing 2003, p. 44.

<sup>4</sup> St' u, օրինակ Иванов С., *Османская империя в мировой экономической системе* (вторая половина XIX – начало XX века). – СПб, 2005.

կարգային պայքարի դրույթներից, նույնպես շեշտադրում էր ոչ մուսուլմանական բուրժուազիայի կոմպրադորական էությունը և հետևաբար, թուրք ժողովրդի՝ դրա դեմ պայքարելու «արդարացի իրավունքը»: Ըստ խորհրդային թուրքագետ Ա. Միլլերի՝ եվրոպական իմպերիալիզմը «այլանդակում էր» օսմանյան տնտեսությունը և խոչընդոտում երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Նա գրում է. «Նույնիսկ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թուրքերը չափազանց թույլ էին մասնակցում երկրում կապիտալիստական կացութաձևի զարգացմանը: Արդյունաբերական արտադրության մեջ, բանկային գործում, արտաքին և ներքին խոշոր առևտրում տիրապետում էին օտարերկրյա և այլազգի<sup>5</sup> կապիտալիստները: Աննշան էր նաև թուրք ազգի բանվորների թիվը: Այսպիսով, կապիտալիստական հասարակարգի հիմնական դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորումը օսմանյան ֆեոդալիզմի ընդերքում տեղի էր ունենում առանց թուրքերի ակտիվ մասնակցության»<sup>6</sup>: Համաշխարհային տնտեսության տեսության (Theory of World Economy) հետևորդները նշում են, որ փոփոխվող տնտեսական համակարգում կայսրության քրիստոնյա փոքրամասնությունները հաջողությամբ կարողացան գերիշ-

<sup>5</sup> «Այլազգի» (инонациональный) եզրը, որն անտեսում է քրիստոնյաների նույն օսմանյան պետության մաս լինելը այսօր էլ գերակշռում է ռուս հեղինակների աշխատություններում, մինչդեռ 1869 թ.-ին ընդունված այսպես կոչված «Ազգության օրենքը» սահմանում էր, զոնե պաշտոնապես, միասնական օսմանյան քաղաքացիություն, անկախ կրոնական կամ էթնիկ պատկանելիությունից, տե՛ս Bozkurt G., *Review of the Ottoman Legal System*, p. 128 <http://dergiler.ankara.edu.tr/dergiler/19/835/10563.pdf>

<sup>6</sup> Миллер А., «Турецкая революция и Мустафа Кемаль Ататюрк (Младотурецкая революция)», в кн. А. Ф. Миллер, *Турция: актуальные проблемы новой и новейшей истории*, Москва, 1983, с. 53.



խող դիրքեր գրավել օսմանյան տնտեսության մեջ՝ այդպիսով դառնալով Եվրոպայի հետ առևտրական հարաբերությունների աշխուժացման հիմնական շահառուները: Ներկայացնելով հայերին և հույներին որպես հաջողակ առևտրային միջնորդներ, Ռեշաֆ Քասաբան, օրինակ, անմիջապես հեռանում է «մեղմ» ձևակերպումներից և անվանում նրանց «խակական շահութատենչ բուրժուա» («profit-maximizing genuine bourgeois»)<sup>7</sup>:

Վերլուծելով մի շարք արևմտյան և հասկապես թուրք հեղինակների աշխատություններ՝ գերմանացի պատմաբան Հիլմար Կայզերը գալիս է այն եզրահանգման, որ հայերի դերն օսմանյան առևտրում պատկերելիս, նրանք, պատկանելով հանդերձ տարբեր պատմագիտական ուղղությունների՝ իրենց աշխատություններում կամա թե ակամա, ոչ քննադատաբար ընդունել են վաղ քսաներորդ դարի Գերմանիայի արտաքին գերատեսչության քաղաքական քարոզչամեթոդային կողմից ստեղծված «արտադրանքը»<sup>8</sup>: Այսօր էլ վերոհիշյալ հարցի նկատմամբ թուրք պատմագրության մեջ գերակշռող է այն ազգայնական մոտեցումը, որն անթաքույց կերպով արտահայտվել է դեռևս տասնամյակներ առաջ թուրքական պաշտոնական «հայազետների» կողմից. ոչ մուսուլմանները, իբր, Օսմանյան կայսրությունում ապահովված են եղել «արտոնյալ» պայմաններով, միակ տարբերությունը, որ եղել է թուրքերի և ոչ մուսուլմանների միջև, վերջիններիս զինապարտությունից ազատ լինելն էր: Հայերը, հույներն ու հրեաները, իբր, օգտվելով այդ ազատությունից, տիրել են կայսրության առևտրական ու տնտեսական ոլորտներին, մինչդեռ թուրքերը հաճախ պատե-

<sup>7</sup> Kasaba R., *The Ottoman Empire and the World Economy: The Nineteenth Century*, SUNY Series in Middle Eastern Studies, Albany: SUNY Press, 1988, p. 114.

<sup>8</sup> St' u Kaiser H., *Imperialism, Racism and Development Theories: The Construction of a Dominant Paradigm on Ottoman Armenians*, Gomidas Institute, Ann Arbor, Michigan, 1998, pp. 33-56.

քաղմաներում կորուստներ կրելով՝ «գրկվել» են տնտեսապես և քվաքանակով աճելու հնարավորությունից: «Կայսրության հիմնադրման համար միայն թուրքերն էին արյուն թափում, մյուս բոլոր քաղաքացիներն իրենց բոլոր ջանքերը ներդրել են կապիտալ կուտակելու, բարեկեցիկ ու խաղաղ կյանք վարելու համար»<sup>9</sup>:

Հայտնի է, որ օսմանահայ գործարար խավը համեմատաբար բարենպաստ պայմաններում հայտնվեց հատկապես Սեփիմ Երրորդ և Մահմուդ Երկրորդ սուլթանների կառավարման տարիներին և հետագայում Թանզիմաթի բարեփոխումների ժամանակաշրջանում կարողացավ առաջատար դիրքեր գրավել Օսմանյան կայսրության տնտեսական, կրթական-լուսավորչական և մշակութային բնագավառներում<sup>10</sup>: Թուրք պատմաբան Թիմուր Քուրանի կարծիքով, օսմանահայատակ քրիստոնյաների նման առաջխաղացումը պայմանավորված էր նրանց շնորհիվ «այլընտրանքային օրենքից» օգտվելու ար-

<sup>9</sup> St' u Koças S., *Tarih Boyunca Ermeniler ve Türk-Ermeni İlişkileri*, Ankara, 1967, s. 60.

<sup>10</sup> Հայերի սոցիալ-տնտեսական կացության և դերի մասին տե՛ս Յ. Գ. Մ. (Հարություն Մըրմյան), *Թուրքահայոց հին վաճառականություն և վաճառականք*, Կ. Պոլիս, 1908; Ջոհրապ Գ., «Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ», նույնի, Երկերի ժողովածու, հ. Գ, Երևան, 2002; Ղազարյան Հ., *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.*, Երևան, 1967; Համբարյան Ա., *Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ.*, Երևան, 2003; Դեյյան Վ., «Հայ առևտրական դասի մասնակցությունը առևտրի զարգացմանը Օսմանյան կայսրությունում (XIX դ.)», *Լրաբեր հասարակական գիտությունների*, № 4. 1985, էջ 60-67; Խառատյան Ա., «Կոստանդնուպոլսի հայ զաղթօջախը (XVIII դարի սկիզբ - 1923 թ.)», *Պատմա-բանասիրական հանդես*, 2009, № 2-3, էջ 23-45; Ստեփանյան Հ., *Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում*, Երևան, 2011; Инджикян О., *Буржуазия Османской империи*, Ереван, 1977; Jamgocyan O., *Les banquiers des sultans: Juifs, Francs, Grecs et Arméniens de la haute finance: Constantinople 1650-1850*, Paris: Les Editions du Bosphore, 2013; Der Matossian B., «The Armenian Commercial Houses and Merchant Networks in the 19th Century Ottoman Empire», in *TURCICA*, Issue # 39, Fall 2007, pp.147-174.



տոնությամբ<sup>11</sup> (“choice of law”), ինչը բացակայում էր մուսուլմանների պարագայում<sup>12</sup>: Սակայն արդյո՞ք օսմանյան սուլթաններն առևտրային արտոնություններ էին տրամադրում միայն քրիստոնյաներին և անտեսում թուրք/մուսուլման վաճառականներին:

Այս առումով ուշադրության է արժանի 19-րդ դարի սկզբներին օսմանյան պետության կողմից ստեղծված ձեռներեցության խթանմանն ուղղված հատուկ արտոնագրեր ունեցող վաճառականների ինստիտուտի հիմնադրումը: Այդ ինստիտուտը ենթադրում էր երկու տեսակի արտոնագրերի և, համապատասխանաբար, երկու կարգավիճակի տրամադրում. օսմանահպատակ ոչ մուսուլմանների համար «եվրոպական վաճառականներ» (Avrupa tüccarları), իսկ մուսուլմանների համար «արտոնյալ/բարենպաստ վաճառականներ» (Hayriye tüccarları): Ընդ որում, եթե ոչ մուսուլման վաճառականներին նման կարգավիճակ շնորհելը հետապնդում էր այդ թվում նաև նրանց գործունեությունը պետության կողմից արդյունավետ վերահսկելու և սուլթանական գանձարանը լցնելու նպատակ, ապա մուսուլման առևտրականներին տրվող արտոնությունները պետք է նպաստավոր պայմաններ ստեղծեին նրանց համար մրցակցելու եվրոպական և օսմանահպատակ քրիստոնյա ձեռներեցների հետ: Հարկ է նշել, որ չնայած զգալի չափի հասնող գրականության առկայությանը Hayriye tüccarları-ի ֆենոմենը դեռևս քիչ ուսումնասիրված և բաց թեմա է նշված ժամանակաշրջանին նվիրված պատմագրության մեջ<sup>13</sup>: Սույն հոդվա-

<sup>11</sup> Խոսքը վերաբերում է արտաքին առևտրի ոլորտում եվրոպական երկրների առևտրային կանոնադրություններից օգտվելու հնարավորության մասին:

<sup>12</sup> Kuran T., How the Islamic Law held back the Middle East: The long Divergence, p. 18 [https://www.fpri.org/docs/20110324.kuran\\_islamiclaw.pdf](https://www.fpri.org/docs/20110324.kuran_islamiclaw.pdf)

<sup>13</sup> Sté u Bağış A. I., Osmanlı Ticaretinde Gayrimüslimler /Kapitülasyonlar-Avrupa Tüccarları-Beratlı Tüccarlar-Hayriye Tüccarları/ (1750-1839), Ankara, 1983; Masters B., “The Sultan’s Entrepreneurs: The Avrupa tucçaris and the Hayriye tucçaris in Syria”, International Journal of Middle East Studies, vol.24,

ծում փորձ է արվում դիտարկել այդ ինստիտուտը որպես առավել լայն կոնտեքստի մի բաղադրիչ, այն է. Օսմանյան կայսրությունում կապիտալի ձևավորման առանձնահատկությունները և այդ կապիտալի գերակշիռ մասի բռնի փոխանցումը իրական տերերից նորաստեղծ թուրք/մուսուլման բուրժուազիային:

XVII-XVIII դարերում եվրոպական տերությունների հետ պատերազմներում Օսմանյան կայսրության ռազմական պարտությունները խթան հանդիսացան համալիր, այսպես կոչված «վանդակային բարեփոխումներ» (Մելիմ III բարեփոխումները) անցկացնելու համար: Դրանք սկիզբ դրեցին Օսմանյան կայսրությունում արևմտականացման գործընթացին: Այդ գործընթացն արագացվեց հետագայում սուլթան Մահմուդ II-ի ավելի բայնաձավալ և խորը բարեփոխումների շնորհիվ, ինչը հանգեցրեց Թանզիմաթի առաջին փուլի արևմտական բարեփոխումներին (1839-1853 թթ.)<sup>14</sup>: Դրան նախորդել էր 1838 թ. անգլո-թուրքական ազատ առևտրի մասին համաձայնագրի ստորագրումը (Balta Liman Antlaşması), որը, փաստորեն, եվրոպական կապիտալիզմի՝ օսմանյան շուկա ներթափանցումն ավե-

1992, pp.579-597; Artunç C., “The Protégé System and Beratlı Merchants in the Ottoman Empire: The Price of Legal Institutions”, Yale Univ. Working Paper, March 2013, pdf; Ulutaş S., “19. yüzyılın ilk yarısında kapitalist ticari ilişkiler”deki dönüşümün Tarsus’taki yansımaları (1839-1856)”, Tarih İncelemeleri Dergisi Cilt/Volume XXVII, Sayı/Number 2 Aralık/December 2012, s. 499-525; Kaymakçı S. S., “The Sultan’s Entrepreneurs, the Entrepreneurs’ Sultan: Beratlı Avrupa Tüccarı and Institutional Change in the Nineteenth Century Ottoman Empire (1835-1868)”, Boğaziçi University, 2013, pdf; Çiçek K., Hayriye Tüccarları: Osmanlı’da ekonomide ahbap çavuş ilişkileri <http://www.bugun.com.tr/hayriye-tuccarlari-haberi/1136765>; Balcı R., Hayriye Tüccarları, <http://www.sizinti.com.tr/konular/ayrinti/hayriye-tuccarlari-eylul-2015.html>; Şenel Ş., Osmanlılarda Ticaret Anlayışı ve Ticaret Teşkilatında Yeni Bir Yapılanma: Hayriye Tüccarı <http://www.tarih tarih.com/?Syf=26&Syz=382300>

<sup>14</sup> Բարեփոխումների մասին տե՛ս Петросян И., Петросян Ю., Османская империя (реформы и реформаторы), Москва, 1993.



լի հեշտացրեց: Արդյունաբերական հեղափոխության հենց սկզբից եվրոպական տերությունների համար սեփական արտադրանքը սպառելու նոր շուկաների և հումքի աղբյուրների կարիք առաջացավ: Առևտրական ներկայացուցիչներ Ֆրանսիայից, Անգլիայից և ապա այլ երկրներից աճող մասշտաբներով սկսեցին ներթափանցել Օսմանյան կայսրություն: Պատմականորեն, դրա իրավական հիմքերն արդեն իսկ գոյություն ունեին կապիտուլյացիաների ռեժիմի տեսքով<sup>15</sup>: XVIII դարի վերջում եվրոպական տերություններին միացավ նաև Ռուսաստանը: Օսմանյան կայսրությունում գործերը վարելու համար եվրոպական առևտրականները փնտրում և գտնում էին միջնորդների՝ որպես կանոն ոչ մուսուլմանների մեջ, մարդկանց, ովքեր գիտեն երկրում առևտուր անելու կանոնները, տեղական սովորույթները և տիրապետում են լեզուների՝ հույների, հայերի, հրեաների, լեանտացիների:

18-րդ դարի վերջին-19-րդ դարի սկզբին առևտրականությունն Օսմանյան կայսրությունում ներառում էր իր մեջ բազմաթիվ և բազմապիսի առևտրային համայնքներ, որոնց մեջ ներգրավված վաճառական խմբերն ու անհատները զբաղվում էին մեծածախ և մանրածախ, քաղաքային և գյուղական մանրավաճառ առևտրով, մասնակցում ամենաբազմազան շուկաներին և սեզոնային տոնավաճառներին և այլն<sup>16</sup>: Բազմաթիվ համքարություններ (esnaf) զբաղվում էին արհեստագործական ապրանքների արտադրությամբ, ինչպես նաև իրականացնում մանր ու միջին առևտուրը<sup>17</sup>:

<sup>15</sup> Կապիտուլյացիաների մասին տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 241:

<sup>16</sup> St' u Economic and Social History of the Ottoman Empire, 1300–1914, eds. Halil İnalcık and Donald Quataert, vol. II (The Age of Reforms), Cambridge: Cambridge University Press, 1997.

<sup>17</sup> Օսմանյան կայսրությունում համքարությունների մասին տե՛ս Гордлевский В., Из жизни цехов в Турции: к истории ахи. – Записки коллегии востоковедов при Азиатском музее, см. Гордлевский В., Избр. соч., 1960, т. 1,

Կազմակերպված խոշոր վաճառական դասը նշանակալից դեր էր խաղում օսմանյան առևտրի ոլորտում: Նշված ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության վաճառական այդ դասը կարելի է բաժանել երեք հիմնական առևտրային խմբերի: Առաջին խմբին են պատկանում օտարերկրյա առևտրականները, որոնք հայտնի են որպես “Müstemen”, այսինքն՝ օտար առևտրականներ: Երկրորդ խումբը, որի մեջ մտնում էին օսմանահպատակ ոչ մուսուլման առևտրականները, կոչվեցին «եվրոպական վաճառականներ» (Avrupa tüccarları) և վերջապես, մի առանձին խումբ էլ կազմում էին Օսմանյան կայսրության մուսուլման առևտրականները կամ “Hayriye”, այսինքն՝ «արտոնյալ, բարենպաստություն վայելող» վաճառականները: Նշենք սակայն, որ «եվրոպական» և «արտոնյալ» վաճառականները ինստիտուցիոնալացված չեն եղել մինչև 18-րդ դարի վերջը<sup>18</sup>:

Մինչև 19-րդ դարի սկիզբը օսմանյան միջազգային առևտրում հիմնականում գերիշխում էին արտասահմանյան վաճառականները, իսկ մուսուլման և ոչ մուսուլման օսմանյան վաճառականները վերահսկում էին ներքին առևտուրը: “Müstemen” վաճառա-

c. 276–286; Լույնի, “Дервиши Ахи Эврана и цехи в Турции”, Известия Академии наук СССР. VI серия, 1927, том 21, выпуск 7, с. 1171–1194 <http://www.mathnet.ru/links/cc51465c911b13e3aa1182dab963a6b5/im5513.pdf>; Olson R. W., “Jews, Janissaries, Esnaf and the Revolt of 1740 in Istanbul: Social Upheaval and Political Realignment in the Ottoman Empire”, Journal of the Economic and Social History of the Orient, Vol. 20, No. 2 (May, 1977), pp. 185–207 <http://www.artsmn.ualberta.ca/amcdouga/Hist323/autumn%202012/resources/janissaries%20and%20revolt%20of%201740.pdf>; Altıntaş A. M., “The World of Ottoman Guilds: The Issue of Monopoly/ Osmanlı Loncalarının Dünyası: Tekel Meselesi” History Studies, volume 2/3 2010 [http://www.historystudies.net/Makaleler /192349565\\_2%20Abd%C3%BClmennan%20M.%20Alt%C4%B1nta%C5%9F.pdf](http://www.historystudies.net/Makaleler /192349565_2%20Abd%C3%BClmennan%20M.%20Alt%C4%B1nta%C5%9F.pdf): Հայկական էսնաֆությունների մասին տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967; Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, Երևան, 2007, էջ 247–294:

<sup>18</sup> St' u Bağış A. I., Osmanlı Ticaretinde Gayrimüslimler /Kapitülasyonlar-Avrupa Tüccarları-Berath Tüccarlar-Hayriye Tüccarları/ (1750-1839), Ankara, 1983.



կանների միջազգային առևտրում գերիշխող դիրքը արդյունքն էր այն առևտրական արտոնությունների և հարմարությունների, որոնք նրանց էին տրվել նախկինում Օսմանյան կայսրության և եվրոպական պետությունների միջև կնքված կապիտուլյացիոն պայմանագրերի շնորհիվ<sup>19</sup>: Հետագայում, 19-րդ դարում, օսմանյան ոչ մուսուլման, մասամբ նաև մուսուլման վաճառականները ավելի ներգրավված դարձան արտաքին առևտրի մեջ, իսկ “Müstemen” առևտրականները սկսեցին հետաքրքրություն դրսևորել դեպի օսմանյան ներքին շուկան:

Եթե Օսմանյան կայսրությունը պատերազմում էր եվրոպական որևէ երկրի հետ, վերջինիս “Müstemen” վաճառականները դառնում էին “Harbi”<sup>20</sup> և որոշակի ժամանակով կորցնում արտոնությունները: “Müstemen” եզրը վավերագրերում առաջին անգամ ի հայտ եկավ 1740 թ.: Սակայն այն առավել լայն տարածում ստացավ օսմանյան արտաքին առևտրին առնչվող փաստաթղթերում Սելիմ III սուլթանի կառավարման տարիներին (1789-1807 թթ.): “Müstemen” առևտրականների իրավունքներն ու պարտականություններն ամրագրվում էին նրանց տրված ahidnâme-ներում (պաշտոնական արտոնագրեր): Համաձայն այդ արտոնագրերի նրանք ազատ երթևեկելու և նավարկելու իրավունք էին ձեռք բերում, բացի դրանից՝ նշված առևտրականներն ու նրանց ապրանքները պաշտպանության տակ էին առնվում ողջ կայսրության տարածքում, ինչպես նաև օսմանցիների կողմից վերահսկվող ծովերում: Նրանք ազատ-

<sup>19</sup> Կապիտուլյացիոն պայմանագրերի մասին առավել մանրամասն տե՛ս Boogert Maurits H van den and Kate Fleet (eds.), “The Ottoman Capitulations: Text and Context”, in *Oriente Moderno*, #22, Rome: Istituto per l’Oriente C. A. Nallino, 2003, pp. 575–727; Edhem E., “Capitulations and Western Trade”, in Suraiya Faroqhi (ed.) *The Cambridge History of Turkey*, Cambridge Univ. Press: Cambridge 2006, vol. 3, pp. 283–335.

<sup>20</sup> Առաջացել է “harb” «պատարազմ» բառից, այսինքն՝ նրանք դառնում էին “persona non grata”:

վում են բոլոր տեսակի հարկերից, բացառությամբ մաքսային տուրքերի: Միմյանց միջև ծագող վեճերը “Müstemen” վաճառականները կարող էին լուծել իրենց երկրների հյուպատոսական դատարաններում: Սակայն, օսմանահպատակների և օտարերկրյա վաճառականների միջև վեճերը սովորաբար լավում էին տեղական դատարաններում: Վիճող կողմերից մեկի իսլամադավան լինելն այդ նորմը պարտադիր էր դարձնում: Այն դեպքերում, որոնց վիճելի գումարը գերազանցում էր 4000 աքչեն գործի լուումը տեղափոխվում էր Ստամբուլում ստեղծված հատուկ ատյան (Arz odasi): Վաճառականի մահի դեպքում նրա ունեցվածքը, ապրանքներն ու դրամական միջոցները պետության պաշտպանության տակ էին առնվում իրավական ժառանգներին հանձնելու համար:

Մաքսային տուրքերը 18-րդ դարի վերջին սահմանված էին՝ 3% մուսուլման առևտրականների, 4% - ոչ մուսուլման առևտրականների և 5% - “Müstemen” վաճառականների համար: Այնուհետև մաքսային տուրքերը “Müstemen” առևտրականների համար իջեցվել էին մինչև 3%: Բացի դրանից, հետագայում՝ ազատ առևտրի մասին պայմանագրի ստորագրումից հետո (1838 թ. Մեծ Բրիտանիայի հետ, մեկ տարի անց՝ Ֆրանսիայի), նրանք լրացուցիչ հարկային արտոնություններ ստացան, օրինակ, ազատվեցին տարանցման հարկ (bac) և օսմանյան քաղաքներում մուտքի հարկ վճարելուց:

Աստիճանաբար, արտաքին և ներքին առևտրի աշխուժացման հետ մեկտեղ կայսրության հայ, հույն, հրեա վաճառականները նույնպես աշխատում են որոշակի արտոնություններ ձեռք բերել՝ ղյուրացնելու համար իրենց գործունեությունը: Սուլթանի անունից շնորհվող հատուկ արտոնագրերը «berat»-ները թույլ էին տալիս օսմանյան վաճառականներին արտաքին և ներքին առևտրին մասնակցել օտարերկրյա պաշտպանության ներքո, ինչպես դա անում էին “Müstemen” առևտրականները: “Berat” ձեռք բերած անձը կոչվում էր “beratlı” և կոչ-



ման հետ ստանում համապատասխան արտոնություններ<sup>21</sup>: Թուրք հետազոտող Ջիհան Արթունչը, ով մանրամասնորեն ուսումնասիրել է “beratlı” ինստիտուտը, նշում է, որ դրա ծագումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Օսմանյան կայսրության հետ դիվանագիտական կապեր հաստատող պետություններն աշխատում էին արտերկրայինության իրավունք (the status of extraterritoriality) ձեռք բերել իրենց ներկայացուցչություններում որպես թարգմանիչ աշխատող օսմանահպատակ քրիստոնյաների՝ դրագոմանների (dragoman) համար: Վերջիններս էլ օգտագործում էին ստացած արտոնագրերը միջնադարյան կամ սեփական առևտուր իրականացնելու համար: “Berat”-ը տրվում էր որոշակի ժամանակով, սակայն կարող էր երկարաձգվել: “Beratlı”-ն համարվում էր օսմանահպատակ, սակայն արտոնագրի առկայությունը թույլ էր տալիս նրան ազատվել կանոնավոր (harac), ոչ կանոնավոր (tekalif-i örfiyye) և բազմաթիվ արտակարգ հարկերից (avariz), որ ստիպված էին մուծել բոլոր քրիստոնյաները<sup>22</sup>:

Շուտով բերաթների վաճառքը դարձավ շահութաբեր բիզնեսի առարկա թե՛ դեսպանատների, թե՛ սուլթանական արքունիքի համար: Յուրաքանչյուր դեսպանատուն բերաթների տրամադրման որոշակի քվոտա էր ստանում՝ կախված տվյալ երկրի հետ օսմանյան պետության հարաբերությունների մակարդակից, տարբերվում էին նաև այս կամ այն երկրի ներկայացուցչության միջոցով ձեռք բերված արտոնագրերի գները: Բրիտանական և ֆրանսիական դեսպանատների տրամադրած բերաթները ամենաթանկն էին համարվում՝ դրանց արժեքը կարող էր հասնել մինչև 4000 և 5000 քուրուշ համապատասխանաբար<sup>23</sup>:

<sup>21</sup> Artunç C., “The Protégé System and Beratlı Merchants in the Ottoman Empire: The Price of Legal Institutions” Yale Univ. Working Paper, March 2013, pdf.

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 9:

Ինչպես գրում է Ջ. Արթունչը՝ Մեծ Բրիտանիայի հյուպատոսի տարեկան եկամուտը կազմում էր շուրջ 8000 քուրուշ, իսկ միայն բերաթների վաճառքից նա ստանում էր 12000 քուրուշ: Համեմատության համար Ջ. Արթունչը բերում է հետևյալ թվերը՝ մեկ արհեստավարժ աշխատողի տարեկան եկամուտը Օսմանյան կայսրությունում 1780-89 թթ. կազմում էր շուրջ 284 քուրուշ: Նա նաև նշում է, որ, օրինակ, մեկ բերաթի վաճառքը Հալեպում ծածկում էր հոլանդական հյուպատոսության կես տարվա ծախսերը<sup>24</sup>: Յուրաքանչյուր բերաթի վաճառքից կախված դրա գնի չափից, օսմանյան պետությունը գանձում էր 500-ից – 1000 քուրուշ գումար<sup>25</sup>: Չնայած բավականին բարձր գներին, բերաթների պահանջարկը շատ մեծ էր: Փորձելով տալ դրա բացատրությունը, Ջ. Արթունչը գրում է, որ հարկերից ազատվելն ամեննին էլ այն միակ հանգամանքը չէր, որ վաճառականների համար «հրապուրիչ» էր դարձնում բերաթների ձեռքբերումը: Նա նշում է դա պայմանավորող երեք հիմնական պատճառ. ա/ձեռնարկության ձևի ազատ ընտրություն, ինչպես նաև համատեղ ձեռնարկություններ հիմնելու հնարավորություն, բ/անձի և գույքի անձեռնմխելիություն, գ/ ժառանգական իրավունք<sup>26</sup>:

Արտոնագրերը ձեռներեց վաճառականներին հնարավորություն էին տալիս մուտք գործել միջազգային առևտրային ցանցեր, նոր տիպի նաև խառը դրամագլխով, ձեռնարկություններ ստեղծել: Բազմաթիվ հայ առևտրականներ, չգոհանալով եվրոպացիների ներկայացրած ապրանքների ընտրությամբ, իրենք կապեր հաստատեցին Եվրոպայի արդյունաբերական կենտրոնների և առևտրական ընկերությունների հետ: Նրանցից շա-

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 9-10: Հեղինակը ներկայացնում է նաև աղյուսակներ մանրամասնելով տարբեր երկրների հյուպատոսությունների կողմից վաճառված բերաթների քանակը, դրանց գները, գնորդ-վաճառականների թվերն՝ ըստ քաղաքների և այլն, տե՛ս նույն տեղում էջ 33-35:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 24:



տերը նույնիսկ հաստատվեցին եվրոպական քաղաքներում, գրասենյակներ բացեցին և մասնաճյուղեր հիմնեցին: Բրյուս Մասթերսը բերում է Գյուլբենգոլլուի (Գյուլբենկյան) օրինակը, որն իր որդիների հետ միասին հիմնադրեց առևտրային ընտանեկան վաճառատներ, գործուն ընկերություններ Օսմանյան կայսրությունում և այլ երկրներում<sup>27</sup>:

Իսլամը չի նախատեսում անձի և գույքի անձեռնմխելիության հասկացություն, բացակայում են նաև ժառանգական իրավունքի վերաբերյալ հստակ դրույթներ: Ու թեև քաղաքացիական վեճերը ոչ մուսուլման օսմանահպատակների պարագայում լուծվել են կրոնական համայնքի/միլլեթի ներսում, օսմանյան կարգը չի ապահովել ոչ մի անձի, այդ թվում և վաճառականների, նրանց ժառանգների և նրանց պատկանող գույքի պաշտպանվածությունը: Ավելին, օսմանյան իրավական պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ նույնիսկ մեծ վեզիրների, բարձրաստիճան պաշտոնյաների, մեծահարուստ ամիրաների և այլազան գույքը՝ կյանքի օրոք կամ մահից հետո ամբողջությամբ բռնագրավվել է, իսկ ժառանգները մնացել առանց գոյատևման միջոցների: Ընդ որում, դա արվել է առանց որևէ իրավական որոշման, միմիայն շեյխ ուլ իսլամի ֆեթվայով: Նման բռնագանձումները կոչվել են «müsadere» կամ «miri içün zabt», բառացիորեն՝ հանրային մարմնի կողմից կատարվող բռնագանձում<sup>28</sup>: Այդ իսկ պատճառով այլընտրանքային իրավական դաշտ մտնելու հնարավորությունը նույնպես գրավում էր բերաթների գնորդներին: Ինչպես տեսնում ենք, “beratlı” վաճառական դառնալը նշանակում էր մտնել նոր տնտեսական ոլորտներ, որոնք

երաշխավորվում էին ժամանակի առաջատար առևտրային օրենքների պաշտպանությամբ:

19-րդ դ. սկզբներից որոշ դիվանագիտական ներկայացուցչություններ, մասնավորապես, բրիտանականը, սկսում են կրճատել տրամադրվող բերաթների թիվը: Նրանք արդեն կարողացել էին հաստատվել օսմանյան շուկայում և նոր միջնորդների կարիք չունեին: Բացի դրանից, “beratlı” քրիստոնյա վաճառականներն արդեն լուրջ մրցակից էին դառնում անգլիական ընկերություններին: Ինչպես նշում է Է. Դանիելյանը. «Հայկական վաճառականության հետ եվրոպական ընկերությունների մրցակցության նախանշանները երևացին, երբ Ռուսական կայսրությունը, ելնելով իր ներքին շուկային սպառնացող վտանգից, վերացրեց անգլիական Արևելահնդկական ընկերության՝ Իրանի հետ Ռուսաստանի վրայով կապ պահպանելու արտոնությունները: Փաստորեն, այդ ուղիով արտաքին առևտրի մենաշնորհը մնաց հայ վաճառականության ձեռքում»<sup>29</sup>: Ջ. Արթունչը նույնպես հաղոդում է, որ արդեն 18-րդ դարից սկսած անգլիական առևտրային ընկերությունները բողոքներ են հղում Օսմանյան կայսրությունում բրիտանական դեսպաններին՝ խնդրելով դադարեցնել բերաթների վաճառքը: Բրիտանական առևտրաձուլային լիանտական ընկերությունը, օրինակ, հայտնում է, որ բերաթ ստացած Գրիգորիո/Գրիգորյան եղբայրները գրասենյակներ բացելով Իզմիրում, Լիվորնոյում և Լոնդոնում աշխույժ առևտուր են իրականացնում, դրա-

<sup>27</sup> Masters B., “The Sultan’s Entrepreneurs . . . p. 585. Հայկական վաճառատների մասին տե՛ս u Der Matossian B., “The Armenian Commercial Houses and Merchant Networks . . . p. 152.

<sup>28</sup> St’ u Yaycioglu A., Partners of the Empire: Notables, Communities and Crisis of the Ottoman Order in the Age of Revolutions (1760-1820), [http://economics.stanford.edu/files/Yaycioglu\\_Nov%2019.pdf](http://economics.stanford.edu/files/Yaycioglu_Nov%2019.pdf), Chapter 1., pp. 37-38.

<sup>29</sup> Դանիելյան Է., «Հայկական ծովային առևտրի զարգացման քաղաքակրթական գործոնները և միջազգային մրցակցությունը XVII դարում» /Զեկուցում՝ կարդացված «Քեդաղ Մերչանտ» հայկական նավի հայտնագործությանը նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և «ԱՆԱՀԻՏ» ասոցիացիայի կազմակերպած միջազգային գիտաժողովում (հոկտեմբերի 5, 2010թ.) [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5298](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5298); տե՛ս նաև Սալազարյան Ա., «Հայ առևտրական կամ խոջայական կապիտալի անկումը 18-րդ դարում» <http://armfvm.com/en/news/view/%D5%A8%D5%B6%D5%B9%D5%B8%D5%9E%D6%82>



նով իսկ «կրճատելով անգլիական վաճառականների եկամուտներն ու անգլիական գահի հասույթը»<sup>30</sup>: Բրիտանական դեսպանատունը աստիճանաբար դադարեցնում է Բերաթների տրամադրումը, քանի որ օսմանյան շուկայում քրիստոնյաների օգնությամբ արդեն իսկ ամրապնդված անգլիացիները նոր միջնորդների և ի դեմս նրանց՝ հնարավոր մրցակիցների կարիք այլևս չունեին: Օսմանյան արքունիքում նույնպես գիտակցեցին, որ Բերաթների վաճառքից ստացվող հասույթը փոքր մասն է միայն այն օգուտի, որ կարող էր ակնկալել սուլթանությունը իր քրիստոնյա հպատակներից: 1806 թ. Մելիմ III-ը հրամանագիր է արձակում, որով օտարերկրյա հյուպատոսություններից պահանջում է իրենց կցված “berath” դրագոմաններին և այլ օսմանահպատակներին վերադարձնել այն քաղաքները, որոնցում նրանք գրանցվել էին որպես ներկայացուցչությունների աշխատակիցներ: Մինևույն ժամանակ սուլթանը սահմանում է արտոնագրերի նոր տեսակ, որով օսմանահպատակ ոչ մուսուլման վաճառականներին կշնորհվեր «եվրոպական վաճառականներ» (Avrupa tüccarları) կոչվող կարգավիճակը:

«Եվրոպական վաճառականի» կարգավիճակ ձեռք բերել ցանկացող ոչ մուսուլման օսմանահպատակ անձը Բերաթ ստանալու գրավոր խնդրագրով պետք է դիմեր Պետական խորհրդի գրասենյակ (Divan-i Humayun Kalemi): Խնդրագրում նշված պետք է լինեին նրա թվով երկու փոխարինողների/տեղակալների անունները, որոնք սովորաբար ընտրվում էին խոշոր առևտրային քաղաքներից Կոստանդնուպոլսից (Ստամբուլից) և Ջմյունիայից (Իզմիրից): Դիմողն իրավունք ուներ նաև վարձել երկուական ծառայող իր և տեղակալների համար, որոնք կօգնեին իրեն կազմակերպել և իրականացնել առևտրական գործունեությունը: Դիմողը նաև համապատասխան միանվագ տուրք էր մուծում օսմանյան գանձարան: Այլի Բիսան Բաղըշը գրում է, որ այն կազմում էր 1500-2000 քուրուշ,

<sup>30</sup> Artunc C., նշվ. աշխ., էջ 6:

իսկ Ջ. Արթունչն իր հերթին նկատում, որ օսմանյան իրականության պայմաններում այդ թվին պետք է ավելացնել ևս 1000-1050 քուրուշ՝ պարտադիր կաշառքների, նվերների և այլ հավելյալ ծախսերի համար<sup>31</sup>: Ոչ մուսուլման վաճառականներին շնորհվող այդ նոր կարգավիճակը, չնայած բոլոր խոստացվող հարկային արտոնություններին, այնուամենայնիվ, չէր ազատում նրանց գլխահարկից (cizye)<sup>32</sup>, ինչը Բոյուս Մասթերսի կարծիքով, պետք է ընդգծեր սուլթանի գերակա իշխանությունն իր քրիստոնյա հպատակների նկատմամբ<sup>33</sup>:

Սուլթանի հրամանագրի նախաբանի տեքստում, որը մեջբերում է թուրք պատմաբան Ս. Քայմաքջըն, հստակ նշվում է, որ սույն ինստիտուտի նախաձեռնումը նպատակ ունի «օրինականացնել և կարգավորել» եվրոպական երկրների հետ արդեն իսկ առևտուր անող կամ նման ցանկություն ունեցող օսմանյան ոչ մուսուլման վաճառականների գործունեությունը՝ «ներդաշնակելով այն երկրի օրենքների և սովորույթների հետ...», այսինքն՝ կատարյալ վերահսկողություն սահմանել առաջին հերթին նրանց վաստակած գումարների վրա: Փաստաթղթում թվարկվում են նաև մի շարք դրույթներ այն մասին, որ պետությունը կապահովի «եվրոպական վաճառականների» համար անձնական և իրավական երաշխիքներ, պաշտպանություն տեղական իշխանավորների կամայականություններից, օտար երկրներում օսմանյան պետության հյուպատոսարանների աջակցություն և մաքսատուրքերի թեթևացում<sup>34</sup>:

<sup>31</sup> Bağış A. I., նշվ. աշխ., էջ 65-70, Artunc C., նշվ. աշխ., էջ 14:

<sup>32</sup> Ջիզյեն իսլամական պետություններում այլադավաններից գանձվող շնչահարկ է, հարկային հիերարխիայում «օրինական», այսինքն՝ մուսուլմանական շարիաթի վրա հիմնված կարևորագույն հարկերից մեկը:

<sup>33</sup> Masters B., նշվ. աշխ., էջ 582: Ս. Քայմաքջըն, իր հերթին, որպես ավելի կարևոր գործոն նշում է այդ հարկատեսակից օսմանյան գանձարան եկող եկամուտը: Օրինակ, 1835-36 թթ. «եվրոպական» վաճառականը մուծում էր 68 քուրուշ իր և 34-ական քուրուշ իր ծառայողների համար (1 քուրուշ=120 աքչե), տե՛ս Kaymakci S. S., նշվ. աշխ., էջ 54:

<sup>34</sup> Kaymakci S. S., նշվ. աշխ., էջ 29-30:



Իրականում ոչ Սելիմ III-ը, ոչ էլ նրան հաջորդած Մահմուդ II-ը չէին կարող ապահովել վաճառականների տված երաշխիքները: Կենտրոնախուզության այդ ժամանակաշրջանում ոչ թե սուլթանը/պետությունը, այլ որոշ հզոր այաններ ու նահանգային մեծահարուստ կառավարիչներ էին վերահսկում առևտուրը վիլայեթներում՝ սեփական շահերից ելնելով: Ընդ որում, ինչպես գրում է պատմաբան Ա. Յայջըողլուն, այաններից յուրաքանչյուրն ուներ իր «ազդեցության գոտին», որտեղ նա ներքին և արտաքին առևտրի վերահսկման մենաշնորհն իր ձեռքն էր առել: Օրինակ, Չափանօղլու ընտանիքը վերահսկում էր Կենտրոնական Անատոլիայով անցնող Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ առևտրային երթուղիներն ու մի բանի հանգույց-քաղաքներ, ինչպիսիք են Թոքաթը և Կեսարիան (Կայսերի): Քարաօսմանօղլուների «վերահսկման գոտին» Էգեյան ավազանի առևտրական նավահանգիստներն էին՝ Մանիսան և Ջայունիան (Իզմիր) ու այնտեղից արտահանվող գյուղամթերքը: Նրանք սերտ կապեր էին հաստատել այդ տարածքում գործող ֆրանսիական վաճառականների հետ: Սևծովյան առևտրի մի զգալի հատված էլ վերահսկվում էր Ջանիկլի Թայար բեյի կողմից<sup>35</sup>: Ըստ էության, նրանք, լինելով բարձրաստիճան պաշտոնյա դարձել էին «առերևույթ բիզնես չանող խոշոր գործարարներ» կամ, Ա. Յայջըողլուի բնորոշմամբ, «բազմապրոֆիլային ձեռներեցներ» (Portfolio Entrepreneurs), որոնք նաև բավականին հզոր սեփական ռազմական ջոկատներ ունեին իրենց ենթակայության տակ<sup>36</sup>: Նման պայմաններում չէր կարելի ակնկալել, որ այանները «Նիզամ-ի Ջեդիդ» («Նոր կարգ») բարեփոխումների համար անհրաժեշտ միջոցների հարկահավաք-

<sup>35</sup> Yaycıoğlu A., նշվ. աշխ., էջ 17-44:

<sup>36</sup> Yaycıoğlu A., նշվ. աշխ., էջ 30: Նշված ժամանակաշրջանում քիչ չէին դեպքերը, երբ վասալ կառավարիչը զինված ըմբոստություն էր բարձրացնում սուլթանի դեմ, տե՛ս Barkey K., *Bandits and Bureaucrats: The Ottoman Route to State Centralization*, Cornell University Press, 1996, pp. 195-242.

ման աշխատանքները պատշաճ ձևով են կատարելու և գումարներն ամբողջությամբ ուղղելու սուլթանական գանձարան: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ «եվրոպական վաճառականների» ինստիտուտի ստեղծմամբ Սելիմ III-ը սեփական «ազդեցության գոտի» էր ստեղծում, փորձելով արդեն իսկ Եվրոպայում հաջողությամբ գործող քրիստոնյա առևտրականների շնորհիվ ապահովել շոշափելի դրամական միջոցների մուտքը գանձարան:

Մյուս կարևոր խնդիրը «օտար երկրներում օսմանյան պետության հյուպատոսարանների աջակցություն» ապահովելն էր: Դեռևս 1793 թ. փոխադարձության հիմքի վրա եվրոպական հինգ առաջատար մայրաքաղաքներում թուրքերը մշտական դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնադրեցին: Օսմանյան պատվիրակները հրահանգ էին ստացել ուսումնասիրել այն երկրների դիվանագիտական փորձը, այդ թվում և առևտրային իրավական պաշտպանության, որտեղ իրենք հավատարմագրվել էին: Սակայն այդ գործում լուրջ բարդություններ ի հայտ եկան: Քանի որ նման պաշտոնները կարող էին միայն օսմանցի մուսուլմանները զբաղեցնել, շատ դժվար էր գտնել մարդկանց, ովքեր դիվանագիտական աշխատանք կատարելու համար ունեին անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, օտար լեզուներ գիտեին և ամենակարևորը՝ համաձայն կլինեին երկարատև բնակվել «գյավուրների» երկրներում: Այնպես որ Սելիմ III-ի այդ նախաձեռնությունը հաջողություն չունեցավ, և շուտով օսմանյան ներկայացուցչությունները փակվեցին<sup>37</sup>:

Ինչ վերաբերում է մաքսատուրքերի թեթևացմանը, ապա հարկ է նշել, որ իսկապես կառավարական հրամանագրերը հստակ մաքսային դրույքաչափեր էին ֆիքսում օտարերկրյա, օսմանահպատակ ոչ մուսուլման և մուսուլման վաճառական-

<sup>37</sup> Sté u Кудрявцева Е., «Турецкая дипломатия в первой половине XIX в.», Вестник МГИМО, Москва, 2008, №2., с. 31-38.



ների համար: Ներմուծման դեպքում օտարերկրյա վաճառականը վճարում էր 5%, ոչ մուսուլման «եվրոպական վաճառականը»՝ 4%, իսկ մուսուլման «հայրիյե»-ն՝ 3% ապրանքի ներմուծման հարկ (amediyeye vergisi), 2% էլ որպես մաքսատուրք էր գանձվում: Տեղական շուկաներից բերվող ապրանքների արտահանման դեպքում՝ 9% «ամեդիյե» հարկ էր գանձվում, որին ավելանում էր 3% արտահանման տուրք (refdiyyeye vergisi)<sup>38</sup>: Սակայն օսմանյան իրական պրակտիկան շատ հեռու էր գրված օրենքներից: Ժամանակի արխիվային փաստաթղթերը հարուստ վկայություններ են տալիս սովորական երևույթ դարձած վաճառականների ունեցվածքի վրա հարձակումների, առևտրային նավերի հրկիզման կամ բեռների յուրացման, պաշտոնյաների չարաշահումների, մաքսավորների կամայականությունների, կրկնակի հարկումների և այլնի վերաբերյալ<sup>39</sup>:

Սակայն «եվրոպական վաճառականների» վերաբերյալ հրամանագրի դրույթներից ամենակարևորը, թերևս, «իրավական պաշտպանության» մասին հիշատակումն է: Թուրք պատմաբանների մեծ մասը փորձում է ապացուցել այն թեզը, թե բարենորոգիչ սուլթանները ձգտել են «միասնական իրավական դաշտ» ստեղծել բոլոր հպատակների համար՝ անկախ նրանց էթնիկ կրոնական պատկանելիությունից<sup>40</sup>: Թիմուր Քուրանն ու Սքոթ Լասթիգն, օրինակ, գրում են, որ 17-րդ դարը հանդիսանում է այն վերջին շրջանը, երբ օսմանյան իրավական պրակտիկան գերծ էր մնում արևմտյան ազդեցություններից: 18-րդ դարի վերջերից արդեն ոչ մուսուլման օսմանյան վաճառականները սկսում են գործառույթներ իրականացնել նաև եվրո-

<sup>38</sup> Balci R., Hayriye Tüccarları, <http://www.sizinti.com.tr/konular/ayrinti/hayriye-tuccarları-eyül-2015.html>

<sup>39</sup> Ս. Քայմաքչըն իր հոդվածում, օրինակ, ներկայացնում է օսմանյան դատարաններում ապօրինի բռնագանձումների և կրկնակի հարկման դեպքերի դեմ «եվրոպական վաճառականների» բողոքների լուումների արձանագրություններից մի քանիսը, տե՛ս Kaymakcı S. S., նշվ. աշխ., էջ 98-109:

<sup>40</sup> Kaymakcı S. S., նշվ. աշխ., էջ 11.

պական իրավական համակարգերում՝ տարբեր երկրների առևտրային դատարաններում հնարավորություն ստանալով օգտվել «այլընտրանքային օրենքից», ինչպիսի իրավունք չունեին մուսուլմանները<sup>41</sup>: Բարեփոխումների շրջանում մուսուլման և ոչ մուսուլման վաճառականների միջև ծագած առևտրային վեճերը լուծելու համար Ստամբուլում ստեղծվել էր հատուկ ատյան (Arz odası): Թուրք պատմաբաններն ընդգծում են, որ հաշվի առնելով Ստամբուլի կայսերական իշխանության նստավայր լինելու հանգամանքը, այդ ատյանը կոչված էր «սուլթանական իսլամական արդարադատությունն իրականացնել» առավել ազնվությամբ և անաչառությամբ<sup>42</sup>: Սակայն թուրք հեղինակները հաճախ միտումնավոր չեն հիշատակում իսլամական օրենքում առկա այն դատավարական խտրականությունը, որով ոչ մուսուլմանին արգելվում էր ցուցմունք տալ մուսուլմանի դեմ, առավել ևս, որ նման վկայությունն իրավական ուժ չուներ: Նույնիսկ ավելի ուշ, Թանզիմաթի բարեփոխումների շրջանում, երբ քննարկվում էր ֆրանսիականի նմանությամբ օսմանյան ոչ շարիաթական քաղաքացիական օրենսգրքի նախագիծը, դրա կազմողներից մեկը՝ անվանի ուլեմ, պատմագիր և պետական գործիչ Ահմեդ Ջևդեթ փաշան, ասել էր. «Ղիմիի՝ մուսուլմանի դեմ տված վկայությունն անընդունելի է»: Մուսուլմանի բանավոր վկայության դեմ ուժ չունեին նաև նոտարական պատշաճ ձևով հաստատված և կնքված գրավոր փաստաթղթերը<sup>43</sup>: Ի՞նչ արդարադատության

<sup>41</sup> Kuran T., Lustig S., “Judicial Biases in Ottoman Istanbul Islamic Justice and Its Compatibility with Modern Economic Life”, Duke University Journal of Law and Economics, 55 (2012), pp. 2-4 <http://ssrn.com/abstract=1651280> or [http://econ.duke.edu/uploads/media\\_items/kuran-lustig-paper-on-islamic-courts.original.pdf](http://econ.duke.edu/uploads/media_items/kuran-lustig-paper-on-islamic-courts.original.pdf)

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>43</sup> Ջիմի (արաբերեն՝ պարտապան), մուսուլմանական պետություններում այլակրոն (հատկապես քրիստոնյա և մովսիսական) համայնքներին պատկանող հպատակներ: Տե՛ս Cevdet Paşa, Tezakir 1-12, Ankara, 1991, ss. 62-63. Օսմանյան քաղաքացիական օրենսգրքի՝ Mecelle-ն մաս առ մաս մտավ



մասին կարող էր խոսք լինել, եթե նույն երկրի վաճառականները հարկվում էին ըստ կրոնական պատկանելության: Հարկային խտրականության արատավոր այդ գործելաոճը որդեգրեց նաև հանրապետական Թուրքիան: Ինչպես իրավացիորեն նշում է հայ թուրքագետ Ռ. Մելքոնյանը, Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը ժառանգեց ազգային-կրոնական փոքրամասնությունների հանդեպ խտրական պետական քաղաքականությունը, այդ թվում նաև տնտեսական ոլորտում, որի ամենաամոթալի դրսևորումն էր 1942 թ. կիրառության մեջ մտած, այսպես կոչված, «Ունեցվածքի հարկը» («Varlık vergisi»)<sup>44</sup>:

Դեռևս սուլթան Մեյիմ III-ի ժամանակ մուսուլման վաճառականները սկսեցին հանդես գալ առարկություններով՝ «եվրոպական վաճառականներին» տրվող արտոնությունների վերաբերյալ: Նմանատիպ բողոքներ «անբարեխիղճ» մրցակցության մասին բարձրացվեցին նաև Մահմուդ II-ի օրոք: Մուսուլման առևտրականները ձգտում էին ստանալ «այն նույն արտոնությունները և հարմարությունները, որոնք «եվրոպական վաճառականներն» էին վայելում», մասնավորապես, ճանապարհորդության, մաքսային, դատական և հարկային «զիջումները»: Բարձր Դուռը (Bab-ı Ali) նմանատիպ և նույնիսկ ավելի արտոնություններ տրամադրեց օսմանյան մուսուլման առևտրականներին, շնորհելով նրանց “Hayriye” կարգավիճակը: Իրենց

“berat”-ը ստանալու համար վերջիններս պետք է հետևեին նմանատիպ ընթացակարգերին, սակայն ի տարբերություն «եվրոպականների»՝ մուսուլման վաճառականների վճարելիք կանխավճարը շատ ավելի փոքր էր՝ 1200 քուրուշ: Քվոտավորված էր նաև արտոնագրերի քանակն՝ ըստ քաղաքների: Այսպես, Ստամբուլում այդ թիվը կազմում էր 40, իսկ Հալեպի, Իզմիրի և այլ առևտրական կենտրոնների համար նախատեսվում էր 10-ական բերաթ: Շուտով այդ քվոտաներն ավելացվեցին, և Ստամբուլի համար թիվը դարձավ 60, այլ քաղաքներինը՝ 30-ական արտոնագիր: Չնայած արտոնագրերի ավելացված չափաբաժիններին «հայրիյե» բերաթներ ձեռք բերել ցանկացող մուսուլման վաճառականների թիվը չէր արձանագրում այն արագ աճը, որը զգալի էր «եվրոպական վաճառականների» պարագայում<sup>45</sup>: Ինչպես նշում են որոշ պատմաբաններ, պետությունը գնում էր այդ քայլերին, ցանկանալով խթանել «մուսուլմանների մեջ ձեռներեցության ոգին» ու նաև ակնկալելով, որ մուսուլման վաճառականները կկարողանան ձեռք բերել նույն զգալի շահույթը, ինչը որ կարողացել էին անել իրենց քրիստոնյա հայրենակիցները, դրանով իսկ լցնելով ոչ միայն սեփական գրպանը, այլ նաև պետության գանձարանը<sup>46</sup>:

Ըստ էության, դրանով օսմանյան պետությունը առաջին «հաստատութենացված» փորձն էր կատարում՝ արտաքին առևտուրը խլել քրիստոնյաների (հույների, հայերի և այլն) ձեռքից և այն կենտրոնացնել մուսուլմանների ձեռքերում: Օրինակ, Ք. Չիչեքն արձանագրում է, որ քանի որ սերբերը Բալկաններում և հույները անջատողական տրամադրություններ

<sup>45</sup> Balci R., նշվ. աշխ.:

<sup>46</sup> Բրյուս Մասթերսը գրում է, որ 1820-1822 թթ. «եվրոպական վաճառականները», որոնց զգալի մասը հայեր էին, Մեծ Բրիտանիայի հետ իրականացրել են 650,000 £ (ֆունտ ստերլինգ/լիբրա) չափով առևտուր, իսկ 1836-1838 թթ. արդեն 1,729,000 £, տե՛ս Masters B., նշվ. աշխ., էջ 582:

շրջանառության մեջ 1869-1876 թթ.: 1863 թ. սկսեց գործել Օովային առևտրի մասին օրենքը, տե՛ս Bozkurt G., Review of the Ottoman Legal System <http://dergiler.ankara.edu.tr/dergiler/19/835/10563.pdf>, Ջնդեթ փաշայի օրինաստեղծ գործունեության մասին տե՛ս նաև Оганесян А., “Марузат» Ахмеда Джевдета как источник для изучения танзимата”, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, Երևան, 2008 թ., էջ 78-83:

<sup>44</sup> Տե՛ս Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» (Varlık vergisi) կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, [http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT\\_ID=487](http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=487)



ունեին՝ անհրաժեշտ էր պետությանը հավատարիմ վաճառականների դաս ստեղծել<sup>47</sup>:

«Հայրիյե» վաճառականների պաշտպանությունն ապահովելու համար նշանակվեցին հատուկ ծառայողներ՝ «şehbender» (առևտրային կցորդների նախատիպ)՝ իրենց կցված կատարածուներով: Շեհբենդերը պետք է հետևեր, որ եվրոպացի գնորդներից ստանալիք վճարները հավաքվեն, նաև ապահովում էր վաճառականի գույքի անձեռնմխելիությունը՝ եթե նա դատական վեճ էր ունենում առևտրային դատարաններում: Բոլոր տեսակի ֆինանսական հաշվետվությունները, ներմուծման կամ արտահանման հարցերը պետք է քննարկվեին Առևտրի խորհրդում (Ticaret Nezareti): Օտարերկրացի վաճառականների հետ ունեցած վեճերը լսվում էին Ստամբուլում՝ համապատասխան երկրի հետ կնքված համաձայնությունների դրույթներից ելնելով: Շեյխ ուլ իսլամի կամ այլ բարձրաստիճան իսլամական հոգևորականի ներկայությունը պարտադիր էր այդ դեպքերում:

Քանի որ նշված ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունը չունեի պետական առևտրային նավատորմ, «Հայրիյե» վաճառականները ծովային առևտուրն իրականացնելիս կարող էին դիմել Ռազմածովային զինանոցի (Tersane-i Amire) ծառայություններին, մինչդեռ այլ վաճառականներ նավերը վարձում էին՝ վճարելով սեփական գրպանից: Մահանալու դեպքում «Hayriye» վաճառականի գույքը չէր բռնագանձվում, նրա ժառանգը գույքի հետ միասին ինքնաբերաբար ստանում էր հոր բերաթը՝ գործը շարունակելու համար, մինչդեռ նույն հանգամանքներում «եվրոպական»-ը կրկին մուծում պետք է կատարեր պետական գանձարանին<sup>48</sup>:

«Hayriye» վաճառականների կանոնադրության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում նրանց՝ «կրոնին նվիրվածությանն ու բարոյական նկարագրին»: Շեշտվում է, որ «մարմնավորելով օսմանյան վաճառականի կերպարը՝ նրանք և նրանց ծառայակիցները պետք է լինեն «ազնիվ և արդար, իսլամին նվիրյալ հավատացյալներ» (ehl-i arz ve dindar)<sup>49</sup>: Այդ իսկ պատճառով «Hayriye» առևտրականները բերաթ ստանալու խնդրագրին պարտավոր էին կցել իրենց բնակավայրի տեղական պաշտոնյայի կողմից տրված՝ «բարի համբավը հաստատող փաստաթուղթ», ինչպես նաև նմանատիպ բովանդակությամբ երկու նամակ-երաշխավորագիր:

Պետությունն ամեն կերպ աշխատում էր կայացնել «հայրիյե վաճառականների» ինստիտուտը: Առավել ջանասեր շեհբենդերները նշանակվում էին ներկայացուցիչ արտասահմանյան երկրներում, կատարածուններն աշխատանք էին ստանում շարիաթական դատարաններում, իսկ «հայրիյե»-ներն ընդգրկվում էին որպես համայնքի/ումմայի տեսուչ-անդամներ (şahudu'l) պետական դատարաններում և արժանանում սուլթանական պարգևների ու շքանշանների: Մուլթանը նախկինում հույներից տրված ռազմական մատակարարումների, ինչպես նաև Ստամբուլի պարենով ապահովելու բացառիկ իրավունքը շնորհեց նրանց: «Հայրիյե» վաճառականները ստացան բազմաթիվ այլ մենաշնորհներ:

Բ. Մասթերսը նկատում է, որ «հայրիյե վաճառականներին» վերաբերող բոլոր պաշտոնական փաստաթղթերում, նույնիսկ այնտեղ օգտագործված բառամթերքում և ձևակերպումներում զգացվում է պետության հատուկ վերաբերմունքն ու հոգա-

<sup>47</sup> Çiçek K., Hayriye Tüccarları: Osmanlı'da ekonomide ahabap çavuş ilişkileri <http://www.bugun.com.tr/hayriye-tuccarlari-haberi/1136765>

<sup>48</sup> "Vefat eden tüccarların dükkân, oda ve sair mülkleriyle eşyalarına, vârisleri mevcut oldukça, devlet tarafından müdahale edilmeyecektir", տե՛ս u Balcı R., նշվ. աշխ.:

<sup>49</sup> Ռ. Բալջըն մեջբերում է բերաթ տրամադրելու կանոնակարգի հետևյալ բառերը. «gerçekten dindar, namusuna düşkün ve doğrulukları tecrübe edilmiş Müslüman tüccarlara verilecektir», տե՛ս u Balcı R., նշվ. աշխ.:



ծությունը (paternalism), այդ ինստիտուտը հովանավորելու և կայացնելու ձգտումը<sup>50</sup>:

«Hayriye» վաճառականների ինստիտուտի հիմնադրման և գործունեության ավարտի տարեթվերի մասին տարբեր կարծիքներ կան: Ռ. Բալցրն նշում է որպես սկիզբ 1810 թ., իսկ գործունեության ավարտը համարում է 1876 թ., երբ դավադրություն կազմակերպվեց սուլթան Աբդուլ Ազիզի դեմ, ինչը նա կապում է անգլիացիների քաղաքական բանասարկությունների հետ<sup>51</sup>: Շ. Շենելն արձանագրում է, որ փաստաթղթերում հանդիպող «հայրիյե»-ի մասին առաջին տեղեկությունները վերաբերում են 1815-1816 թթ., իսկ քիչ թե շատ գործնական ակտիվությունը երևում է միայն 1827-1828թթ.<sup>52</sup>:

«Հայրիյե» վաճառականների և բարենորոգիչ-սուլթանների տնտեսական նախաձեռնությունների հետ կապված ևս մեկ ուշագրավ ինդիք թե՛ք քննարկման թեմա է այսօրվա Թուրքիայի պատմաբանների շրջանում, այն է. ինչո՞ւ մուսուլման էսնաֆությունները, որոնք կայացել էին օսմանյան պետության «դասական ժամանակաշրջանում»<sup>53</sup> և, նրանց մեկնաբանմամբ, բավականին արդյունավետ գործում էին մինչև 18-րդ դարի սկիզբը, չկարողացան հարմարվել նոր տնտեսական զարգացումներին, ինչը հիմնականում հաջողեցին անել քրիստոնյա և հրեա համարությունները<sup>54</sup>: Գիտական քննարկումներում առաջ քաշվող տեսակետները բավականին հետաքրքիր և անսպասե-

<sup>50</sup> Masters B., նշվ. աշխ., էջ 586:

<sup>51</sup> Balci R., նշվ. աշխ.: Այդ դեպքերի մասին տե՛ս Оганесян А., «Турецкий историк о политических событиях 1876-1878 гг. в Османской империи», Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.XVI, Երևան, 1996թ., էջ 143-150:

<sup>52</sup> Şenel Ş., նշվ. աշխ.:

<sup>53</sup> Inalcik H., The Ottoman Empire: The Classical Age 1300-1600, London: Weidenfeld & Nicolson, 1973.

<sup>54</sup> Ամենամաքողական վերջին հետազոտությունն այդ թեմայով տե՛ս Bread from the Lion's Mouth: Artisans Struggling for a Livelihood in Ottoman Cities, ed. Suraiya Faroqhi, New York, Oxford: Berghahn Books, 2015.

լի կարող են լինել: 1727 թ. բարեփոխումների արդյունքում ավանդական համքարությունները/էսնաֆությունները վերակազմակերպվել էին և ստեղծվել էր մի նոր համակարգ, որը կոչվում է «Gedik»<sup>55</sup>: Պետությունը խիստ հսկողություն էր իրականացնում արհեստանոցների ու խանութների թվաքանակի, գրադեցրած տեղի, գործիքների, արտադրանքի, դրա վաճառքի և այլնի նկատմամբ: «Gedik» համակարգը, որը ենթադրում էր պետության բացարձակ մենաշնորհային իրավունքը՝ կանոնակարգելու և վերահսկելու արհեստագործական բոլոր խնդիրները, աստիճանաբար վերածվեց կարծրացած և՛ նոր տնտեսական պայմաններում անմրցունակ մի ինստիտուտի<sup>56</sup>: Արհեստավորներն ու մանր վաճառականները, որոնց արտադրանքը գիջում էր իր տեղը շուկայում եվրոպական էժան ապրանքներին, դժվարությամբ էին դիմակայում պետության օր օրի խստացող հարկային քաղաքականությանը: Նման պայմաններում, ըստ թուրք հետազոտող Մ. Սունարի<sup>57</sup>, պետության և մուսուլմանական էսնաֆությունների միջև յուրատեսակ «բուֆերի» դեր են սկսում կատարել ենիչերիները: Վերջիններս 18-րդ դարի վերջին-19-րդ դարի սկզբին երբեմնի մարտունակ գործից արդեն վերածվել էին անկանոն և ըմբոստ ավազակախմբերի, կամ, Ջ. Քաֆադարի դիպուկ բնորոշմամբ՝ դարձել

<sup>55</sup> Altıntaş A. M., "The World of Ottoman Guilds: The Issue of Monopoly/Osmanlı Loncalarının Dünyası: Tekel Meselesi" History Studies, volume 2/3 2010 [http://www.historystudies.net/Makaleler/192349565\\_2%20Abd%C3%BClmennan%20M.%20Alt%C4%B1nta%C5%9F.pdf](http://www.historystudies.net/Makaleler/192349565_2%20Abd%C3%BClmennan%20M.%20Alt%C4%B1nta%C5%9F.pdf): Özbirecikli M., The Institutions Forming the Socioeconomic Structure of Turkish Private Enterprises between the 13th and the 19th centuries: Akhism, the Lonca system and the Gedik system, Pecunia, núm. 11 (julio-diciembre 2010), pp. 135-152 <http://buleria.unileon.es/bitstream/handle/10612/1840/3853064%5b1%5d.pdf?sequence=1>

<sup>56</sup> «Gedik» համակարգը վերացվել է 1861 թ.:

<sup>57</sup> Sunar M. M., "When grocers, porters and other riff-raff become soldiers:" Janissary Artisans and Laborers in the Nineteenth Century Istanbul and Edirne", Kocaeli Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi (17) 2009 / 1: pp. 175-194.



էին քաղաքային խռովություններ հրահրող «յումպեն էսնաֆ»<sup>58</sup>: Նրանցից ցածրաստիճանավորները, հատկապես յամաքները, հաճախ մտնում էին այս կամ այն համքարություն ապրուստի միջոց ունենալու համար, դուրս մղելով արհեստավարժ ենթավարպետներին: Իսկ առավել համարձակները այսպես կոչված «տանիք»-ի կամ «պաշտպանի» ծառայություններ էին մատուցում էսնաֆություններին՝ քիչ գումարի դիմաց «ազատելով» վերջիններիս պետական հարկահավաքների «ոտնձգություններից»: Ենիչերիների ներթափանցումը նախկինում «պետական կառավարելի կոռուպցիայի» շրջանակներում գործող «Gedik» համակարգը ենթարկում էր այն էրոզիայի և հանգեցնում դրա մարգինալացմանը: Այս երկու սոցիալական խմբերը ենիչերիներն ու մուսուլման էսնաֆությունները, այնքան էին սերտաճել միմյանց հետ, որ Մ. Մունարի եզրահանգմամբ 1826 թ. ենիչերական գորքերի լուծարումը (Vak'a-i Hayriyye) բերեց նաև համքարությունների և մանր վաճառականների համակարգի թուլացմանը: Թանգիմաթի շրջանում պետության գործադրած ջանքերը փոքրիշատե աշխուժացնել մանր բիզնեսը, առանձնակի արդյունք չտվեցին: Փոքրամասնությունների համքարություններն ավելի ճկուն գտնվեցին, ավելի արագ հարմարվեցին վաճառական տնտեսական պայմաններին: Քրիստոնյա վարպետներն արագ յուրացնում էին տեխնիկական նորարարությունները, հմտանում նոր գործիքներով և դրսից բերվող հաստոցների վրա աշխատելու մեջ, հաճախ կիրառելով նաև սեփական գյուտարարությունը հեշտությամբ անցում կատարում մանուֆակտուրային արտադրությանը:

Չարդարացան նաև «հայրիյե վաճառականների» հետ կապված ակնկալիքները և, թուրք պատմաբան Է. Չիչեքի պատկե-

թավոր բնորոշմամբ «բարենպաստ վաճառականները բարիք չբերեցին» (“Hayırlı tüccarları hayırlı olmadı”)<sup>59</sup>: Կաշառք տալու կամ վերցնելու մեղք գործած «հայրիյե»-ները հրաժարվում էին քաղիների դատին ներկայանալ: Պետության կողմից ժամանակ առ ժամանակ ադամանդազարդ շքանշաններով և ոսկեգօծ մեդալներով պարգևատրվող այդ վաճառականները գերադասում էին իրենց սպրանքներն իրացնել հեշտ ճանապարհով՝ հարմար գներով հանձնել պետական կամ վաքուֆային կազմակերպություններին: Բնականաբար, այդ գործարքները «գլուխ բերելու» համար դիմում էին Օսմանյան կայսրությունում անխափան գործող կաշառքի պրակտիկային, գրում է Է. Չիչեքը: Ստամբուլի Լալելի թաղամասում նրանք մի ամբողջ փողոց ունեին: Սակայն, ի հեճուկս բազմաթիվ արտոնությունների, «հայրիյե»-ները չկարողացան մրցակցել եվրոպական էժան սպրանք վաճառողների հետ: Այնուհետև պատմաբանը ճշտում է, թե ուր էին ուղղում իրենց ջանքերը՝ «բարենպաստ վաճառականները: «Անվճար հողահատկացում, թափու (գրանցում) ունեցող հողերի գնման առաջնային իրավունք, հումքային ապրանքների արտահանելու և ներկրելու դեպքում՝ նվազագույն հարկում, պետական հանքերը շահագործելու իրավունք, պետական գնումներ կատարելու մենաշնորհ և այլն», - «հայրիյե»-ներին տրված հնարավորություններն է թվարկում թուրք հեղինակը: Նա նկատում է, որ շատերը կցանկանային ունենալ նման արտոնություններ, սակայն սահմանված էր սահմանափակում/քվոտա, ուստի ներս մտնելու համար պետք է ունենային որևէ բարձր պաշտոնյայի հովանավորությունը: «Թանգիմաթի շրջանում քվոտաները ընդհանրապես հանվեցին, իսկ բարձրաստիճան դրամատեր պաշտոնյաները «հայրիյե»-ներին

<sup>58</sup> Olson R. W., “Jews, Janissaries, Esnaf and the Revolt of 1740 in Istanbul: Social Upheaval and Political Realignment in the Ottoman Empire”, Journal of the Economic and Social History of the Orient, Vol. 20, No. 2 (May, 1977), pp. 185-207 <http://www.artsrn.ualberta.ca/amcdouga/Hist323/autumn%202012/resources/janissaries%20and%20revolt%20of%201740.pdf>

<sup>59</sup> Çiçek K., Hayriye Tüccarları: Osmanlı'da ekonomide ahbap çavuş ilişkileri <http://www.bugun.com.tr/hayriye-tuccarlari-haberi/1136765> Է. Չիչեքի հոդվածը վերնագրված է «Հայրիյե վաճառականներ. օսմանյան տնտեսությունում մտերմիկ հարաբերություններ» և քաղարկված ակնարկներ է պարունակում Ռ. Թ. Էրդողանի որդու հետ կապված 2013 թվականի դեկտեմբերի 17-ից սկսած և «Մեծ կաշառք» անվանումն ստացած սկանդալային գործին:



հետ համատեղ բիզնես ձեռնարկություններ հիմնեցին»,- ամփոփում է Քեմալ Չիչեքը<sup>60</sup>:

Մամենայն հավանականությամբ, նա ի նկատի ունի Şirket-i Hayriye ընկերությունը, որը ներքին նավային փոխադրումներ էր կատարում նեղուցներով: Ընկերությունը սկզբից պատկանում էր ռուսներին, այնուհետև սուլթանի միջամտությամբ այն տրվեց «հայրիյե» գործարար Հուսեյն Հաքը փաշային: Թ. Քուրանը գրում է, որ այդ քայլով Աբդուլմեջիդ սուլթանը փորձել էր ճեղքել «այն կանխակալ կարծիքը, որը նսեմացնում էր մուսուլմանների գործարար ունակությունները և վերականգնել վերջիններիս դիրքային կորուստները քրիստոնյաների նկատմամբ»<sup>61</sup>: Իրականում դա քողարկված գործարք էր, քանի որ ընկերության «գաղտնի» փայտեր էր մեծ վեզիր Մուսթաֆա Ռեշիդ փաշան, և հենց այդ հանգամանքն էր պայմանավորում ընկերության երկարատև հաջող գործունեությունը<sup>62</sup>:

Ուսումնասիրված նյութերը, «եվրոպական» և «հայրիյե» վաճառականների կարգավիճակների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ ոչ մի առանձնակի «արտոնություն» ոչ մուսուլման գործարարներին Օսմանյան կայսրությունում չի շնորհվել: Հակառակը՝ նույնիսկ ծայրահեղ ազգայնական դիրքերից հանդես եկող պատմաբան Շ. Շենուրը ստիպված խոստովանում է, որ որքան էլ արտոնություն և դյուրություն տրամադրեց պետությունը «հայրիյե» վաճառականներին, նրանք ի վիճակի չեղան արդյունավետ արտաքին առևտուր իրականացնել, կապիտալ կուտակել և տնտեսություն զարգացնել: Չունենալով միջազգային առևտուր անելու փորձ և համապատասխան հմտություններ, լեզուների իմացություն՝ նրանք

<sup>60</sup> Նույն տեղում:

<sup>61</sup> Kuran T., How the Islamic Law held back the Middle East: The long Divergence, p. 18 [https://www.fpri.org/docs/20110324.kuran\\_islamiclaw.pdf](https://www.fpri.org/docs/20110324.kuran_islamiclaw.pdf)

<sup>62</sup> Shaw St. and Shaw K., History of the Ottoman Empire and Modern Turkey, Cambridge, London, New York 1976-1977. vol. 2, p.120.

ակնհայտորեն տանուլ էին տալիս այդ ոլորտում հայերին, հույներին և այլ քրիստոնյաներին<sup>63</sup>:

Արևմտահայ առևտրական բուրժուազիան, դրամատերերն ու արդյունաբերողները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, նույնիսկ օսմանյան բռնատիրության ու կամայակալությունների, խտրական հարկային քաղաքականության պայմաններում, կարողացել էին տեր դառնալ որոշակի հարստության, ստեղծել դրամական զգալի կուտակումներ: Նրանք ակտիվ մասնակիցներն էին նաև այն մոդեռնիզացիոն փոխակերպումների, որոնք էական ազդեցություն թողեցին կայսրության սոցիալ-մշակութային և տնտեսական ոլորտների վրա՝ սկսած առևտրից և արդյունաբերական արտադրությունից, մինչև սպառողական մշակույթը, ինստիտուցիոնալ կազմակերպություններից մինչև ուրբանիզացիան և արվեստը: Տրանսֆորմացիայի կարևորագույն հետևանքներից մեկն էլ ոչ մուսուլման բնակչության շրջանում վերնախավի ձևավորումն էր: Օսմանյան արդիականացման և արևմտյան ինտեգրման առաջատար ղեկավարները մեծամասամբ այս վերնախավային համայնքի անդամներն էին: Նրանք դարձան ավանգարդային կենսակերպի ներկայացուցիչներ՝ հարստության ակնհայտ բարձր մակարդակով, քաղաքական և մշակութային նոր դիրքորոշմամբ: Այդ փոխակերպումները բացասական արձագանք ստացան մուսուլման բնակչության կողմից, որն իրեն համարում էր կայսրության «գերակա ազգությունը» (millet-i hakime): 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին օսմանյան մասնագիտական ամսագրերի, մամուլի էջերում, ակումբներում տարբեր հայացքներ ունեցող թուրք մտավորականներ՝ ազատականներ, իսլամականներ, էտատիստներ, ազգայնականներ աշխույժ քննարկում էին երկրի տնտեսական զարգացման հնարավոր ուղիները<sup>64</sup>:

<sup>63</sup> Şenel Ş., նշվ. աշխ.:

<sup>64</sup> Şe' u Doğan N., The Origins of Liberalism and Islamism in the Ottoman Empire (1908-1914), /Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie am Institut für Soziologie.Fachbereich Politik- und Sozialwissenschaften der Freien



Քննարկումներից երևում է, որ ոչ մուսուլման բուրժուազիային արդյունաբերության բնագավառից, ներքին և արտաքին ապարեզներից դուրս մղելը, շուկային միանձնյա տիրելը, տնտեսական ամուր դիրքեր նվաճելը, այսինքն՝ տնտեսական ոլորտում գերակա «millet-i hakime» կարգավիճակին հասնելը դարձել էին բարձրագույն թուրք ազգային բուրժուազիայի գլխավոր մտահոգությունը<sup>65</sup>:

Այդ վեճերում բազմիցս անդրադարձ է կատարվում նաև «հայրիյե վաճառականների» ինստիտուտին, որը դիտարկվում է որպես «ազգային տնտեսություն» (milli iktisad) կառուցելու առաջին փորձ<sup>66</sup>: Իրականում «ազգային տնտեսությունը», ինչպես նշում են հարցով զբաղվող պատմաբաններ Ա. Աքթարը, Ս. Չեթինոզլուն և այլք, ոչ այլ ինչ էր, եթե ոչ «տնտեսության թուրքացում»<sup>67</sup>: Թյուրքականության գաղափարախոս Ջիյա Գյոքալփը մասնավորապես տնտեսության զարգացման մասին իր տեսական մտքերում առաջ էր քաշում էթնոկենտրոն, թուրքական, տնտեսության գաղափարը<sup>68</sup>: «Օսմանյան, իմա՝ թուրք ազգի տնտեսական այդ իդեալին» հասնելու «առաքելությունը» որդեգրեցին իթթիհադականները և նրանց քաղաքական ժառանգորդ հանդիսացող քեմալականները: Համա-

ձայն նրանց ծրագրի՝ նորահայտ «հայրիներ»-ն այլևս կարիք չէին ունենալու մրցակցության մեջ մտնել հայրենակից հայ, հույն և այլ ոչ մուսուլման ձեռներեցների հետ, նոր շուկաներ փնտրել ու գտնել, սեփական դրամազուլուի կուտակել, պետք էր միայն «հեռացնել» (ֆիզիկապես ոչնչացնել, տեղահանել կամ բռնի արտաքսել) մրցակցին և տիրանալ նրա ունեցվածքին: Ս. Չեթինոզլուի խոսքերով. «1915 թ-ի ամենամերկապարանոց փաստերից և ամենաեական հետևանքներից մեկը պատմության մեջ ամենամեծ գույքի և հարստության փոխանցման իրականացումն է: Այդ հետևանքը Թուրքիայի հասարակությանը՝ իր թուրքով, քրդով... բոլորին հուզող և մեր օրեր հասնող ամենաեական սյուններից մեկն է»<sup>69</sup>:

**ОТ ИНИЦИИРОВАНИЯ «ПРИВИЛЕГИРОВАННЫХ  
ТОРГОВЦЕВ» (HAYRIYE TÜCCARLARI) ДО ПОЛИТИКИ  
«ТУРКИЗАЦИИ ЭКОНОМИКИ»  
(о попытке простимулировать турецкое/мусульманское  
предпринимательство в Османской империи в начале 19в.)**

**Ануш Ованнисян  
(резюме)**

В начале 19в. османское государство в целях стимулирования предпринимательства среди мусульман учредило институт «привилегированных торговцев» (Hayriye tüccarları), имеющих специальные султанские лицензии (бераты). По сути, тем самым османское государство предприняло первую «институционализированную» попытку отнять из рук христиан (греков,

Universität Berlin, 2006/, chapter 3 "Ottoman intellectuals in the nineteenth century", pp. 55-206 [https://www.academia.edu/6346089/The\\_Origins\\_of\\_Liberalism\\_and\\_%C4%B0slamism\\_in\\_the\\_Ottoman\\_Empire](https://www.academia.edu/6346089/The_Origins_of_Liberalism_and_%C4%B0slamism_in_the_Ottoman_Empire)

<sup>65</sup> Միմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 21:

<sup>66</sup> Շ. Շենելի օրինակ անվանում է այդ ինստիտուտը «օսմանյան ազգի տնտեսական իդեալ», տե՛ս Şenel Ş., նշվ. աշխ.:

<sup>67</sup> Aktar A., "Cumhuriyetin ilk yıllarında uygulanan 'Türkleştirme' Politikaları", Tarih ve Toplum, No: 156, 1996, s. 4-18; Çetinoğlu S., "Etnik Temizlik ve Ekonominin Türkleşmesi", <http://www.birikimdergisi.com/guncel/etnik-temizlik-ve-ekonominin-turklesmesi>; Bali R., "Politics of Turkification during the Single Party Period" <http://www.rifatbali.com/images/stories/dokumanlar/basel.pdf>

<sup>68</sup> Ջիյա Գյոքալփի մասին տե՛ս Սաֆարյան Ա., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012:

<sup>69</sup> Սայիթ Չեթինոզլու, «2015 թ.՝ 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ», <http://akunq.net/am/?p=30783>



армян и др.) сферу внешней торговли и передать ее под преимущественный контроль мусульман. В то время эта попытка не принесла желаемых результатов. Однако инициирование института «Хайрийе» рассматривается как начало процесса, направленного на туркизацию экономики, итогом которого стали геноцид и насильственная передача большей части капитала национальных меньшинств от его истинных владельцев в руки новоявленной турецкой/мусульманской буржуазии.

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՇՐՋԱՆՆԵՐԻ (ԿԻԼԻԿԻԱՅԻ) ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄԸ  
(1865-1867 ԹԹ.)

*Բանալի բաներ՝ բարեփոխումներ, թանգիմաթ, Օսմանյան կայսրություն, նահանգներ, աշիրեթ*

FROM THE INITIATION OF "PRIVILEGED MERCHANTS"  
(HAYRIYE TÜCCARLARI) TO THE POLICY OF  
"TURKIFICATION OF ECONOMY"  
(an attempt to stimulate the Turk/Muslim entrepreneurship  
in the Ottoman Empire at the beginning of the 19<sup>th</sup> century)

*Anush Hovhannisyan  
(summary)*

In the early 19th century Ottoman state in order to encourage entrepreneurship among the Muslims established the institute of "privileged merchants" (Hayriye tüccarları), with a special licenses of Sultan (berats). In fact, thus the Ottoman government made the first "institutionalized" attempt to take away the sphere of foreign trade from the hands of Christians (Greeks, Armenians, and others) and pass it under the predominant control of Muslims. At that time this attempt failed. However, initiation of the institute "Hayriye" is regarded as the beginning of a process aimed at Turkification of economy, which culminated in Genocide and the forcible transfer of the major part of national minorities' capital from its true owners into the hands of the newly-minted Turkish / Muslim bourgeoisie.

Բարենորոգումների՝ թանգիմաթի երկրորդ փուլի (1856-1876) միջոցառումների մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում վարչական փոփոխությունները: Հսկայածավալ կայսրության արդյունավետ կառավարումն իրականացնելու համար անհրաժեշտ էր նոր, հստակ վարչական բաժանում, պատրաստված անհատների ընդգրկում վարչական համակարգի մեջ: 1864 թ. մեծ վեզիր (sadrazam, vezir-i âzam)<sup>1</sup> Մեհմեդ Ֆուադ փաշայի գլխավորությամբ ձևավորվում է հատուկ խորհուրդը, որը մշակում է «Վիլայեթների մասին»<sup>2</sup> օրենքի (Teşkil-i Vilayet Nizamnamesi) նախագիծը, որով նախատեսվում էր կատարել նոր վարչական բաժանում և ներդնել նոր վարչական համակարգ: Խոր-

<sup>1</sup> Օսմանյան կայսրությունում այսպես է կոչվել սուլթանի գլխավոր խորհրդականը: Ժամանակակից տերմինաբանությամբ համապատասխանում է վարչապետի պաշտոնին:

<sup>2</sup> 1864 թ. նոյեմբերի 8-ին նախարարների խորհուրդը հաստատում է օրենքը, ըստ որի՝ կայսրության ամենամեծ վարչական միավորը կոչվելու էր վիլայեթ՝ նահանգ, որը արտացոլված էր օրենքի անվանման մեջ, ապա հաջորդաբար՝ սանջաք (գավառ), քազա (գավառակ), քարիյե (գյուղաքաղաք՝ բաղկացած նվազագույնը 50 տնից) և նահիյե (գյուղախումբ): Մանրամասն տե՛ս Davison R. H., Reform in the Ottoman Empire 1856-1876, Princeton, 1963, p. 136-171.



հուրդը որոշում է կայացնում սկզբում նոր օրենքը կիրառել Բալկաններում<sup>3</sup>:

1865 թ. նոր օրենքի սահմաններում «հարավարևելյան Անատոլիայում», որը պատմական հայոց Կիլիկիայի տարածքն է, բարենորոգումների իրականացումը վստահվում է հատուկ ձևավորված «Բարեփոխումների հանձնախմբին» (Fırka-i Islâhiye)<sup>4</sup>: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերը մեծամասնություն էին կազմում Միս, Հաճըն (Քոզանի սանջաք, Ադանայի էյալեթ)<sup>5</sup> և Ջեյթուն (Մարաշի սանջաք, համանուն էյալեթ) քաղաքներում, որոնք գտնվում էին թուրքմենական Քոզանօղլուների կիսաքոչվոր տոհմի<sup>6</sup> ազդեցության ոլորտում, այս հոդվածը կանդրադառնա վերոնշյալ հանձնախմբի գործունեությանը հենց հայաշատ այս շրջաններում:

19-րդ դ. վերոնշյալ տարածքում, բացի հայերից, բնակվում էին շուրջ 26 քոչվորական և կիսաքոչվորական ցեղեր (aşiret) և տոհմեր<sup>7</sup>, որոնցից առավել աչքի ընկնողներն էին ավշար, վարսաք, րեյհանլը, սրբբընթըլը, թեջիրլի, ջերիպ, բոզդողան և այլ աշիրեթները<sup>8</sup>: Նրանց մեջ կային մի քանի ազդեցիկ տոհմեր,

<sup>3</sup> Ստեղծվեց Դունայան վիլայեթը (ժամանակակից Բուլղարիայի տարածքը) կայսրության եվրոպական տիրույթներում գտնվող նախկին Վիդինի, Նիշի և Միլիսթրեի էյալեթների միավորումից: Վիլայեթի վալի (նահանգապետ) է նշանակվում բարենորոգումների երկրորդ փուլի օսմանյան առաջատար գործիչներից մեկը՝ Ահմեդ Միդխաթ փաշան (1822-1883): St' u Фадеева И. Е., Мидхат-паша, жизнь и деятельность, Москва, 1977, стр. 20. Davison R. H., նշվ. Աշխ., էջ 146:

<sup>4</sup> Karal E. Z., Osmanlı Tarihi, cilt VII, Ankara, 1956, s. 152-163.

<sup>5</sup> 1865 թ. «Վիլայեթների մասին» օրենքով Ադանայի էյալեթը լուծարվեց, իսկ դրա կազմի մեջ մտնող տարածքներն ընդգրկվեցին նորաստեղծ Հալեպի վիլայեթի կազմում:

<sup>6</sup> St' u Ղևոնդ Ալիշան, Միսուն, Վենետիկ, 1885, էջ 166-167.

<sup>7</sup> Halaçoğlu Y., Fırka-i Islâhiye ve Yapmış olduğu İskân, Tarih Dergisi, s. 27, İstanbul, Mart 1973, s. 3.

<sup>8</sup> Şam E. A., Adana Eyaleti'ne bağlı Kozandağı Eşkîyaık Olayları ve Alınan Tedbirler (1864-1865), Perspectives on Ottoman Studies: Papers from the 18<sup>th</sup>

ինչպես քոզանօղլուները, քյույուքալիօղլուները, քյոքյուլյուօղլուները, մենեմենջիօղլուները, քարսանթըօղլուները<sup>9</sup>: 18-րդ դ. վերջերին հարավային Անատոլիայի քոչվոր ցեղերին նստակյաց դարձնելու և անհնազանդությունը ճնշելու փորձերը եական արդյունք չէին տվել:

Իրավական տեսանկյունից գտնվելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ՝ այս տարածքը փաստացի դուրս էր մնացել կենտրոնական իշխանությունների վերահսկողությունից: Այս տարածքների փաստացի տերերը՝ քոզանօղլուները, չէին ենթարկվում կենտրոնից նշանակված կառավարիչներին, գրեթե չէին վճարում կենտրոնից պահանջվող հարկերը և չէին կատարում զինվորական պարտավորությունները<sup>10</sup>: 19-րդ դ., հատկապես 1850-1870-ական թթ., կայսրությունում լայն թափ են ստանում ազգային-ազատագրական շարժումները Բալկաններում, մասնավորապես Բուլղարիայում, Բոսնիայում և Հերցեգովինայում, Կրետե կղզում և այլն<sup>11</sup>: Իրենց դարավոր կիսանկախ վիճակը պահպանելու համար ոտքի են կանգնում նաև «Անատոլիայի» բնակիչները:

Ղրիմի պատերազմի տարիներին (1853-1856) զորքերի շարքերը համալրելու համար հրապարակվում է սուլթանական հրաման՝ հարավարևելյան Անատոլիայից ևս զորք հավաքագրելու մասին: Սակայն տեղացի քոչվոր և կիսաքոչվոր ցեղերի առաջնորդները հրաժարվում են կատարել կենտրոնի պահանջը: Հարցին միջամտելու առաջարկություն է անում Կ. Պոլսում

Syposium of the International Committee of Pre-Ottoman and Ottoman Studies at the University of Zagreb 2008, ed. by E. Causevic, N. Moacanin, V. Kursar, Berlin, 2010, s. 66.

<sup>9</sup> Yavuz N., Fırka-i Islâhiye Ordusunun Özellikleri ve Faaliyetleri, Gazi Akademik Bakış, c. 5., s. 10, Ankara, Yaz 2012, s. 118-119.

<sup>10</sup> Dumont P., 1865 Tarihinde Güney-Doğu Anadolu'nun Islâhı, Tarih Enstitüsü Dergisi, sayı 10-11, İstanbul, 1981, s. 370.

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս Новичев А., История Турции, т. IV, ч. 3 (1853-1875), Л., 1978, стр. 204-235.



Անգլիայի դեսպանությունը՝ ի դեմս գլխավոր թարմանիչ Բ. Պիցանիի, որն անհանգստացնում է մեծ վեզիր Ռեշիդ փաշային, և, ինչպես նշում են պատմագիրները, նա որոշում է կայացնում պատերազմի ավարտից հետո հետամուտ լինել կայսրության այս շրջաններում կարգ ու կանոն հաստատելուն<sup>12</sup>:

1864 թ. բարձրաստիճան պաշտոնյաներից բաղկացած հանձնաժողովը (Encümen-i Havass-ı Vükelâ), մանրամասն ուսումնասիրելով եղած բոլոր փաստերը, տարածքին լավ ծանոթ պետական պաշտոնյաների, ինչպես նաև նշված հարակից շրջանների կառավարիչների կարծիքները<sup>13</sup>, 1865 թ. փետրվարին որոշում է կայացնում Չուքուրովա (Ֆիզիկաաշխարհագրական շրջան Կիլիկիայում)<sup>14</sup>, Ջերեկ-ի Բերեթեթ (կամ Գյավուր դաղը, լեռնաշղթա Կիլիկիայում, Ամանոս)<sup>15</sup> և Քոզան դաղը (լեռ Լեռնային Կիլիկիայում, Ամանոս)<sup>16</sup> ուղարկել հատուկ հանձնախումբ՝ օժտված ռազմական և վարչարարական իրավասություններով, տեղում իրավիճակին ծանոթանալու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար<sup>17</sup>: Հանձնաժողովը ընտրում է խորհրդակցության մասնակիցներից Ահմեդ Ջևդեթ էֆենդիին<sup>18</sup> որպես կառույցի ղեկավար՝ տալով նրան «արտակարգ լիազորություններ» (fevka'l-âde me'muriyyet-i

<sup>12</sup> Ahmed Cevdet Paşa, Ma'rûzât, hazir. Y. Halaçoğlu, İstanbul, 1980, s. 113.

<sup>13</sup> Yavuz N., նշվ. աշխ., էջ 119-120.

<sup>14</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, խմբ. Թ. Խ. Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան, հ. 4 (Ն-Վ), Երևան, 1998, էջ 282:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 394:

<sup>16</sup> Հայաստանի և հարակից ..., հ. 5 (Տ-Ֆ), Երևան, 2001, էջ 427:

<sup>17</sup> Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 21-39, Ankara, 1991, s. 107.

<sup>18</sup> Ահմեդ Ջևդեթ փաշան (1822-1895) եղել է թանգվիթի շրջանի Օսմանյան կայսրության աչքի ընկնող պետական գործիչներից մեկը, զբաղեցրել է մի շարք կարևոր պաշտոններ: 1855-1866 թթ. եղել է Օսմանյան կայսրության պաշտոնական տարեգիրը: Stü Bowen H., Ahmad Djewdet Pasha, The Encyclopaedia of Islam, vol. 1, ed. by H. A. R. Gibb, J. H. Kramers etc., Leiden-London, Brill-Luzac, 1960, p. 284-286.

mahsûsa): Վերջինս այդ ժամանակ զբաղեցնում էր Օսմանյան կայսրության պաշտոնական տարեգրի՝ վաքայինյուվիսի<sup>19</sup> պաշտոնը: Նա նոր էր վերադարձել Բոսնիայից, որտեղ գտնվում էր համանման առաքելությամբ: Հանձնախումբը, միաժամանակ, ռազմական կառույց էր, որի հրամանատար է նշանակվում օսմանյան չորրորդ բանակի հրամանատար Իբրահիմ Դերվիշ փաշան<sup>20</sup>: Այս դիվիզիան բաղկացած էր ընդհանուր առմամբ 15 հետևակային գումարտակից և 2 հեծելազորային գնդից<sup>21</sup>: Ընդ որում՝ Կ. Պոլսից շարժվելու էր 11 գումարտակ և հեծյալների մեկ ջոկատ, որոնց պետք է միանային մեկական գումարտակներ Գիրիթից, Հալեպից, Մարաշից և Ադանայից ու հեծյալների մի ջոկատ միլիթիվա (գեներալ-մայոր) քուրդ Իսմայիլ փաշայի հրամանատարության ներքո<sup>22</sup>:

Կայսրության տարբեր շրջաններ հանձնակատարներ (müfettiş) ուղարկելը նոր երևույթ չէր. 1860-1864 թթ. ընթացքում Բ. Դուռն օգտագործում էր այդ համակարգը էյալեթների (ամենախոշոր վարչական միավորի անվանումը Օսմանյան կայսրությունում նախքան 1864 թ. նոր վարչական բաժանումը) կառավարումն արդյունավետ իրականացնելու համար<sup>23</sup>: Մյուսֆեթթիշի պաշտոնում սովորաբար ընտրվում էին կայսրության առավել աչքի ընկնող պետական գործիչները: Երբեմն նրանց տրվում էին «արտակարգ լիազորություններ»<sup>24</sup> առավել անհանգիստ շրջաններ առաքելություն իրականացնելու ժամանակ:

<sup>19</sup> Վաքա (արաբ.) դեպք, իրադարձություն և նյուվիս (պարս.) գրող, գրիչ բառերի համադրությամբ կազմված տերմին:

<sup>20</sup> Նշենք, որ երկուսն էլ ծագումով Լոֆչա (Լովեց) քաղաքից են եղել, որը գտնվում է ներկայիս Բուլղարիայի հյուսիսում՝ Օսմա գետի վրա:

<sup>21</sup> Ahmed Cevdet Paşa, Ma'rûzât, s. 117-118.

<sup>22</sup> Şam E. A., նշվ. աշխ., էջ 73:

<sup>23</sup> Davison R. H., նշվ. աշխ., էջ 107-108:

<sup>24</sup> Նրանք իրավասու էին գործել իրավիճակին համապատասխան, այսինքն՝ հարկ եղած դեպքում զենք օգտագործել: Հաճախ դրանց ուղեկցում էին զինյալ ջոկատներ:



«Բարեփոխումների հանձնախմբի» մասին հարուստ աղբյուրագիտական նյութ են պարունակում դրա ղեկավար՝ վերոհիշյալ Ահմեդ Ջեդեթ Էֆենդիի (1866 թ.՝ «փաշա») «Ձեկուցագրեր» (Ma'rûzât) և «Հուշագրեր» (Tez'âkir) աշխատությունները<sup>25</sup>, որոնք գրի են առնվել ակնատեսի և գործողությունների ակտիվ մասնակցի կողմից: Դրանց արժեքը որպես պատմական երկ պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հեղինակը՝ որպես պատմագիր, օգտագործել է բազմաթիվ աղբյուրներ՝ տարբեր ժամանակներում գրի առնված տարեգիրների աշխատությունները, այս շրջանում գործունեություն ծավալած *մյուֆեթթիշների* (հանձնակատար) զեկուցագրերը, վիճակագրական տվյալներ և այլն:

Թուրքական պատմագրության մեջ շրջանառվում է այն թյուր կարծիքը, թե հանձնախմբի ստեղծման մեջ շատ կարևոր տեղ է զբաղեցրել տարածքում ապրող հայության բողոք նամակը՝ ուղղված սուլթանին, որով նրանք խնդրում են «իրենց ազատել իրենց համար ատելի քոզանօղլուների վայրագություններից»<sup>26</sup>: Նշենք, որ թեմային առնչվող հայկական աղբյուրները հաստատում են նման խնդրագրի առկայությունը, մասնավորապես Մ. Քելեշեանը իր հայտնի «Միս-Մատեանում» գրում է. «Տարոսի լեռնաշղթային վրայ տիրապետող Գօզանօղլուներու գործած բռնութիւնները, որոնց տակ ճգնուած կ'ապրէր Միսի, Վահկայի և Հաճընի հայ բնակչութիւնը, ծայրաստիճանի կը մտահոգէն Կիրակոս Կաթողիկոսը<sup>27</sup> և գուշակելով որ իր տոհմին նահատակներուն բախտին ինքն ալ կրնայ արժանանալ, գրաւոր խնդրանք կը ներկայացնէ կայսրեական

<sup>25</sup> Հիշատակվող երկու աշխատություններն էլ գրվել են 1855-1866 տարիներին: St u Bowen H., Ahmad Djewdet Pasha, The Encyclopaedia of Islam, vol. 1, ed. by H. A. R. Gibb, J. H. Kramers etc., Leiden-London, Brill-Luzac, 1960, p. 284-286.

<sup>26</sup> Yavuz N., նշվ. աշխ., էջ 115, Şam E. A., նշվ. աշխ., էջ 67-68:

<sup>27</sup> Սսի 36-րդ կաթողիկոս Կիրակոս Բ (1855-1866) Աջապահեան:

պալատ, Գօզանեաններու զուլումին վերջ մը դնելու համար»<sup>28</sup>: Մակայն միամտություն կլիներ կարծել, թե տեղացի ոչ մուսուլմանների կրած զրկանքները կարող էին անհանգստացնել իշխանություններին, ավելին՝ հիմք հանդիսանալ նման ծավալուն միջոցառման համար: Ընդհակառակը՝ դա նպաստավոր առիթ էր այս տարածքներում բնակվող հայության կիսանկախ կարգավիճակին վերջ դնելու համար: Մեր այս կարծիքը հաստատում է Ահմեդ Ջեդեթ փաշայի «Ձեկուցագրեր» աշխատության հետևյալ պարբերությունը. «Եթե գործողությունն իրականացվի գերազանց [պատրաստված] մի դիվիզիայով (firka-i askeriyye), Աստծո կամքով, Քոզանի տարածքը հնարավոր կլինի ենթարկել [կենտրոնին]: Գյավուր դադի և Քուրդ դադի խռովարարները կհնազանդեցվեն: Մակայն, Քոզանի հարևանությամբ և Մարաշին կից մի փոքր Ձեյթուն գյուղաքաղաք կա: Անհիշելի ժամանակներից ապստամբությունների մեջ է: Քանի որ բնակչությունը **հայ** է (ընդգծումը մերն է Կ. Ս.), Ֆրանսիայի կայսրը նրանց հովանավորում է: Եթե մուսուլմանները հնազանդեցվեն, իսկ նրանք մնան նույն վիճակում, շատ վատ և բավականին վնասակար դրություն կլինի: Քոզանում ինչ էլ որ իրականացվի, նույնը պետք է Ձեյթունում իրականացվի: Այդ պայմանով պատրաստ եմ գործողության անցնել»<sup>29</sup>: Այսինքն գերակշիռ հայ բնակչություն ունեցող այս քաղաքներ այցելությունը ոչ թե հայանպաստ, այլ հակահայկական կանխամտածված որոշում էր՝ կայացված Օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաների կողմից:

Կարծում ենք, որ հենց այս հանգամանքը հաշվի առնելով որոշ թուրք պատմաբաններ, ովքեր անդրադարձել են թեմային, ընդհանրապես չեն հիշատակել հայերի կամ պատմականորեն հայերով բնակեցված տարածքների, մասնավորապես

<sup>28</sup> Քելեշեան Մ., Միս-Մատեան, Պէրոս, 1948, էջ 241:

<sup>29</sup> Ahmed Cevdet Paşa, Ma'rûzât, s. 115-116.



Զեյթունի (հնում՝ Ուլնիա)<sup>30</sup> գյուղաքաղաքի մասին: Վիճակագրական տվյալների մեջ ընդամենը նշվում է «գայրի մյուսլիմ», այսինքն՝ ոչ մուսուլման, որի տակ պետք է հասկանալ հայեր<sup>31</sup>:

Նշենք նաև, որ օսմանցի կառավարիչները շատ հաճախ իրենք էին հայերի, մասնավորապես գեյթունցիների դեմ հրահրում շրջակա քոչվոր և կիսաքոչվոր ցեղերին հատկապես Զեյթունի առավել հզորության շրջանում: Ինչպես նշում է Ադասին (Կարապետ Թուր-Սարգսյան), 18-րդ դ. վերջին արդեն գեյթունցիներն այնքան են հարստանում և հզորանում, որ «ահն ու սարսափը պատեց բոլոր թիրքմենները, որոնց համար Զեյթունցին այլևս առասպելական դեռ դարձավ»<sup>32</sup>: Երբեմն հայ ժողովուրդը տեղի քոչվոր և կիսաքոչվոր ցեղերի հետ միասին պաքարում էր ընդհանուր թշնամու՝ օսմանյան կառավարիչների դեմ<sup>33</sup>: Պատահական չէ, որ Զեյթուն գյուղաքաղաքում «բարենորոգումների» իրականացումը «Բարեփոխումների հանձնախմբի» առջև դրված կարևոր խնդիրներից մեկն էր:

1865 թ. մայիսի 20-ին հանձնախումբը դուրս է գալիս Կ. Պոլսից և ուղևորվում Իսթենդերուն (Ալեքսանդրես)<sup>34</sup>: Թեպետ սկզբում որոշում էր կայացվել առաջինը հնազանդեցնել Քոզանը, սակայն Իսթենդերուն հասնելուց որոշ ժամանակ առաջ այդ որոշումը փոխվում է: Ջնդեթ փաշայի առաջարկով որոշվում է գործունեությունը սկսել Գյավուր դաղից (Bereket), ապա շարժվել Քոզանի և մյուս նախանշված ուղղություններով<sup>35</sup>:

Քոզանում հանձնախումբը սկսեց գործունեությունը սեպտեմբեր ամսին: Քոզան դաղը գտնվում էր Քոզանօղլու տոհմի<sup>36</sup> ենթակայության տակ: Ժառանգության շուրջ կռիվների արդյունքում 19-րդ դ. կեսերին այն բաժանված էր արևելյան և արևմտյան հատվածների: Թե՛ Արևելյան Քոզանի Ահմեդ ադան, թե՛ Արևմտյան Քոզանի Յուսուֆ ադան՝ չնայած նրանց նկատմամբ ցուցաբերված վստահությանը կենտրոնական իշխանությունների կողմից, չէին ենթարկվում կենտրոնին: Նույնիսկ երբ հանձնախումբը հասնում է Քոզան և իրենց գործունեության կենտրոնը հաստատում Սիս քաղաքում, նրանք չեն ներկայանում հանձնախմբի ղեկավարներին, ավելին, ինչպես նշում է Ջնդեթ փաշան, տեղի ողջ ժողովուրդը, թեպետ նստակյաց էր, Քոզանօղլու Ահմեդ ադայի հրամանով բարձրացել էր լեռները<sup>37</sup>:

Խուսափելով ոչ նպաստավոր և անձանոթ վայրում մարտեր մղելուց, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ գորքը հոգնած էր, ղեկավարությունն ընտրում է այլ մարտավարություն: Բանագնացներ են ուղարկվում Քոզանի երկու առաջնորդների և նրանց ազգականների մոտ: Նրանք առաջարկում են ընդունել տեղահանության պահանջը՝ դրա դիմաց խոստանալով պահպանել նրանց իրավասությունները, ավելին տալ նոր տիտղոսներ և բեյլիքից ստացվող եկամուտը<sup>38</sup>: Նրանց է հանձնվում նաև նախապես պատրաստված և գրի առնված համաներման հայտարարագիրը: Բարենորոգումների ոգուն հավատարիմ՝ որևէ վայրում փոփոխություններ կատարելուց առաջ հրապարակվում էր համաներում, ապա նոր սկսվում էին հիմնական գործողությունները<sup>39</sup>:

<sup>30</sup> 19-րդ դ. երկրորդ կեսին այն մտնում էր Սարաշի *սանջաքի* (գավառի) մեջ:

<sup>31</sup> St. u. Halaçoğlu Y., նշվ. աշխ., էջ 1-20:

<sup>32</sup> Ադասի, Զեյթուն եւ իր Շրջականները, Պէյրուս, 1968, էջ 56:

<sup>33</sup> Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ. 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 84:

<sup>34</sup> Yavuz N., նշվ. աշխ., էջ 122:

<sup>35</sup> Ahmed Cevdet Paşa, Tezâkir, s. 108.

<sup>36</sup> Նրանց ծագման պատմությունը այնքան էլ պարզ չէ և դուրս է մեր ուսումնասիրության շրջանից:

<sup>37</sup> Ahmed Cevdet Paşa, Ma'rûzât, s. 157.

<sup>38</sup> Dumont P., նշվ. աշխ., էջ 385:

<sup>39</sup> Şam E. A., նշվ. աշխ., էջ 74:



Աշիրեթի ստորին շերտի վրա ազդելու համար հանձնախմբի անդամները գործի են դնում կրոնը: Ինչպես նշում է Ջեդեթ փաշան, Միս հասնելուն պես նրանց առաջին գործն է եղել Ուրբաթօրյա նամագի<sup>40</sup> (իսլամական աղոթք) կազմակերպումը, որը նրա խոսքերով Քոզան դաղը տեղից շարժելն է<sup>41</sup>:

Մուսուլման բնակչության համակրանքը շահելու համար հանձնախմբի ղեկավարներն իրենց ծրագրերի մեջ են ընդգրկում Հաճընի մյուֆթիին (հոգևոր առաջնորդ, քարոզիչ): Անմասն չի մնում նաև Սսի հայոց կաթողիկոս Գիրակոս Բ-ն: Նրա քարոզներով հայ բնակչությունը իջնում է լեռներից: Միս քաղաքին և նրա հարակից շրջաններին, ինչպես նաև Սսի հայոց կաթողիկոսությանը և առհասարկ հայ առաքելական եկեղեցու պատմությանն Ահմեդ Ջեդեթ փաշան անդրադարձել է իր «Հուշագրեր» աշխատության մեջ<sup>42</sup>:

Այսպես, Միս քաղաքում երկարատև բնակչություններից հետո Արևմտյան Քոզանի առաջնորդ Ահմեդ աղան համաձայնվում է 2500 քուրուշ (Օսմանյան կայսրության դրամական միավորը) տարեկան եկամուտով «փաշայի» տիտղոսով նշանակվել Քյութահյայի կառավարիչ<sup>43</sup>: Նրա եղբայրը պետք է ստանար 1000 քուրուշ, իսկ հայրը՝ 4000 քուրուշ, և պետք է հաստատվեր Քոնիա քաղաքի մերձակայքում իրեն հանձնված հողակտորի վրա: Ինչ վերաբերվում է Արևելյան Քոզանի առաջնորդ Յուսուֆ աղային, նրան առաջարկվում էր 2500 քու-

<sup>40</sup> Ուրբաթ օրը համարվում է սրբազան օր բոլոր մուսուլմանների համար և այդ օրվա համընդհանուր աղոթքը շատ մեծ նշանակություն ունի հավատացյալների համար:

<sup>41</sup> Ahmed Cevdet Paşa, Ma'rûzât, s. 158.

<sup>42</sup> Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 234-239. «Հուշագրության» համապատասխան հատվածի թարգմանությունը՝ ծանոթագրություններով տե՛ս Շիրոյան Կ., Պատմագիր Ահմեդ Ջեդեթ փաշան Սսի կաթողիկոսության մասին, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, խմբ. Ռ. Սաֆրաստյան, Երևան, 2011, էջ 156-168:

<sup>43</sup> Yavuz N., նշվ. աշխ., էջ 125:

րուշ տարեկան եկամուտ, սակայն նա պետք է տեղափոխվեր Սեբաստիա: Քոզանօղլու Յուսուֆ աղայի եղբայրներին նույնպես առաջարկվում էր որոշակի գումարի դիմաց հեռանալ այդ վայրերից և հաստատվել Կեսարիայում՝ հատուկ հսկողության տակ (göz hapisi): Քոզանօղլուների տոհմին պատկանող մյուս աչքի ընկնող անդամների մի մասը տարբեր պաշտոններով տեղափոխվում են Կ. Պոլիս, իսկ առավել խոտվարարները՝ նորաստեղծ Թունա վիլայեթ<sup>44</sup>:

Մինչև հոկտեմբեր ամիսը հանձնախումբը գրեթե ավարտին է հասցնում հիմնական ծրագիրը: Առանց գենք գործադրելու Քոզանօղլուները և նրանց ազդեցության տակ գտնվող ողջ Քոզան դաղը և հարակից շրջանները հնազանդեցվում են: Ավելին, Ահմեդ Ջեդեթը դիմում է Բ. Դոանը հարկացուցակներ կազմելու և անհրաժեշտ զինվորներին հավաքագրելու հրաման տալու համար<sup>45</sup>:

Հանձնախմբի հետագա գործունեությունը Սսում դադարեցվում է, քանի որ քաղաքում բռնկվում է ժանտախտի համաճարակ, որի զոհ է դառնում նաև Սսի Հայոց կաթողիկոսը<sup>46</sup>:

Օգտվելով այդ առիթից՝ Քոզանօղլու Յուսուֆ աղան փորձում է իր շուրջը համախմբել իրեն հավատարիմ մնացած ցեղապետներին և վերահաստատել Քոզանի նախկին կիսանկախ վիճակը, սակայն քուրդ Իսմայիլ փաշան՝ ստանալով «Բարեփոխումների հանձնախմբի» համաձայնությունը՝ անցնում է հարձակման: Նրան են միանում նաև հանձնախմբի առողջ զինվորները: Ապստամբությունը արագորեն ճնշվում է: Որոշում է կայացվում Յուսուֆ աղային իր մերձավորների հետ ուղարկել մայրաքաղաք, սակայն փախուստի դիմելու անհաջող

<sup>44</sup> Şam E. A., նշվ. աշխ., էջ 76:

<sup>45</sup> Dumont P., նշվ. աշխ., էջ 386:

<sup>46</sup> Քելեշեան Ս., նշվ. աշխ., էջ 241:



փորձից հետո նա սպանվում է իրեն հսկող ոստիկանի (karakol) կողմից<sup>47</sup>: Այդ միջադեպից հետո Քոզանօղլուների բուլոն ազգականները, որ պետք է տեղահանվեին և տարբեր վայրերում վերաբնակեցվեին, բերվում են Մամսուն և այնտեղից ուղարկվում Կ. Պոլիս: Նրանց ունեցվածքը բռագրավվում է և հանվում վաճառքի<sup>48</sup>:

Քոզանդաղի փաստացի տերերին տարածքից հեռացնելուց հետո սկսվում է վարչական բարեփոխումների և քոչվոր ու կիսաքոչվոր *աշիրեթներին* նստակյաց դարձնելու փուլը:

«Վիլայեթների մասին օրենքի» շրջանակներում Քոզանի *սանջաքը* բաժանվում է չորս *քազայի* (գավառակի)՝ Միս, Բելյանքոյ, Հաճըն և Քարսը-Ջյուլքադրիյե (Քադիրլի): Գավառի ղեկավարությունը հանձնվում է *միրիլիվա* Հյուսեյին Հյուսնու փաշային<sup>49</sup>: Կարգ ու կանոնը պաշտպանելու համար ստեղծվում է ոստիկանություն (zaptiye), որի հրամանատարությունը հանձնվում է քուրդ Իսմայիլ փաշային:

Նորաստեղծ Քարսը-Ջյուլքադրիյեյում հիմնականում բնակեցվեցին Յուսուֆ աղայի ապստամբությանը մասնակցած Մուսթասա շրջանի Քարինթի և Մաթթընթը *աշիրեթները*, որոնց գյուղերը հիմնահատակ ավերվեցին: Նույն շրջանում բնակվող թաթարցիները բնակեցվեցին Փազարյերիյում, իսկ բոզդոզանները՝ Հեմիթեում, որոնք գտնվում էին Քարսը-Ջյուլքադրիյեյի մերձակայքում: Թուրքմենական ցեղերից սարքընթըլըները ամրակցվեցին Ադանայի և Սսի միջև ընկած տարածքին, որը նրանց ձմեռելու վայրն էր<sup>50</sup>: Այս ընդարձակ շրջանի բարեփոխման աշխատանքները շարունակվեցին նաև հետագայում:

<sup>47</sup> Մանրամասն տե՛ս Ahmed Cevdet Paşa, Tezâkir, s. 183-188.

<sup>48</sup> Dumont P., նշվ. աշխ., էջ 386:

<sup>49</sup> Halaçoğlu Y., նշվ. աշխ., էջ 14:

<sup>50</sup> Ahmed Cevdet Paşa, Tezâkir, s.

Դեկտեմբեր ամսին հանձնախմբի անդամները վերադառնում են Կ. Պոլիս: Ահմեդ Ջեդեթ էֆենդին 1868 թ. ստանում է «փաշայի» տիտղոս և նշանակվում նորաստեղծ Հալեպի *վիլայեթի վալի* (նահանգապետ)<sup>51</sup>: Նոր նահանգը բաղկացած էր Հալեպ, Փայաս, Ադանա, Քոզան, Մարաշ և Ուրֆա *սանջաքներից*: Իբրահիմ Դերվիշ փաշան ուղարկվում է Լիբանան որպես 5-րդ բանակի հրամանատար<sup>52</sup>: Ջեյթունի «բարենորոգումը», որ կարևոր տեղ էր զբաղեցնում հանձնախմբի ծրագրերում, Ահմեդ Ջեդեթ փաշան իրականացնում է արդեն Հալեպի նահանգապետի պաշտոնում<sup>53</sup>:

Այսպիսով, «Բարեփոխումների հանձնախումբը» հիմնականում իրականացրեց իր առջև դրված նպատակները: Պատմական հայոց Կիլիկիայում բնակվող կիսաքոչվոր ցեղերը տեղահանության և ճնշումների արդյունքում հիմնականում հնազանդվեցին և սկսեցին անցնել նստակյաց կենսակերպի: Թեպետ 20-րդ դ. կեսերին անգամ հնարավոր էր հանդիպել կիսաքոչվոր ցեղերի, որոնք ամբողջությամբ նստակեցության չէին անցած:

Ինչ վերաբերվում է այս տարածքում ապրող հայերին՝ նրանց նկատմամբ իշխանությունները կիրառեցին բիրտ ուժի քաղաքականություն, իսկ դարավերջին և 20-րդ դ. սկզբին համապետական էթնիկ գտումների քաղաքականությունը հայաթափեց պատմական հայոց Կիլիկիայի թագավորության տիրույթները:

<sup>51</sup> Aliye Fatma, Ahmed Cevdet Paşa ve Zamanı, İstanbul, 1995, s. 8.

<sup>52</sup> Halaçoğlu Y., Fırka-i Islâhiye, İslâm Ansiklopedisi, c. 13, 1996, s. 36.

<sup>53</sup> Շիրոյան Կ., Օսմանյան «Բարեփոխումների հանձնախումբը» Ջեյթունում 1865-1867 թթ. (ըստ թուրք պատմագիր Ահմեդ Ջեդեթ փաշայի «Ջեկուցագրեր» աշխատության), Մերձավոր Արևելք, հ. VII, Երևան, 2011, էջ 233-241:



**РЕФОРМЫ В ЮГО-ВОСТОЧНЫХ ПРОВИНЦИЯХ (КИЛИКИЯ)  
ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (1865-1867)**

**Каролина Саакян  
(резюме)**

Для осуществления реформ в “полуавтономных” юго-восточных провинциях Анатолии (Киликия) в 1865-1867 годах Османские власти организовали “Комитет Реформ” (Fırka-i Islâhiye). Через шесть месяцев комитет завершил свою миссию. Туркменские и курдские кочевые племена, издавна населявшие эти земли, были вынуждены признать внедренные комитетом изменения.

**REFORMS IN THE SOUTHEASTERN REGIONS (CILICIA) OF  
THE OTTOMAN EMPIRE (1865-1867)**

**Karolina Sahakyan  
(summary)**

In 1865-67 the “Commission of Reforms” (Fırka-i Islâhiye) was organized by high rank Ottoman statesmen to make reforms in the “sami-autonomous” southeastern regions of Anatolia (Cilicia). In 6 months the commission finished its mission. Turkmen and Kurdish nomad tribes who were living in this lands for ages, had to admit the new changes that commission introduced.

**Թուրքեն Մեյքոնյան  
բ.գ.թ., դոցենտ**

**ԽՍՀՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԹՈՒՐԲԻԱՅԻ  
ԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ  
ՈՐՈՇ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
(1945-1965 թթ.)**

**Բանալի բառեր՝ ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերություններ,  
Հայկական հարց, բռնի իսլամացված հայեր, հայրենադար-  
ձություն**

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ-ի և նացիստական Գերմանիայի չպատերազմող դաշնակցի՝ Թուրքիայի հարաբերություններում արձանագրվեց լուրջ լարվածություն, որը կապված էր ինչպես Մոսկվայի ներկայացրած արդար հողային պահանջատիրության, այնպես էլ սևծովյան նեղուցների ռեժիմի փոփոխության հարցի բարձրացման հետ<sup>1</sup>: ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունների այդ լարված փուլում Հայկական հարցն ու ընդհանրապես հայկական թեմատիկան բացահայտ ու քողարկված ձևով եկավ քաղաքական օրակարգ: Ընդ որում, երբեմն այդ զարգացումները շաղկապված էին միմյանց և տեղի էին ունենում զուգահեռաբար: Դրանց շարքում հստակ առանձնանում էին Թուրքիայում ապրող հայերի վիճակի, թվաքանակի, հնարավոր հայրենադարձման, նրանց նկատմամբ կիրառվող հալածանքի թեմաները, որոնց վերաբերյալ խորհրդային արխիվային փաստաթղթերում (հիմնականում արտաքին քաղաքական գերատես-

<sup>1</sup>Արմենիա և советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг., (под редакцией Армана Киракосяна), Ереван, 2010, Մեյքոնյան Բ., Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1947 թվականներին. սևծովյան նեղուցների խնդիրը և Հայկական հարցը, Երևան, 2009:



չությունը պատկանող) պահպանվել են բավական ուշագրավ տվյալներ և փաստեր: Խորհրդային իշխանությունները իրենց դիվանագիտական կառույցների միջոցով հստակ տվյալներ և վերլուծություններ են ստացել Թուրքիայում բնակվող հայերի թվաքանակի, տեղաբաշխվածության, բռնի իսլամացված հայության, ինչպես նաև Ստամբուլի հայ համայնքի ներքին խնդիրների վերաբերյալ: Այդ թեմաների շուրջ հետաքրքրությունը հատկապես ակտիվ է եղել 1945-1946 թթ., ինչը ապացուցում են նաև դիվանագիտական զեկուցագրերը և տեղեկանքները: Սակայն հետագայում էլ խորհրդային դիվանագիտական կառույցները ուշադրության կենտրոնում են պահել Թուրքիայի հայության տարատեսակ խնդիրները:

Կոնկրետ 1940-ական թվականների կեսերին, կապված ԽՍՀՄ կողմից Թուրքիայից Կարսի և Արդահանի նահանգների ետ պահանջելու և այդ տարածքները հայերով վերաբնակեցնելու հարցի հետ, սկսել էր հատուկ կարևորվել Թուրքիայում գոյատևած հայերի թվաքանակը և հնարավոր հայրենադարձման խնդիրը: Ընդ որում, խորհրդային իշխանությունները հետաքրքրվում էին Թուրքիայի տարածքում բնակվող հայության և՛ քրիստոնյա, և՛ բռնի իսլամացված խմբերով ու արդեն 1945 թ. հուլիսի 25-ին Ստամբուլում ԽՍՀՄ հյուպատոսությունից Մոսկվա ուղարկված «հույժ գաղտնի» դասիչով զեկուցագրում ներկայացվում են տվյալներ Թուրքիայի հայերի և նրանց թվաքանակի վերաբերյալ: Չեկուցագրում նշվում է, որ դա արվում է «համաձայն հանձնարարականի»<sup>2</sup> այսինքն՝ Մոսկվայից եղել է հատուկ հանձնարարական: Արխիվային այս փաստաթղթում ներկայացվում է, որ Թուրքիայում հայերի թիվը, ըստ թուրքական պաշտոնական տվյալների, 1935-43 թթ. տատանվում է 57 000-ից մինչև 64 000, սակայն ըստ ԽՍՀՄ հյուպատոսարանի ձեռք բերած տվյալների՝ միայն Ստամբուլում այդ ժամանակ

ապրել է 75 000 հայ, իսկ արևելյան շրջաններում շուրջ 25 000<sup>3</sup>: Այդ նույն զեկուցագրին կից տեղեկանքում նշվում է, որ Փոքր Ասիայում, այսինքն՝ Թուրքիայի արևելյան շրջաններում բռնի իսլամացված հայերի թիվը գերազանցում է 100 000-ը<sup>4</sup>. «Այս 100 հազարը այն հայերն են, որ չնայած իսլամացմանը դեռևս կարող են ընկալվել որպես հայեր: Իսկ եթե հաշվենք նաև նրանց, ովքեր մանուկ հասակում՝ 1915-ին են ենթարկվել իսլամացման և ներկայումս մոռացել են անգամ իրենց ծագման մասին, ապա հայերի թիվը ավելի մեծ կլինի: Սակայն այս վերջին խմբի մարդկանց հնարավոր չէ որպես հայ դիտարկել»<sup>5</sup>:

ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերություններում բացահայտ և քննարկված լարվածություն ստեղծող հանգամանքներից էր նաև հետպատերազմյան տարիներին սփյուռքահայերի սկիզբ առած ներգաղթը դեպի Խորհրդային Միություն, որը չի շրջանցել թուրքահայությանը: Մեր կարծիքով Թուրքիայում գոյատևած հայությունը ձգտում էր արտագաղթել և տեղափոխվել Խորհրդային Հայաստան առնվազն երկու նկատառումներից ելնելով. Նախ՝ դա մի միջոց էր ազատվելու թուրքական բռնապետությունից ու շարունակական հալածանքներից և երկրորդ՝ հայերին գրավում էր պատմական հայրենիքում հաստատվելու գաղափարը՝ մանավանդ Կարսի ու Արդահանի նահանգների ազատագրման շուրջ տարածվող լուրերի համատեքստում: Թուրքական իշխանությունները այդ ժամանակ գործի դրեցին բռնության և հալածանքի տարբեր միջոցներ դեպի ԽՍՀՄ հայերի արտագաղթը կասեցնելու կամ նվազագույնի հասցնելու համար, որը նույնպես առնչվում էր վերոնշյալ երկու հանգամանքների հետ: Թուրքիայում ԽՍՀՄ հյուպատոսարանի աղբյուրները փաստում են, որ իշխանությունները սկսեցին տարատեսակ բռնություններ կիրառել ինչպես քրիստոնյա, այնպես էլ

<sup>3</sup>ԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 1:

<sup>4</sup>ԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 3:

<sup>5</sup>ԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 3:

<sup>2</sup>ԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 1:



իսլամացված հայերի նկատմամբ: Այս վերջին խմբի հայերի մասին ԽՍՀՄ հյուպատոսարանի հույժ գաղտնի դասիչով զեկուցագրում նշվում է. «Վստահ ենք, որ թուրքական կառավարությունը այն պատճառաբանությամբ, որ շատ հայեր (իսլամացված Ռ.Մ.) չունեն անձնագրեր, կամ էլ ընդունել են իսլամ և համարվում են թուրքեր՝ կթաքցնեն մեծ թվով հայերի»<sup>6</sup>: Ի դեպ, այն, որ 20-րդ դարի կեսերին Թուրքիայում բռնի իսլամացված հայության որոշակի հատվածին չէր տրվել անգամ անձնագիր, իրողություն է, որին վերոնշյալ զեկուցագրում տրվում է հետևյալ որակումը. «սա անհավանական է, բայց փաստ»<sup>7</sup>: Ջեկուցագրում հատուկ ուշադրություն էր դարձվում տարբեր նահանգներում բնակվող բռնի իսլամացված հայության գոյության փաստի վրա և արվում հստակ առաջարկ. «Անհրաժեշտ է ուշադիր հետաքննել ամեն նահանգ՝ հայտնաբերելու համար այն հայերին, ովքեր ցրված են ամենուր»<sup>8</sup>: Ի դեպ, այդ ժամանակ ևս թուրքական իշխանությունները ոչ միայն ճնշում են 1915-ին բռնությամբ կրոնափոխված հայերին, այլև սկսում են կիրառել բռնի իսլամացման քաղաքականությունը գոյատևած փոքրաթիվ քրիստոնյա հայության նկատմամբ: Այդ ցեղասպանական բնույթի արարքի մասին նույնպես փաստերի ենք հանդիպում վերոնշյալ զեկուցագրում<sup>9</sup>:

Հայերի ներգաղթի հարցով հետաքրքրված էր և ակտիվ զբաղվում էր (նաև ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների հանձնարարությամբ և թույլտվությամբ) Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ VI-ը, ով նամակներով դիմել է եկեղեցու արտասահմանյան բոլոր թեմերի առաջնորդներին կոչ անելով ցուցաբերել համակողմանի աջակցություն սփյուռքահայերի դեպի Խորհրդային Հայաստան ներգաղթի գործին: Նմանատիպ

<sup>6</sup>ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 5:

<sup>7</sup>ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 6:

<sup>8</sup>ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 6:

<sup>9</sup>ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 5:

մի գրություն է ուղարկվում նաև Պոլսո Հայոց պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանին: Վերջինս 1946թ. հոկտեմբերի 18-ի իր պատասխան գրության մեջ Կաթողիկոսին հայտնում է, որ ներգաղթի ձեռնարկը համարում է. «ազգոգուտ եւ սրտին մոտիկ խնդիր»<sup>10</sup>: Բացի այդ, Գևորգ արքեպիսկոպոսը տեղեկացնում է, որ Խորհրդային Հայաստան ներգաղթելու համար բազմաթիվ հայերն են գրանցվել ԽՍՀՄ հյուպատոսարանում ինչպես ստամբուլաբնակ, այնպես էլ. «Անատոլիի զանազան տեղերում մեջ գտնուող հայեր ալ»<sup>11</sup>: Ուշագրավ է, որ արքեպիսկոպոս Արսլանյանը ընդգծում է հատկապես արևելյան շրջաններից հայերի ներգաղթ կազմակերպելու հարցի կարևորությունը. «ՆԱԽԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ տալ այն բազմահազար հայերուն, որոնք Անատոլիի զանազան գաւառներուն մեջ, առավելապես զիւղերու եւ շէներու մեջ, ցրքուն ու դառն վիճակի մը մէջ կը գտնուին»<sup>12</sup>:

1945-1946 թթ. ընթացքում Թուրքիայում ԽՍՀՄ դիվանագիտական ներկայացուցչությունները պարբերաբար զեկուցագրեր և տեղեկանքներ են ուղարկել Մոսկվա, որտեղ ներկայացրել են թուրքական հասարակական-քաղաքական օրակարգում, մամուլում այս խնդրի շուրջ տեղի ունեցող զարգացումները, ինչպես նաև փոխանցել արժեքավոր փաստեր և տեղեկություններ: Այդ զեկուցագրերը և տեղեկանքները մեծ մասամբ կրել են «գաղտնի» կամ «հույժ գաղտնի» դասիչները: Այսպես, Ստամբուլում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոս Վ. Գրուբյադկովը 1946 թ. հունվարին իր զեկուցագրում անդրադառնում է Թուրքիայի հայերի շրջանում ներգաղթի առաջացրած ոգևորությանը և թուրքական իշխանությունների ու մամուլի ագրեսիվ պահվածքին: Ըստ հյուպատոսի, չնայած որ թուրքական մամուլը գրում է, որ ԽՍՀՄ-ի որոշումը ծիծաղելի է և ոչ մեկը չի

<sup>10</sup>ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 136, թ. 2:

<sup>11</sup>ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 136, թ. 2:

<sup>12</sup>ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 136, թ. 4:



ցանկանում գնալ «բոլշևիկյան դրախտե, սակայն հայերը զանգվածաբար դիմում են հյուպատոսարան դեպի ԽՍՀՄ ներգաղթելու արտոնություն ստանալու համար: «Ընդունելության օրերին սկսած առավտովա 6-7-ից հյուպատոսարանի մուտքի մոտ հավաքվում են մեծ թվով հայեր, որպեսզի հասցնեն հերթ պահել: Լինում են օրեր, երբ մի քանի հարյուր հոգանոց հերթեր են գոյանում»<sup>13</sup>: Հյուպատոսը նշում է, որ դիմողները ոչ միայն Ստամբուլից էին, այլև «Անատոլիայի հեռավոր գավառներից»: Խոսելով թվային տվյալների մասին հյուպատոս Գրուբյադկովը նշում է, որ միայն 1945 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ ներգաղթելու ցանկություն հայտնած հայերի թիվը եղել է մոտ 15 000<sup>14</sup>: Իսկ անդրադառնալով բռնի իսլամացված հայության թվաքանակին հյուպատոսը նշում է 200 000 թիվը<sup>15</sup>:

Թուրքական իշխանությունները Թուրքիայից դեպի ԽՍՀՄ հայերի ներգաղթի հարցը դիտարկում են նաև հակաքարոզչության համատեքստում և դրա համար սկսում են կիրառել Ստամբուլի հայ համայնքի որոշ ներկայացուցիչների, որոնք առաջնորդվում են երբեմն պարտադրանքով, իսկ երբեմն էլ ծառայելու անգուսպ ցանկությամբ և իներցիայով: Այսպես, տխրահռչակ հայազգի նախկին պատգամավոր Պերճ Թուրքերը (Քերեսթեջան)<sup>16</sup> 1945 թ. դեկտեմբերի 28-ին թուրքական մամուլում հրապարակել է մի նամակ, որտեղ նշել է, որ ԽՍՀՄ հյուպատոսություն հայերի դիմումները «զգվելի տպավորություն են թողել»<sup>17</sup>:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 102, թ. 1:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 102, թ. 2:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 102, թ. 2:

<sup>16</sup> Թուրքիայի Հանրապետության հայազգի պատգամավորների և նրանց գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960թթ.), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հ. 7, էջ 166-186:

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 197, թ. 2:

Հետաքրքիր է փաստել, որ Թուրքիայի հայերի այդ երկրից արտագաղթելու և Խորհրդային Հայաստան տեղափոխվելու ցանկությունն ու ձգտումը նկատվել է նաև հաջորդ երկու տասնամյակներում: Մասնավորապես 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի հույների և հայերի դեմ իրականացված ջարդարարություններից<sup>18</sup> (պոգրոմ) հետո արտագաղթը նոր թափ և ծավալներ է ընդգրկել ու շարունակվել հաջորդող տարիներին: Այդ մասին ևս խորհրդային արխիվային փաստաթղթերը պարունակում են ուշագրավ տեղեկատվություն: Այսպես, Ստամբուլում 1959 թ. մարտի 7-ին հյուպատոսության ստաժոր Ս. Տրիշինը 1959 թ. մարտի 7-ին պատրաստած իր տեղեկանքում պատմում է Թուրքիայի հայազգի քաղաքացի Սերգո Գրիգորովուի հետ իր հարցազրույցը: Գրիգորովուն այցելել է ԽՍՀՄ հյուպատոսություն դեռևս 1955 թ.՝ նպատակ ունենալով արտագաղթել դեպի Խորհրդային Հայաստան, սակայն հյուպատոսարանից դուրս գալուց հետո ձերբակալվել է թուրքական ոստիկանության կողմից և ենթարկվել կտտանքների ու հարցաքննվել իր գալու դրդապատճառների մասին<sup>19</sup>: Ըստ ստաժոր Տրիշինի տեղեկանքում տեղ գտած փաստերի, 1955-59 թթ. ընթացքում միայն Ստամբուլից արտագաղթել են ավելի քան 12 հազար հայեր<sup>20</sup>:

1950-ականների խորհրդային դիվանագիտական կառույցների Թուրքիայից ուղարկված տեղեկանքներում և զեկուցագրերում կրկին ուշադրության կենտրոնում է պահվում հայերի թվաքանակի ու մարդահամարների ժամանակ տվյալների խեղաթյուրման հարցերը: 1958 թ. դեկտեմբերի 29-ին Ստամբուլում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության պատրաստած տեղե-

<sup>18</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2013, հ. 8, էջ 144-156:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 266, թ. 1:

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 266, թ. 1:







խորհրդին, այսինքն՝ Ստամբուլի հյուպատոսարանը, այնուամենայնիվ, ինչ որ ընթացք տվել է Հայրենիքին Գյոչերի դիմումին:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայի հայության նկատմամբ թուրքական իշխանությունների հալածանքները նոր ծավալներ են ընդգրկել կապված նաև միջազգային ասպարեզում Հայկական հարցի վերաբարձման հետ: Բացի այդ, հիշյալ ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի հայտարարած հայերի ներգաղթը, ինչ որ տեղ, դարձել է Թուրքիայում իսլամացված և ծպտյալ հայերի որոշակի ինքնաբացահայտման առիթ: Խորհրդային տարբեր կառույցների հետաքրքրվածությունը և ուշադրությունը Թուրքիայում գոյատևած քրիստոնյա և բռնի իսլամացված հայերի հարցով ցույց է տալիս, որ «հայկական ֆակտորը», թեկուզ նվազ ծավալով և ինտենսիվությամբ, շարունակել է որոշակի տեղ զբաղեցնել ոչ միայն Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ, այլև համապատասխան ազդակի դեպքում՝ նաև տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներում:

## АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ СССР ОБ АРМЯНАХ ТУРЦИИ И НЕКОТОРЫХ РАЗВИТИЯХ СРЕДИ НИХ (1945-1965)

*Рубен Мелконян*  
(резюме)

После окончания Второй мировой войны отношения СССР и невоюющего союзника Германии Турции обострились, что было связано как со справедливыми земельными требованиями Москвы, так и с вопросом изменения режима Черноморских проливов. В этот напряженный период отношений СССР и Турции армянская тематика в открытой или скрытой форме вошла в политическую повестку дня. Среди них выделяются

состояния армян Турции, их численность, возможная репатриация и гонения, которым они подвергались. Обо всем этом в советских архивных документах (в основном принадлежавших внешнеполитическому ведомству) сохранились достаточно важные сведения и факты.

## USSR ARCHIVAL DOCUMENTS ON THE ARMENIANS OF TURKEY AND SOME DEVELOPMENTS AMIDST THEM (1945-1965)

*Ruben Melkonyan*  
(summary)

After the end of World War II there was serious strain on the relations of USSR and non-belligerent ally of Germany Turkey which was connected with both just land demands of Moscow and the rising of the question of changing of the regime of Black sea straits. In this strain period of the relations between USSR and Turkey Armenian subject became the part of the political agenda in direct or sometimes hidden form. Among them the themes of the living conditions of Turkish Armenians, their quantity, possible repatriation and persecutions against them were most distinguished. There are sufficient facts and data about them in the Soviet archival documents (especially in those of Ministry of Foreign Affairs).



«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԴԸ».

ԱՆՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՎ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ 1938-1950ԹԹ..

**Բանալի բառեր. Ազգային շեֆի շրջան, ավտորիտարիզմ, անձի պաշտամունք, քեմալիզմ, թուրքական քաղաքական ավանդույթ, քաղաքական մարդաբանություն**

Թուրքիայում հանրապետության հիմնադրի՝ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի անձի պաշտամունքը ձևավորվել է դեռևս 1920-ականների կեսից, երբ հենց Քեմալի անմիջական մասնակցությամբ ստեղծվեց անցյալի, ներկայի և ապագայի նոր, հետագայում «քեմալիստական» կոչված, մեկնաբանությունը: Անձի պաշտամունքի ձևավորումն ընթացավ երկրում միակուսակցական համակարգի հաստատման հետ զուգահեռ: Իսկ Աթաթյուրքի մահից հետո՝ 1938թ. նոյեմբերից ի վեր, այն դարձավ կարևորագույն ներքաղաքական գործոն: Անհրաժեշտ է նշել, որ այդ ընթացքում զանազան քաղաքական ուժեր տարբեր կերպ և նպատակներով են օգտագործել Աթաթյուրքի անձի խորհրդանիշը: Այն դարձել է Թուրքիայում մշտական ներկայություն ունեցող մի երևույթ, որի հետ անպայման պետք է հաշվի նստեն բոլոր քաղաքական ուժերը, և դա մինևույն ժամանակ դարձավ թուրքական քաղաքական ավանդույթ<sup>1</sup>:

Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում որոշ քաղաքական գործիչներ փորձեր են ձեռնարկել երկրում հաստատել իրենց անձի պաշտամունքը: Մակայն միակ գործիչը, ում քիչ թե շատ հաջողվեց անել դա, պաշտոնապես և տևական ժամանակով ստվերում թողնել նույնիսկ Աթաթյուրքին,

<sup>1</sup> Özyürek E., Nostalgia for the Modern: State Secularism and Everyday Politics in Turkey, Duke University Press Books 2006, pp.1-4:

Թուրքիայի հանրապետական պատմության ամենաերկարակյաց քաղաքական դեմքերից մեկն էր՝ Իսմեթ Ինոնյուն: Հենց նրա նախագահության տարիներին Աթաթյուրքի անձը «լցվեց» նոր խորհրդանշական իմաստով և սկսվեց նրա կերպարի տարրաձև օգտագործումը քաղաքականության մեջ:

Սույն հոդվածում կներկայացնենք Թուրքիայի Հանրապետության պատմության ամենաառանցքային գործիչներից մեկի՝ Ի. Ինոնյուի անձի շուրջ ստեղծված պաշտամունքը և կփորձենք հասկանալ, թե ինչ տեղ է այն զբաղեցնում քեմալիզմի պատմության մեջ: Մինևույն ժամանակ մենք կուրվագծենք անհատի պաշտամունքի ձևավորման «թուրքական մոդելի» առանձնահատկությունները:

### Անհատի պաշտամունքի ձևավորումը Թուրքիայում

1923 թ. հռչակելով Թուրքիայի Հանրապետությունը՝ թուրք առաջնորդները Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ որոշեցին օսմանյան շրջանի սուլթան-խալիֆի միապետական – աստվածապետական հայեցակարգը փոխարինել նոր, արևմտյան քաղաքական հայեցակարգով: Երկրում սկսվեցին այսպես կոչված արդիականացման (մոդեռնիզացիոն) վերափոխումները, որոնք նպատակ էին հետապնդում ձևափոխել մինչ այդ առկա պետական, հասարակական և սոցիալ-մշակութային կարգերը ու դրանց փոխարեն հաստատել եվրոպական, «ժամանակակից» կարգեր: Սա իր հերթին նշանակում էր, որ Թուրքիայում ևս տեղի կունենան այնպիսի գործընթացներ, որոնք բնորոշ էին ժամանակի արևմտյան երկրներին՝ անտարակույս, դրսևորելով տեղական առանձնահատկություններ: Այդպիսի մի կարևոր հանգրվան էր նաև միակուսակցական համակարգի ստեղծումն ու անհատի պաշտամունքի ձևավորումը:

Մարդկության պատմության նորագույն շրջանի գլխավոր առանձնահատկություններից էր անհատի ժամանակակից



պաշտամունքի առաջացումը: Այս եզրն առավել մեծ ճանաչում ձեռք բերեց ԽՄԿԿ XX համագումարում Ն.Ս. Խրուշչովի ելույթից հետո, որով վերջինս բնութագրել էր ողջ ստալինյան կառավարման համակարգը: Սակայն մենք այն կկիրառենք ավելի լայն, վերլուծական իմաստով: Մեր կարծիքով «անհատի/անձի պաշտամունքը» որևէ անձի՝ շրջապատի մարդկանց հանդեպ չափազանց վսեմացման ու վեհացման խորհրդանշական արտահայտություն է: Ընդ որում, այս եզրով են բնորոշվում միայն քաղաքականության մեջ հանդես եկող կերպարները: Ժամանակակից պատմության մեջ որևէ անձի պաշտամունքի կերտման գլխավոր հատկանիշը այդ անձի հանդեպ սրբազնության (sacrality) առաջացումն է (այն հաճախ համընկնում է *հեղինակություն* և խարիզմա հասկացությունների հետ, թեև դրանք տարբեր են)<sup>2</sup>: Պետք է նկատել նաև, որ այդ սրբազնությունը ոչ թե *a priori* գոյություն ունի հասարակության մեջ, այլ այն առաջանում է որոշակի պատմական պայմաններում և կարող է ընդունել տարբեր տեսք և ձև<sup>3</sup>:

Ելնելով վերոնշյալից՝ ժամանակակից քաղաքական պաշտամունքներից առաջինը կարելի է համարել Լուի Նապոլեոն Բոնապարտի անձի պաշտամունքը, ով 1851թ. իրեն հռչակեց կայսր Նապոլեոն III<sup>4</sup>: Օգտվելով գերմանացի պատմաբան Յան Փլամփերի առաջարկած դասակարգման մեթոդից՝ կարող ենք արձանագրել հինգ առանձնահատկություններ, որոնք տիպաբանորեն բնորոշում են ժամանակակից անհատի պաշտամունքները<sup>5</sup>: **Առաջին.** համաձայն Փլամփերի, ժամանակակից անհատի պաշտամունքները *զանգվածային քաղաքականութ-*

<sup>2</sup> Shils E., Center and Periphery: Essays in Macrosociology. Chicago: The University of Chicago Press, 1975, p. 5.

<sup>3</sup> Burrin P., Political Religion: The Relevance of a Concept // History and Memory, Vol. 9, No. 1/2, p. 345.

<sup>4</sup> Плампер Я., Алхимия власти. Культ Сталина в изобразительном искусстве. Москва: Новое литературное обозрение, 2010, стр.12.

<sup>5</sup> Նույն տեղում:

յան (*mass politics*) առաջացման արդյունքն են, ինչը նշանակում է, որ անձի պաշտամունքի լեգիտիմության աղբյուրն ու հիմնական լսարանը ժողովուրդն է: **Երկրորդ** կարևոր առանձնահատկությունը ժամանակակից ՋԼՄ-ների օգտագործումն է, որն անհրաժեշտ է անձի պաշտամունքի բաղադրիչները (ֆիլմեր, նկարներ, պաստառներ և այլն) լայնորեն տարածելու համար: **Մյուս** առանձնահատկությունն այն է, որ անհատի պաշտամունքը առաջանում է միայն փակ հասարակություններում, որտեղ այն հաճախ ուղեկցվում է բռնություններով և մարդու իրավունքների սահմանափակումներով: Անձի քաղաքական պաշտամունքը անհրաժեշտ է իշխանության և հպատակների միջև հարաբերությունների որոշման համար: **Չորրորդ** հանգամանքն այն է, որ ժամանակակից բոլոր անհատի պաշտամունքները առաջանում են երկրի պատմության աշխարհիկ ժամանակաշրջանում, այն բանից հետո, երբ աստվածությունները հեռացված են հասարակության մետաֆիզիկական տարածությունից: Եվ **վերջին** առանձնահատկությունը. ժամանակակից անհատի պաշտամունքը բացառապես հայրակենտրոն երևույթ է:

Դեռևս Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից հետո սկսված քաղաքական գործընթացները էլ ավելի արագացան Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Մեծացավ սովորական քաղաքացիների քաղաքականությանը մասնակցության և գիտակցության աստիճանը: Առաջացած զանգվածայնությունը և ՋԼՄ-ների լայն տարածումը նպաստեցին Եվրոպայում ավտորիտար, ամբողջատիրական վարչակարգերի ստեղծմանը, որոնց համակարգում կարևոր գործոն էր անհատի պաշտամունքի ինստիտուտը: Դրանցից առավել ազդեցիկները իտալական ֆաշիստական իշխանությունն էր Բ. Մուսոլինիի գլխավորությամբ, գերմանական նացիզմը՝ Ա. Հիտլերի ղեկավարությամբ, բոլշևիկյան վարչակարգը՝ Ի. Ստալինի առաջնորդությամբ:



Եվրոպայում տեղի ունեցող գործընթացների ազդեցության տակ, ինչպես նաև ներքաղաքական զարգացումների արդյունքում հանրապետության հռչակումից ոչ շատ անց Թուրքիայում ձևավորվեց անհատի պաշտամունք, որն ամբողջությամբ համապատասխանում է վերոշարադրյալ տիպաբանությանը: Անհատի պաշտամունքի *օբյեկտ* հանդիսացավ ազգայնական շարժման առաջնորդ, զինվորական Մուսթաֆա Քեմալը:

Արդեն 1925թ. Թուրքիան ավստրիացի քանդակագործ Հենրիխ Կրիպպելին պատվիրեց քանդակել Մուսթաֆա Քեմալի արձանը: Այն տեղադրվեց 1926թ. Ստամբուլի Սարայբուրնու այգում՝ դառնալով Թուրքիայի Հանրապետության առաջին արձանը<sup>6</sup>: Հաջորդիվ սկսվեց Մուսթաֆա Քեմալին պատկերող արձանների ու կիսանդրիների տեղադրման յուրատեսակ «շքերթ» երկրի ողջ տարածքում:

Անձի պաշտամունքի ստեղծման մեխանիզմները հասկանալու տեսանկյունից հատկապես արժե անդրադառնալ Ստամբուլի կենտրոնական վայրերից մեկում՝ Թաքսիմի հրապարակում տեղադրված «Հանրապետության արձան»-ի պատմությանը: Այն տեղադրվել է 1928թ. և քանդակվել է հայտնի իտալացի քանդակագործ Պիետրո Կանոնիկայի կողմից<sup>7</sup>: Հուշարձանը կարելի է համարել Թուրքիայում անհատի պաշտամունքի ձևավորման ամբողջական մի ներկայանակ: Այն իր

ճարտարապետական լուծումներով Մուսթաֆա Քեմալին ներկայացնում է որպես «ազգային ազատագրական պայքարի» առաջնորդ՝ շրջապատված միայն անհայտ զինվորներով: Իսկ հուշարձանի հարավային կողմում կարելի է տեսնել Մուսթաֆա Քեմալին հավատարիմ որոշ անձանց արձանները (Իսմեթ Ինոնյու, Ֆևզի Չաքմաք և այլք), որոնք շրջապատում են Քեմալին: «Անկախության պատերազմի» ընթացքում Աթաթյուրքի հետ գործին հավասարապես առաջնորդած ազդեցիկ գործիչներ Քյազըմ Քարաբեքիրը, Ռաուֆ Օրբայը, Ալի Ֆուադ Ջեբեսոյը, Ռեֆաթ Բեկեն և այլք ընդհանրապես պատկերված չէին<sup>8</sup>, և դրա պատճառներից էր նախկին զինակիցների միջև առաջացած քաղաքական խորը տարաձայնությունները: Արձանի տեղադրումից մեկ տարի առաջ Մուսթաֆա Քեմալը հանդես էր եկել իր հայտնի «Ճառ»-ով, որով, փաստացի, սեփական մեկնաբանությամբ խմբագրել էր Թուրքիայի վերջին տարիների պատմական իրադարձություններն ու դերերի «բաշխում» կատարել<sup>9</sup>: Համաձայն այդ շարադրման, Քեմալին վերապահված էր գլխավոր, միակ ազատարարի և գերագույն առաջնորդի դերը: Հանրապետության հռչակումից հետո Մուսթաֆա Քեմալին հակադիր ճամբարում հայտնված վերոհիշյալ գործիչները մնացին լուսանցքում և իրենց հասցեին խիստ մեղադրանքներ ստացան:

Սա, փաստացի, Քեմալի անձի պաշտամունքի հաստատման սկիզբն էր Թուրքիայում, որին զուգահեռ ընթացան Մուսթաֆա Քեմալի մենիշխանության և միակուսակցական համակարգի հիմնավորման գործընթացները: Կուսակցությունը և իշխանությունները նպաստում էին, որպեսզի նախագահ Քեմալը

<sup>6</sup> Cumhuriyet Türkiye'sinin ilkeykeli, <http://www.sozcu.com.tr/2013/gundem/cumhuriyet-turkiyesinin-ilk-heykeli-382686> (վերջին այցելությունը՝ 04. 09. 2015 թ.): Սարայբուրնու Ստամբուլի այն վայրն է, որտեղից Մուսթաֆա Քեմալը 1919թ. մեկնել էր Սամսուն:

<sup>7</sup> Հետաքրքրական է, որ արձանի համար կազմակերպված ժողովրդական հանգանակության ժամանակ ամենամեծ ներդրումն ունեցել է հայազգի Պերճ Քերեսբեջյանը (Թյուրքեր), ով հետագայում կղառնա Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի պատգամավոր: Տե՛ս Մեյլոնյան Ռ., Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960թթ.), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հ. 7, էջ 166-186:

<sup>8</sup> Փոխարենը, Աթաթյուրքի ետևում երևում են ԽՍՀՄ ներկայացուցիչներ Ս. Վ. Ֆրունզեի և Կ. Վ. Վորոշիլովի արձանները: Դրանք տեղադրվել էին ի նշան երախտագիտության ԽՍՀՄ-ին՝ ազգայնական շարժման ժամանակ վերջինիս ցուցաբերած օգնության համար:

<sup>9</sup> Mustafa Kemal Atatürk, Nutuk, <http://ekitap.kulturturizm.gov.tr/TR.81464/nutuk.html>



հայտնվեր ամենուր՝ դրա համար օգտագործելով ՋԼՄ-ները: Նա շրջում էր երկրով մեկ, հանդիպում մարդկանց մեծ խմբերի հետ և փորձում առաջ տանել իշխանության առաջարկած վերափոխումները:

Այստեղ տեղին է փաստել, որ Մ. Քեմալի անձի պաշտամունքը «արտադրվում» և «հանրայնացվում» էր պետության կողմից: Թեև Քեմալը ազգայնական շարժման հաղթանակից հետո դարձել էր հայտնի հերոս, այնուամենայնիվ, նրա գլխավորած կառավարության կողմից իրականացվող մոդեռնիզացիոն վերափոխումները չէին վայելում երկրի բնակչության մեծամասնության հավանությունը: Ուստի Մ. Քեմալի կերպարը դարձավ կարևոր գործիք, որպեսզի հաստատված վարչակարգը կարողանա տեղ հասցնել իր ուղերձները ժողովրդին և իրականացնել իր ցանկացած քաղաքականությունը: Նրա անհատի շուրջ սկսվեց կառուցվել հատուկ սրբազնային կերպար, որը պետք է դառնար իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության գլխավոր «գովազդային» հենքն ու հիմնավորումը: Ամփոփելով կարող ենք ասել, որ իր անձի շուրջ ստեղծված սրբազնային կերպարի միջոցով Աթաթյուրքը դարձավ Թուրքիայի «Առաջին մարդը»:<sup>10</sup>

### «Երկրորդ մարդը». Իսմեթ Ինօնյու

Քեմալի մահից հետո, 1938թ. նոյեմբերի 11-ին ԹԱՄԺ Թուրքիայի նոր նախագահ ընտրեց Իսմեթ Ինօնյուին: Նրա թեկնածությունը անցավ միաձայն, և սկսվեց Թուրքիայի պատմութ-

<sup>10</sup> Այստեղ մենք օգտագործում ենք Մ. Աթաթյուրքի կենսագիր Շեքեթ Սյուրեյա Այդեմիրի հայտնի ստեղծագործության անվանումը՝ «Tek adam», որը դարձել է լայն գործածական թուրքական շրջանակներում և լավագույնս արտահայտում է Աթաթյուրքի դիրքը թուրքական իրականության մեջ: Şek' u Aydemir Ş. S., Tek adam, 3 cilt, İstanbul, 1997: Նույն հեղինակի գրչին է պատկանում Ի. Ինօնյուի կենսագրական «İkinci adam» («Երկրորդ մարդը») եռահատոր ստեղծագործությունը, տե՛ս Aydemir Ş. S., İkinci adam, 3 cilt, İstanbul, 2009:

յան ամենահակասական փուլերից մեկը՝ «Ազգային շեֆի» ժամանակաշրջանը (*Milli Şef Dönemi*), որը շարունակվեց մինչև 1950թ.:<sup>11</sup>

Իսմեթ Ինօնյուն՝ մինչ 1934 թ. Մուսթաֆա Բամեթը, ծնվել է 1884թ. Իզմիրում: Ստացել է բարձրագույն ուսումնական կրթություն, 1906թ. ծառայության անցել Օսմանյան կայսրության զանազան շրջաններում՝ Էդիրնեից մինչև Եմեն: Ակտիվորեն մասնակցել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ընդհատակյա գործունեությանը: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է Երկրորդ բանակային կորպուսի ԳՇ պետ: Մուղրոսի զինադադարից հետո Ինօնյուն զբաղեցրել է տարբեր պաշտոններ Ռազմական նախարարությունում: 1920թ. մեկնելով Անկարա՝ այնտեղ միացել է ազգայնական շարժման զինված ուժերի կազմակերպման գործին: Ինօնյու գետի մոտ տարած հաղթանակի շնորհիվ ազգայնականները կարողացան կանգնեցնել հունական զորքի առաջխաղացումը դեպի Թուրքիայի խորքը և բեկեցին պատերազմի էլքը հոգուտ ազգայնական ուժերի: Այս ճակատամարտում մեծ էր Իսմեթ փաշայի դերը, որի համար էլ հետագայում նրան տրվեց Ինօնյու պատվանուն/ազգանունը: Այնուհետև, Ի. Ինօնյուն դարձավ Թուրքիայի գլխավոր բանակցողը արևմտյան տերությունների հետ: Նրա դիվանագիտական ջանքերը հաջողության հասան հատկապես Լոզանի խորհրդածրոյվում (1923թ.), որով ճանաչվեց թուրք ազգայնականների իշխանությունը Փոքր Ասիայի վրա: Հանրապետության հռչակումից հետո Ինօնյուն դարձավ Մուսթաֆա Քեմալի մերձագույն զինակիցն ու նշանակվեց երկրի վարչապետ՝ այդ պաշտոնում մնալով (փոքր դադարով) մինչև 1936թ.:

<sup>11</sup>Որոշ հեղինակներ հիշատակում են այս փուլի մասին որպես «կորուսյալ տարիներ» (*Türkiye'nin kayıp yılları*), իսկ որոշները նշանավորում Թուրքիայում իսկական ժողովրդավարության հաղթանակով: Այս մասին տե՛ս Heper M., İsmet İnönü: The Making of a Turkish Statesman, Brill, 1998, p.4:



Գրեթե բոլոր հարցերում Ինոնյուն և Աթաթյուրքը աշխատում էին միասնաբար, սակայն 1930-ականների կեսերին նրանց հարաբերություններում սկսվեց լարվածություն: Դրա հիմնական պատճառը գաղափարական տարաձայնություններն էին Հանրապետական ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) այլ հայտնի ներկայացուցիչների հետ, որոնց սատարում էր Աթաթյուրքը: Արդյունքում՝ Ինոնյուն թողեց վարչապետի պաշտոնը և փաստացի հեռացավ քաղաքականությունից:

Դեռևս 1936թ. Աթաթյուրքի մոտալուտ մահը կանխագուշակելով՝ քաղաքական դաշտում սկսվեցին տեղաշարժեր երկրի նոր ղեկավարի թեկնածության համար: Ինոնյուն ամենահավանական թեկնածուներից էր, ուստի ընդդիմադիր ուժերի կողմից նա պարբերաբար քննադատությունների էր ենթարկվում: Եթե մինչ վարչապետի պաշտոնը թողնելը Ինոնյուն ամենուր հիշատակվում էր Աթաթյուրքի կողքին, ապա 1937-1938թթ. ընդդիմադիրները ջանում էին ջնջել Ինոնյուի ներկայության բոլոր հետքերը: Փորձ էր արվում մոռացության մատնել նրան, ինչպես դա կիրառվում էր այլ ավտորիտար համակարգերում<sup>12</sup>: Ինոնյուի կերպարի շուրջ ստեղծված մթնոլորտը ճշգրտորեն նկարագրում է հետևյալ դիպվածը: 1938թ. հուլիսին, երբ նշվում էր Լոզանի համաձայնագրի տասնհինգամյակը, թուրքական մամուլում նույնիսկ մեկ տող հիշատակում Ի. Ինոնյուի մասին այդ առթիվ չհայտնվեց:<sup>13</sup>

### «Ազգային շեֆի» ժամանակաշրջանը

Իրավիճակը փոխվեց 1938թ. նոյեմբերին, երբ Աթաթյուրքի մահից հետո Իսմեթը ընտրվեց նախագահ՝ գրեթե չհանդիպելով ընդդիմության: Բացի ընդդիմադիր ուժերի անհամարձակությունից, Ինոնյուի ընտրվելուն նպաստեց նաև այն մեծ հե-

<sup>12</sup>Տե՛ս Ս. Լամպեր Յ., նշվ. աշխ., էջ 55-118:

<sup>13</sup> Türkiye Tarihi 4. Çağdaş Türkiye 1908-1980, İstanbul, 1997, s. 121.

ղինակությունը, որ նա վայելում էր թե՛ կուսակցությունում, թե՛ բանակում: Շատերի այքին նա երևում էր որպես Աթաթյուրքի միակ ժառանգորդ, մարդ, ով ամենամոտն է եղել նրան<sup>14</sup>:

Աթաթյուրքի կենդանության օրոք թուրքական քաղաքական համակարգում ձևավորված անձի պաշտամունքի ինստիտուտը փոխանցվեց Ինոնյուին: Նախագահ ընտրվելուց հետո սկզբում Ի. Ինոնյուն պահպանեց Աթաթյուրքի անձի պաշտամունքը, սակայն աստիճանաբար նվազեցրեց վերջինիս «ներկայությունը» և փորձ արեց այդ պաշտամունքը շրջել դեպի իր անձը: Դա ակնհայտ դարձավ արդեն 1938թ. դեկտեմբերին:

Դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ ՀԺԿ արտահերթ համագումարը, որի ժամանակ Ինոնյուին տրվեց «ազգային շեֆ» (Milli Şef) կոչումը: Մինևույն ժամանակ փոփոխություններ տեղի ունեցան նաև կուսակցության կանոնադրության մեջ: Ըստ այդ փոփոխությունների՝ Քեմալ Աթաթյուրքը հռչակվեց «հավերժ նախագահ» (Ebedî Şef), իսկ Իսմեթ Ինոնյուն՝ կուսակցության անփոփոխ նախագահ: Ի. Ինոնյուին ազգային շեֆ հռչակելու որոշումը ՀԺԿ համագումարը հիմնավորեց հետևյալ կերպ. «Բոլոր երկրներում, և հատկապես այնտեղ, ուր վերջերս ընդունվել է բազմակուսակցական համակարգ, ազգային շեֆի դերը շատ կարևոր է: Քանի որ հենց ազգային շեֆն է, որ պետք է ձևակերպի քաղաքական մտքերն ու կատարելագործի դրանք որպես սկզբունքներ, արմատավորի դրանք քաղաքական խավի ուղեղներում և շարունակաբար քաղաքականապես կրթի մարդկանց... ՀԺԿ-ն ուղղորդեց ժողովրդին անկախության և զարգացման համար իրենց պայքարում: ... ՀԺԿ-ն իր մեջ ամփոփում է [Թուրքիայի] բոլոր քաղաքացիներին: Ի նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքները՝ որոշված է, որ նա, ով կընտրվի որպես կուսակցության նախագահ, պետք է կրի «ազ-

<sup>14</sup>Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 101-102, VanderLippe J. M., The Politics of Turkish Democracy: İsmet İnönü and the Formation of the Multi-Party System, 1938-1950, State University of New York Press, p. 28-31.



գային շեֆի» կոչում, որպեսզի ունենա անհրաժեշտ հեղինակություն՝ ՀՏԿ վերոնշյալ գործառույթներն իրականացնելու համար: Գտնում ենք, որ այս քայլը լավագույնս կնպաստի երկրի շահերին»<sup>15</sup>: Սա նշանակում էր, որ ժողովուրդը հենց ՀՏԿ-ն է, իսկ Ինոնյուն ժողովրդի մարմնացումը: Սա նոր անձի պաշտամունքի հաստատման գլխավոր ազդանշաններից էր:

Ազգային շեֆ տիտղոսի հռչակումից հետո սկսվեց Ինոնյուի կերպարի «հանրայնացումը» ԶԼՄ-ների միջոցով: Ժամանակի իշխանամետ ամսագրերից մեկում՝ «Միկն»-ում պարբերաբար հրապարակվում էին հողվածներ ու սյունակներ, որոնցում ժողովրդին «Բացատրվում էր» ազգային շեֆ կոչման անհրաժեշտությունը: Այսպես, տարբեր հողվածներում ասվում էր, որ «ազգային շեֆը ժողովրդի հայրն է», «նա դաստիարակ է» և «նրա բոլոր ջանքերն ուղղված են ժողովրդին կրթելուն, դաստիարակելուն», «ժողովուրդը իր ապագան դրել է ազգային շեֆի ապահով ձեռքերի մեջ», «նա ներկայացնում է ազգային իդեալներն» ու «ենթարկվել ազգային շեֆին նշանակում է կատարել ժողովրդի իդեալը»<sup>16</sup>: Այստեղ տեսնում ենք, որ Ի. Ինոնյուի անձի պաշտամունքի մեջ առկա էին այն բոլոր հատկությունները, որոնք նրան վեր էին բարձրացնում ժողովրդից, դարձնում ոչ հասարակ մահկանացու ու դրանով իսկ ավելացնում նրա շուրջ եղած «սրբազնությունը»:

Կարելի է առանձնացնել ազգային շեֆ տիտղոսի ընդունման և դրա միջոցով Ինոնյուի անձի պաշտամունքի հաստատման երեք պատճառ.

Առաջին հերթին, անհատի պաշտամունքի պահպանությունը կարևոր էր միակուսակցական վարչակարգի անխափան ընթացքն ապահովելու և ծրագրված քեմալիստական կոչվող վերափոխումները շարունակելու համար: Ի. Ինոնյուն շարու-

նակեց Աթաթյուրքի նախաձեռնած արդիականացման գործընթացն ու էտատիզմի դիրքերի հզորացումը, ինչը հանդիպում էր ուժեղ ընդդիմության ինչպես քաղաքական էլիտայի, այնպես էլ երկրի բնակչության շրջանում: «Վսեմ ու վեհ» անհատը, ինչպես Աթաթյուրքի դեպքում, այնպես էլ հիմա պետք է լիներ գլխավոր գործիքը նախատեսվող քաղաքականությունն իրականացնելու գործում: Ազգային շեֆի կոչումը պետք է երաշխավորեր վերափոխումների իրականացումը:

Սյուս կարևոր պատճառն այն էր, որ Ինոնյուն չուներ այնչափ խարիզմա, որքան Աթաթյուրքը: Անհրաժեշտ է նշել, որ Աթաթյուրքի հաջողության գրավականներից մեկն այն էր, որ պետությունը նրա անձը «օժտել էր» քաղաքական խարիզմայի առանձնահատկություններով, որոնց նպատակն էր էլ ավելի ուժեղացնել Աթաթյուրքի կերպարը: Այսպիսով, ազգային շեֆ տիտղոսը պետք է փոխարիներ խարիզմայի բացակայությունը և յուրատեսակ անձեռնմխելիություն ու սրբազնություն էր ապահով Ինոնյուի համար: Սա անհրաժեշտ էր իշխանությունը իր ձեռքում պահելու համար<sup>17</sup>:

Վերջին, սակայն ոչ պակաս կարևոր հանգամանքն այն էր, որ ազգային շեֆ տիտղոսի ընդունումը թելադրված էր նաև տվյալ ժամանակաշրջանում եվրոպական որոշ երկրներում միակուսակցական «շեֆային» համակարգերի հաստատմամբ ու զարգացմամբ<sup>18</sup>: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ Ի. Ինոնյուի կառավարման ձևը համեմատում են ֆաշիստական վարչակարգերի հետ: Այս համատեքստում էր դիտարկվում նաև «ազգային շեֆ» կոչման հաստատումը և նշվում, որ սրանով Ի. Ինոնյուն անուղղակի ապացուցում էր, որ նա որդեգրել է ֆաշիզմի սկզբունքները, որոնք դեռ 1935թ. մշակվել էին Ռեջեփ Գեքեքի կողմից (սակայն Աթաթյուրքը մերժել էր

<sup>15</sup>Koçak C., Türkiye'de Milli Şef Dönemi (1938-1945), (2 cilt), İstanbul, 2010, I cilt, s.166-167.

<sup>16</sup> Unal, Türkiye'de Demokrasinin Doğuşu. Tek Parti Yönetiminden Çok Partili Rejime Geçiş Süreci, s. 167.

<sup>17</sup> Ahmad F., The Making of Modern Turkey, Routledge, 2002, p.69.

<sup>18</sup> Türkiye Tarihi 4. Çağdaş Türkiye 1908-1980, s. 124.



դրանք)<sup>19</sup>: «Ինոնյուի վարչակարգի կողմից ֆաշիստական սկզբունքների որդեգրումը ճշգրտորեն կարելի է բնորոշել կուսակցության կարգախոսով. «մեկ կուսակցություն, մեկ ազգ, մեկ առաջնորդ»»<sup>20</sup>

Ինոնյուի անձի պաշտամունքի հաստատման համար կարևոր քայլ էր իշխանությանը անցանկալի քաղաքական գործիչներից ձերբազատումը: Աստիճանաբար քաղաքական ասպարեզից դուրս մղվեցին Ինոնյուի «շեֆությունը» չընդունող գործիչները: Նախագահ դառնալուց հետո Ինոնյուն սկսեց հնարավորինս մեկուսացնել այն բարձրաստիճան կուսակցական գործիչներին, որոնք մոտ հարաբերություններ ունեին Աթաթյուրքի հետ և Ինոնյուին դիտարկում էին միայն որպես «առաջինը հավասարների մեջ»<sup>21</sup>: Որոշներին արգելվեց ընտրվել պատգամավոր 1939թ. ընտրություններում, իսկ ոմանք հեռացվեցին կարևոր պաշտոններից (օրինակ՝ արտաքին գործերի նախարար Թնֆիք Ռյուշթյու Արասը նշանակվեց դեսպան Լոնդոնում): Միննույն ժամանակ, քաղաքական ասպարեզ վերադարձան և բարձր պաշտոնների նշանակվեցին նախկինում Աթաթյուրքին քննադատած որոշ գործիչներ (օրինակ՝ Քյազըմ Քարաբեքիրը դարձավ ԹԱՍԺ նախագահ, Ֆեթհի Օքյարը՝ նշանակվեց արդարադատության նախարար): Կադրային այս տեղաշարժերը դիտարկվում էին որպես նոր հարացույց ի հակադրություն Աթաթյուրքի մշակած տարբերակի:

Ինոնյուի պաշտամունքի հաստատման համար առանձնահատուկ նշանակություն ուներ Ինոնյուի կերպարի ներկայացումը հասարակության մետաֆիզիկական տարածքի բոլոր անկյուններում: Այս գործում, ինչպես Աթաթյուրքի պարագայում, հատկապես կարևոր էր ազգային շեֆի վիզուալ ներկայության ապահովումը երկրի ողջ տարածքում: Պատճառն այն

էր, որ թե՛ Աթաթյուրքի, թե՛ Ինոնյուի անձի պաշտամունքը զգալիորեն վիզուալ ֆենոմեն էր, որը նախատեսված էր բնակչության այն զանգվածի համար, որի մտավոր աշխարհը ձևավորված էր պատկերներով՝ ի հակադրություն տպագիր խոսքի: Սա էլ, իր հերթին, պայմանավորված էր այն հանգամանքով, որ մինչև 1960թ. Թուրքիայի բնակչության միայն 39.5 տոկոսն էր տառաճանաչ<sup>22</sup> և երկրի բնակիչների մի զգալի մասը առաջնորդի անձին կարող էր «հաղորդակցվել» միայն տեսողական պատկերների միջոցով: Մյուս կողմից, դիմանկարների և առավել ևս արձանների ու կիսանդրիների տեղադրումը դեռևս մեծ տաքու էին սուննի իսլամի հետևորդների համար: Այն փաստը, որ հանրապետական իշխանությունը ոչ միայն թույլատրում, այլև ինքն էր նախաձեռնում ու աջակցում արձանների տեղադրմանը բնակավայրերի կենտրոնական հատվածներում, իր մեջ նույնպես բացահայտ ուղերձ էր պարունակում. դա նշանակում էր, որ իշխանությունը այլևս դուրս է իսլամական կարգադրությունների շրջանակից և նոր հասարակարգ է ստեղծում իր սեփական թելադրանքով<sup>23</sup>: Այսպիսով, ազգային շեֆի նկարները շուտով հայտնվեցին ամենուր, չԺԿ գրասենյակներում Աթաթյուրքի նկարները փոխարինվեցին Ինոնյուի դիմանկարներով<sup>24</sup>: Ինոնյուի դիմանկարը հայտնվեց նաև թուրքական թղթադրամների և մետաղադրամների, նամականիշերի վրա՝ դարձյալ փոխարինելով Աթաթյուրքին<sup>25</sup>: Երբ ազգային շեֆը

<sup>22</sup> Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 105-106:

<sup>23</sup> Zürcher E. J., "In the name of the father, the teacher and the hero: the Atatürk personality cult in Turkey", in Vivian Ibrahim, Margit Wunsch, Political Leadership, Nations and Charisma' Routledge 2012, p. 129-142.

<sup>24</sup> Mango A., Atatürk: The Biography of the founder of Modern Turkey, The Overlook press, 2002 (օրինակ), p. 1589.

<sup>25</sup> Անհրաժեշտ է նշել, որ թղթադրամների վրա Ինոնյուի պատկերումը համապատասխանում էր թուրքական օրենսդրությանը (1926թ. մարտին հրապարակված թիվ 3322 որոշմամբ 50, 100, 500 և 1000 լիրա արժողությամբ թղթադրամների վրա պետք է պատկերված լինեին երկրի նախագահը): Այս թեման 2008թ. նորից հայտնվել էր թուրքական քաղաքական օրակարգում:

<sup>19</sup> Soyak H. R., Atatürk'ten hatıralar, 2 Cilt, Istanbul, s. 788-789.

<sup>20</sup> Ahmad F., նշվ. աշխ., էջ 69:

<sup>21</sup> Նույն տեղում:



այցելում էր որևէ հասերգ, ներկայացում կամ ձիարշավ, իշխանությունները ստիպում էին, որ այդ այցելությունները պատկերող լուսանկարները պարտադիր հայտնվեին թերթերի էջերին<sup>26</sup>:

Ինոնյուի դիմանկարներն ու կիսանդրիները սկսեցին զարդարել ոչ միայն կուսակցական, այլև պետական հաստատությունները: Նախատեսվում էր Ստամբուլի սրտում՝ Թաքսիմ հրապարակում, տեղադրել Ինոնյուի արձանը՝ ձիավորի կերպարով: Այն պետք է իր չափերով և տեսքով «իշխեր» տեղանքի վրա և ստվերում թողներ Կանոնիկայի հեղինակած Հանրապետության հուշարձանը: 1940թ. արձանը պատվիրվեց Գերմանիայում, բայց սկսված Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով այն Թուրքիա հասավ միայն 1950 թվականի ընտրություններից հետո<sup>27</sup>:

Իր անձի հանրայնացման ժամանակ Ինոնյուն ներկայացվում էր որպես առաջադիմության, մոդեռնիզացիայի և արևմտականացման գլխավոր խորհրդանիշ, ուստի պատահական չէ, որ նրա անունն էր կրում 1943թ. ազգային կրթության նա-

---

Այն ժամանակ Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանը ԱԶԿ երիտասարդական կոնգրեսում հայտարարել էր, թե. «շատ լավ գիտենք, թե ինչպես էր ԺԿԿ թույլատրել Աթաթյուրքի նկարների հեռացումը պատերից, թղթադրամներից վրայից...»: St u Anadol: "Atatürk'ün resmi paradan çıkarılmadı" <http://www.cnnturk.com/2008/dunya/04/14/anadol.ataturkun.resmi.paradan.cikarilmadi/448531.0/index.html> (վերջին այցելությունը՝ 10.09.2015թ.)

<sup>26</sup> Akandere O., Milli Şef Dönemi. Çok-partili hayata geçişte rol oynayan iç ve dış tesirler 1938-1945, İstanbul, 1998: Ցավոք, գիրքը մեզ հասանելի չէ, մենք կարողացել ենք օգտվել միայն համացանցում հրապարակված գրքի որոշ հատվածներից: St u <http://ankakedisi.com/kitaplardan/dr-osman-akandere-millisef-donemi/>, (վերջին այցելությունը՝ 29.08.2015թ.)

<sup>27</sup> Արձանի համար նախապատրաստված պատվանդանը տեղադրվել էր մինչև արձանի Գերմանիայից ժամանելը: Այն գտնվում էր Ինոնյուի զբոսայգու (այսօրվա Գեզի զբոսայգի) մուտքի մոտ: Սակայն արձանն այդպես էլ Ինոնյուի կենդանության օրոք չտեղադրվեց: ԺԿ-ի իշխանության գալուց հետո արձանի մասերը տարվեցին Ստամբուլի Մաջիդիյեքյոյ թաղամասում գտնվող ծխախոտի ու ալկոհոլի արտադրամասերից մեկի բակ: Միայն 1982թ. այն տեղադրվեց Ստամբուլի Եիշլի թաղամասի այգիներից մեկում՝ Թաշլըքում:

խարարության կողմից հրատարակության պատրաստած հանրագիտարանը (İnönü Ansiklopedisi)<sup>28</sup>, նրա անունով սահմանվել էր պետական մրցանակ, կառուցվել Ինոնյուի անվան մարզադաշտ, Ինոնյուի զբոսայգի, և այլն: Հետաքրքրական է, որ Ինոնյուի անձի պաշտամունքի ուժեղացումը բերել էր նրան, որ սովորական քաղաքացիներն էին սկսել կերտել նրա «սրբազնային կերպարը»՝ առանց պետության անմիջական պարտադրանքի: Օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ջեյնել Աբիդին Ջյումբյուշ (Zeynel Abidin Cümbüş) անունով մի մանդոլինա պատրաստող Իսմեթ Ինոնյուլին նվիրված քայլերգ էր գրել ու անվանել «Ազգային շեֆի քայլերգը» (Milli Şef Marşı)<sup>29</sup>:

Ինոնյուի նախագահության օրոք իր անձի պաշտամունքի հաստատումը հանգեցրեց նրան, որ Աթաթյուրքի կերպարը որոշակիորեն մնաց ստվերում: Այնուամենայնիվ, Աթաթյուրքը կարևոր խորհրդանիշ էր, որին չէր կարելի ամբողջությամբ ջնջել հասարակության «տեսադաշտից» կամ, առավել ևս, բացահայտ հակադրության մեջ մտնել նրա հետ: Ավելին, Ինոնյուն հավատում էր, որ հանրապետական կարգի համար Աթաթյուրքի կերպարի պահպանումը կենսական նշանակություն ունի<sup>30</sup>: Ուստի պատահական չէ, որ երբ 1946թ. Ջելալ Բայարը Ինոնյուի հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց նոր

---

<sup>28</sup> Ինոնյուի նախագահության օրոք հրատարակվեցին հանրագիտարանի առաջին չորս հատորները: 1951 թվականից, երբ իշխանության եկավ Ժողովրդավարական կուսակցությունը, հանրագիտարանը անվանափոխվեց «Թուրքական հանրագիտարանի» (Türk Ansiklopedisi): Հանրագիտարանի վերջին 33-րդ հատորը հրատարակվեց 1984թ.:

<sup>29</sup> Քայլերգի բառերն ու երաժշտության նոտաները տպագրվել են թերթոնի վրա՝ վաճառքի հանելու նպատակով, սակայն անհայտ պատճառով քայլերգը երբևէ չի կատարվել ու հանրայնացվել: Քայլերգի բառերը տե՛ս Milli Şef Marşı'nın perde arkası..., <http://www.cnnturk.com/2013/kultur.sanat/diger/03/04/milli.sef.marsinin.perde.arkasi/698750.0/index.html> (վերջին այցելությունը՝ 29.08.2015թ.)

<sup>30</sup> Heper M., նշվ. աշխ., էջ 182:



ձևավորված ընդդիմադիր ժողովրդավարական կուսակցության ծրագիրը, վերջինս մի քանի պայման առաջադրեց Բայարին՝ իր համաձայնությունը ստանալու դիմաց, որոնցից մեկը հետևյալն էր. ԺԿ-ականները երբեք չպետք է Աթաթյուրքի խորհրդանիշի դեմ թշնամական դիրք ունենային<sup>31</sup>: Մականյան գուգահեռ հնարավորինս նվազեցվում էր Աթաթյուրքի խորհրդանշական ներկայությունը: Այսպես, Ինոնյուի նախագահության օրոք Աթաթյուրքի «Ճառը» («Nutuk») երբեք չի հրատարակվել, գրեթե արգելված է եղել և միայն 1950թ. երկրորդ կեսին է վերահրատարակվել<sup>32</sup>:

### **Ինոնյուն՝ Բազմակուսակցական համակարգի կիզակետում**

Երկրորդ աշխարհամարտից հետո սկսվեց նոր աշխարհակարգի ձևավորումը, որը նոր իրողություններ ստեղծեց Թուրքիայի համար: Պատերազմի արդյունքում ստեղծված քաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամը, և միակուսակցական բռնապետական վարչակարգի սահմանափակումները հանգեցրին ՀԺԿ դիրքերի թուլացմանը: Արտաքին ճնշման տակ սա հիմք հանդիսացավ ընդդիմության ձևավորման և ժողովրդավարական կարևոր սահմանափակումների վերացման (օրինակ՝ անցում կատարվեց Բազմակուսակցական համակարգին):

1946 թ. մայիսի 10-ին հրավիրվեց ՀԺԿ երկրորդ արտակարգ համագումարը, որտեղ որոշում կայացվեց հրաժարվել «անփոփոխ նախագահ» և «ազգային շեֆ» տիտղոսներից: Այսպիսով, պաշտոնապես ավարտվեց «ազգային շեֆի» փուլը Թուրքիայի

<sup>31</sup> Toker M., Demokrasimizin İsmet Paşalı Yılları, 1944-1973. 1. Tek Partiden Çok Partiye, 1944-1950, Ankara, 1990, s.47.

<sup>32</sup> Mustafa Armağan, Sayın Başbakan, para pul neyse, CHP Nutuk'u bile yasaklatmıştı, [http://www.zaman.com.tr/yazarlar/mustafa-armagan/sayin-basbakan-para-pul-neyse-chp-nutuku-bile-yasaklatmisti\\_932531.html](http://www.zaman.com.tr/yazarlar/mustafa-armagan/sayin-basbakan-para-pul-neyse-chp-nutuku-bile-yasaklatmisti_932531.html) (վերջին այցելությունը՝ 10.09.2015թ.)

պատմության մեջ, սակայն փաստացի Ի. Ինոնյուն շարունակում էր իր ձեռքում պահել իշխանական լծակների մեծ մասը մինչև 1950թ.:

Բազմակուսակցական համակարգի ձևավորումից հետո ընդդիմադիր դաշտի գլխավոր ուժ հանդիսացող ԺԿ-ի շուրջ համախմբված ամենատարբեր ճակատների ներկայացուցիչների քննադատության թիրախում մշտապես հայտնվում էր Ի. Ինոնյուն: ԺԿ կողմից շրջանառության մեջ է դրվում «Եկավ Բամեթը, վերջացավ հաջողությունը» («Geldi İsmet, Gitti Kismet») արտահայտությունը: Մականյան մեծապես խուսափելով նրան բացահայտ ու ուղիղ քննադատելուց, ընդդիմադիրները սկսեցին նորից մեծարել Աթաթյուրքի ու նրա հերոսական, «մարգարեական» կերպարը: Այդ իրավիճակը շատ պատկերավոր է նկարագրել պատմաբան Մ. Թունջայը. «Որպեսզի Իսմեթ փաշային չասեին «Դու փոքր ես», ասում էին «Աթաթյուրքը մեծ է»»<sup>33</sup>: Լայնորեն սկսվեց հակադրվել Ինոնյուի և Աթաթյուրքի կերպարները: Ընդդիմությունը կառավարությանը և ՀԺԿ-ին մեղադրում էր Աթաթյուրքի սկզբունքները մոռացության տալու համար<sup>34</sup>: Փաստորեն, կարող ենք ասել, որ Ինոնյուի ու ԺՀԿ-ի դեմ ԺԿ-ն մշակեց մի նոր պատմական հարացույց (discourse), համաձայն որի քեմալիստական վարչակարգի հաջողությունները վերագրվեցին բացառապես Աթաթյուրքին, իսկ անհաջողությունները ՀԺԿ-ին և անձամբ Ինոնյուին: ՀԺԿ-ն իր հերթին սրան ի պատասխան առաջադրեց այն թեզը, որ «վեհ

\* «ամենագոյ» ներկայություն եզրը կիրառում է Է.Շ. Չյուրխերը: Stüv Zürcher E. J., "In the name of the father, the teacher and the hero: the Atatürk personality cult in Turkey", p. 129:

<sup>33</sup> Tunçay M.: Dersim'de isyan yoktu, <http://www.haber7.com/siyaset/haber/455989-mete-tuncay-dersimde-isyan-yoktu> (վերջին այցելությունը՝ 10.09.2015թ.)

<sup>34</sup> Կոնդակյան Ռ., «Միջպարտիական պայքարը ետպատերազմյան Թուրքիայում և Դեմոկրատական պարտիայի անցումը իշխանության գլուխ», Արևելագիտության ժողովածու, թիվ 2, 1964, էջ 103:



Աթաթյուրքը» ստեղծել է ՀԺԿ-ն, ուստի քեմալիզմի/աթաթյուրքիզմի իրական և միակ շարունակողը ՀԺԿ-ն է:

1945-1950 թթ. ընթացող ՀԺԿ-ԺԿ պայքարի արդյունքում, թե՛ իշխանությունը, և թե՛ հատկապես ընդդիմությունը սկսեցին ուռճացնել Աթաթյուրքի անձի շուրջ արդեն իսկ գոյություն ունեցող սրբազնային պաշտամունքը և շահարկել վերջինիս խորհրդանիշը միջկուսակցական պայքարում: Աթաթյուրքը նորից դարձավ երկրի «Առաջին մարդը», իսկ Ինոնյուն՝ երկրորդը: Հենց այս ժամանակ էլ սկսվում է Աթաթյուրքի անձի հարատև «ամենագոյ» ներկայությունը\* թուրքական քաղաքականության մեջ, որը ժամանակի ընթացքում ավելի է «հարստանում» տարբեր խորություններով և դառնում մերօրյա թուրքական քաղաքականության ազդեցիկ գործոններից մեկը<sup>35</sup>: Ամփոփելով, կարելի է ասել, որ 1938-1950 թթ. *ինոնյուիզմը* նպաստեց այն *աթաթյուրքիզմի ձևավորմանը*, որը մեզ ծանոթ է ժամանակակից թուրքական քաղաքական անցուղարձից:

2013 թ. դեկտեմբերին, երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը ելույթ էր ունենում Ստամբուլում՝ ցույցի ժամանակ, նրա որոշ կողմնակիցներ հագել էին շապիկներ, որոնց վրա կարելի էր կարդալ. «Մա՛րդ, մենք գալիս ենք քո հետքերով» (Adam izindeyiz)<sup>36</sup>: Սա հիշեցնում էր հայտնի քեմալիստական «Մեր հայր, մենք գալիս ենք քո հետքերով» (Atam izindeyiz) կարգախոսը: Այս և նմանատիպ այլ քայլեր<sup>37</sup> վկայում են, որ ժամանակակից Թուրքիայում փորձ է արվում ստեղծել մեկ այլ անհատի՝ նախագահ Էրդոդանի անձի շուրջ պաշտա-

<sup>35</sup> Navaro-Yashin Y., *Faces of State: Secularism and Public life in Turkey*, Princeton University Press, 2002, p. 188-205.

<sup>36</sup> ERDOĞANI "ADAM İZİNDEYİZ" DİYE KARŞILADILAR, <http://www.haber3.com/erdogani-adam-izindeyiz-diye-karsiladilar-haberi-2393876h.htm>, (վերջին այցելությունը 29.08.2015թ.):

<sup>37</sup> Akyol M., *Turkey's warring personality cults*, <http://www.al-monitor.com/pulse/originals/2014/02/turkey-personality-cult-war-erdogan-gulen.html>, (վերջին այցելությունը 29.08.2015թ.)

անը, որի համար հաճախ յուրացվում են Աթաթյուրքի պաշտամունքի բաղկացուցիչ տարրերը: Մինևույն ժամանակ, թուրքական մերձիշխանական մամուլում հանդիպում են հրապարակումներ, որոնց հեղինակները քննադատությամբ են հանդես գալիս Ի. Ինոնյուի մասին՝ հակադրելով նրան ու ՀԺԿ-ն Աթաթյուրքի «սրբազան» կերպարին<sup>38</sup>: Սա հստակ ցույց է տալիս, որ տակավին յոթ տասնամյակ առաջ ձևավորված խորհրդանշական, բայց ոչ առերևույթ պայքարը անձի պաշտամունքի շուրջ մերօրյա Թուրքիայում ստանում է նոր բովանդակություն և դասական ժողովրդավարության բացակայության պայմաններում մնում է նշանակալի քաղաքական գործոն:

## «ВТОРОЙ ЧЕЛОВЕК»: КУЛЬТ ЛИЧНОСТИ И МЕЖПАРТИЙНАЯ БОРЬБА В ТУРЦИИ В 1938-1950 ГГ.

*Варужан Гегамян*  
(резюме)

Культ Ататюрка в Турции развивался на протяжении всей истории республики. Зародившись еще в первое десятилетия после провозглашения республики при непосредственном участии государства во главе со самим Ататюрком, он превратился в важный политический фактор для реализации кемалистских реформ. После смерти Ататюрка новый президент И. Иненю сделал попытку создать собственный культ, но это обернулось неудачей в силу создавшейся новой внутри- и внешне-политической обстановки. После 1945г. новообразованные оппозиционные партии в борьбе за власть использовали и

<sup>38</sup>St' u ophiսակ՝ Pro-gov't daily report stating İnönü poisoned Atatürk becomes subject of derision, [http://www.todayszaman.com/anasayfa\\_pro-govt-daily-report-stating-i-nonu-poisoned-ataturk-becomes-subject-of-derision\\_377295.html](http://www.todayszaman.com/anasayfa_pro-govt-daily-report-stating-i-nonu-poisoned-ataturk-becomes-subject-of-derision_377295.html) (վերջին այցելությունը՝ 10.09.2015թ.)



противопоставляли символ Ататюрка культу Иненю и Народно-республиканской партии. В межпартийной борьбе сакральность вокруг Ататюрка обоготворялась и “освоивала” новые глубины. В данной статье мы показываем, что нынешний “вездесущий культ” Ататюрка, как один из главных факторов в политической жизни Турции, зародился в период президентства И. Иненю (1938-1950гг.). Данной статьей мы попытались объяснить также истоки культа очертив его место в истории, а конкретно – в контексте современных культов личности.

**“THE SECOND MAN”:  
PERSONALITY CULT AND INTER-PARTY STRUGGLE IN  
TURKEY IN 1938-1950**

**Varujan Geghamyan**  
(summary)

The cult of Atatürk developed along the history of the Turkish Republic. The start of a personality cult around Mustafa Kemal was in the mid-1920s. Manufactured by the state and Atatürk himself, the personality cult became an important instrument to buttress the republican regime. During his presidency (1938-1950) Atatürk's immediate successor İsmet İnönü tried gradually to replace the cult of Atatürk with his own. In the new political situation after 1945, the opposition led by Democrat Party used sacral image of Atatürk to topple the İnönü government. In this process it enriched with new depths and meanings and became an “omnipresent” political factor in Turkish politics and continues to play very important role today. The article outlines the history of the personality cult in Turkey in 1923-1950 in the context of the modern personality cults and the history of Turkish Republic.

**ԶԱՆԳԱՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ**

*Բանալի բառեր՝ Թուրքիա, էրդողան, Արդարություն և  
զարգացում կուսակցություն, մամուլ, գրաքննություն, ազա-  
րագրկում*

*Նախաբան*

Հասարակական-քաղաքական կյանքում ԶԼՄ-ների ունեցած կենտրոնական դերն այսօր, առավել քան երբևէ, անժխտելի է: Թվային տեխնոլոգիաների տարածումն ավելի է մեծացրել ինֆորմացիայի նկատմամբ պահանջարկը և սպառման շուկան: Ավելի ու ավելի շատ քաղաքացիներ են հետևում համայնքում, քաղաքում, նահանգում և երկրում տեղի ունեցող հիմնական փոփոխություններին ու զարգացումներին: Տեղեկության ու դրա տրամադրման ու սպառման գլոբալացումը իր հետ բերել է նաև տեսանելի և ոչ այնքան ակնհայտ իրողություններ, որոնք անհրաժեշտություն են առաջացրել պարբերաբար գնահատել այս կամ այն երկրում խոսքի և մամուլի ազատությունների ոլորտներում առկա միտումները և վայրիվերումները:

Թուրքիան այս առումով ուշագրավ օրինակ է: Կան մի շարք պատճառներ Թուրքիայում տեղի ունեցող գործընթացներն առանձնացնելու և դրանց բնորոշ գործոններն ուսումնասիրելու համար: Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին Թուրքիայում լրատվության ու խոսքի



ազատությանն առնչվող քննարկումներից կարող է ստեղծվել տպավորություն, որ դա միայն վերջին տարիներին բնորոշ դրսևորում է, կամ այն կապված է էրդողանին վերագրվող ավտորիտար կառավարման դրսևորումների հետ: Իրականում, Թուրքիայի Հանրապետությունում խոսքի ազատության, լրագրողների մասնագիտական գործունեության դեմ կիրառվող սահմանափակումները ձևավորվել են տասնամյակներ առաջ հանրապետության հիմնադրման զարգացումներին զուգահեռ: Այս հոդվածի նպատակն է ներկայացնել Թուրքիայում մամուլի գործունեության հիմնական առանձնահատկությունները՝ առավելապես շեշտը դնելով վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած զարգացումների վրա:

#### Կայացման փուլերը

Չորրորդ իշխանության կայացումը Թուրքիայի Հանրապետությունում անցել է երկար ու դժվարին ճանապարհ: 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում սկսեցին լույս տեսնել առաջին պարբերականները, որոնք ունեցան սահմանափակ լսարան և երկար չգոյատևեցին<sup>1</sup>: Փոխարենը, բավական ակտիվ էին արտերկրում լույս տեսնող և կայսրության տարածքում արգելված պարբերականները, որոնք զգալի ազդեցություն են թողել այդ երկրի մտավորականության ձևավորման, եվրոպական գաղափարաքաղաքական հոսանքների դեպի կայսրություն տեղափոխման և հակասուլթանական շարժումների ձևավորման գործընթացներում: Երիտթուրքերի կողմից իշխանությունը նվաճելուց հետո մամուլին առավել մեծ տեղ հատկացվեց, քանի որ կարիք կար թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարաններին կողմնորոշել ներթուրքական զարգացումների

<sup>1</sup> 19-րդ դարում օսմանական մամուլի առաջացման և զարգացման փուլերի մասին ավելի մանրամասն տե՛ս u Ибрагимов А., *Печать Турции*, Москва, 1965, стр. 3-11.

վերաբերյալ: Հայոց ցեղասպանության, իսկ հետագայում Օսմանյան կայսրության փլուզման տարիներին լրատվամիջոցները շարունակեցին առանցքային դեր կատարել իշխանությունների քաղաքականությունն արդյունավետ իրագործելու գործում: Ավելին, Հայաստանի և Հունաստանի դեմ մղվող պատերազմի ընթացքում Մուսթաֆա Քեմալն առանձնահատուկ ուշադրություն էր հատկացնում լրատվական հոսքերին և այդ նպատակով էր, որ 1920 թ. ստեղծվեց առաջին լրատվական գործակալությունը՝ «Անադոլուն» (Anadolu): Այն կարևոր դերակատարում ունեցավ երկու պատերազմների ընթացքում (Հայաստանի և Հունաստանի դեմ), հակասուլթանական պայքարի գործընթացում և հանրապետական կարգերի հաստատման գործում<sup>2</sup>: Այն գործում է մինչ օրս և ունի թղթակցային մեծ ցանց թե՛ երկրի ներսում, թե՛ արտերկրում (28 երկրում)<sup>3</sup>:

Հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո (1923 թ.) ևս երկու-երեք տարի երկրում առկա էր սահմանափակ բնույթի մամուլի ազատություն: 1925-1926 թթ. Թուրքիայում լույս էր տեսնում 153 անուն պարբերական: Իշխող ՀԺԿ-ին հարող պարբերականներից (Cumhuriyet, Milliyet, Hakimiyet-i Milliye, Yeni Gün) զատ մինչև 1925-1926 թթ. գործում էմ ՀԺԿ-ին դեմ հանդես եկող մի շարք պարբերականներ (Tanin, Ikdam, Tefkidi Efkyar, Vatan, Sebilur Resad): 1930-ական թթ. դասական քեմալականության տարիներին տպագիր մամուլը գերազանցապես լծված էր իշխող կուսակցության իրականացրած քաղաքական բարեփոխումների, ինչպես նաև գաղափարախոսության տարածման ու մեկնաբանման գործին: 1935 թ. տպագրվող պարբե-

<sup>2</sup> Անադոլու գործակալության գործունեության զարգացման առաջին չորս տասնամյակների մասին տե՛ս u Berik M., *Anatolia Agency Turkey's Oldest News Agency, Gazette, Leiden, 1964, n. 1, pp. 37-39:*

<sup>3</sup> 1919-1922 թթ. քեմալական մամուլի մասին առավել մանրամասն տե՛ս u Юст К., *Анатолийская печать*, Тифлис, 1922.



րականների թիվը Թուրքիայում հասավ 219-ի, որոնցից 38-ը օրաթերթեր էին:

1946 թվականին Թուրքիան անցում կատարեց բազմակուսակցական համակարգի, ինչն իր անմիջական ազդեցությունն ունեցավ նաև մամուլի վրա: Նախ, նորաստեղծ Դեմոկրատական կուսակցությունը (այսուհետ՝ ԴԿ) սկսեց դաշնակցել ընդդիմադիր մամուլի հետ: Որպես արդյունք՝ մամուլի ազատության համար մղվող պայքարը դարձավ քաղաքական մրցակցության կենտրոնական թեմաներից մեկը: Երկրորդ ազդեցությունը այն էր, որ առավել մեծ լսարան ունեցող *Hurriyet* և *Milliyet* օրաթերթերը առաջնահերթ ինդիք էին համարում գումար վաստակել, այլ ոչ թե ծառայել որևէ քաղաքական նպատակի: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ օրաթերթերը ֆինանսավորվելու էին գլխավորապես գովազդի հաշվին: Մյուս կողմից, մամուլի շուկայի սահմանափակ լինելու հանգամանքը արգելակում էր թերթերի զանգվածային շրջանառությունը, ուստի այդ առումով առևտրական թերթերը հեռու էին ինքնուրույն գոյատևումից: Բոլոր թերթերը կախված էին պետական ուղղակի կամ անուղղակի աջակցությունից<sup>4</sup>:

ԴԿ-ն 1950 թվականին կարողացավ հաղթել խորհրդարանական ընտրություններում: Այդ հաղթանակի ոչ-երկրորդական պատճառներից մեկն այն էր, որ կուսակցությունը խոստացել էր վերացնել խոսքի և մամուլի ազատություններին սպառնացող խոչընդոտները<sup>5</sup>: Ընտրություններից երկու ամիս անց՝ 1950 թ. հուլիսի 15-ին, ընդունվեց մամուլի մասին նոր օրենք<sup>6</sup>, որի համաձայն մամուլի ազատությունը երաշխավորվում էր պետության կողմից, վերացվեցին նաև տպագիր մա-

<sup>4</sup> Kaya R. and Çakmur B., *Politics and the Mass Media in Turkey*, *Turkish Studies*, 2011, v. 11, no. 4, p. 524.

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Օրենքի ռուսերեն թարգմանության համար տես Гусейнов А., *Средства массовой информации в общественно-политической жизни Турции*, Москва, 1981, стр. 160-168.

մուլի նկատմամբ գոյություն ունեցող մի շարք սահմանափակումներ, արգելվեցին մամուլի ներկայացուցիչների նկատմամբ վարչական բնույթի հետապնդումները: Մինչև 1954 թ. ընտրությունները մամուլի ազատության ոլորտում նկատվեցին մի շարք դրական փոփոխություններ, սակայն խորհրդարանական ընտրություններին նախորդող և հաջորդող մի քանի ամիսների ընթացքում կառավարությանը քննադատող մոտ 50 լրագրողի նկատմամբ իրականացվեցին դատական հետապնդումներ, իսկ առաջատար պարբերականներից մի քանիսի (*Dünya*, *Milliyet*, *Halkçı*, *Hergün*, *Hürriyet*) լրագրողներ դատապարտվեցին 1-3 ամսվա ազատազրկման, շատերի նկատմամբ էլ սահմանվեցին վարչական տուգանքներ: Հաջորդ չորս տարիների ընթացքում լրագրողների նկատմամբ հետապնդումները էլ ավելի սաստկացան: Մեջբերելով «*Ulus*» պարբերականի տվյալները՝ խորհրդային թուրքագետ Հուսեյնովը նշում է, որ 1950-1958 թթ. ընթացքում Թուրքիայի դատարանների կողմից հետապնդման են ենթարկվել 2324 լրագրող, որոնցից 811-ը դատապարտվել են տարբեր ժամկետներով ազատազրկման կամ ստացել վարչական տույժեր<sup>7</sup>: 1954 և 1956 թթ. խորհրդարանն ընդունեց մի քանի օրենքներ, փոփոխություններ կատարվեցին նաև գործող Մամուլի մասին օրենքում, որոնք զգալի հարված հասցրին մամուլի ազատությանը: Միաժամանակ հարկ է նշել, որ ԴԿ-ն սկսել էր զարգացնել հովանավորչական հարաբերություններ մամուլի որոշ սեփականատերերի և առանձին լրագրողների հետ, ինչն արդեն վկայում է մամուլի քաղաքականացման մասին:

1960 թվականի մայիսին Թուրքիայում տեղի ունեցած զինվորական հեղաշրջումից հետո՝ 1961 թ., ընդունվեց նոր սահմանադրություն և մամուլի գործունեությունը կարգավորող նոր օրենք, որոնք ոչ միայն ընդլայնեցին մամուլի ազատությունը, այլև երաշխիքներ ապահովեցին լրագրողների մասնագի-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 8-9:



տական ազատ գործունեության համար: Նոր սահմանադրության միանգամից վեց հոդվածներ (հոդվ. 22-27) կարգավորում էին տպագիր մամուլի գործունեության, իսկ 121-րդ հոդվածը ռադիոյի, հեռուստատեսության և լրատվական գործակալությունների գործունեության ոլորտները<sup>8</sup>: Հիշյալ դրական օրենսդրական փոփոխություններով հանդերձ 1961-1962 թթ. ընթացքում լրագրողների դեմ հարուցվեցին 402 դատական հայցեր<sup>9</sup>:

1960-ական թթ. Թուրքիան ապրեց տնտեսական վերելք, որն իր դրական ազդեցությունն ունեցավ մամուլի վրա շրջանառության մեջ դնելով նորագույն տպագրական տեխնոլոգիաներ: Զգալիորեն աճեց տպագրվող պարբերականների (օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսաթերթեր) թիվը: Մեկ այլ խորհրդային թուրքագետ Իբրահիմովի բերած տվյալների համաձայն՝ 1949 թ. Թուրքիայում լույս էր տեսնում 109, 1955 թ.՝ 278, 1958 թ.՝ 411, իսկ 1963 թ.՝ 420 օրաթերթ, իսկ ընդհանուր առմամբ 1963 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Թուրքիայում լույս էին տեսնում 1722 անուն տպագիր պարբերական (420 օրաթերթ, 277 շաբաթաթերթ, 397 ամսաթերթ)<sup>10</sup>: Հարկ է նաև ընդգծել, որ 1960-70-ական թթ. թուրքական մամուլը բավական քաղաքականացված էր, որի պատճառով ծայրահեղական գաղափարները լայն տարածում գտան երկրում, ինչն էլ հանգեցրեց գաղափարական աննախադեպ բևեռացման: Հուսեյնովի նշած տվյալները ապացուցում են այդ պնդումը, քանի որ, համաձայն նրա հաշվարկների 1970-ականների վերջերին Թուրքիայում լույս էր տեսնում մոտ 2800 անուն պարբերական<sup>11</sup>: Առավել մեծ լսարան ունեին Cumhuriyet, Hürriyet, Tercuman, Milliyet, Günaydın, Milliyet, Son Havadis, Politika, Kelebek օրա-

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>9</sup> Ибрагимов А., նշվ. աշխ., էջ 25:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Гусейнов А., նշվ. աշխ., էջ 33:

թերթերը, որոնց օրական տպաքանակը 100.000-ից ավել էր<sup>12</sup>: 1980 թ. ռազմական հեղաշրջման կազմակերպիչներն առանձնահատուկ կերպով շեշտեցին ազատ մամուլի գործունեության հասարակության և հատկապես երիտասարդության վրա ունեցած բացասական հետևանքների մասին:

1980 թ. վերջին և 1990 թ. սկզբին, երբ զգալիորեն բարելավվեցին հաղորդակցական ենթակառուցվածքները, ԶԼՄ-ների գործունեության համար Թուրքիայում ստեղծվեցին նոր պայմաններ<sup>13</sup>: 1990-ական թթ. ընդամենը 9 տարվա ընթացքում երկիրը հաջորդաբար կառավարում էին 6 կոալիցիոն ուժեր և 5 տարբեր վարչապետներ: Գերիշխող քաղաքական ուժի բացակայությունը բարենպաստ պայմաններ ստեղծեց մասնավոր մամուլի սեփականատիրության համար, քանի որ այդ ժամանակաշրջանում մեկի մյուսի հետևից առաջանում էին մամուլի մասնավոր ընկերություններ և գործակալություններ: Առանձնակի կերպով նշանավորվում է «Դոդան Գրուպ» ընկերությունը, որը տնօրինում է այնպիսի թերթերի, ինչպիսիք են Hurriyet, Milliyet, Radikal, Posta: Հետաքրքրական է, որ ընկերության հիմնադիր Այդըն Դոդանը բազմիցս նշել է, որ ինքն աշխատում է զերծ մնալ որևէ քաղաքական ուժին սատարելուց, մինչդեռ նրա մրցակիցները մեղադրում էին կառավարությանը աջակցելու մեջ: Միննույն ժամանակ, 1980-90-ական թթ. ԶԼՄ-ների նկատմամբ հետապնդումները դարձան առավել համակարգային: Քրդական բանվորական կուսակցության (ԲԿԿ) դեմ կենտրոնական իշխանությունների ծավալած գործողությունները գուրգահեովեցին քրդական կողմնորոշման մամուլի, լրագրողների նկատմամբ բռնությունների ու ահաբեկումների կիրառման դրսևորումների աճով: Միննույն ժամանակ, մի շարք միջազգային և ազգային իրավապաշտպան կազմակերպություններ սկսեցին առավել համակարգված կերպով հետևել ու ար-

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>13</sup> Kaya R. and Çakmur B., նշվ. աշխ., էջ 525:



ձանագրել մամուլի և խոսքի ազատությունների նկատմամբ կատարվող ոտնձգությունները, լրագրողների սպանությունները և այլն:

Իսլամական կողմնորոշման հեռուստաալիքները, որոնք այլընտրանք են գործող հեռարձակող ընկերությունների, շուրջ 20 տարի շարունակ ազատ կերպով կարողանում են եթերը ուղղել պահպանողական գաղափարախոսությամբ ոչ միան թուրքիայում, այլև երկրի սահմաններից դուրս: 1990-ական թվականների մամուլի հրապարակայնացման գործում զգալի գործունեություն ծավալեց Ֆեթուլահ Գյուլենը: Աստվածաբան Գյուլենը, լինելով նաև բիզնես կորպորացիաներում շահեր հետապնդող գործիչ, հետզհետե ընդլայնեց իր ներկայացվածությունը լրատվության ոլորտում և դարձավ ազդեցիկ գործիչներից մեկը: Ավելին, երբ 1999 թվականին նա հեռացավ թուրքիայից, կամ ինքնաքստրվեց դեպի ԱՄՆ, նրան պատկանող ՋԼՄ-ները ոչ միայն շարունակեցին գործունեությունը, այլև էապես ընդարձակվեցին՝ ընդհուպ մինչև 2013 թ. վայելելով իշխող Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) աջակցությունը: 2002 թ. նոյեմբերից թուրքիայում իշխող ԱԶԿ-ի կառավարման տարիների սկզբնական ժամանակահատվածում լրատվամիջոցների անկաշկանդ գործունեության համար և խոսքի ու մամուլի ազատություն առումներով ստեղծվեցին բավական նպաստավոր պայմաններ, իսկ 2010 թվականից հետո իրավիճակը կտրուկ կերպով փոխվեց: Մտորն մանրամասն կներկայացվեն այս գործընթացների հիմնական դրսևորումները և հետևանքները:

***Լրագրողական գործունեության նկատմամբ սահմանափակումները և առանձնահատկությունները***

Եվրախորհրդի անդամ, կամ ԵՄ-ի անդամակցության թեկնածու մյուս երկրներից թուրքիան տարբերվում է նաև լրա-

գրողների նկատմամբ կատարված սպանությունների, բռնությունների, սահմանափակումների և ազատագրկումների առումներով: Հայտնի է, որ տարիներ շարունակ թուրքիան գլխավորում է այն երկրների ցուցակը, որոնցում գտնվում են ամենաշատ ազատագրված լրագրողները: Ինչպես 2000-ական թթ., այնպես էլ նախորդ գրեթե բոլոր տասնամյակներում, ահաբեկչական գործողությունների հետևանքով սպանվել են բազմաթիվ հանրահայտ լրագրողներ, որոնցից, անշուշտ, ամենաաղմկահարույցներից մեկը Հրանտ Դինքի սպանությունն էր 2007 թ. հունվարի 19-ին, որը 1992 թվականից ի վեր 19-րդ լրագրողի սպանությունն էր: Ավելին, «Թուրքական լրագրողների ընկերակցության» կողմից հրապարակված զեկույցում նշվում էր 65 լրագրողի անուն, որոնք սպանվել են 1909-2015 թթ. ընթացքում<sup>14</sup>: Այդ ցուցակում Դինքից բացի ներգրավված են նաև Հայոց ցեղասպանության ժամանակ սպանված հայազգի լրագրողների, հրատարակիչների, գրողների, պարբերականների հետ առնչվող երեք տասնյակից ավելի անուններ (Գևորգ Ֆերիդ, Հովհաննես Քազանյան, Գրիգոր Թորոսյան, Սմբատ Բյուրատ, Գեղամ Բարսեղյան, Շավարշ Կրիսյան, Լևոն Լորեն, Ռուբեն Սևակ, Գրիգոր Զոհրաբ և այլք), որոնց մեծ մասին գլխատել են 1915 թ. ապրիլ-օգոստոս ամիսներն ընկած ժամանակահատվածում: 1920-1970-ական թթ. ընթացքում լրագրողների նկատմամբ բռնությունները չեն ունեցել տարերային բնույթ, սակայն 1970-90-ական թթ. նրանց համար համարվում է ամենաարյունալի ժամանակահատվածը: Այդ ընթացքում տեղի ունեցած բախումների, ահաբեկչական գործողությունների, փողոցային մարտերի ժամանակ կամ մասնագիտական պարտականությունները կատարելիս սպանվեցին մեծ թվով լրագրողներ, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում ազգությամբ քրդերը: Աջ և ձախ ծայրահեղական խմբավորումների կողմից իրականացված ահաբեկչական գործողություն-

<sup>14</sup> Öldürülen Gazeteciler, <http://www.tgc.org.tr/oldurulengazeteciler.asp>



ների հետևանքում գոհվեցին մի շարք հայտնի լրագրողներ, որոնք ազդեցիկ դեր էին կատարում հանրային կարծիքի ձևավորման գործում (Ադեմ Յավուզ, Հյուսեին Շեն, Ալի Օզգյուր, Ումիթ Քաֆթանչիօղլու և այլն): Սպանված լրագրողների շարքում հարկ է առանձնացնել մի քանիսի անունները. օրինակ, Milliyet-ի գլխավոր խմբագիր Աբդի Իփեթչիի նկատմամբ 1979 թ. տեղի ունեցած ահաբեկությունն իրականացրել էր Օրալ Չելիքը և առավել հայտնի Մեհմեթ Ալի Աղջան, որոնք հանդիսանում էին ծայրահեղ աջակողմյան «Գորշ գայլեր» խմբավորման անդամներ: Վերջինս հետագայում պետք է փախչեր բանտից և երկու տարի անց մահափորձ իրականացնել Հոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի նկատմամբ: 1980-90-ական թթ. սպանված լրագրողների մեծ մասը գոհվեցին՝ կա'մ ծայրահեղական իսլամական կազմակերպությունների կողմից իրականացված գործողությունների, կա'մ քրդական հակամարտության ընթացքում, կա'մ էլ չբացահայտված հանցամանքներում: Հիշատակության են արժանի հատկապես «Ջումհուրիյեթ» օրաթերթի հայտնի լրագրողներ Ուղուր Մուսթուֆա և Ահմեթ Թաներ Քըշլալըի սպանությունները համապատասխանաբար 1993 և 1999 թվականներին, ինչպես նաև քրդական «Օզգյուր Գյունդեմ» օրաթերթի 8 լրագրողների սպանությունները 1992-1993 թթ.: Յուրաքանչյուր սպանությունից հետո Թուրքիայում հասարակական մեծ ալիք էր բարձրանում, տեղի էին ունենում զանգվածային բողոքի ցույցեր: Անշուշտ, Հրանտ Դինքի հուղարկավորության ժամանակ տեղի ունեցած բողոքի ընդվզումն աննախադեպ էր: Մասնագիտական պարտականությունների իրականացման պատճառով Թուրքիայում սպանված վերջին լրագրողը Ստամբուլից 100 կմ հեռու գտնվող Բանդըրմա քաղաքում լույս տեսնող «Güney Marmara'da Yaşam» պարբերականի սեփականատեր և խմբագիր 53-ամյա Ջիհան Հայրսեվեներն էր, որը սպանվեց 2009 թ. դեկտեմբերի 21-ին<sup>15</sup>: Թեև

<sup>15</sup> Editor killed by unknown gunmen in Turkey, <https://cpj.org/2009/12/editor->

2015 թ. փետրվարի 17-ին Ստամբուլում սպանվեց ևս մեկ լրագրող՝ 46-ամյա Նուհ Քյոքլյուն, սակայն այդ դեպքը կապ չունեք մասնագիտական գործունեության հետ<sup>16</sup>:

Թուրքիայի օրենսդրությունը թույլ է տալիս պետության շահերին ու անվտանգությանը սպառնալիք ներկայացնող տեղեկությունների նկատմամբ գրաքննություն իրականացնել: Օրինակ՝ 1980-90-ական թթ. քրդական հարցի քննարկումը թուրքական մամուլում խստագույն գրաքննության էր ենթարկվում: Վերջին տասնամյակում հատկապես արդիական է դարձել համացանցի և նոր մեդիաների գրաքննությունը: 2011 թ. դատարանի վճռով փակվեցին շուրջ 15 տեղեկատվական կայքեր, որոնք ունեին քրդամետ կողմնորոշում<sup>17</sup>:

2014 թ. «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը հրապարակեց մամուլի ազատության համաշխարհային հերթական հարացույցը, որտեղ 180 երկրների շարքում Թուրքիան զբաղեցնում էր 154-րդ հորիզոնականը<sup>18</sup>: 2002 թվականից ի վեր այս կազմակերպության կողմից հրապարակվում են մշտազննման արդյունքները և Թուրքիայի պարագայում ուսումնասիրությունը բավական հետաքրքիր վայրիվերումներ է պարունակում: Աղյուսակ 1-ը ներկայացնում է 12 տարվա ընթացքում Թուրքիայում մամուլի ազատության հարացույցի դինամիկան:

[killed-by-unknown-gunmen-in-turkey.php](http://www.killed-by-unknown-gunmen-in-turkey.php); Slain journalist buried in Istanbul, <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=slain-journalist-buried-in-istanbul-2009-12-20>

<sup>16</sup> Gazeteci Nuh Köklü öldürüldü, <http://www.hurriyet.com.tr/gundem/28230872.asp>: Սպանությունը տեղի էր ունեցել փողոցում տեղի ունեցած բանավեճի ընթացքում, երբ ընկերների հետ ձևագնդի խաղալիս, պատահմամբ հարվածել էին նպարավաճառի խանութի ապակուն, որին հետևել էր բանավեճ և դանակահարություն:

<sup>17</sup> Turkey: Freedom on the Net 2012 - <https://freedomhouse.org/report/freedom-net/2012/turkey#.VOV7wSuUdZQ>

<sup>18</sup> Details about Turkey. <http://index.rsf.org/#!/index-details/TUR>.



**Աղյուսակ 1**

Թվական	Թուրքիայի զբաղեցրած հորիզոնականը	Դիտարկված երկրների ընդհանուր թիվը
2002	99	134
2003	115	158
2004	113	158
2005	98	161
2006	98	161
2007	101	164
2008	102	168
2009	122	170
2010	138	173
2011-2012	154	178
2013	154	178
2014	154	180

Աղյուսակ 1-ում տեղ գտած թվերի համադրումը մի շարք ուշագրավ միտումներ է պարունակում: Նախ և առաջ հարկ է շեշտել, որ Թուրքիայում 2002 թվականից իշխող ԱԶԿ-ի ղեկավարությունը իր կառավարման առաջին հատվածում (2002-2007 թթ.) նախընտրում էր շեշտել, որ խոսքի ազատության առումով ԱԶԿ-ն տխուր ժառանգություն էր ստացել: Նրա ղեկավարները պնդում էին, որ խոսքի ազատության և մամուլի ազատ գործունեության նախկինում տեղ գտած սահմանափակումները, լրագրողների նկատմամբ իրականացված բռնությունները, ազատագրվման փաստերը, սպանություններն անցյալում են: Իրականում, առավելագույն դրական արդյունքը, որը գրանցվեց ԱԶԿ-ի կառավարման տարիներին, 2005-2006 թվականներն էին, երբ 2002 թվականի ցուցանիշը հաջողվեց գերազանցել ընդամենը մեկ հորիզոնականով: Եվրամիության հանդեպ ստանձնած պարտավորությունների և լայնածավալ բարեփոխումների ընթացքը չէր կարող շրջանցել

նաև մամուլի ազատության հարցը, ուստի, մինչև 2006 թվականը նկատված դրական միտումը հարկ է կապել բացառապես այդ հարակից գործընթացների թողած ազդեցության հետ: 2007 թվականից շարունակվող անկումը իր նվազագույն շեմին հասավ 2012 թվականին և պահպանվեց հաջորդ երկու տարիների ընթացքում: Վերջին անգամ լրագրողների նկատմամբ նման մեծածավալ հետապնդումներ, ճնշումներ և սահմանափակումներ իրականացվել են 1980 թվականի սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո: Ավելին, «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից հրապարակված 2013 թվականի զեկույցում ուղղակի նշվում էր, որ լրագրողների համար Թուրքիան վերածվել է ամենամեծ բանտի:

2002-2015 թվականների ընթացքում Freedom House-ի կողմից Թուրքիայի վերաբերյալ պատրաստած ամենամյա զեկույցներում մամուլի ազատության դինամիկայի ուսումնասիրությունը ևս պարունակում է ուշագրավ միտումներ: Աղյուսակ 2-ում ներկայացված է 13 տարիների դինամիկան: Ներքոբերյալ տարեթվերին ներկայացված են նախորդ տարվան վերաբերող համաթվերը և ազատության աստիճանը:

Թվական	Թուրքիայի վերաբերյալ զեկույցի աստիճանը	Նախորդ տարվա զեկույցի աստիճանը
2002	1	1
2003	1	1
2004	1	1
2005	1	1
2006	1	1
2007	1	1
2008	1	1
2009	1	1
2010	1	1
2011	1	1
2012	1	1
2013	1	1
2014	1	1
2015	1	1



## Աղյուսակ 2

Տարեթիվ	Մամուլի ազատության աստիճանը	Մամուլի ազատության համաթիվը 0 – ամենալավը, 100 – ամենավատը	Իրավական մթնոլորտ 0 – ամենալավը, 30 – ամենավատը	Քաղաքական մթնոլորտ 0 – ամենալավը, 40 – ամենավատը	Տնտեսական մթնոլորտ 0 – ամենալավը, 30 – ամենավատը
2002	Մասամբ ազատ	58	26	23	9
2003	Մասամբ ազատ	55	23	23	9
2004	Մասամբ ազատ	52	18	23	11
2005	Մասամբ ազատ	48	16	21	11
2006	Մասամբ ազատ	48	17	20	11
2007	Մասամբ ազատ	49	19	19	11
2008	Մասամբ ազատ	51	20	20	11
2009	Մասամբ ազատ	50	21	18	11
2010	Մասամբ ազատ	51	22	18	11
2011	Մասամբ ազատ	54	22	21	11
2012	Մասամբ ազատ	55	22	22	11
2013	Մասամբ ազատ	56	21	24	11
2014	Ոչ ազատ	62	23	26	13
2015	Ոչ ազատ	65	24	27	14

Ինչպես «Լրագրողներ առանց սահմանների» հարացույցում, այնպես էլ Freedom House-ի պարագայում նկատելի էլ, որ 2005-2006 թթ. ամենաբարենպաստ պայմաններն էին ստեղծվել մամուլի ազատ գործունեության համար, թեև այն շարունակվում

էր բնութագրվել որպես «մասամբ ազատ»: Իրավիճակը շարունակեց դանդաղ վատթարանալ 2007 թ.-ից, իսկ 2014 թ. առաջին անգամ Թուրքիան դարձավ մամուլի ազատության առումով «ոչ ազատ» երկիր և այդ ցուցանիշը կրկնեց նաև հաջորդ տարվա ընթացքում բոլոր առումներով արձանագրելով տեսանելի հետընթաց: Ակնհայտ հետընթաց է գրանցվել նաև մամուլի գործունեությանը նպաստող քաղաքական, իրավական և տնտեսական ցուցիչների պարագաներում:

Թուրքիայում մամուլի ազատության և լրագրողների մասնագիտական պարտականությունների վերաբերյալ վերջին տարիներին շրջանառվող ամենատարածված թեմաներից մեկն այն էր, որ Թուրքիայում ավելի շատ լրագրող կա ազատագրված, քան աշխարհի ցանկացած այլ երկրում: «Լրագրողների պաշտպանության խորհրդի» կողմից 1994 թ. ի վեր պատրաստվող ամենամյա զեկույցների վերլուծությունը ցույց է տալիս, որ Թուրքիան նախկինում ևս ազատագրված լրագրողների առումով պարբերաբար ստանձնել է «առաջինը լինելու դափնին»: 1992-1998 թթ. և 2012-2013 թթ. ազատագրված լրագրողների թվով Թուրքիան առաջին հորիզոնականում էր<sup>19</sup>: Իրականում, այդ զեկույցումներին նախորդող ժամանակաշրջանում ևս արձանագրվել են լրագրողների ազատագրվածության դեպքեր: 1980-90-ական թվականներին Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) դեմ մղվող պայքարում Թուրքիայի կենտրոնական իշխանություններն անխնա ազատագրելու էին այն լրագրողներին, որոնք մեղադրվում էին քրեական օրենսգիրքը (հատկապես 125, 216, 288, 299, 301 և 314-րդ հոդվածները<sup>20</sup>) և ահաբեկչության դեմ պայքարի օրենքը խախտե-

<sup>19</sup> Beiser E., *Second worst year on record for jailed journalists*, <https://cpj.org/reports/2013/12/second-worst-year-on-record-for-jailed-journalists.php>; Nina Ognianova, *Turkey-world's top press jailer once more*, <https://cpj.org/blog/2013/12/turkey--worlds-top-press-jailer-once-more.php>

<sup>20</sup> Թուրքիայի միասնականության և թուրք ազգի ինքնության խաթարմանն ուղղված հոդվածներ:



լու համար: 1990-ական թվականներին հաճախ հանդիպող այլ մեղադրանքներից էին քաղաքական իսլամի քննարկումը, բրդական հարցի արծարծումը, ՋՈՒ-ի և դատական համակարգի դեմ նյութերի հրապարակումը: Աղյուսակ 3-ում ներկայացված են Թուրքիայում բանտարկված լրագրողների թիվը 1992 թվականից սկսած:

**Աղյուսակ 3**

Տարեթիվ	Ազատազրկված լրագրողների թվաքանակը
1994	32
1995	33
1996	31
1997	29
1998	27
1999	18
2000	14
2001	13
2002	13
2003	5
2004	5
2005	4
2006	1
2007	1
2008	1
2009	1
2010	4
2011	8
2012	49
2013	40
2014	7 <sup>21</sup>

<sup>21</sup> Թուրքական Bianet-ի տվյալների համաձայն՝ 2014 թ. դեկտեմբերին ազատազրկված լրագրողների թիվը 22 էր, իսկ հրատակիչներինը՝ 10:

Ինչպես ցույց տրվեց աղյուսակ 1-ում և 2-ում 2002 թվականից հետո միառժամանակ լրագրողների դեմ բռնություններն ու սահմանափակումները, այդ թվում նաև ազատազրկումները, էապես կրճատվեցին, որի բացատրությունը հարկ է կապել ԵՄ-ի հետ սկսված բանակցություններով և իշխող կուսակցության ստանձնած պարտավորություններով: Այնուամենայնիվ, 2004-2008 թվականների ընթացքում մի շարք ազդեցիկ լրագրողների դեմ (Հրանտ Դինք, Մուրադ Բելգե, Էրոլ Քաթըրըջըօղլու, Իսմեթ Բերքան, Հասան Ջեմալ) գործեր հարուցվեցին քրեական օրենսգրքի 288 և 301 հոդվածները խախտելու մեղադրանքով և անգամ նրանցից մի քանիսի դեմ կիրառվեցին պայմանական ազատազրկումներ: Հրանտ Դինքի սպանությունը էապես թուլացրեց լրագրողների դեմ 301-րդ հոդվածի հետագա կիրառումը, իսկ 2008 թ. ապրիլին կատարված փոփոխությունից հետո, այդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելն դարձավ առավել դժվար:

Հարկ է նշել, որ 2004-2008 թթ. ընթացքում լրագրողների դեմ պայքարը հիմնականում ղեկավարվում էր զինվորականների և դատախիրավական համակարգի, ազգայնականների, քեմալական-աշխարհիկ կարգերի մոլի ջատագովների կողմից: Նրանք պահանջում էին, որպեսզի դատախիրավական համակարգը խստորեն պատժի նրանց, ովքեր կանարգեն կամ կքննադատեն Աթաթյուրքի ժառանգությունը, Թուրքիայի պատմությունը, հանրապետությունը և պետական հաստատությունները, դատական համակարգը, բանակը, ՋՈՒ-ը և թուրքականությունը: Իշխող կուսակցությունը այդ ընթացքում չունեի բավարար լծակներ քեմական-ազգայնական սկզբունքներով ուղղորդվող դատախիրավական համակարգի դեմ պայքարելու համար, ավելին, 2008 թվականին հարցականի տակ էր անգամ ԱԶԿ-ի գոյությունն՝ հակաաշխարհիկ գործունեություն ծավալելու մեղադրանքով և Թուրքիայի Սահմանադրական դատարանում ԱԶԿ-ն փակելու համար միայն մեկ ձայն չբավարեց: 2008-2010



թվականների ընթացքում ԱԶԿ-ն կարողացավ փոխել իրադարձությունների իր համար ոչ նպաստավոր ընթացքը: ԱԶԿ-ի նպատակն էր դատաիրավական համակարգի և զինվորականների լծակները հնարավորինս, իսկ որոշ դեպքերում, առավելագույն կերպով նվազեցնել: 2010 թվականի սեպտեմբերի սահմանադրական փոփոխություններից և 2011 թվականի հունիսի խորհրդարանական ընտրություններից հետո Էրդոդանը էապես փոխեց վերաբերմունքը իր և կառավարության հասցեին ուղղված քննադատության նկատմամբ: Նրա կառավարման մեթոդներում նկատված ավտորիտար դրսևորումների հիմնական սլաքն ուղղվեց լրագրողների և խոսքի ազատության դեմ: Այս գործոններով էր պայմանավորված 2012-13 թթ. ընթացքում ազատագրված լրագրողների քանակի բազմակի աճը նախորդ տարիների համեմատ:

#### ***ԶԼՄ-ների նկատմամբ կառավարության վերահսկողության դրսևորումները***

Տասնամյակներ շարունակ Թուրքիայի իշխանությունները աչալըջորեն վերահսկել են լրատվամիջոցների գործունեությունը և խոչընդոտել դրանց զարգացմանը: Վերահսկողությունն ունեցել է ամենատարբեր դրսևորումներ՝ միջամտություն ՉԼՄ-ի կառավարման գործերին, գրաքննություն, ինքնագրաքննություն, ահաբեկումներ, հարկային մարմինների հետ դատական գործընթացներ, զրպարտության համար դատական գործընթացներ և այլն: Ներքոբերյալ օրինակներն ընդամենը մի քանի առավել հայտնիներն են, որոնք մեծ աղմուկ բարձրացրին թե՛ Թուրքիայում, թե՛ նրա սահմաններից դուրս:

1997 թ. փետրվարի 27-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում զինվորականների կողմից վարչապետ Էրբաքանին ներկայացվեց 18 կետից բաղկացած վերջնագիր, որից ամիսներ անց, անկարող լինելով դիմադրել աճող

ճնշմանը, նա հրաժարական տվեց: Այս իրադարձությունը, որն առավել հայտնի է «պոստ-մոդեռն» կամ «թավշյա» հեղաշրջում անվամբ, զինվորականների կողմից հանրապետական Թուրքիայի քաղաքական կյանք ներխուժման չորրորդ փաստն էր 1960 թվականից ի վեր: Այդ իրադարձության նախապատրաստման, մատուցման և ուղղորդման գործում անգնահատելի ծառայություն մատուցեցին թուրքական հիմնական ԶԼՄ-ները: Ուղղորդվելով բարձրաստիճան զինվորականների և քեմալականների կողմից՝ թուրքական ԶԼՄ-ները ամիսներ շարունակ ձևավորել էին վախի և սպառնալիքի մթնոլորտ, որի նպատակն էր ցույց տալ, որ վարչապետ Էրբաքանը նպատակ ունի երկիրը դարձնել երկրորդ Իրան, արմատախիլ անել աշխարհիկ պետական համակարգը և ձևավորել նոր հակաքեմալական պետություն: Տարիներ անց պարզ դարձավ, որ լրատվամիջոցների թողարկած գլխագրերը, պատմությունների բովանդակությունը և փաստերը ձևավորվել ու մատուցվել էին Թուրքիայի Զինված ուժերի Գլխավոր շտաբի կողմից, իսկ լրատվամիջոցների գլխավոր խմբագիրների գործն այդ ամենին ճշտությամբ հետևելն էր ու հասարակության մոտ կարծիք ձևավորելը:

Գալով իշխանության՝ ԱԶԿ-ն ևս շարունակեց ԶԼՄ-ների վրա հսկողություն իրականացնել, որն առավել ակնհայտ դարձավ կառավարման երկրորդ շրջանի երկրորդ կեսից՝ 2009 թ.-ից սկսած: Շուրջ 5 տարի շարունակվող Էրգենեքոնի դատարարության ընթացքում ևս տեղ գտան լրագրողների ձերբակալության դեպքեր, որոնք մեղադրվում էին գաղտնի կազմակերպությունների հետ համագործակցության, հակապետական և հակաիշխանական գործունեության ծավալելու համար: Մի շարք դեպքերում թեև բավարար հանցակազմ չկար, սակայն դատարանները լրագրողներին դատապարտեցին տարբեր ժամկետներով ազատագրվման:

2011 թ. դեկտեմբերի 28-ին թուրքական օդուժը սիսլամաբ ոմբակոծեց Թուրքիայի հարավարևելյան քրդաբնակ Ուլուդերե



շրջանի 34 բնակչի, որոնք հիմնականում երիտասարդներ էին և չէին բոլորել 17 տարին: Սպանվածները զբաղվում էին մաքսանենգությամբ և վերադառնում էին Իրաքից: Շուրջ օր ու կես լրատվամիջոցները լրում էին այդ իրադարձության վերաբերյալ և միայն սոցցանցերում բարձրացված աղմուկից հետո հնարավոր եղավ վեր հանել տեղի ունեցածի բոլոր մանրամասները<sup>22</sup>: Այն լրագրողները, որոնք ավելի քննադատական լույսի ներքո ներկայացրին տեղի ունեցածը հետագայում հեռացվեցին լրագրողական աշխատանքից, այնպես, ինչպես դա տեղի ունեցավ Haberturk-ի սյունակագիր Էջե Թեմելքուրանի պարագայում (նա հայտնի է նաև հայ-թուրքական հարաբերություններին նվիրված «Deep mountain: Across the Turkish-Armenian Divide» գիրքը<sup>23</sup>):

Կառավարության կողմից զանգվածային լրատվության նկատմամբ իրականացվող ամենացույց օրինակներից էր նաև 2013 թ. ամռանը Գեզի այգում տեղի ունեցած իրադարձությունների լուսաբանման ընթացքը: Թաքսիմի հրապարակում և Գեզի այգում ցուցարարների բողոքի և քաղաքացիների դեմ իրականացվող բռնությունների թեժ պահին՝ բարձր հեղինակություն ունեցող հեռուստաընկերություններից մեկը՝ CNN Türk-ը, ցուցադրում էր պինզվիների մասին վավերագրական կինոնկար: Ինքնագրաքննության այս հանգամանքը բավական մեծ քննադատության արժանացավ հասարակության կողմից և ինչպես և կարելի էր ենթադրել կառավարության կողմից հեռարձակող ՋԼՄ-ների մեծ մասին արգելվել էր ցուցադրել Գեզի այգում տեղի ունեցած դեպքերին առնչվող լուրեր: ԵՄ-ի հանձնակատար Ստեֆան Ֆյուլեն այն անվանեց «թուրքական լրատ-

<sup>22</sup> Konuk Yazar, *Uludere katliamı ve medya*, <http://www.derindusunce.org/2012/02/03/uludere-katliami-ve-medya/>, 3 Şubat, 2012; Faruk Arhan, *Medya, MIT mensubu ve Uludere*, <http://bianet.org/biamag/insan-haklari/135110-medya-mit-mensubu-ve-uludere>, 30 Aralık 2011.

<sup>23</sup> Ece Temelkuran, *Deep mountain: Across the Turkish-Armenian Divide*, Verso; 2010

վամիջոցների խլացնող լռություն»<sup>24</sup>, այլ պաշտոնյաների և ընդդիմության կողմից ևս եղան դատապարտող հայտարարություններ: Հետագա օրերին, երբ Գեզի այգիում տեղի ունեցող իրադարձություններն առավել մանրամասն լուսաբանվեցին, Թուրքիայի ժուռնալիստների միության տվյալների համաձայն, ավելի քան 22 լրագրողներ, հեռացվեցին, իսկ ավելի քան 37 լրագրողների ստիպեցին հեռանալ աշխատանքից ցուցարարների բողոքները դրական լույսի ներքո մատուցելու մեղադրանքով (այդ թվում՝ Միլլիյեթի լրագրողներ Հասան Ջեմալը և Ջան Դյունդարը, Սաբահից Յավուզ Բայդարը, Ջյուլֆու Լիվանելին, ինչպես նաև Բեքիր Ջոշքունը՝ Հյուրիյեթից)<sup>25</sup>:

2014 թ. օգոստոսին, նախագահական ընտրությունների նախընտրական պայքարի ընթացքում հանրահայտ Economist-ի թղթակից և Taraf-ի սյունակագիր Ամբերին Ջամանին Էրդոհանն անվանեց «անամոթ մարտիկ» և կոչ արեց «իր տեղը իմանալ»: Սեպտեմբերին New York Times-ի լրագրող Ջեյլան Յեյլինսուտի նկատմամբ ևս իշխանամետ մամուլը վիրավորանքներ հնչեցրեց այն բանից հետո, երբ նա արձանագրել էր Թուրքիայի տարածքում «խլամական պետության» համար զինյալների հավաքագրման փաստը<sup>26</sup>: 2014 թ. ընթացքում հիմնականում երկրի նախագահի՝ Էրդոհանի դեմ զրպարտանքի մեղադրանքով (քր. օր. հոդված 299) հետապնդումներ իրականացվեցին

<sup>24</sup> Sté u Շտեֆան Ֆյուլեի ելույթը Եվրահանձնաժողովի «Speak-Up!2: Loud wake-up call for improving media freedom in Western Balkans and Turkey» խորագիրը կրող խորհրդաժողովի ընթացքում. [http://europa.eu/rapid/press-release\\_SPEECH-13-558\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_SPEECH-13-558_en.htm)

<sup>25</sup> At least 22 journalists fired in connection with Gezi protests, [http://www.todayszaman.com/latest-news\\_at-least-22-journalists-fired-in-connection-with-gezi-protests\\_321554.html](http://www.todayszaman.com/latest-news_at-least-22-journalists-fired-in-connection-with-gezi-protests_321554.html) “Wave of dismissals after Gezi Park Protests”, We Fight Censorship, <http://www.wefightcensorship.org/ru/node/160html.html>; Journalist Yavuz Baydar fired from Sabah daily, [http://www.todayszaman.com/latest-news\\_journalist-yavuz-baydar-fired-from-sabah-daily\\_321690.html](http://www.todayszaman.com/latest-news_journalist-yavuz-baydar-fired-from-sabah-daily_321690.html).

<sup>26</sup> <https://freedomhouse.org/report/freedom-press/2015/turkey#.V#0kBzYVgdV>



մոտ 10 լրագրողների նկատմամբ, որոնց թվում էին նաև Cumhuriyet-ի սյունակագիր Ջան Դյունդարը և Taraf-ի սյունակագիր Մեհմեթ Բարանսուն<sup>27</sup>: Bianet-ի տվյալների համաձայն, միայն 2014 թ. 399 լրագրող, սյունակագիր և ՋԼՄ-ների աշխատակիցներ ստիպված են եղել հեռանալ կամ հեռացվել են աշխատանքից՝ մեծ մասամբ գործադիր իշխանության ճնշումների կամ սեփականատերերի պահանջով<sup>28</sup>:

Լրատվամիջոցների գոյության ու գործունեության և պետության հետ նրանց ունեցած հարաբերությունների բնույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՋԼՄ-ների կառավարման գործող համակարգի պայմաններում անհնար է պատկերացնել անկախ լրատվամիջոցներ: Թուրքական ՋԼՄ-ների ավելի քան 80 տոկոսը պատկանում է բիզնես հոլդինգներին, որոնք կառավարության հետ ունեն ուղղակի կամ ընդհանուր շահեր, հետաքրքրություններ կամ համատեղ բիզնես ծրագրեր: Հետևաբար, կառավարության կողմից ՋԼՄ-ների նկատմամբ առկա վերահսկողության պատճառների հիմքը լրատվամիջոցների տնօրինման և կառավարման համակարգն է, որն էլ իր հերթին սահմանափակում է խմբագիրների, լրագրողների և սյունակագրերի մասնագիտական գործունեության հնարավորությունները:

Այս ամենի հետ մեկտեղ հարկ է փաստել, որ թե՛ 1990-ական թթ, թե՛ 2000-ականներին տեղ գտան նաև օրինակներ, երբ կառավարությունը ունակ չեղավ ամբողջությամբ վերահսկել ՋԼՄ-ների գործունեությունը: Օրինակ, 1996 թ. նոյեմբերի Սուսուրլուքի աղմկահարույց ավտովթարից հետո լրատվամիջոցները կարողացան հանրության ներկայացնել փաստեր ոչ միայն ավտովթարին զոհ գնացած անձերի, այլ նաև հարուց-

<sup>27</sup> Turkey: 5-year Decline in Press Freedom, <https://freedomhouse.org/report/freedom-press/2015/turkey#.Ve0kBzYVgdV>

<sup>28</sup> Նույն տեղում, <https://freedomhouse.org/report/freedom-press/2015/turkey#.Ve0kBzYVgdV>

ված քրեական գործին առնչվող այլ տվյալներ: Տեղեկատվական արտահոսքն սկիզբ դրեց փոխվարչապետ Թանսու Չիլլերի և իրավապահ մարմինների դեմ բացասական տրամադրություններ վերելքին: Նմանատիպ մեկ այլ դրսևորում էր 1999 թ. օգոստոսին Իզմիրում տեղի ունեցած երկրաշարժի լուսաբանումը ՋԼՄ-ների կողմից: Իշխանություններն անկարող եղան գրաքննել ՋԼՄ-ների թողարկումները, որոնք ցույց էին տալիս երկրաշարժի հետևանքների վերացման գործում կառավարության անարդյունավետ աշխատանքը և դրա պատճառով զոհերի թվաքանակի աճը:

2000-ական թթ. ևս որոշ լրատվամիջոցներ, օրինակ՝ Zaman-ը և Taraf-ը, հրապարակեցին մի շարք աղմկահարույց փաստաթղթեր, փաստեր, որոնք վկայում էին զինվորականների կողմից իշխող կուսակցության ԱԶԿ-ի, դեմ պլանավորվող մի քանի ռազմական հեղաշրջումների և ազգային փոքրամասնությունների դեմ նախատեսվող ահաբեկչական գործողությունների մասին: Ակնհայտ է, որ ՋԼՄ-ները համագործակցել էին համապատասխան կառույցների հետ այդ փաստաթղթերի արտահոսքը կազմակերպելու առումներով, այնուամենայնիվ, այդ հրապարակումները աննախադեպ հարված հասցրին զինվորականների հեղինակությանը:

### **Համացանցային գրաքննություն**

Վերջին տարիներին համացանցը լայնորեն ներթափանցեց Թուրքիա: Եթե 2009 թ. 75 մլն. բնակչությունից ընդամենը 25 մլն. էր օգտվում համացանցից, ապա 2014 թվականի տվյալներով մոտ 77 մլն բնակչություն ունեցող Թուրքիայի 35,4 մլն. (բնակչության մոտ 46 %) ունի ինտերնետ հասանելիություն (18-րդ ցուցանիշն աշխարհում)<sup>29</sup>: 2014 թ. չորրորդ եռամսյակի տվյալներով Թուրքիայի բնակչության 52 % համարվում են սո-

<sup>29</sup> Internet Users by Country (2014), <http://www.internetlivestats.com/internet-users-by-country/>



ցիալական ցանցերի օգտատերեր: Facebook-ի օգտատերերի թիվը գերազանցում է բնակչության 26 %-ը, իսկ Twitter-ինը՝ 17 %-ը, այս տվյալների շնորհիվ սոցիալական մեդիայի օգտագործման համաշխարհային հարացույցում Թուրքիան գտնվում է լավագույն հնգյակում<sup>30</sup>:

Ինտերնետի ակտիվացմանը զուգահեռ վերջին տասնամյակի ընթացքում Թուրքիայում լայն տարածում է ստացել նաև կառավարությանն առընթեր Ինֆորմացիոն և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների հանձնաժողովի (ԻՀՏՀ) (Bilgi Teknolojileri ve İletişim Kurumu), նրան կից գործող Հեռահաղորդակցության և կապի նախագահության (ՀԿՆ) (Telekomünikasyon İletişim Başkanlığı) և դատարանների կողմից կայքերի արգելափակումը: 2015 թ. սեպտեմբերի դրությամբ նման կայքերի թիվը գրեթե 84.000 էր<sup>31</sup>, ուշագրավ է, որ 2009 թվականի դրությամբ արգելափակված կայքերի քանակն ավելացել է մոտ քսան անգամ: Արգելափակված կայքերի մեծ մասը պարունակում էր խաղաղության, ժամանցային, պոռնոգրաֆիկ և պեդոֆիլ բովանդակություն, սակայն 2011 թվականից ի վեր արգելափակվել են նաև քաղաքական, կրոնական, ազգայնական կողմնորոշման կայքեր: Հեռահաղորդակցության և կապի նախագահության կողմից ինտերնետ մատակարարներին պարբերաբար ուղարկվում են արգելված բանալի բառեր, որոնք որոնելիս, իշխանությունները իրավունք ունեն արգելափակել որոնման արդյունքները: 2007 թ. մայիսի 23-ին հրապարակված թիվ 5651 օրենքը համարվում է այն հիմնական կարգավորող իրավական գործիքը, որն ԻՀՏՀ-ի և մասնավորապես ՀԿՆ-ի կողմից կիրառվում է կայքերի արգելափակման համար<sup>32</sup>:

<sup>30</sup> Penetration of leading social networks in Turkey as of 4th quarter 2014, <http://www.statista.com/statistics/284503/turkey-social-network-penetration/>

<sup>31</sup> Erişime Engellenen Siteler (TİB Tarafından), <http://engelliweb.com/tib-tarafından-erisime-engellenen-siteler/>.

<sup>32</sup> Telekomünikasyon İletişim Başkanlığı, [http://www.tib.gov.tr/tr-tr-menu-2-genel\\_bilgiler.html](http://www.tib.gov.tr/tr-tr-menu-2-genel_bilgiler.html).

Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթյուրքի, թուրքական բանակի, թուրք ազգի, ազգային ու կրոնական փոքրամասնություններին, ահաբեկչական կազմակերպություններին վերաբերող կայքերը և կայքային բովանդակությունը առանձնահատուկ հսկողության է ենթարկվում, քանի որ դրանք շարունակում են համարվել հակասական թեմաներ: 2008-2015 թվականների ընթացքում մի քանի անգամ արգելափակվել են YouTube, Twitter, Vimeo, MySpace կայքերը: 2011-15 թվականների ընթացքում արձանագրվեցին ինտերնետային գրաքննության մի շարք նոր դեպքեր:

Սակայն 2014 թվականի փետրվարի 6-ին Թուրքիայի օրենսդիր մարմինը փոփոխությունները կատարեց համացանցային գործունեությունը կարգավորող վերոհիշյալ 5651 օրենքում, նույն օրը նախագահ Գյուլը ստորագրեց օրենսդրական փոփոխությունը, իսկ փետրվարի 19-ին այն հրապարակվեց պաշտոնաթերթում և մտավ կիրառության մեջ<sup>33</sup>: Օրենքում կատարված փոփոխությունները նպատակ ունեին էլ ավելի խստացնել կառավարության վերահսկողությունը համացանցի նկատմամբ՝ սահմանափակելով քաղաքացիների տեղեկատվության ազատության և խոսքի ազատության իրավունքը: Նոր օրենսդրության համաձայն, տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարարին, ինչպես նաև ԻՀՏՀ-ի ղեկավարին թույլատրվում է առանց դատարանի որոշման արգելափակել ցանկացած կայք՝ ելնելով քաղաքացու անձնական կյանքի գաղտնիությունը պաշտպանելու վարկածից: Նոր օրենքը պարտադրում է նաև ինտերնետ մատակարարներին, որպեսզի նրանք 2 տարի

<sup>33</sup> Kanun No. 6518, T.C. Resmî Gazete, <http://www.resmigazete.gov.tr/main.aspx?home=http://www.resmigazete.gov.tr/eskiler/2014/02/20140219-1.htm/20140219.htm&main=http://www.resmigazete.gov.tr/eskiler/2014/02/20140219-1.htm>; Constanze Letsch, Turkey pushes through new raft of 'draconian' internet restrictions, <http://www.theguardian.com/world/2014/feb/06/turkey-internet-law-censorship-democracy-threat-opposition>



պահպանեն համացանց օգտագործողների գործունեության վերաբերյալ տեղեկույթը (այդ թվում՝ այցելած կայքերը, ում հետ է կապի մեջ եղել և հաղորդակցվել) և դրանք հասանելի դարձնեն իշխանություններին ըստ անհրաժեշտության: Այս օրենքի ընդունումը ԵՄ-ի և ԱՄՆ-ի, ինչպես նաև մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների (Լրագրողների պաշտպանության խորհուրդ, Freedom House, Human Rights Watch, Amnesty International) կողմից արժանացավ բացասական արձագանքի և խիստ քննադատական գնահատականի:

Համացանցում գրաքննության և արտահայտման ազատության դեմ կառավարության այդ քայլը պայմանավորված է 2013 թ. դեկտեմբերի 17-ից սկիզբ առած ներքաղաքական ճգնաժամի հետ: «Մեծ կաշառք» անվանումը ստացած գործողության արդյունքում իշխող կուսակցության հեղինակությանը մեծ հարված հասցվեց, պաշտոնանկ արվեցին 4 նախարարներ, որոնցից երեքի և նրանց որդիների նկատմամբ հարուցվեցին քրեական գործեր փողերի լվացման, կոռուպցիայի մեղադրանքներով, հարցաքննության կանչվեց անգամ էրդողանի որդին: Այդ իրադարձությունների լուսաբանման գործում թեև զանգվածային լրատվամիջոցները զգուշավոր մոտեցում ցուցաբերեցին՝ նկատի ունենալով 2013 թ. մայիս Գեզի այգում տեղի ունեցած իրադարձությունների լուսաբանման ժամանակ ՁԼՄ-ների նկատմամբ իշխանությունների իրականացրած վերահսկողությունը: Մակայն թե՛ 2013 թ. մայիսին, թե՛ դեկտեմբերին տեղի ունեցած իրադարձությունների լուսաբանման ու հանրայնացման գործում մեծ դերակատարում ստանձնեցին սոցիալական ցանցերը՝ հատկապես Twitter-ը և Facebook-ը, որոնք արագորեն տարածում էին զանազան կադրեր, ձայնագրություններ, փաստաթղթեր և նպաստում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ հանրային և օտարերկրյա իրազեկության աճին: Այս ամենի նկատմամբ Թուրքիայի վարչապետ էրդողանը իր դժգոհությունը հայտնել էր դեռ Գեզի այգում տեղի ունեցած

դեպքերի կապակցությամբ, սակայն «Մեծ կաշառքից» հետո նա որոշեց էապես սահմանափակել քաղաքացիների խոսքի և ազատ արտահայտման իրավունքը և անցնել համացանցի ամբողջական վերահսկմանը: Թե՛ նրա, թե՛ ԱԶԿ-ի ղեկավար կազմի կողմից հատկապես Twitter-ի հասցեին հնչեցին ամենատարբեր որակումներ՝ օր. «զգվելի», «անիծված», «սպառնալիք», «աղետ»<sup>34</sup>:

### Տպագիր մամուլ

Կառավարության տվյալների համաձայն՝ Թուրքիայում տպագրվում է մոտ 3000 անուն պարբերական, որոնցից 55-ը համապետական են, 23-ը նահանգային, իսկ մնացածը համայնքային: Օրական վաճառքի ծավալներով առաջին հորիզոնականներում է Zaman-ը, Posta-ն, Hürriyet-ը, Sözcü-ն, Sabah-ը, Milliyet-ը և Habertürk-ը: Ընդ որում, իր տպաքանակով Zaman-ը երկրորդ հորիզոնականը զբաղեցնող Posta-ից ավելին է մոտ 3 անգամ և 2013 թ. դեկտեմբերին անցնում էր 1.200.000-ը, մինչդեռ Posta-ի ցուցանիշը 400.000-ի սահմաններում է: Ավելին, որոշ տպագիր լրատվամիջոցների նկատմամբ հանրային պահանջարկն ավելանում է տարեցտարի, մինչդեռ որոշ լրատվամիջոցներ կորցնում են ընթերցողների քանակը: Այդուհանդերձ, 77 մլն. բնակչություն ունեցող Թուրքիայում օրական վաճառքի ծավալները միայն այս տարի է անցել օրական 5 մլն. սահմանագիծը, ընդ որում՝ այդ հաշվարկի մեջ է մտած նաև կես միլիոնից ավել կազմող սպորտային ուղղվածության պարբերականների տպաքանակը:

Թուրքիայում գործող ՁԼՄ-ներն ունեն մի շարք ընդհանուր առանձնահատկություններ, որոնք դասակարգելով հնարավոր է պատկերացում կազմել դրանց գործունեության ոլորտների, սեփականատերերի, դավանած գաղափախոսությունների և

<sup>34</sup> Tiraj Gazetelerin haftalık tiraj bilgileri. <http://www.medyatava.com/tiraj>



քաղաքական ուղղությունների վերաբերյալ: Ստորև ներկայացված են առավել մեծ հեղինակություն վայելող և առավել շատ շրջանառություն ունեցող տպագիր ու հեռարձակվող ՋԼՄ-ները:

Ստամբուլում և Անկարայում են տեղակայված համապետական պարբերականների և հեռարձակող կազմակերպությունների գլխավոր գրասենյակները: Թուրքիայի լրատվադաշտը վերահսկվում է մի քանի բազմաոլորտ ընդգրկում ունեցող հոլդինգային բիզնես խմբերի և ընտանիքների կողմից՝ Doğan Group, Turkuvaz, Ciner Group, Çukurova Group, Doğus Group, Feza Group և այլն: Այս մեղիա հոլդինգներին են պատկանում ամենամեծ հեռուստաալիքները և լրատվական պարբերականները: Ընդ որում, լրատվամիջոցների առուվաճառքը, միջհոլդինգային բանակցությունները թուրքական լրատվադաշտին բնորոշ առաձևահատկություններից է: Տպագիր մամուլի բաշխումը ևս պատկանում է այս հոլդինգներից երկուսին՝ Doğan Group և Turkuvaz Group:

Տպաքանակի վերաբերյալ ներքոբերյալ թվերը վերցված են 2013 թ. դեկտեմբերի 22-ի հրապարակված մոնիտորինգի տվյալներից, երբ Թուրքիայում ծագած հերթական աղմկահարույց գործընթացի ժամանակ հանրությունն առավելագույն հետաքրքրվածություն էր դրսևորում նրա լուսաբանման հարցում: Ներկայացվում են ՋԼՄ-ն ըստ հոլդինգային պատկանելիության, գաղափարական ուղղվածության և տպաքանակի<sup>35</sup>:

<sup>35</sup> Տվյալների մասին առավել մանրամասն տես Medyatava <http://www.medyatava.com/anasayfa>:

Սեփականատեր	Լրատվամիջոցի անվանումը	Նշումներ	Տպաքանակ
DOGAN GROUP	Hürriyet	Ազգայնական թերթում/ կան նաև որոշ ազատական սյունակագիրներ	409.000
	Sözcü	Ընդդիմադիր հայացքներ, քեմալիստական	378.000
	Posta	Բուլվարային, ժողովրդական	431.000
	Radikal	Չախ-ազատական	24.000
	Fanatik	սպորտային	190.000
	Hurriyet Daily News	անզլերեն	5500
	TURKUVAZ GROUP – պատկանում է ÇALIK HOLDING—ին և (սերտորեն կապված է Էրդողանի հետ)	Sabah	
Takvim	բուլվարային	108.000	
Fotomaç	սպորտային	200.000	
Yeni Asir	նահանգային	40.000	
Yeni Aktuel		8000	
Newsweek Türkiye		5,000	
Ekonomist		9000	
Para		9000	
DEMİRÖREN HOLDING	Milliyet	Ազգայնական թերթում/ կան նաև որոշ ազատական սյունակագիրներ	174.000
	Vatan	Սոցիալ-դեմոկրատական, աջ կենտրոն	109.000
FEZA GROUP (պատկանում է գյուլենականներին)	Zaman	Ազատական-խլամական	1.200.000
	Today's Zaman	Ազատական-խլամական	5500
	Aksiyon	անսագիր	38.000



	Sizinti	ամսագիր	850.000 ամսեկան
	Yeni Bahar	կրոնական	
	Yeni Ümit	եռամսյակը մեկ, 42 երկրում	98.000
	Yağmur	Երկամսյակը մեկ	
	Gonca	Երկամսյակը մեկ: մանկական և ընտանեկան ծրագիր	
CUKUROVA GROUP	Tercuman	ազգայնական	15.000
	Güneş	բուլվարային	100.000
CINER MEDIA GROUP	Haberturk		230.000
CENGİZ HOLDING	Akşam	իսլամական	104.000
ALBAYRAK HOLDING (իշխանամետ)	Yeni Şafak	իսլամական	115.000
	Vakit	իսլամական, ծայրահեղական, սկանդալային	50.000
MILLI GÖRÜŞ	Milli Gazete	իսլամական	24.000
	Cumhuriyet	Չախակողմյան, քեմալական, ազգայնական	55.000
SOCAR Media	Star	Ադրբեջանական SOCAR-ը ձեռք է բերել բաժնետոմսերի 50 % 2013 թ. մայիսին:	125.000
ILHAS HOLDING	Türkiye		183.000

YENİÇAĞ PUBLISHING	Yeniçağ	Մահրահեղ ազգայնամոլական	50.000
	Yeni Akit	Պահպանողական, ազգայնամոլական	63.000
	Ortadoğu	Ազգայնամոլական	8000
	Taraf	Անկախ, ազատական	85.000
	Özgür Gündem	Քրդական ազգայնական, սոցիալիստական	15.000
	Azadiya Welat	քրդական	
	Birikim	Չախ-ազատական	
	IHO	ՀՈՒՆԱԿԱՆ	
	Apoyevmatini		
	Agos		
	Jamanak	ՀԱՅԿԱԿԱՆ	
	Nor Marmara		
	Şalom	Հրեական	

### Լրատվական գործակալություններ

Սեփականատեր	Գործակալություն անվանումը	Նշումներ
	Anadolu Ajansi	Գործում է 1920 թ.-ից: Ունի 28 մասնաճյուղ Թուրքիայում, 22 արտերկրում, օրական մոտ 800 լուր և 200 ֆոտո:
	ANKA	Գործում է 1970 թ.-ից: Օրական լուրեր և ֆոտոներ, օրական մեկ անգամ տնտեսական ամփոփագրեր և շաբաթական մեկ անգամ անզերեն:
DOGAN GROUP	DHA	Տրամադրում է լուրեր հիմնականում Dogan Group-ին պատկանող լրատվամիջոցներին:
ILHAS GROUP	IHA	145 գրասենյակ Թուրքիայում:



		Լուրեր է տրամադրում արտերկրյա լրատվական գործակալություններին: Ունի անգլերեն և արաբերեն ծառայություններ:
CINER GROUP	Ajans HaberTürk	
SAMANYOLU GROUP	ÇİHAN Haber Ajansı (CHA)	Պատկանում է գյուլենականներին: Թուրքիայում ունի լավ կազմակերպված կառույցներ: Գրասենյակներ ունի 31 երկրներում և թղթակիցներ 55 երկրում:
	DIHA	Գործում է 2002 թ.-ից: Մատուցում է ծառայություններ նաև անգլերենով և թուրքերենով
	Firat	քրդական

### Ռադիո

Թեպետ Թուրքիայում ռադիոյի հեռարձակումը սկսվել է 1927 թ., սակայն հանրային- քաղաքական բանավեճերում այն նշանակալի դեր չունեցավ ընդհուպ մինչև մինչև 1960-ական թթ.: Պատճառները հիմնականում տեխնիկական էին, քանի որ այդ ընթացքում ընդամենը 8 ռադիոկայան էր կառուցված, որոնք ապահովում էին սահմանափակ ռադիոձածկույթ՝ Թուրքիայի տարածքի ընդամենը 47%-ը: 1960 թ. հետո ռադիոհեռարձակման գործընթացը տեսանելիորեն փոխվեց, քանի որ իշխանություններն այն դիտեցին որպես քարոզչության և տեղեկատվության տարածման կարևոր միջոց: «Թուրքական ռադիոյի և հեռուստատեսության ընկերությունը» (TRT) հիմնադրվեց որպես պետական կառույց, որը պաշտպանված էր 1961 թվականի սահմանադրությամբ: Մինչև 1970-ական թթ. վերջը Թուրքիայի տարածքում գործում էին 39 ռադիոկայաններ, իսկ

արդեն 1973 թ. Թուրքիայի ամբողջ տարածքն ապահովված էր ռադիոձածկույթով<sup>36</sup>: Դրանով հանդերձ ոչ բոլոր տներն ունեին ռադիոընդունիչներ, այդ խնդիրն հատկապես ցցուն էր գյուղերում:

Ռադիոյի հեռարձակման պետական մենաշնորհը ամրապնդված էր 1982 թվականի սահմանադրության 133-րդ հոդվածով և շարունակվեց մինչև 1993 թվականի հուլիս ամիսը: Չնայած այս օրենսդրական սահմանափակմանը՝ մասնավոր հատվածը շուկա էր մուտք գործել արդեն 1990-ական թթ.: Թուրքիայի արևմուտքում տարածվող հզոր արբանյակների ընձեռած հնարավորություններից օգտվելով՝ մասնավոր կայանները սկսեցին հեռարձակել Թուրքիայում Գերմանիայից, դրանով մարտահրավեր նետելով «TRT»-ին:

Այսպիսի զարգացումների անմիջական հետևանքները քառասային էին: Հանրությունը, ընդհանուր առմամբ գոհ էր ընձեռված ժամանցային ծրագրերից: Հիմնական պատճառն այն էր, որ շատերին հոգնեցրել էր «TRT»-ի քաղաքական արտադրանքը: Միաժամանակ հարկ է նշել, որ Թուրքիայի Ազգային Անվտանգության Խորհուրդը, անհանգստացած ամբողջ երկրով հեռարձակվող իսլամական ռադիոյի և հեռուստատեսության խնդրով, նպաստեց, որպեսզի 1994 թվականի ապրիլին ընդունվի օրենք «Ռադիոյի և հեռուստատեսության ձեռնարկությունների և նրանց հեռարձակման մասին»:

Մինչև 1994 թ. ռադիո հեռարձակման ոլորտում Թուրքիայի Ռադիո և հեռուստատեսության ընկերությունը (TRT) մենաշնորհ ուներ: Այժմ գործում են մոտ 1100 ռադիոկայան, որոնցից 100 կաբելային են: Դրանցից 36 համապետական են, 102 նահանգային, 950-ը համայնքային:

<sup>36</sup> Гусейнов А., նշվ. աշխ., էջ 121:



Մեփականատեր	Գործակալություն անվանումը	Նշումներ
TRT – հանրային	RADYO 1	ընդհանուր
	RADYO 2 (TRT-TM)	Լուրեր, ընդհանուր
	RADYO 3	Հիմնականում դասական երաժշտություն, ջազ: Լուրեր անզլերենով, ֆրանսերենով, գերմաներենով:
	Radyo 4	Թուրքական երաժշտություն
	Türkiye'nin Sesi /The Voice of Turkey	Հեռարձակվում է 26 լեզուներով
	Kral FM	Թուրքական փոփ երաժշտություն
	Burc FM	Պատկանում է գյուլենականներիին
	Radyo Cihan	
	Samanyolu Haber Radyo	
Dogan Media Group	CNN Turk Radyo	Լուրեր
	Radyo D	Փոփ երաժշտություն
	Slow Turk	Թուրքական փոփ երաժշտություն
	Super FM	Արևմտյան փոփ երաժշտություն
	Metro FM	Արևմտյան փոփ երաժշտություն
	Power Türk	Թուրքական փոփ երաժշտություն
	Best FM	Թուրքական փոփ երաժշտություն
	Açık Radyo	Բաց հանրային քննարկումներ ամենատարբեր քննարկումների շուրջ

### Հեռուստատեսություն

Մյուս երկրների համեմատ Թուրքիայում առաջին հեռուստահեռարձակումը տեղի ունեցավ զգալիորեն ուշ՝ 1968 թվականի հունվարի 31-ին ընդամենը 2000 հեռուստացույցի համար<sup>37</sup>: Երկար տարիներ եթեր դուրս եկավ միայն մեկ հեռուստաալիք՝ TRT անվանմամբ: Այժմ գործող հեռուստաալիքների թիվը Թուրքիայում բավական մեծ է, և ամեն տարի ստեղծվում են նորերը:

Շուրջ 40 տարի շարունակ TRT-ն աշխարհիկ, ժամանակակից և արևմտյան գաղափարների կրողն ու ջատագովն է եղել, արժեքներ, որոնք անկյունաքարային էին Թուրքիայի հանրապետության հռչակումից հետո: Թուրքական իշխանությունները, հավատարիմ մնալով լայիցիզմի դրույթներին, վերահսկում էին հեռուստատեսության ոլորտը, ինչն էլ, անխոս, հզոր միջոց է հասարակության վրա ազդեցություն գործելու համար: Այլ կերպ ասած՝ Անկարան ոչ միայն հեռուստատեսությունը ծառայեցնում էր սեփական շահերին, այլև մասնավոր հեռուստաալիքների վրա դրված արգելքով գրոյի էր հավասարեցնում անցանկալի քարոզչության հնարավորությունը: Այս համատեքստում հիշատակման է արժանի այն փաստը, որ Թուրքիայում տառաճանաչության և գրագիտության տոկոսը զգալի ցածր էր: 1923-ին Թուրքիայի բնակչության միայն 10%-ն էր տառաճանաչ: Ժամանակի ընթացքում այս ցուցանիշը բարձրացավ, սակայն եվրոպական մի շարք երկրների համեմատ այս պատկերը մեղմ ասած ոգևորող չէր: Ուստի հեռուստատեսությունը, որի հանդիսականի տառաճանաչ լինելու հանգամանքը պարտադիր չէր, ի տարբերություն տպագիր մամուլի, հանրությանը տեղեկացված պահելու ամենից ազդու միջոցն էր:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 122:



Իրավիճակը փոխվեց 1993-ին, երբ հանվեց մասնավոր հեռուստատեսությունների վրա դրված արգելքը: Թուրքիայում հիմնադրվեցին 24 հանրապետական, 16 նահանգային, 215 համայնքային և մի շարք կաբելային հեռուստաալիքներ: Թուրքիայում հեռուստաալիքները պատկանում են մեղիա հոլդինգներին, հետևաբար հետևում են նույն քաղաքականությանը, որոնցով որ ուղղորդվում են համապատասխան հոլդինգին պատկանող տպագիր լրատվամիջոցները: Բոլոր այս կազմակերպությունները ներգրավված են նաև տնտեսության այլ բնագավառներում՝ առողջության, կրթության, շինարարության և այլն:

1993 թ. մասնավոր հեռուստաալիքների վրա դրված արգելքի վերացման օրենքի փոփոխությունից զատ՝ հեռուստատեսության ոլորտում ևս մեկ հատկանշական փոփոխություն տեղի ունեցավ: Այն գործածության մեջ մտավ ԵՄ ճնշման շնորհիվ, որն էլ միտված էր ազգային փոքրամասնությունների շահերի ընդլայնմանը, ինչի արդյունքում 2009-ից TRT Հանրայինը իր 6-րդ ալիքը սկսեց հեռարձակել քրդերենով:

Սեփականատեր	Հեռուստաալիքի անվանումը	Նշումներ
TRT – ՀԱՆՐԱՅԻՆ	TRT 1	ընդհանուր
	TRT 2	Մշակույթ և արվեստ
	TRT 3	Երիտասարդական ալիք: Կազմակերպվում են հեռարձակումներ Թուրքիայի խորհրդարանից:
	TRT 4	կրթական
	TRT Müzik	երաժշտական
	TRT Çocuk	Երեխաների համար
	TRT-GAP	Հեռարձակվում է միայն քրդարենակ շրջաններում
	TRT-TÜRK	Հեռարձակվում է Եվրոպայում, ԱՄՆ-ում և

	TRT-AVAZ	Ավստալիայում Հեռարձակվում է Բալկաններում, Կենտ. Ասիայում և Կովկասում:
	TRT 6	Գործում է 2009 թ.-ից և հեռարձակվում է քրդերենով:
	TRT HD	
DOĞUŞ MEDIA GROUP	Star TV	Երկրորդն է ամենաշատ դիտվող երեկոյան լուրերի շարքում (Star Ana Haber)
	NTV	24 ժամ լուրեր
	KRAL TV	երաժշտական
	NTV Spor	սպորտային
TURKUVAZ MEDIA GROUP – պատկանում է Çalık Holding-ին:	ATV	24 ժամ լուրեր Ներկայացնում է կառավարության տեսակետները և ուղղորդվում էրդողանի և նրա խորհրդականների կողմից:
	Yeni Asir TV	
	Minika	մանկական
	A HBR	
DOĞAN MEDIA GROUP	CNN Türk	CNN-ի հետ համատեղ
	Kanal D	Այս լրատվամիջոցով հեռարձակվող երեկոյան լուրերը ամենադիտվող են
	TV 2	ժամանցային
	Dream TV	ժամանցային



	D Smart	ֆիլմեր
<b>CENGİZ GROUP</b>	Sky Türk 360	24 ժամ լուրեր
<b>CINER MEDIA GROUP:</b>  Հիմնականում ներկայացնում է կառավարության տեսակետները:	Habertürk	24 ժամ լուրեր
	Show TV	
	Bloomberg HT	տնտեսական
<b>SAMANYOLU YAYINCILIK A.Ş.</b> (պատկանում է գյուլանականներին)	Samanyolu Haber TV	Լուրեր և վավերագրական նյութեր
	Mehtap TV	Մշակութային և կրոնական ծրագրեր
	Yumurhak TV	Մանկական ծրագրեր և կրոնական ծրագրեր
	Ebru TV	Անգլերենով հեռարձակվում է իսլամական մշակույթի և քաղաքակրթության վերաբերյալ ծրագրեր:
	Hazar TV	Հեռարձակվում է Ադրբեջանում, հիմնականում ընտանեկան և կրոնական ծրագրեր:
	Dunya TV	քրդերենով
	Samanyolu Avrupa TV	
	Samanyolu Afrika	
	Samanyolu US	
	MC TV	
Samanyolu TV		
<b>MILLI GÖRÜŞ</b>	Kanal 7	իսլամական

<b>SOCAR Media -</b>	Kanal 24	Ադրբեջանական SOCAR-ը ձեռք է բերել բաժնետոմսերի 50 % 2013 թ. մայիսին: Ներկայացնում է ԱԶԿ-ի տեսակետները և ստանում պետական կազմակերպությունների գովազդային ժամանակի 5,2 վայրկյանը:
<b>İHLAS GROUP/RUPERT MURDOCH</b>	TGRTHABER	24 ժամ լուրեր
	ROJ TV	ՔԲԿ-ին հարող/հեռարձակվում է Դանիայից և մեծ հեղինակություն է վայելում քրդերի շրջանում:
	Kanalturk	
	CNBCE	տնտեսական
	FOX TV	
	TV NET	
	Beyaz TV	
	Number One TV	երաժշտական

### Եզրակացություն

Հանրապետության հիմնադրման տարիներից ի վեր խոսքի և մամուլի ազատության, ինչպես նաև լրագրողների նկատմամբ մշտապես կիրառվել են ահաբեկումներ և սահմանափակումներ: Այդուհանդերձ, մինչև 1980-90-ական թթ. ՁԼՄ-ների դեմ կիրառվող հակաժողովրդավարական դրսևորումների ստուգման հարացույցներ չկային, որի պատճառով դժվար էր չափելի կերպով ներկայացնել տեղի ունեցող բացասական զարգացումների իրական ընդգրկումը: 1980-ական թթ. սկսած խոսքի և մամուլի ազատության, ինչպես նաև համացանցային ազատության հարացույցների վերլուծությունը ցույց է տալիս,



որ այդ ոլորտներում վերջին տարիներին Թուրքիայում արձանագրվել է էական հետընթաց: Ավելին, Թուրքիան առաջին անգամ հայտվել է մամուլի համար «ոչ ազատ» երկրների ցուցակում: Կառավարող կուսակցությունը և նրան հարող բիզնես հոլդինգները կարևոր դեր են կատարում ինֆորմացիոն հոսքերի վերահսկման և գրաքննության ոլորտներում: Ազատագրված լրագրողների կամ ընդհանրապես նրանց դեմ իրականացվող հետապնդումների պայմաններում լրագրողների մասնագիտությունը էապես վտանգված է Թուրքիայում: Իշխող ԱԶԿ-ն ընդգծված անհանդուրժողականություն է դրսևորում իշխող վարչակարգը քննադատող լրատվամիջոցների և լրագրողների նկատմամբ, որի պատճառով լրագրողական գործունեությունը էապես տուժում է:

## СМИ В ТУРЦИИ: ПОЛИТИКА, ОГРАНИЧЕНИЯ И ВЫЗОВЫ

*Ваграм Тер-Матевосян*  
(резюме)

Уже несколько лет, как основные международные организации называют Турцию “самой большой тюрьмой в мире для журналистов”. Это подразумевает, что правительство Турции явно ограничивало свободу слова, использовало широкий спектр цензуры и вводило ограничения по отношению средств массовой информации. Исходя из этого, в статье приводятся аргументы, что по отношению к СМИ и свободы выражения мнений в Турции постоянно сталкивались с серьезными проблемами с момента создания республики (1923 г.). Кроме того, статье обсуждает определяющие особенности развития и основные проблемы турецких СМИ, уделив особое внимание последним двум десятилетиям.

## MASS MEDIA IN TURKEY: POLITICS, CONSTRAINTS AND CHALLENGES

*Vahram Ter-Matevosyan*  
(summary)

For a few years in a row, key international organizations named Turkey as “the world’s biggest prison for the journalists”, which implied that the government of Turkey visibly limited freedom of expression, employed a wide range of censorship and imposed restrictions on media. Against this background, this article argues that both mass media and freedom of expression in Turkey have always faced daunting challenges since the establishment of the republic in 1923. It further discuss the defining features of its development and major problems associated with it, particularly focusing on the last two decades.



**ԹՈՒՐԻՔԻԱ-ՀՈՒՆԱՍՏԱՆ ՈՒԺԱՅԻՆ  
ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

**Քանայի բառեր՝ Թուրքիա, Հունաստան, ՆԱՏՕ, անվտանգություն, սպառազինություն**

Թուրքիայի և Հունաստանի միջև երկար ժամանակ ընթացել է ռազմական մրցակցություն և հաստատվել ուժային այնպիսի հավասարակշռություն, որը նաև կանխարգելող դերակատարություն է ունեցել կողմերի՝ հնարավոր պատերազմի մեջ ներքաշվելու տեսանկյունից: Հատկապես 1990-ական թթ. Հունաստանն ու Թուրքիան զգալի միջոցներ էին հատկացնում ռազմական ծախսերին (ՀՆԱ-ի համամասնությամբ), ինչն ամենաբարձր ցուցանիշներն էր ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում: Ներկայումս ուժային հավասարակշռության տեսանկյունից միտումները փոխվում են, և հաստատված հավասարակշռությունը կարող է խախտվել:

2015 թ. գարնանը Հունաստանի նախկին վարչապետ Կոստաս Միմիտիսն իր հարցազրույցներից մեկում որոշ մանրամասներ էր ներկայացրել 1990-ական թթ. Թուրքիա-Հունաստան ուժային հավասարակշռության ու դիմակայության մասին: Նա նշել էր, որ 1996 թ. Իմիա (Քարդաք) կղզու շուրջ ծագած թուրք-հունական հակասությունների պատճառով պատերազմի մեջ ներքաշվելու մեծ հավանականությանը զուգահեռ հունական կողմը սպառազինման ծրագրեր սկսեց, քանի որ իր

ներուժով հունական բանակը զիջում էր թուրքականին<sup>1</sup>: Ի դեպ, Հունաստանի նախկին վարչապետի այդ անկեղծացումները որոշակի ոգևորություն էին առաջացրել թուրքական մամուլում՝ ի ցույց դնելով թուրքական ուժային առավելությունները:

1990-ական թթ. կեսերին, Էգեյան ծովի տարածքային ջրերի հետ կապված, բավական սրվեցին Թուրքիայի ու Հունաստանի հարաբերությունները, և երկու երկրները դարձյալ հայտնվեցին պատերազմի շեմին: Թուրքիան Հունաստանի կողմից Էգեյան ծովում իր տարածքային ջրերը մինչև 12 մղոն հեռավորության վրա տարածելու հայտարարությունը որակեց որպես «casus belli», և թուրքական խորհրդարանը կառավարությանն օժտեց ռազմական գործողություններ վարելու լիազորությամբ: 1995 թ. ամռանը Էգեյան և Մարմարա ծովերում թուրքական կողմն անցկացրեց «Efes-95» անունը կրող լայնամասշտաբ ծովային ու օդային զորավարժություններ: Հունաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին հատկապես 1996 թ. Էգեյան ծովի Իմիա կղզու պատկանելության խնդրի ու նույն թվականին հունական կործանիչի կողմից Էգեյան ծովում խոցված թուրքական «F-16» կործանիչի պատճառով: 1997 թ. Թուրքիայի ռազմածովային ուժերի հրամանատար Գ. Էրքայան հայտարարեց, որ Հունաստանի կողմից Էգեյան ծովում իր ջրային սահմանների հեռավորությունը 12 մղոն տարածելու պարագայում «Թուրքիան վճռականորեն կքննարկի թուրքական տարածքին մոտ որոշ հունական կղզիներ գրավելու մասին հարցը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Eski Yunanistan başbakanından Türkiye itirafı, [http://www.radikal.com.tr/dunya/eski\\_yunanistan\\_basbakanindan\\_turkiye\\_itirafi-1357296](http://www.radikal.com.tr/dunya/eski_yunanistan_basbakanindan_turkiye_itirafi-1357296)

<sup>2</sup> Arapoglou S., Dispute in The Aegean Sea. The Imia/Kardak Crisis, A Research Report Submitted to the Faculty, Air Command and Staff College, Air University, April 2002, p. 9, <http://www.dtic.mil/cgi-bin/GetuTRDoc?AD=ada420639>.



Մինևույն ժամանակ սպառազինման ծրագրեր սկսեց նաև Կիպրոսի Հանրապետությունը: Կիպրոսի Հանրապետության սպառազինման միտումներն ու Հունաստանի հետ պաշտպանական պակտի ստորագրումը, Հունաստանի և Միքիայի միջև ռազմական համաձայնագրի կնքումը, Հայաստանի ու Իրանի հետ համագործակցության զարգացումը լուրջ անհանգստություն առաջացրին Թուրքիայում: Անկարայի համար խիստ մտահոգիչ դարձավ հատկապես 1997 թ. Կիպրոսի կողմից ռուսական S-300 ՆՕՊ համալիրների ու դրան հաջորդած Tor-M1 զենիթահրթիռային համալիրների ձեռքբերումը<sup>3</sup>:

Այդ ճգնաժամն ու պատերազմի մեջ ներքաշվելու վտանգն էր, որ ստիպեց Հունաստանի իշխանություններին սպառազինման մեծ ծրագրեր սկսել՝ փորձելով վերականգնել ուժային հավասարակշռությունը Թուրքիայի հետ: Կ. Միմիտիսը նշել է, որ այդ շրջանում Հունաստանն էականորեն զիջում էր Թուրքիային, ուստի կառավարությունը նոր սպառազինության ձեռքբերման ու համալրման որոշում կայացրեց, ինչն ազդեց հունական կողմի շարունակական սպառազինման միտումների վրա: Այդ շրջանում էր, որ հունական կառավարությունը 60 միավոր «F-16», «F-15» ֆրանսիական «Mirage» և այլ տեխնիկայի ձեռքբերման որոշում կայացրեց: Էականորեն հունական օդուժի դիրքերը բարելավվեցին, ինչով պայմանավորված էլ երկար տարիներ Հունաստանը կարողացավ պահպանել հավասարակշռությունը օդում:

Իրականում 1980-ական թթ. սկսած և հատկապես 1990-ական թթ. լայն թափ ստացած սպառազինման տեմպերը փոխել

<sup>3</sup> Mimikos S., Strategic Implications of Expanded Turkish-Israeli Military Relation, Thesis, Naval Postgraduate School, Monterey, California, December 1999, pp. 63-

64, <http://www.dtic.mil/cgi-bin/GetTRDoc?AD=ADA374018>; Fuat Aksu, Türk-Yunan

İlişkilerinde Güvenlik ve Güven Artırma Çabaları,

<http://www.yildiz.edu.tr/~faksu/Fuatyayinlar/trgr-guvenlik.pdf>, ss. 17-18.

էին ուժային հավասարակշռությունը հոգուտ Թուրքիայի: 1990-ական թթ. սկզբներից Թուրքիայի պաշտպանական ծախսերն զգալիորեն ավելացան և գերազանցեցին հունականին, իսկ 90-ական թթ. կեսերին արդեն կազմեցին Հունաստանի ծախսերի գրեթե կրկնակին: 1996 թ. թուրքական պաշտպանական ծախսերը կազմեցին մոտ 10 մլրդ, իսկ հունականը՝ 5.7 մլրդ ԱՄՆ դոլար<sup>4</sup>: 1990-ական թթ. կեսերին թուրքական բանակն զգալի առավելություն ձեռք բերեց հունականի նկատմամբ: Բացի բանակի թվաքանակը, որը միշտ զգալիորեն գերազանցել է հունական բանակին, բարձրացավ նաև թուրքական բանակի սպառազինման մակարդակը՝ հատկապես ռազմաօդային ու ռազմածովային ուժերում: Հաշվի առնելով ուժային այդ փոփոխությունը՝ 1996 թ. Հունաստանի վարչապետ Կ. Միմիտիսը հայտարարեց շուրջ 17 մլրդ դոլար ընդհանուր արժեքով հունական զինված ուժերի սպառազինման 5-ամյա ծրագրի մասին: Այս համատեքստում Թուրքիան և Հունաստանը հատկապես 90-ական թթ. սկսած ունեին ռազմական ծախսերի ամենաբարձր ցուցանիշը Եվրոպայում ՀՆԱ-ի համամասնությամբ, ինչը շարունակվեց նաև հետագա տարիներին: Դա պայմանավորված էր ինչպես փոխադարձ անվտանգության մարտահրավերների ընկալմամբ, այնպես էլ ռազմական գործողությունների մեջ ներքաշվելու ռիսկայնությամբ: 1999 թ. Հունաստանի ռազմական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 4.8 տոկոսը, իսկ Թուրքիայինը՝ 4.2 տոկոսը, այն դեպքում, երբ ՆԱՏՕ-ի անդամ պե-

<sup>4</sup> Evaghorou L. Evaghoras, The Economics of Defence of Greece and Turkey: A Contemporary Theoretical Approach for States Rivalry and Arms Race, Center for International Politics Thessaloniki,

<http://files.mgkworld.net/cipt/docs/CIPTEvaghorouDefEcoGRTR.pdf>, p. 24.

1980-ական թթ. վերջի համեմատությամբ՝ 1990-ական թթ. վերջին Թուրքիայի ռազմական ծախսերը ավելի քան կրկնապատկվեցին: Այսպես՝ 1988-89 թթ. դրանք կազմել են համապատասխանաբար մոտ 5.3 և 6.1 մլրդ, իսկ 1998-99 թթ.՝ 10.9 և 12 մլրդ դոլար:



տություններում միջին ցուցանիշը կազմում էր 2.4 տոկոս<sup>5</sup>: 2003-2004 թթ. Հունաստանի ռազմական ծախսերը կազմել են երկրի ՀՆԱ-ի մոտ 4.1 տոկոսը (6.5 մլրդ դոլար), իսկ Թուրքիայինը՝ համապատասխանաբար 4.9 տոկոսը (9.2 մլրդ դոլար)<sup>6</sup>: Ի տարբերություն Հունաստանի, որի համար ռազմական մարտահրավերը բխում էր առավելապես Թուրքիայից, թուրքական կողմի համար նման մարտահրավերների աշխարհագրությունն ավելի մեծ էր:

Հունաստանն ամեն կերպ քայլեր էր ձեռնարկում թուրքական բանակի սպառազինման միտումներին համարժեք ուժային հավասարակշռության պահպանման ուղղությամբ, քանի որ 1990-ական թթ. կեսերին բավական սրվել էին հարաբերություններն այդ երկրների միջև և երկար ժամանակ լայնամասշտաբ պատերազմի մեջ ներքաշվելու մեծ հավանականություն կար: 1994-98 թթ. Հունաստանը եղել է սովորական սպառազինության խոշոր ներկրող 6-րդ երկիրն աշխարհում<sup>7</sup>: Դա պայմանավորված էր նաև այդ շրջանում Թուրքիայի հետ լարված հարաբերություններով, պատերազմի մեջ ներքաշվելու բավական բարձր հավանականությամբ ու այդ երկրի հետ ուժային հավասարակշռության պահպանման անհրաժեշտությամբ: Զգալիորեն բարձր էին 90-ական թթ. նաև Թուրքիայի կողմից ձեռք բերվող սպառազինության ծավալները: Ողջ 90-ական թթ. միայն ԱՄՆ-ից ձեռքբերված սպառազինության ընդհանուր արժեքը կազմել է մոտ 8 մլրդ դոլար<sup>8</sup>: Իսկ 1996-2000 թթ. Հու-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>6</sup> Համեմատության համար նշենք, որ Արևելյան Եվրոպայի երկրներում այդ ցուցանիշը բավական ցածր էր: Օրինակ՝ Բուլղարիայում (2.4%), Հունգարիայում (1.9%), Լեհաստանում (2%), Ռումինիայում (2.3%): Sten Forster A., *Armed Forces and Society in Europe*, Palgrave Macmillan, 2006, pp. 54-55:

<sup>7</sup> Alifantis S. and Kollias C., *Greece In Arms Procurement Decision Making*, Vol. 2, <http://books.sipri.org/files/books/SIPRI00Singh/SIPRI00Singh03.pdf>

<sup>8</sup> Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002, s. 287.

նաստանը սպառազինության ձեռքբերման համար ծախսել է շուրջ 25 մլրդ դոլար: Սպառազինման ծրագրերին մեծ գումարներ են հատկացվել նաև հետագա տարիներին: Բանակի արդիականացման 5-ամյա ծրագրի շրջանակում 2001-2005 թթ. հատկացվել է շուրջ 11 մլրդ դոլար<sup>9</sup>: 1990-ական թթ. կեսերից և հետագա տարիներին Հունաստանը ժամանակակից սպառազինության ձեռքբերման, արդիականացման ուղղությամբ հատկացվող հսկայական գումարներով կարողանում էր պահպանել Թուրքիայի հետ ուժային հավասարակշռությունը: Հունաստանի ռազմական ծախսերն էականորեն սկսել են աճել 1980-ական թթ. վերջին և բավական բարձր ցուցանիշի հասել հատկապես 2008-2009 թթ. գրեթե հավասարվելով Թուրքիայի կողմից իրականացվող ռազմական ծախսերին: Այնուհետև 2010 թ. Հունաստանի ռազմական ծախսերն սկսում են նվազել<sup>10</sup>:

Թուրքիայի և Հունաստանի միջև վերջին տարիներին ուժային հավասարակշռությունը կրկին փոխվում է ի վնաս Հունաստանի: Թուրքիայի պաշտպանական բյուջեն 2015 թ. կազմել է գրեթե հունականի եռապատիկը՝ ավելի քան 10 մլրդ ԱՄՆ դոլար<sup>11</sup>: 2015 թ. պետական բյուջեով Հունաստանի ռազմական

<sup>9</sup> Yunanistan'in Silahlanma Çilginliği, <http://www.habervitrini.com/gundem/yunanistanin-silahlanma-cilginligi-22624/>.

<sup>10</sup> Chrysogelos N., Greece could have saved 108 bn euros since 1974 if it had followed the European NATO member states' average in defence spending, <http://europeangreens.eu/sites/europeangreens.eu/files/militaryexpenceses.pdf>.

<sup>11</sup> Սրանք զուտ պաշտպանական ոլորտին բյուջեից հատկացված գումարներն են: Ընդհանուր առմամբ, դժվար է տալ ռազմական ծախսերի ու ռազմական բյուջեի ամբողջական հստակ պատկերը, քանի որ պաշտպանական ոլորտում իրականացվող ծախսերը, այդ թվում՝ սպառազինության ոլորտում, չեն սահմանափակվում միայն պետական բյուջեից պաշտպանության նախարարությանը հատկացված գումարներով: Պաշտպանության ու սպառազինության ոլորտում զգալի գումարներ են ծախսվում նաև արտաբյուջետային միջոցներից: Դրանցից են Թուրքիայի զինված ուժերի զարգացման հիմնադրամը (TSKGV) և Ռազմաարդյունաբերության աջակցության հիմնադրամը (SSDF):



ծախսերը կազմելու էին 3.25 մլրդ եվրո, ինչը 46 տոկոսով ցածր է 2010 թ. բյուջեից: Ըստ ՆԱՏՕ-ի գնահատումների՝ այդ հատկացումների շուրջ 70 տոկոսը ծախսվելու էր անձնակազմի վրա և միայն շուրջ 700 մլն եվրոն էր նախատեսված սպառազինության ուղղությամբ ծախսերի համար, ինչն էլ 65 տոկոսով է ցածր 2010 թ. ցուցանիշից<sup>12</sup>: Ընդ որում, Հունաստանի ռազմական բյուջեի միայն 20 տոկոսն է բաժին հասնում սպառազինության ձեռքբերմանը:

Թուրքիայում վերջին տարիներին սպառազինության գծով միայն ռազմական բյուջեից տարեկան հատկացումները կազմում են 3-3.5 մլրդ ԱՄՆ դոլար: Թուրքիայի ռազմական բյուջեի մոտ 50 տոկոսը կազմում են անձնակազմի, իսկ մնացած մասը սպառազինության, ապրանքների ու ծառայությունների ծախսերը: Սպառազինության համար Թուրքիայում, բացի ռազմական բյուջեից, ծախսվում են նաև արտաբյուջետային հիմնադրամներից ու հատկացումներից: Տարեկան սպառազինության վրա իրականացվող ծախսերը կազմում են շուրջ 3 մլրդ դոլար, այդ թվում՝ նաև տեղական ռազմաարդյունաբերության միջոցով սպահովվող սպառազինության վրա: ՀՆԱ-ից ռազմական ծախսերի հատկացման ցուցանիշով (շուրջ 1.7 տոկոս) ՆԱՏՕ-ի կազմում Թուրքիան զբաղեցնում է 7-րդ տեղը: Համաձայն միջազգային հեղինակավոր հետազոտական կառույցների՝ ռազմական ծախսերի ցուցանիշով վերջին տարիներին Թուրքիան զբաղեցնում է 15-րդ հորիզոնականն աշխարհի երկրների շարքում: Վերջին 10 տարիների ընթացքում Թուրքիայի ռազմական ծախսերն աճել են 15 տոկոսով<sup>13</sup>:

<sup>12</sup> Kington T., Greece Warned Against Further Defense Cuts, <http://www.defensenews.com/story/defense/policy-budget/2015/01/31/greece-election-defense-cuts/22484505/>.

<sup>13</sup> Türkiye'nin askeri harcaması dünya çapında 15'inci sırada, <http://www.milliyet.com.tr/turkiye-nin-askeri-harcamasi-dunya/dunya/detay/2043544/default.htm>.

Հույն ռազմական փորձագետներն իրենց մտահոգությունն են հայտնել Հունաստանի ռազմական արդիականացման ու ռազմական բյուջեի կրճատման համար: Ըստ Աթենքի Անվտանգային և պաշտպանական վերլուծությունների ինստիտուտի ղեկավար Պ. Զորգովիլիսի՝ սպառազինության ուղղությամբ հատկացված գումարներն ամբողջությամբ չեն ծախսվելու այդ ուղղությամբ, քանի որ պաշտպանական այլ ոլորտներում ծախսերը իրականացվելու են հենց այդ գումարներից: Նա կանխատեսել է հունական ռազմական ծախսերի աճի դադարեցում՝ նշելով, որ այն հասել է նվազագույն շեմին: Հույն փորձագետներն իրենց մտահոգությունն են հայտնել Թուրքիայի հետ ուժային հավասարակշռության հարցում՝ մատնանշելով Թուրքիայի ռազմական արդիականացման ծավալներն ու տեմպերը<sup>14</sup>:

Ներկայում Թուրքիայի կողմից իրականացվող խոշորամասշտաբ ռազմական արդիականացման ու սպառազինման ծրագրերը հարցականի տակ են դնում Հունաստանի ռազմական հավասարակշռությունը պահպանելու հնարավորությունը: Թուրքիայի տնտեսական զարգացման ցուցանիշներն իրենց անդրադարձն են ունեցել նաև ռազմական ծախսերի ավելացման և սպառազինման խոշոր նախագծերի իրականացման վրա: Փոխարենը, Հունաստանը կրճատելով ռազմական ծախսերը՝ կասեցնում կամ սահմանափակում է սպառազինության ձեռքբերման, արդիականացման և նաև տեղական ռազմաարդյունաբերական ծրագրերն ու նախագծերը:

Ներկայում Թուրքիայի ռազմական արդիականացման ու սպառազինման միտումները գերազանցում են Հունաստանին: Ֆինանսատնտեսական ճգնաժամում հայտնված Հունաստանը թեև զգալի միջոցներ է հատկացնում ռազմական ոլորտին, այնուամենայնիվ, էականորեն զիջում է թուրքական կողմի

<sup>14</sup> <http://www.defensenews.com/story/defense/policy-budget/2015/01/31/greece-election-defense-cuts/22484505/>.



ներդրվող ծախսերին ու սպառազինության արդիականացման ծավալներին՝ նաև որակական առումով: Ի դեպ, էականորեն նվազել և սահմանափակվել են հունական բանակի արդիականացման ծրագրերը: Չնայած պետք է փաստել, որ Հունաստանը հատկապես իր ռազմաօդային ուժերով (թե սպառազինության ու անձնակազմի քանակով, թե մարտունակությամբ) դեռևս պահպանում է հավասարակշռությունը: Այդուհանդերձ, ուժային հավասարակշռության առումով ներկա միտումները հելլենական երկրի օգտին չեն:

Թեև միշտ Հունաստանը զիջել է Թուրքիային բանակի թվաքանակի և հատկապես ցամաքային ուժերի թվաքանակի ու սպառազինության առումով, այդուհանդերձ, ռազմաօդային ուժերի առումով, կարելի է ասել, դեռևս պահպանվում է ուժային հավասարակշռությունը երկու երկրների միջև: Անձնակազմի պրոֆեսիոնալիզմի և օդուժի միջոցների քանակի առումներով այդ երկրների միջև դեռևս պահպանվում է հաստատված հավասարակշռությունը: Սակայն Թուրքիայի կողմից օդուժի արդիականացման ծրագրերը առաջիկա տարիներին կարող են փոխել այդ հավասարակշռությունը: Հաշվի առնելով Թուրքիայի ռազմաօդային ուժերի արդիականացման ու ռազմատեխնիկական համալրման ծրագրերը, կարող ենք փաստել, որ առաջիկայում թուրքական կողմն էական առավելություն և գերազանցություն կարող է ապահովել հունականի նկատմամբ: Առաջիկա տարիներին Թուրքիայի օդուժի համալրումը միայն 5-րդ սերնդի ավելի քան 100 միավոր F-35 կործանիչներով էականորեն կփոխի ուժային հավասարակշռությունը Հունաստանի հետ և օդային գերակայություն կապահովի իր շրջակայքում: Երկու երկրների միջև երկար տարիներ շարունակվող դիմակայության, ուժային հավասարակշռության գործում օդուժն առանցքային դերակատարություն է ունեցել:

Չինված ուժերի թվաքանակի առումով Թուրքիան գերազանցում է Հունաստանին, սակայն, ի տարբերություն թուրքա-

կանի, հունական զինված ուժերը ավելի շատ համալրված են պրոֆեսիոնալներով-պայմանագրայիններով, մինչդեռ թուրքական բանակի նման մեծ թվաքանակը պայմանավորված է դեռևս ժամկետային զինծառայության համակարգով: Թուրքական բանակի թվաքանակի գերազանցությունը չի կարող էական գործոն դիտարկվել հունական բանակի հետ ուժային հավասարակշռության առումով: Սակայն աննախադեպ սպառազինման ծավալներն արդեն շատ բան են փոխում: Երկար տարիներ, ի թիվս այլ գործոնների, հենց ռազմական հավասարակշռությունն էր գերծ պահում կողմերին պատերազմի մեջ ներքաշվելու հավանականությունից:

Հաշվի առնելով Թուրքիայի տնտեսական աճի ցուցանիշները՝ որոշ կանխատեսումներով դրան զուգահեռ կմեծանան նաև ռազմական ծախսերը: Տարեկան միջինը 4 տոկոս տնտեսական աճի պայմաններում 2018 թ. Թուրքիայի ՀՆԱ-ն կարող է հասնել ավելի քան 930 մլրդ դոլարի: Եվ եթե Թուրքիան շարունակի ռազմական ծախսերին հատկացնել ՀՆԱ-ի 2-2.5 տոկոսը, ապա ռազմական ծախսերը կկազմեն 18-23 մլրդ դոլար: Թուրքիայի բանակի արդիականացման ծրագրերը ենթադրում են ռազմական ծախսերի շարունակական աճ: Տարեկան ռազմական բյուջեից զուտ սպառազինության գծով հատկացումները (մոտ 40 տոկոս) կկազմեն 7.5-9.5 մլրդ դոլար: Ներկայում իրականացվող և նախատեսվող սպառազինման խոշոր ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 70 մլրդ դոլար<sup>15</sup>:

Հունաստանի ռազմական փորձագետները ռազմական ծախսերի կրճատման հետ կապված նշել են, որ մասշտաբային կրճատումներն իրենց բացասական ազդեցությունը կունենան բանակի վրա: Նրանք նաև հարցականի տակ են դնում Հունաստանի կողմից արդիական սպառազինության ձեռքբերման, բա-

<sup>15</sup> Bekdil B., Turkey could double its arms spending by 2018, <http://www.hurriyetdailynews.com/turkey-could-double-its-arms-spending-by-2018.aspx?pageID=238&nID=68806&NewsCatID=483>.



նակի արդիականացման ծրագրերի իրականացումը<sup>16</sup>: Սպառազինության ձեռքբերման համար անհրաժեշտ բյուջեն քայքայվել է և սպառազինման բավական խոշոր նախագծերը կանգ են առել կամ չեղարկվել: Վերջին 5 տարիներին սպառազինության վրա ծախսված գումարները առավելապես ուղղվել են դեռ վաղուց ձեռքբերված և բանակում գտնվող սպառազինության պարտքերի մարմանը<sup>17</sup>:

Նման միտումները բացասական ազդեցություն կունենան Հունաստանի ռազմական անվտանգության տեսանկյունից, քանի որ առկա կոնֆլիկտային հիմնախնդիրների պայմաններում Թուրքիայի ռազմական ներուժի մեծացումն ու հունականի նկատմամբ էական գերակայության ապահովումն այլևս կվերացնեն հունական կողմի զսպող դերակատարություն ունեցող գործոնները:

## К ВОПРОСУ О ТЕНДЕНЦИЯХ СИЛОВОГО БАЛАНСА МЕЖДУ ТУРЦИЕЙ И ГРЕЦИЕЙ

*Левон Овсепян*  
(резюме)

Между Турцией и Грецией долгое время шла гонка вооружений, в результате чего они достигли баланса, играющий предотвращающую роль для сторон с точки зрения вовлечения стран в возможную войну. Баланс сил между двумя странами

<sup>16</sup> Cash shortage defeats Greek army, <http://www.politico.eu/article/cash-shortage-defeats-greek-army-military-spending-greece-crisis-grexit/>, Greece Warned Against Further Defense Cuts, <http://www.defensenews.com/story/defense/policy-budget/2015/01/31/greece-election-defense-cuts/22484505/>.

<sup>17</sup> Darling D., Is the Hellenic Armed Forces Dying?, [http://www.realcleardefense.com/articles/2015/02/27/is\\_the\\_hellenic\\_armed\\_forces\\_dying\\_107675.html](http://www.realcleardefense.com/articles/2015/02/27/is_the_hellenic_armed_forces_dying_107675.html).

может иметь тенденции к изменениям. Финансово-экономический кризис в Греции и существенные сокращения средств, выделяемые оборонной сфере, ограничения программ модернизации, а также широкомасштабные программы со стороны Турции и огромные финансовые средства могут изменить баланс в пользу последней.

## ON THE ISSUE OF TRENDS OF THE MILITARY BALANCE BETWEEN TURKEY AND GREECE

*Levon Hovsepyan*  
(summary)

Arms race between Greece and Turkey has been going on for many years now. The military balance has been established that prevented the sides from engaging in war. However, now the established defense balance could be changed in favor of Turkey. Economic and financial crisis in Greece has forced that country to reduce defense budget and allocations to military modernization programs. Instead, Turkey's huge financial resources and defense spending, alongside with its army modernization programs, could change the military balance in favor of it.



**ԶԻՅԱ ԳՅՈՔԱԼՓԸ՝ ԹՈՒՐԲ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Բանալի բառեր՝ թյուրքականության գաղափարախոսություն, Չիյա Գյոքալփի, թուրք գրականություն, բանահյուսություն, «Թյուրքականության հիմունքներ»**

Չիյա Գյոքալփի (1876-1924) գաղափարախոսական փնտրտուքը էութենական-կանխորոշիչ դեր է ունեցել թուրքական սոցիոլոգիական, քաղաքագիտական, պատմագիտական, տնտեսագիտական, մանկավարժական, լեզվաբանական ու գրականագիտական մտքի պատմության մեջ<sup>1</sup>: Թուրք ուսումնասիրողները ավանդաբար շեշտում են նաև Չիյա Գյոքալփի ուրույն դերը թյուրքական բանահյուսության ուսումնասիրության պատմության մեջ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս սույն թեմատիկայով մեր նախորդ հրապարակումներից հետևյալները Safaryan A., Ziya Gokalp On National Education, "Iran and the Caucasus", vol. 8.2, Brill, Leiden-Boston, 2004, pp. 219-229, Սաֆարյան Ա., Չիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012, նույնի «Տնտեսական թյուրքականությունը», Էտատիզմի քաղաքականությունը Թուրքիայում և տնտեսության «թուրքացումը», Երևան, 2012, նույնի Քեմալականների լեզվական քաղաքականության ակունքներում. Չիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքները, «Շամակակից Եվրասիա» (խմբ. Ռ. Սաֆրաստյան), Հատոր III (2), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 52-76:

<sup>2</sup> Մասնավորապես տե՛ս Alangu T., Türkiye Folkloru Elkitabı, İstanbul, 1983, 135, s. 250-251, Filizok R., Ziya Gokalp'ın Edebi Eserlerinde Halk Edebiyatı Tesiri Üzerine Bir Araştırma, Kültür Bakanlığı, Ankara, 1991, Çelik M., Pertev Naili Boratav, Modern Türkiye'de Siyasî Düşünce, Cilt 3., Moderleşme ve Batıcılık (İletişim Yayınları 805), 3. Baskı, İstanbul, 2004, ss. 174-183, Türk Kültürü Araştırmaları (Prof. Dr. Şükrü Elçin'e Armağan), Ankara, 1993, ss. 22, 23, 389, 398, Uğurlu A. S., Folk Tales from the Pen of Ziya Gokalp: An Ideologue and Poet, Turkish Studies, International Periodical for For the Languages, Literature and

Թյուրքականության գաղափարախոսության, հասկապես թուրքերի բացառիկ «բարձր բարոյականության» մասին դրույթը հիմնավորելու նպատակով բանահյուսական նյութի կիրառման օրինակներ առկա են թե՛ Գյոքալփի պոեզիայում, թե՛ «Թյուրքականության հիմունքները» հիմնարար աշխատությունում: Այսպես, քննարկելով «հին թուրքերի» ("Eski Türkler") հայրենասիրության թեման, Գյոքալփը պնդում էր, որ ցանկացած թուրք նախնիներում պատրաստ էր սեփական «իլի» (ազգի) համար գոհաբերել թե՛ սեփական կյանքը, թե՛ ամենասիրելին, քանզի «իլը» երկրի վրա «Երկնքի Աստծո» ստվերն էր ("Çünkü "il" Gök Tanrının yeryüzündeki gölgesiydi...")<sup>3</sup>: «Իլի» բնակչության երկիրը կոչվում էր «հայրենիք» ("yurt"), և թուրքը, ուր էլ գնար, չէր մոռանում այն, որովհետև այնտեղ էին իր պապերի գերեզմանները<sup>4</sup>:

Որպես թուրքերի հայրենասիրության օրինակ՝ Չիյա Գյոքալփը հիշատակում է «Հոների պետության հիմնադիր» առասպելական Մեթեի օրինակը ("Türkün vatanperverliğine misâl olarak Hun devletinin müessisi olan Mete'yi zikredebiliriz...")<sup>5</sup>: Թաթարների տիրակալը (Tatarlar hükümdarı), պատերազմ սանձազերծելու համար պատրվակ որոնելով, պահանջում է Մեթեի սիրելի արագավազ ձին: Մեթեն ձին ուղարկում է թաթարների տիրակալին՝ ձգտելով հայրենակիցներին հեռու պահել պա-

History of Turkish or Turkic, Volume 4/1-I, Winter 2009, pp. 1025-1040, տե՛ս նաև Ülkütaşır M. Ş., Ziya Gokalp'ın Folklor Üzerine Yazdıkları, - "Türk Folklor Araştırmaları" (İstanbul'da Ayda Bir Defa Çıkar Halk Kültürü Dergisi), Yıl 26 - Cilt 16, Mart 1975, Sayı 308: s. 7247-7249.

<sup>3</sup> Տե՛ս Gokalp Z., Türkçülüğün Esasları, Dördüncü basılış, İstanbul, 1961, s. 103, այսուհետև՝ "Türkçülüğün Esasları":

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Չիյա Գյոքալփը նույն աշխատության «Մշակույթ և քաղաքակրթություն» ("Hars ve Medeniyet") գլխում հենց աշխարհակալ Մեթեին է անվանում «թուրքական խաղաղասիրության հիմնադիր» ("Türk sulhperverliğinin müessisi Mete'dir."): Տե՛ս նույն տեղում, էջ 28:



տերազմի աղետից: Այսուհանդերձ, թաթար տիրակալը պատերազմի նոր պատրվակ էր որոնում և այս անգամ արդեն պահանջում է Մեթեի ամենասիրելի կնոջը (“Bu sefer de Mete'nin en sevdiği zevcesini istedi.”)<sup>6</sup>: Թեև քուրուլթայի<sup>7</sup> ժամանակ բոլոր բեյերը պատերազմ էին պահանջում, Մեթեն որոշում է գնալ անախաղեպ գոհաբերության ու սիրելի կնոջը հանձնել թշնամուն՝ ասելով. «Ես չեմ կարող ոտնահարել հայրենիքս հանուն իմ սիրո» (“Ben vatanımı kendi aşkıma uğruna çiğnetemem.”)<sup>8</sup>: Այնուհետև թաթար տիրակալը հոների երկրից պահանջում է անբերրի, անմշակ, անտառներից ու հանքերից զուրկ, անբնակ մի հողային տարածք: Թեև քուրուլթայը որոշում է ընդունում, որ նման «անօգուտ» (“faydasız”) հողը հանձնելուց որևէ վնաս չկա, Մեթեն ասում է. “Vatan bizim mülkümüz değildir, mezarda yatan atalarımızın ve kıyamete kadar doğacak torunlarımızın bu mübarek toprak üzerinde hakları vardır. Vatandan velev ki bir karış kadar olsun yer vermeğe hiç kimsenin salâhiyeti yoktur. Binaenaleyh harp edeceğiz. İşte, ben atımı düşmana doğru sürüyorum. Arkamdan gelmiyen idam olunacaktı.”- «Հայրենիքը մեր սեփականությունը չէ: Գերեզմանում պառկած մեր պապերը և մինչև Ահեղ դատաստան ծնվելիք մեր թոռները այս օրինված հողի նկատմամբ իրավատեր են: Որևէ մեկը իրավասու չէ հայրենիքից թեկուզ մի թօղալի հող տալ: Ուրեմն, պատերազմելու ենք: Ահա ես ձիս քշում եմ թշնամու վրա: Ետևիցս չեկողը մահապատժի է ենթարկվելու...!»<sup>9</sup>:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 103:

<sup>7</sup> «Քուրուլթայ»-(Kurultay) բառը, որը ժամանակակից թուրքերենում գործածվում է առավելապես «համագումար», «համաժողով», «գիտաժողով» (հմմտ. անգլ. congress, ռուս. конгресс) իմաստներով, հին թուրքերի մոտ արտահայտել է սլավոնական «վեչեին» համանման մի երևույթ. Զիյա Գյոքալփը, բնականաբար, քուրուլթայը դիտարկում էր որպես «թուրքական» ժողովրդավարության դրսևորում:

<sup>8</sup> Տե՛ս “Türkçülüğün Esasları”, էջ 103:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 103-104:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ առասպելի մեջբերումը «Թուրքականության հիմունքներում» նպատակ ունեւ հողի և Հայրենիքի հարցում անզիջում վերաբերմունք սերմանել թուրք ժողովրդի մեջ<sup>10</sup>: Վաստակաշատ հայ պատմաբան, ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը, ով հայոց ազգային գաղափարախոսության ձևավորման աշխարհաքաղաքական գործոնները (բնականաբար նախ և առաջ՝ թուրքական գործոնը) քննելիս բազմիցս անդրադարձել է Զիյա Գյոքալփի «Թուրքականության հիմունքները» աշխատությանը, մասնավորապես գրել է. «Հայրենիքը սրբություն է աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Հայրենիքի տարածքի անգամ մի թիզ հողը ոչ մի ժողովուրդ առանց պատերազմի, առանց արյունի չի զիջում... Սա անվիճելի ճշմարտություն է: Սակայն հարցն այն է, որ թուրքական քոչվոր ցեղերը նվաճված տարածքները ևս դիտում էին որպես սեփական հայրենիք: Թուրքը առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել ինչպես սեփական, այնպես էլ նվաճված տարածքների նկատմամբ... Ըստ Գյոքալփի՝ ա/ թուրքերի բոլոր պատերազմների նպատակը եղել է խաղաղության տևական շրջանի ստեղծումը, բ/ թուրքերը ուրիշ ազգերի հայրենիքներ չեն նվաճել, գ/ Մանջուրիայից մինչև Հունգարիա թուրանական, այսինքն՝ թուրքական հողամաս է, դ/ այդ տարածքը ապրել է երջանիկ, խաղաղ և հանգիստ կյանքով:

Դրա հետ միասին, թուրքերը մեծ աշխատանք են տանում աշխարհի ժողովուրդներին իրենց ազգային պատմությունը բարձր մակարդակով, հումանիստական դիրքերից ներկայացնելու համար: Թուրքերի ազգային գաղափարախոսներն այդ նպատակն են հետապնդում:

Գյոքալփի այս տողերը գրված են թուրքալեզու ժողովուրդների, մասնավորապես թուրքերի համար և ունեն դաստիարակչական նշանակություն: Թուրքալեզու ժողովուրդները դեռ

<sup>10</sup> Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999, էջ 61:



ազգային խնդիրներ ունեն լուծելու: Հետևաբար, նրանք դեռ կարիք ունեն համապատասխան դաստիարակության»<sup>11</sup>:

Իրականությունից միանգամայն հեռու էին Զիյա Գյոքալփի հետևողական պնդումներն այն մասին, որ թուրքերի վարած պատերազմների նպատակն իսկ տևական խաղաղության հաստատումն էր<sup>12</sup>: Ինչպես իրավագիտորեն նշում է ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը՝ «Իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած օսմանյան թուրքերը ընկալում էին իրենք իրենց որպես առաջամարտիկներ քրիստոնյաների դեմ պայքարում: Այդ ստեղծում էր նրանց միջավայրում համապատասխան ավանդույթների և հաստատությունների առկայության պայմաններում հակաքրիստոնեական ռազմատենչ մոլեռանդության յուրահատուկ մթնոլորտ և թելադրում էր մեկ գերխնդիր՝ նվաճումներ ջիհադի քողի ներքո: 13-14-րդ դդ. օսմանյան պետությանը բնորոշ էր համեմատաբար միատարր բնույթը, կրոնական մոլեռանդությունը ու գերռազմականացումը: Նրա գոյությունը հիմնականում ապահովվում էր զինված թալանի միջոցով, իսկ պետական գաղափարախոսությունը՝ արտաքին ու ներքին ջիհադի կոնցեպցիան էր»<sup>13</sup>: Ռ. Ա. Սաֆրաստյանը արդարացիորեն հերքել է նաև թուրքական պատմագրության մեջ (մասնավորապես թուրք ճանաչված պատմաբան Հ. Ինալջըբի կողմից) շեփորվող առասպելը օսմանյան պետությանը բնորոշ հատուկ կրոնական հանդուրժողականության մասին<sup>14</sup>:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 61-62:

<sup>12</sup> Մասնավորապես տե՛ս «Türkçülügün Esasları», s. 103-104, 117: Տե՛ս նաև Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 61-63:

<sup>13</sup> Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 113:

<sup>14</sup> Մասնավորապես տե՛ս İnalçık H., The Ottoman Empire: The Classical Age, 1300-1600, London and New York, 1973, p. 7: Օսմանյան պետության ծագումնաբանության առանձնահատկությունները լուսաբանող քրիտանացի օսմանագետ Փոլ Վիթեքի բնութագրմամբ օսմանյան պետությունը իր գոյության առաջին իսկ փուլում հանդես էր գալիս որպես «ղազինների պետություն

\*\*\*

Զիյա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքներում» հանգամանորեն խոսվում է Օսմանյան կայսրությունում դարերի ընթացքում ձևավորված գրականության երկվության մասին: Ըստ հեղինակի թուրքական գրականությունը բաղկացած էր ժողովրդական առած - ասացվածքներից, հանելուկներից, հեքիաթներից, քոչմաներից<sup>15</sup>, դեսթաններից<sup>16</sup>, դյուցազնավեպերից, հերոսապատմաներից, թեքքեների<sup>17</sup> իլյահիներից<sup>18</sup>, նեֆեսներից<sup>19</sup>, սրամիտ անեկդոտներից ու թամաշայից<sup>20</sup>: Շահ Իսմայիլի, Աշուղ Քերեմի, Աշուղ Ղարիբի, Քյոռոզլուի<sup>21</sup> գրքերն էլ ժո-

(Ghazi State)՝ նախապատվություն տալով իսլամի ռազմատենչ մեկնաբանության վրա հիմնված գաղափարական միասնությանը՝ որպես պետականաստեղծ գործոնի: Տե՛ս Wittek P., The Rise of the Ottoman Empire, London, 1938, Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 103: Հիրավի Օսմանյան բեյությունը ինչպես և Փոքր Ասիայի արևմուտքում առաջացած այլ թյուրքական բեյությունները, ղազիական կամ ղազիների պետություն (Ghazi State) էր: Սակայն նա միակ ղազիական բեյությունն էր, որը վերաճեց կայսրության՝ պահպանելով իր էությունը: Այն դարերի ընթացքում ենթարկվեց բազմաթիվ ձևափոխումների, սակայն պահպանեց իր մոլեռանդ ու ռազմատենչ բնույթը: Տե՛ս Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 113:

<sup>15</sup> Քոչմա - թուրքական ժողովրդական բանաստեղծական կայուն ձևերից ամենասիրվածն ու տարածվածը:

<sup>16</sup> Դեսթան - 1. էպիկական պատում 2. Աշուղական գրականության ժանր: Քառատող տներով և հիմնականում վանկային տաղաչափությամբ (8 կամ 11 չափով) հորինվող դեսթանների հանգավորման կարգը հետևյալն է. xaxa baba ccca ddda eeee...

<sup>17</sup> Մուֆիական - թյուրքական գրականության մասին տե՛ս Güzel A., Tekke Şiiri, "Türk Dili", Sayı: 445 - 450 (C.LVII), 1989, ss. 251 -253:

<sup>18</sup> Իլյահի - հոգևոր հիմն, օրհներգություն, թեքքեի գրականության մեջ առավել լայն տարածում ստացած կանոնական ձևերից մեկը: Տե՛ս Güzel A., նշվ. աշխ., էջ 284 - 290:

<sup>19</sup> Նեֆես - մեծամասամբ բեքթաշիա - ալիական թեքքեներում տարածված իլյահի: Նեֆեսները ստեղծվել են ինչպես վանկային, այնպես էլ արուզի տաղաչափությամբ: Տե՛ս Güzel A., նշվ. աշխ., էջ 284:

<sup>20</sup> "Türkçülügün Esasları", s. 23.

<sup>21</sup> Քյոռոզլու էպոսի մասին մասնավորապես տե՛ս Сафарян А., Согомоян А., Об эпосе "Героглы - Кер-оглы" и его армянских версиях, "Сюжет Героглы



ղովրդի կողմից ստեղծված ու հետագայում գրի առնված ստեղծագործություններ են<sup>22</sup>: Վերոհիշյալների պես թուրք ժողովրդի անկեղծ ստեղծագործությունն են մանիներն<sup>23</sup> ու թյուրքյուները<sup>24</sup>, որոնք հնարամտությամբ ու նմանակումով չեն հորինվել<sup>25</sup>:

«Թյուրքականության հիմունքներում» որպես թուրք ժողովրդի սիրելի բանաստեղծներ են հիշատակվում Աշուղ Օմերը<sup>26</sup>, Դերթլին<sup>27</sup>, Քարաջաօղլանը<sup>28</sup>, Յունուս Էմրեն<sup>29</sup>, Քայգուսուզը<sup>30</sup>...

и литература Востока», Материалы международной научной конференции (23-25 сентября 2009 г.), Дашогуз, 2009, стр 360-361:

<sup>22</sup> Տե՛ս՝ «Türkçülüğün Esasları», էջ 24:

<sup>23</sup> Մանի - ժողովրդական երգի տեսակ, մանրամասն վերլուծությունը տե՛ս՝ Gözaydın N., Anonim Halk Şiiri Üzerine..., "Türk Dili", sayı: 445-450 (C. LVII), 1989, s. 3-25, 37-52, Akalın, L. Sami, Türk Manilerinden seçmeler I. İstanbul 1972, Elçin Ş., Türkiye Türkçesinde Maniler, Ankara, 1990:

<sup>24</sup> Թյուրքյու - ժողովրդական երգ, մանրամասն վերլուծությունը և օրինակները տե՛ս՝ Gözaydın N., նշվ. աշխ., էջ 25-30, 53-104, Öztelli C., Halk Türkülerimiz, - Halk Türküleri (Hazırlayan: Cahid Öztelli), 5. Basılış, İstanbul, 1969, s. 3-9:

<sup>25</sup> Տե՛ս՝ «Türkçülüğün Esasları», էջ 24:

<sup>26</sup> Աշուղ Օմեր (? - 1707) - բանաստեղծների հաջորդ սերունդների կողմից «վարպետ» է ճանաչվել թռչմայի, դեյիշի, սեմաիի, դեսթանի ժանրերով գրված իր տարբեր ստեղծագործություններում դիվանի պոեզիայի և աշուղական լավագույն ավանդույթները միահյուսելու շնորհիվ: Առավել հայտնի է Աշուղ Օմերի «Շաիրնամեն»: Տե՛ս՝ Ergun S. N., Aşık Ömer, 1935, Prof. Dr. Saim Sakaoglu, Türk Saz Şiiri, "Türk Dili", Sayı 445-450, 1989, s. 138-142, Elçin Ş., Aşık Ömer, Ankara 1987:

<sup>27</sup> Դերթլի (1772-1846) - Ստեղծագործել է ինչպես արուզի, այնպես էլ վանկային տաղաչափությամբ: Տե՛ս՝ Köprülü F., Türk Saz Şairleri, c. III, 1940, ինչպես նաև Sakaoglu S., նշվ. աշխ., էջ 203-205:

<sup>28</sup> Քարաջաօղլան (16-րդ կամ 17-րդ դար) - հոշակավոր թուրք աշուղ, ստեղծագործությունները (թռչմա, դեսթան, սեմայի) գրված են վանկային տաղաչափությամբ: Տե՛ս՝ Ergim S. N., Karacaoğlan - Hayatı ve Şiirleri, 1933. Cahit Öztelli, Karacaoğlan - Bütün Şiirleri, 1970, Sakaoglu S. նշվ. աշխ., էջ 120-126:

<sup>29</sup> Յունուս Էմրե (? - 1320) - թյուրքական «թեքթեի» գրականության ականավոր ներկայացուցիչ: Գրել է և՛ արուզի, և՛ վանկային տաղաչափությամբ: Յունուսի գրական ժառանգությունն են կազմում «Դիվանը» (իլյահիներ) եւ «Բիսալեթյու-ն-նուսիլլե» («Նրատական ուղերձներ»): Տե՛ս՝ Köprülü M. F.,

Զիյա Գյոքալիի՝ գրական բազմադարյան ավանդույթների վերագնահատման տեսանկյունից չափազանց խիստ, նույնիսկ «հեղափոխական» ձևակերպման համաձայն «օսմանյան գրողներից ու բանաստեղծներից և ոչ մեկը ինքնատիպ չէ...» ("Osmanlı edibleriyle şairlerinden hiç biri orijinal değildir...")<sup>31</sup>: Գյոքալիը, հիրավի, փշրելով օսմանյան դարավոր ընկալումների ավանդույթը, միանշանակորեն պնդում էր, որ նրանք բոլորն էլ պարսկական ազդեցության շրջանում՝ որևէ պարսիկ, իսկ ֆրանսիական ազդեցության շրջանում որևէ ֆրանսիացի հեղինակի ընդօրինակող - նմանակողներ (mukallit) են, և նրանց բոլորի ստեղծագործություններն իրականում ծնվել են ոչ թե գեղարվեստական ներշնչման, այլ մտքի հնարագիտության

Türk Edebiyatında ilk Mutasavvıflar, Ankara, 1979, Gölpınarlı A., Yunus Emre. Hayatı ve Bütün Şiirleri, İstanbul, 1971, Göçgün Ö., Yunus Emreyeye Göre Hayatın Anlamı, "Türk Kültürü Araştırmaları", Yıl XXIX / 1-2, 1991, Ankara, 1993, s. 126-131, Güzel A., նշվ. աշխ., էջ 251-286, 302, 313, 357-363, Джавелидзе Э., У истоков турецкой литературы: Юнус Эмре, Тбилиси, 1985. Յունուս Էմրեի իլյահիների բնագրից հայերեն թարգմանություններ ու մեկնաբանություններ ներկայացրել է սույն հոդվածի հեղինակը՝ արևելաքրիստոնեական միստիկների ու սուֆի բանաստեղծների ստեղծագործությունների համեմատական ուսումնասիրության գործընթացում, տե՛ս՝ Սաֆարյան Ալ., Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների «ադապտացման» մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 1993, N 2, էջ 103-113, Safaryan A., Melikyan G., Apology of Sufizm in Divan by Yunus Emre, XXXVth International Congress of Asian and North African Studies, Book of abstracts, Montreal, 2000, p. 60, Safaryan A., Sahakyan L., On "Adaptation" of Traditional Images in the Works of Eastern Christian and Islamic Poets, Abstracts of The World Philosophy Day Congress 2010, Tehran, 2010, p. 249. Յունուս Էմրեից հայերեն է թարգմանել նաև վաստակաշատ գրող ու թուրքագետ դասախոս Խաչիկ Ամիրջյանը:

<sup>30</sup> Քայգուսուզ Արթալ (1341 - ?), իսկական անունը՝ Ալանդրին Գայրի, «թեքթեի» բանաստեղծ: Շրջագայել է Անատոլիայում, Եգիպտոսում, Հիշագում, Սիրիայում, Իրաքում: Ստեղծագործել է և՛ արուզի, և՛ վանկային տաղաչափությամբ, գրել է նաև արձակ գործեր «պարզ թուրքերենով»: Տե՛ս՝ Güzel A., նշվ. աշխ. էջ 373-377:

<sup>31</sup> Տե՛ս՝ «Türkçülüğün Esasları», էջ 24:



արդյունքում<sup>32</sup>: Այս առումով, Գյոքալփի համոզմամբ, բացառություն չէին կազմում անգամ դիվանի գրականության հոչակավոր բանաստեղծ Ֆուզուլին<sup>33</sup> ու «Լալեի» դարաշրջանի օսմանյան գրականության խոշորագույն ներկայացուցիչ, թուրք գրականագիտության մեջ որպես նորարար ճանաչված Նեղիմը...<sup>34</sup>

Միաժամանակ Զիյա Գյոքալփը իր ժամանակակիցներից շատ բարձր էր գնահատում հատկապես այն թուրք արձակագիրներին ու բանաստեղծներին, ովքեր ծառայություններ էին մատուցել թյուրքականության գաղափարախոսության տարածմանը:

Զիյա Գյոքալփին առանձնահատուկ նշում է ճանաչված բանաստեղծ ու «թյուրքականության հայր» Մեհմեդ Էմինի (Յուրդաքուլի)<sup>35</sup> անունը: Այս հեղինակի "Ben bir Türküm, dinim,

<sup>32</sup> St' u նույն տեղում:

<sup>33</sup> Ֆուզուլի (? - 1556), իսկական անունը՝ Մեհմեդ: 1534 թվականին, երբ օսմանյան սուլթան Սուլեյման Փառահեղը (Kanuni Sultan Süleyman) նվաճել է Բաղդադը, Ֆուզուլին երան քասիդ է ձևակերպել և օսմանյան վալիների կողմից: Ստեղծագործել է «Ատրպատականի թյուրքական բարբառով» ("Azeri lehçesiyle..."), ինչպես նա արաբերեն ու պարսկերեն: Առավելապես կրել է Ալիշեր Նավոյի (1441-1501) ազդեցությունը: «Դիվանի» բանաստեղծները Ֆուզուլիին գրել են բազում նազիրներ, ժողովրդական բանաստեղծներն էլ նրան ընդունել են որպես ուսուցիչ: Թյուրքերեն «Դիվանը» հրատարակվել է 1958 թվականին: Խորհրդային և ադրբեջանական գրականագետների կողմից Ֆուզուլիի ստեղծագործությունների հրատարակության պատրաստման և ուսումնասիրության մասին մասնավորապես տե՛ս Գյուլիզադե Մ., *Азербайджанское советское литературоведение, "Советская тюркология"*, Баку, 1970, no. 5, стр.15-16:

<sup>34</sup> Նեղիմ (? - 1730)՝ իսկական անունը՝ Ահմեդ: Նեղիմի «Դիվանը» հրատարակել են Հալիլ Նիհաթ Բոթբեյին (1922) և Արդյուբաթի Գոլփընարըն (1951): Տե՛ս Գյուլիզադե Մ., *Eski Şiirimizin Ustaları*, İstanbul, 1964, s. 116-127:

<sup>35</sup> Yurdakul Mehmet Emin (1869-1944)- Մեհմեդ Էմին Յուրդաքուլի մասին տե՛ս Գյուլիզադե Մ., *Mehmet Emin Yurdakul*, 1953. Yücebaş H., *Milli Şairimiz Mehmet Emin Yurdakul*, 1947, Kabaklı A., *Türk Edebiyatı*, Cilt 3, İstanbul, 1966. Kutlu Ş., *Servetifünun Dönemi Türk Edebiyatı Antolojisi*, İstanbul, 1972, s. 379-394. *Modern Türkiye'de Siyasî Düşünce*. Cilt 4. Milliyetçilik, İstanbul, 2002, s. 269, 350, 361, 411, 430, 590, 642, 803.

cinsim, uludur"- «Ես թուրք եմ, հավատս, ցեղս մեծ են» տողով սկսվող բանաստեղծությունը (այսինքն՝ թուրք-հունական պատերազմի կապակցությամբ գրված, նշանավոր «Մերվեթի-Ֆյունուն» հանդեսում տպագրված և հետագայում թուրք գրականության դասագրքերում պարտադիր կերպով ընդգրկվող «Մարտի գնալիս» (Cenge Giderken) ոտանավորը) Զիյա Գյոքալփը «Թյուրքականության հիմունքներում» համարում է «Թյուրքական կյանքում մի նոր հեղափոխության» սկիզբ ազդարարող գործերից մեկը<sup>36</sup>:

Թյուրքականության գաղափարախոսն առանձնահատուկ դրվատանքով է հիշում թուրք արձակագիրներ ու բանաստեղծներ Յակուբ Քադրիին (Քարաօսմանօղլուն)<sup>37</sup>, Յահյա Քեմալին (Բեյաթլին)<sup>38</sup>, Ֆալիհ Ռեֆքընին (Աթային)<sup>39</sup>, Ռեֆիք Հալիլին

<sup>36</sup> St' u *Türkçülüğün Esasları*, s. 8:

<sup>37</sup> Karaosmanoğlu Yakup Kadri (1889-1974) - թուրք գրող և հրապարակախոս, քննադատական գաղափարախոսության շատագույն: Տե՛ս Մահալյան Լ., Դավթյան Ա., Յարուբ Քադրի Քարաօսմանօղլու. գրական դիմանկարի փորձ, «Կանթեթ», 2010, էջ 41-51:

<sup>38</sup> Beyatlı Yahya Kemal (1884-1958)- թուրք գրականագետների ճնշող մեծամասնության կարծիքով «ազգայնական գրականության» ամենանշանավոր բանաստեղծը: Տե՛ս Kaplan M., *Şiir Tahlilleri, (Âkif Paşa'dan Yahya Kemal'e Kadar)*, I, Üçüncü Baskı, İstanbul, 1963, s. 146-156, Karaalioğlu S. K., *Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü*, Geneleştirmiş ikinci basım, İstanbul, 1982, s. 113, Kezer A., *Türk ve Batı Kültürü Üzerine Denemeler*, Ankara, 1990, ss. 61, 71- 73, Kocakaplan İ., *Edebi Sanatlar Yönünden Yahya Kemal'in Şiirleri*, Türk Dili, Dil ve Edebiyat Dergisi, 2000/I, Sayı: 580, Nisan 2000, ss. 366-374: Առավել հայտնի բանաստեղծությունները տե՛ս Necdet A., *Yahya Kemal'den Günümüze Tematik Türk Şiiri*, İstanbul, 2000, s. 52, 61, 95, 202, 266, 354, 375, 464:

<sup>39</sup> Atay Falik Rifka (1894-1971) - Թուրք գրող և լրագրող, «Աքշամ» (1918) և «Դունյա» թերթերի հիմնադիրներից մեկը: Ընտրվել է խորհրդարանի պատգամավոր՝ Բուլոից և Անկարայից, եղել է «Հաքիմիյեթ-ի միլլիյե», «Միլիյեթ», «Ուլուս» թերթերի գլխավոր խմբագիրը: Թուրք գրականագետների կողմից երբեմն որակվում է որպես «Զիյա Գյոքալփական»: Տե՛ս Karaalioğlu S. K., *Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü*, s. 73-74:



(Քարայի)<sup>40</sup>, Ռեշաթ Նուրիին (Գյունթեքինին)<sup>41</sup>, Օրհան Մեյֆիին (Օրհոնին)<sup>42</sup>, Ֆարուք Նաֆիզին (Չամլըբեյին)<sup>43</sup>, Յուսուֆ Ջիային (Օրթաչին)<sup>44</sup>, Հիքմեթ Հազրմին, Վալա Նուրեդդինին, կին գրողներ Հալիլե Էդիբին (Ադրվարին)<sup>45</sup> ու Մուֆիդե Ֆերիդին, ովքեր զգալի նպաստ էին բերել թե՛ ազգայնական գաղափարախոսության ջատագովությանը, և թե՛ «նոր թուրքերենի»

<sup>40</sup> Karay Refik Halit (1888-1965)- Պատմվածքների և վեպերի հեղինակ, լրագրող: Տե՛ս Erişenler S., Refik Halit Karay'ın Öyküleri, Türk Dili, Aylık Dil ve Yazın Dergisi, Türk Öykücülüğü Özel Sayısı, Sayı 286, Temmuz, 1975, ss. 65-75:

<sup>41</sup> Güntekin Reşat Nuri (1889-1956)- Ճանաչված թուրք վիպասան ու դրամատուրգ: Ավարտել է Ստամբուլի համալսարանի գրականության ֆակուլտետը: Ընտրվել է ԹԱՄԺ-ի պատգամավոր (1939-1944)՝ Չանաքքալեից, եղել է Թուրքիայի ներկայացուցիչը ՅՈՒՆԵՍԿՕ-ում: Այս հեղինակին հոչակ է բերել «Յախսարյակը» (“Çalikuşu”, 1922) վեպը, որը հետագայում նաև էկրանավորվել է: Տե՛ս Karaalioglu S. K., Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü, էջ 247-248: Տե՛ս նաև Reşat Nuri Güntekin'in Tiyatro ile ilgili makaleleri, Hazırlayan: Kemal Yavuz, İstanbul, 1976, 640 s:

<sup>42</sup> Orhan Orhan Seyfi (1890-1972)- Բանաստեղծ և արձակագիր: Մտվել է Ստամբուլում՝ գնդապետի ընտանիքում, ստացել իրավաբանական կրթություն: Զբաղվել է լրագրությամբ ու մանկավարժությամբ: Ընտրվել է ԹԱՄԺ-ի պատգամավոր՝ Ջոնգուլյակից (1946): Յուսուֆ Ջիյա Օրթաչի հետ հրատարակել է «Աբբաբա» երգիծական հանդեսը: 20-րդ դարի թուրք գրականության պատմության մեջ է մտել որպես ժողովրդախոսակցական լեզվով ու «հեջեի» (վանկային) տաղաչափությամբ գրող՝ հինգ նշանավոր բանաստեղծներից մեկը: Տե՛ս Karaalioglu S. K., նշվ. աշխ., էջ 412:

<sup>43</sup> Çamlıbel Faruk Nafiz (1898-1973) - Բանաստեղծ: Ստացել է բժշկական կրթություն, սակայն հետագայում առավելապես զբաղվել է մանկավարժությամբ և լրագրությամբ: Ընտրվել է ԹԱՄԺ-ի պատգամավոր՝ Ստամբուլից (1946): Տե՛ս Karaalioglu S. K., նշվ. աշխ., էջ 145-146:

<sup>44</sup> Ortaç Yusuf Ziya (1896-1967)- «Հեջեի» (այսինքն՝ վանկային տաղաչափությամբ գրող) հինգ առավել նշանավոր բանաստեղծներից մեկը: Զբաղվել է նաև մանկավարժությամբ և լրագրությամբ: Ընտրվել է ԹԱՄԺ-ի պատգամավոր (1950-1954): Տե՛ս Karaalioglu S. K., նշվ. աշխ., էջ 413-414:

<sup>45</sup> Հալիդե Էդիբ-Ադրվարի մասին մանրամասն տե՛ս Սաֆարյան Ալ., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», էջ 183-187, Safaryan A., On the History of Turkish Feminism, "Iran and the Caucasus", Volume 11.1, Brill, Leiden-Boston, 2007, pp. 141-152:

գեղեցկացմանը (“...yeni Türkçeyi güzelleştirdiler”)<sup>46</sup>: Միաժամանակ անհնար է չարձանագրել և այն իրողությունը, որ «Թյուրքականության հիմունքներում» հեղինակն ընդհանրապես խուսափում է հիշատակել ժամանակաշրջանի թերևս ամենաականավոր թուրք բանաստեղծի՝ Թևֆիք Ֆիքրեթի (1867-1915) անունը, իսկ այլ առիթով նույնիսկ ցուցադրաբար անջրպետվում էր նրանից կամ խիստ զգուշավոր արտահայտվում այդ դասականի մասին՝ փաստորեն վերջինիս մեղադրելով աշխարհաբարոյաբացիության մեջ ու հայտարարելով. «Հարգենք նրա (իմա՝ Թևֆիք Ֆիքրեթի) հիշատակը, բայց չընդօրինակենք նրան»<sup>47</sup>: Հատկանշական է, որ դեռևս 1926 թ. հրատարակված օսմանյան գրականության անցումային շրջանը (Քյոփրույլուզադե Մեհմեդ Ֆուադի գրքի առթիվ) հողված-գրախոսականում ականավոր ռուսաստանյան օսմանագետ և թյուրքագետ, ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին<sup>48</sup>, խոսելով «օսմանյան պոեզիայի անվանի ներկայացուցիչ Թևֆիք Ֆիքրեթի

<sup>46</sup> Տե՛ս “Türkçülüğün Esasları”, էջ 10-11:

<sup>47</sup> Տե՛ս Гордлевский В., Избранные сочинения, т. II (Язык и литература), Москва, 1961, стр. 459:

<sup>48</sup> Օսմանագիտության և թյուրքագիտության մտկոլմյան դպրոցի հիմնադիր Վլադիմիր Գորդլևսկու (1876-1956) գիտական ժառանգության ու մասնավորապես նրա՝ թյուրքագիտության և հայագիտության հատման տիրույթի հիմնահարցերին անդրադառնալու մասին մասնավորապես տե՛ս մեր նախորդ հրապարակումներից հետևյալները Սաֆարյան Ալ., Մելքոնյան Ռ., Ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին՝ Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացման մասին, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» (պատ. խմբ. պրոֆ. Ռ. Սաֆրասոյան), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, թիվ 6, Երևան, 2009, էջ 298-304, Մելիքյան Գ., Սաֆարյան Ալ., Ակադեմիկոս Վլադիմիր Գորդլևսկին՝ հայագիտական հիմնահարցերի մասին, Արևելագիտության հարցեր (գիտական հողվածների ժողովածու), VII, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 148-165, Сафарян Ал., Согомонян А., В. А. Гордлевский – исследователь огузо-туркменской истории и культуры, Сюжет Огузнама как исторический и культурный источник, Материалы международной научной конференции, Национальный институт рукописей АН Туркменстана, Ашхабад, 2010, стр. 233:



մասին, հիշեցնում էր, որ «պանթուրքիստ Զիյա Գյոքալփը գուսպ էր արտահայտվում Թ. Ֆիքրեթի մասին» քննադատելով այդ բանաստեղծի սերը օտար բառերի հանդեպ և «ազգային թեմաների բացակայությունը» (ինչը, ըստ էության, նշանակում էր, որ թուրքականության գաղափարախոսը հանգուցյալ Թեֆիք Ֆիքրեթին անողորմեղադրանք էր ներկայացրել աշխարհաքաղաքացիության մեջ): Այստեղ, թերևս, հարկ է նաև հավելել, որ ադրբեջանական հետազոտող Էսմերալդա Հասանովան, գրելով պանթուրքիստական ազդեցությունից խուսափած առողջ ուժերի մասին, չի վարանել հասուկ մատնանշել հատկապես Թեֆիք Ֆիքրեթի անունը, ով հետևողականորեն հանդես էր եկել «հասարակական չարիքի՝ կլերիկալիզմի, շովինիստական նացիոնալիզմի» քննադատությամբ, բացեիքաց արտահայտել էր իր բացասական վերաբերմունքը ազգայնամոլական սահմանափակվածության ու կրոնական ֆանատիզմի հանդեպ՝ չհավատալով ո՛չ «Թուրանի» գաղափարին, ո՛չ էլ իր թիհադականներին ու նրանց հետադիմական քաղաքականությանը<sup>49</sup>:

\*\*\*

Գյոքալփը բացառիկ կարևորում էր նաև «ազգային տաղաչափությունը» ("Millî vezin") վերադառնալու հիմնահարցը՝ ելնելով նրանից, որ «հին թուրքերի տաղաչափությունը վանկային էր» ("Eski Türklerin vezni, hece vezni idi")<sup>50</sup>: «Թուրքականության հիմունքներում» հեղինակը մասնավորապես ընդգծում է, որ 11-րդ դարի հեղինակ Մահմուդ Քաշգարիի մոտ

<sup>49</sup> St' u Гасанова Э., Идеология буржуазного национализма в Турции, стр. 145: St' u նաև Петросян Ю., Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в. ), Москва, 1971, стр. 159-160: Թեֆիկ Ֆիքրեթի առավել հայտի «Մառախուղ» (Sis) բանաստեղծությունը և դրա մանրամասն մեկնաբանությունը տե՛ս Kaplan M., Şiir Tahlilleri, (Âkif Paşa'dan Yahya Kemal'e Kadar), I, Üçüncü Baskı, s. 101-110:

<sup>50</sup> St' u "Türkçülüğün Esasları", էջ 96:

պահպանված բոլոր թուրքական (իրականում՝ թուրքական) չափածո տեքստերն ունեն վանկային տաղաչափություն, իսկ «արուզի տաղաչափությունը հետագայում չաղաթայական և օսմանյան բանաստեղծները նմանակել-ընդօրինակել են պարսիկներին»<sup>51</sup>: Զիյա Գյոքալփը միաժամանակ անսքող դժգոհությամբ գրում էր, որ Ալիշեր Նավոյին Թուրքեստանում և Ահմեթ փաշան՝ Անատոլիայում նպաստել էին արքունական շրջանակներում ընդունված պոեզիայի մեջ արուզի գերակայության հաստատմանը, սակայն հասարակ թուրքերը ոչ մի կերպ այդպես էլ չընկալեցին այդ չափը. վանկային տաղաչափությանը հավատարիմ մնացին «թեքքեի» (իմա՝ ժողովրդական - սուֆիական, դերվիշական) պոեզիայի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպես Ահմեդ Յեսսին, Յունուս Էմրեն, Քայգուսուզը, ինչպես նաև «սազի բանաստեղծներ» ("saz şairleri") Աշըք Օմերը, Դերթլին ու Քարաջաօղլանը<sup>52</sup>:

Դեռևս 1918 թ. լույս տեսած «Նոր կյանք» ("Yeni hayat") ժողովածուի մեջ ընդգրկված «Արվեստ» ("Sanat") բանաստեղծության մեջ Զիյա Գյոքալփը ջերմեռանդորեն հանդես էր գալիս թուրքական պոեզիայում արուզի՝ որպես արաբապարսկական տաղաչափության օգտագործման դեմ. «Aruz sizin olsun, hece bizimdir, / Halkın söylediği Türkçe bizimdir, / Leyl sizin, şeb sizin, gece bizimdir, / Değildir bir mâna üç ada muhtaç»<sup>53</sup>. / Արուզը թող ձերը լինի, հեջեն մերն է, / Թուրքերենը, որով խոսում է ժողովուրդը, մերն է, / «Լեյլը» (իմա- գիշերը՝ արաբերեն- Ա. Ս.) ձերն է, «շեքը» (իմա-գիշերը՝ պարսկերեն- Ա. Ս.) ձերն է, «գեջեն» (իմա-գիշերը՝ թուրքերեն- Ա. Ս.) մերն է, / Մեկ իմաստը երեք անվան կարիք չունի»:

<sup>51</sup> St' u նույն տեղում:

<sup>52</sup> St' u նույն տեղում, տե՛ս և նաև Köprülü F., Türk Edebiyatında İlk Mutasavvıflar, 6. Baskı, Ankara, 146-147, Kabaklı A., Türk Edebiyatı, Cilt I, İkinci Baskı, 1967, ss. 596-603:

<sup>53</sup> Kudret C., Ziya Gökalp, Ankara, 1963, s. 39.



Գյոքալփը նշում էր, որ երբ ձևավորվեց թյուրքականության շարժումը, իրենց գրականության մեջ արուզի և վանկային չափերը գոյատևում էին կողք-կողքի՝ հանդիսանալով առաջինը՝ ընտրանու, իսկ երկրորդը՝ ռամիկների «մեղեդիների գործիք»<sup>54</sup>: Գյոքալփյան ձևակերպմամբ թյուրքականությունը վճռականորեն հանդես էր գալիս ընդդեմ վերամբարձ, խրթին լեզվի և արուզի, հանուն պարզ լեզվի ու վանկային տաղաչափության, ու քանզի ժողովուրդը պահել էր պարզ թուրքերենը ու վանկային չափը որպես երկու թանկագին «թալիսման» (tılsım), թյուրքականության գաղափարախոսների և հետևորդների համար դրանք «գտնելը» ամենևին էլ դժվար չէր: Այսուհանդերձ վանկային չափն ըստ Գյոքալփի թուրք բանաստեղծներից ոմանց ոգևորում տանում էր սխալ ուղիներով, և նրանք գրում էին ֆրանսիացիներից կրկնօրինակած «Alexandrin» կոչված չափով (6+6), ինչը թուրք «ժողովրդի դուրը չեկավ», որովհետև թուրքական ժողովրդական տաղաչափության մեջ չկա "6+6" ձևը, բայց դրա փոխարեն կա "6+5" ձևը, որը շատ սիրված և ընդունված է թուրք ժողովրդի կողմից<sup>55</sup>:

Թուրք գրականության մեջ արուզի և վանկային տաղաչափության կիրառության, դիվանի գրականության վերարժևորման, ազգային ուրույնության ու մշակութային ավանդույթների մասին սուր բանավեճերը վերսկսվելու էին Գյոքալփի մահից տասնամյակներ անց... Մասնավորապես թուրք ճանաչված գրականագետ Ռաուֆ Մութուլայը գրում է. «Լեզուն դասական գրականության ամենախոցելի տեղն է... Վերցնելով արուզի բանաստեղծական համակարգը, որը ստեղծվել էր այլ լեզվական խմբում և այդ պատճառով չէր համապատասխանում թուրքերեն լեզվի կառուցվածքին՝ դիվանի բանաստեղծները հանուն արուզի չափերի պահպանության ստիպված էին հրաժարվել թուրքական լեքսիկայից և դիմել օտարազգի լեքսիկա-

յի», ինչի արդյունքում էլ ձևավորվել էր մի գրական լեզու, որը հասու էր գեթ նրանց, ով տիրապետում էր ոչ միայն թուրքերենին, այլև պարսկերենին և արաբերենին<sup>56</sup>:

Թուրքիայում զգալի հեղինակություն վայելող մեկ այլ քննադատ ու գրականագետ՝ Ասրմ Բեզիրջին, կարծես շարունակելով Ռաուֆ Մութուլայի վերոհիշյալ միտքը, գրում է. «Արդյոք մեր ազգային մշակույթին է պատկանում դիվանի գրականությունը: Իհարկե, ոչ: Այն պատկանում է կրոնական – համայնական մշակույթին, ընդ որում մեռած մշակույթին... Այն աղբյուրները, որոնք սնում էին այդ պոեզիան, օտար ծագում ունեին. բոլոր բանաստեղծական չափերը, ձևերը, ժանրերը ու նույնիսկ ստեղծագործությունների բովանդակությունը փոխ էին առնված պարսկական գրականությունից: Այդ իսկ պատճառով դժվար է համաձայնել նրանց հետ, ովքեր համարում են, որ մեր ժամանակակից գրականությունը կարող է հիմնվել դիվանի ավանդույթների վրա»<sup>57</sup>:

\*\*\*

1909 թ. սալոնիկյան «Գենչ Քալեմլեր» հանդեսում առաջին անգամ տպագրված ու պանթուրքիստական գաղափարներ ջատագովող Զիյա Գյոքալփի «Ալթուն դեստան» («Ոսկե պատում») «ստեղծագործությունում» Զիյա Գյոքալփը կարոտով էր հիշում թյուրքական հին տիրակալներին, ողբում է, որ Թուրանում հաստատվել են «օտարները»... *Kırım nerede kaldı, Kafkas ne oldu? / Kazan'dan Tibete doğru Rus doldu.../ Gideyim arayım*

<sup>56</sup> St. 'u Türk Edebiyatı -1965, İstanbul, 1966, ինչպես նաև Меликов Т., Национальная культурная традиция в зеркале литературной критики Турции, Литературная критика стран Зарубежного Востока и ее роль в развитии общественной и эстетической мысли, Главная редакция восточной литературы изд. «Наука», 1988, стр. 113:

<sup>57</sup> Bezirci A., İkinci Yeni Olayı, İstanbul, 1974, ինչպես նաև Меликов Т., նշվ. աշխ., էջ 113:

<sup>54</sup> St. 'u "Türkçülüğün Esasları", էջ 96:

<sup>55</sup> St. 'u նույն տեղում:



İran nerede? <sup>58</sup> - / «Որտե՞ղ է Ղրիմը, ի՞նչ եղավ Կովկասը: / Կազանից մինչև Տիբեթ՝ ոուսն է լցվել... / Գնամ-փնտրեմ, որտե՞ղ է Իրանը»: Այնուհետև Գյոքալփը խնդրում էր Բարձրյալին թուրքերին վերադարձնել իրենց «ոսկե դարը», նրանց մոտ ուղարկել Իլիան հաքանին ու միավորել ողջ աշխարհի թրքությունը մեկ երկրի մեջ. «Թո՛ղ թուրքերի (իմա՛ թյուրքերի- Ա.Ս.) հայրենիքը միասնական լինի» ("Türk yurdu bir olsun...")<sup>59</sup>:

Պանթուրքիստական դաստիարակության նպատակ էր հետապնդում Սալոնիկում լույս տեսնող «Երիտասարդ գրիչներ» ("Genç kalemler") պարբերականի նաև 1911 թ. մարտյան համարում հրատարակված Ջիյա Գյոքալփի «Թուրան» բանաստեղծությունը (սալոնիկյան «Ռումելի» թերթում այս բանաստեղծությունը տպագրվել է «Դեմիրթաշ» ստորագրությամբ, «Գենչ քալեմլեր» հանդեսում՝ «Թևֆիկ Սեդաթ» ստորագրությամբ, իսկ 1912 թ. արտատպվել է նաև «Ալթուն արմաղան («Ոսկե նվեր»)» ժողովածուի մեջ՝ «Ջիյա» ստորագրությամբ)<sup>60</sup>: Վերոհիշյալ բանաստեղծությամբ հեղինակը թուրք երիտասարդությանը կոչ էր անում հպարտանալ թուրք (թյուրքալեզու ժողովուրդների) հին գորավարներով, ակնարկում էր թուրքերի (թյուրքերի) ռազմական պատմության՝ արևմտյան գիտնականների կողմից ոչ օբյեկտիվ լուսաբանման մասին ու հայտարարում, որ թուրքերը իրենց «արյան մեջ» ու կենսակերպում են կրում իրենց հին քաղաքակրթության դրոշմը: Ջիյա Գյոքալփը փառաբանում էր Աթիլլային, Չինգիզ խանին, Օղուզ խանին և «ողբում», որ «թուրքաբնակ» (այսինքն՝ թյուրքալեզու ժողովուրդների բնակության) անձայրածիր տարածքները ռուսական տիրապետության տակ են... «Այսպես էր Գեոքալփը թու-

<sup>58</sup> St 'u Kabaklı A., Türk Edebiyatı, Cilt 3, İstanbul, 1966, ss. 64-65:

<sup>59</sup> St 'u նույն տեղում, ինչպես նաև Kaplan M., Şiir Tablilleri (Âkif Paşa'dan Yahya Kemal'e Kadar), I, Üçüncü Baskı, էջ 135-145:

<sup>60</sup> Гасанова Э., Идеология буржуазного национализма в Турции в период младотурок (1908-1914 гг.), стр. 128:

բանիզմի շովինիստական մոլուցքով զրգրում ամբոխին»<sup>61</sup>: «Թուրան» բանաստեղծությունն ավարտվում է այսօր Թուրքիայում հանրածանոթ դարձած հետևյալ բառերով. Vatan ne Türkiye'dir Türklere, ne Türkistan; /Vatan, büyük ve müebbet bir ülkedir: Turan... <sup>62</sup> / Հայրենիքը թուրքերի համար ո՛չ Թուրքիան է, ո՛չ էլ Թուրքեստանը: / Հայրենիքը մե՞ծ ու հավերժական մի երկիր է՝ Թուրանը...»: «Թյուրքականության հիմունքներում» Ջիյա Գյոքալփը, ընդգծում էր, որ հիշյալ «Թուրան» բանաստեղծությունն ինքը ժամանակին գրել է՝ խորհելով թյուրքակա- նության գաղափարախոսության ծրագրի ստեղծման մասին», և այդ բանաստեղծությունը ճիշտ ժամանակին էր հրատարակվել, քանզի «երիտասարդ հոգիները», որոնք տեսնում էին թե՛ օսմանիզմի և թե՛ պանիսլամիզմի՝ երկրի համար վտանգներ ծնելը, փրկության իդեալ էին որոնում: «Թուրան» բանաստեղծությունն այդ իդեալի առաջին կայծն էր»<sup>63</sup>:

\*\*\*

Ջիյա Գյոքալփը թուրքերի ազգային գիտակցությունը շղթայելու մեղադրանք էր ներկայացնում թանգիմաթականներին՝ գրելով. «Այս ազգը մինչև վերջին ժամանակներն իրեն հատուկ անուն անգամ չունեց: Թանգիմաթականները նրան ասել էին. «Դու միայն օսմանցի ես: Զգու՛յշ, ուրիշ ազգերին նայելով՝ դու էլ ազգային անուն մի՛ պահանջիր: Այն բոլորին, երբ կպահանջես ազգային անուն, կդառնաս Օսմանյան կայսրության փլուզ-

<sup>61</sup> Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 246:

<sup>62</sup> Ziya Gökalp, Kızıl Elma, Ziya Gökalp Dizisi-4, İstanbul, 1998, s. 15, Гасанова Э., նշվ. աշխ., էջ 129, Ünlü M., Yusuf Çotuksöken, Önsöz, -Ziya Gökalp, Türkçülüğün Esasları (Günümüz Türkçesiyle), 7. Baskı, İstanbul, 2004, s. VIII: Ըստ Լ. Ռաշոնյիի՝ Ջիյա Գյոքալփի իր բանաստեղծություններով թուրքերի մեջ արթնացրեց «նախաիսլամական հիշողությունները»: St 'u Ra sonyi L., Tarihte Türklük, էջ 259:

<sup>63</sup> St 'u "Türkçülüğün Esasları", էջ 11:



ման պատճառ»։ Խեղճ թուրքը հայրենիքը կորցնելու վախից հարկադրված էր ասել. «Այլահը վկա, թուրք չեմ, օսմանցիությունից բացի ոչ մի հասարակական խմբի չեմ պատկանում»<sup>64</sup>։

Գյոքալվիը մարտնչող թուրքականության դիրքերից հետևողականորեն և անողոք մեղադրում էր թանզիմաթի հատկապես այն գործիչներին և օսմանիզմի դոկտրինայի այն կողմնակիցներին, ովքեր ըստ նրա՝ ամենին չէին գիտակցում, որ ինչ էլ անեին, օտար ազգերը (milletler)<sup>65</sup> ձգտելու էին անջատվել օսմանյան հավաքական հանրությունից, քանզի հարյուրավոր ազգերից կազմված արհեստական հանրությունների (իմա կայսրությունների) գոյությունն արդեն անհնար էր դարձել, այսուհետև յուրաքանչյուր ազգ ձևավորելու էր անջատ պետություն՝ ապրելով միաստար (mütecanis), բնականոն հասարակական կյանքով<sup>66</sup>։

<sup>64</sup> "Türkçülüğün Esasları", s. 33.

<sup>65</sup> «Millet» եզրը օգտագործվել է թե՛ «ազգ, ազգություն, ժողովուրդ» և թե՛ «կրոնական համայնք» իմաստներով՝ օսմանյան ժամանակաշրջանում արտահայտելով նաև դավանական պատկանելություն։ Ժամանակակից թուրք պատմագիտական մտքի զննահատմամբ Օսմանյան կայսրությունում «միլլեթների համակարգի» մասին մանրամասն տե՛ս՝ *Orтайлы И., Система миллетов в Османской империи: Особенности формирования и устройства.- Вестник Московского Университета, Серия 13, Востоковедение, 3/1995, стр. 66-68, Sonyel S. R., Minorities and the Destruction of the Ottoman Empire, Atatürk Supreme Council for Culture, Language and History Publications of Turkish Historical Society, Serial. VII-No. 129, Ankara, 1993, (աղբյուրների և գրականության ցանկը տե՛ս էջ 455-499)։ Պրոֆ. Ա. Խառատյանն իրավացիորեն ընդգծել է, որ «Օսմանյան Թուրքիայում միլլեթները հանդես էին գալիս որպես կրոնադավանական կենտրոնացված միավորումներ, և ոչ մահմեդականների կառավարման այս ձևը առավելագույնս հարմարեցված էր կայսրության վարչատնտեսական կարգուկանոնին ու հողային-տնտեսային հարաբերություններին... Հպատակ ազգերի կրոնական ինքնավարությունն ուներ հարաբերական բնույթ, որը ոչ պակաս չափով ցուցադրում էր առաջինների իրավագույն իրավիճակը»։ Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դդ.), Երևան, 2007, էջ 368-369։*

<sup>66</sup> Տե՛ս՝ «Türkçülüğün Esasları», էջ 33-34։

Ռուսաստանյան թուրքագետ-պատմաբան Ի. Լ. Ֆադեևան, վերլուծելով իր ձևակերպմամբ՝ Օսմանյան կայսրության մուսուլման և ոչ մուսուլման հպատակների հավասարության կոնցեպցիայի և դրա՝ թանզիմաթի տարիներին (1839-1871) կենսագործման պրոբլեմատիկան, նշում է, որ օսմանյան իշխանությունները նախ և առաջ մտահոգված էին կայսրության կազմում մնացած տիրույթները պահելու խնդրով, քանզի մի շարք տարածքներ արդեն փաստական, երբեմն էլ իրավական ինքնավարություն կամ հատուկ կարգավիճակ էին ստացել. Թուրիսում, Եգիպտոսում, Լիբանանում, Սերբիայում, Դանուբյան իշխանություններում, Չեռնոգորիայում «սուլթանի իրավունքներն ոչ թե սուվերեն, այլ սյուզերեն էին»<sup>67</sup>։ Ակնհայտ է, որ եթե 1839 և 1856 թթ. հրովարտակներն անգամ կարող էին օսմանահպատակ քրիստոնյաների իրավիճակի բարելավման ինչ-ինչ հույսեր ներշնչել, ապա մուսուլմանական ֆանատիկոսների ահռելի բանակում դրանք գրգռում էին կատաղի գայրույթ՝ ընկալվելով որպես մուսուլմանների՝ «անհավատների» նկատմամբ գերազանցության զգացմունքի դրսևորում, իսկ «այդ պորտալարի վրա մի քանի դար հիմնվում էր օսմանյան պետության հզորությունը»<sup>68</sup>։ Միաժամանակ Իրմա Ֆադեևան ևս անկարող էր չփաստել, որ թանզիմաթական «բարեփոխումներն» ամենին էլ բարեհոգության դրսևորում չէին, այլ նպատակաուղղված էին մշակութային ու սոցիալ-տնտեսական առումներով թուրքերի գերազանցող քրիստոնյաների ապստամբությունները, նորանոր տարածքների անջատումը կանխելուն<sup>69</sup>։

Ռ. Ա. Սաֆրաստյանը աղբյուրագիտական լայն հենքի վրա համակողմանի լուսաբանել է այն փաստը, որ «թանզիմաթականների» գործունեությունն իրականում նույնպես լուրջ վտանգ էր ներկայացնում Օսմանյան կայսրության քրիստոնյա

<sup>67</sup> Фадеева И., Официальные доктрины в идеологии и политике османской империи (Османизм-панисламизм), XIX начало XX вв., стр. 73.

<sup>68</sup> Տե՛ս՝ նույն տեղում, էջ 75։

<sup>69</sup> Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 56-96։



ժողովուրդների հետագա ինքնություն գոյության համար, ու թուրք «արևմտական-բարեփոխիչների» նախաձեռնությամբ ընդունված օրենքները պարզապես հող էին նախապատրաստում հպատակ ժողովուրդների «խաղաղ» ուժացման համար<sup>70</sup>: «Ուշագրավ է, որ «միաձուլումը» իրականացվում էր արևմտյան օրինակով բարեփոխումներ անցկացնելու և սուլթանի բոլոր հպատակների համար արդարացի կառավարման համակարգի հաստատման պատրվակով... Թանգիմաթի տարիներին Բարձր դռան քաղաքականությունը ազգային հարցում, չնայած կառավարական ակտերում մի շարք առաջադեմ դրույթների հայտարարմանը, բնորոշվում էր նրա մեջ հետադիմական, հակազգային, ճնշողական միտումների ուժեղացմամբ: Դա ստիպում է վերանայել արևմտյան և թուրքական պատմագրության մեջ լայն տարածում գտած թանգիմաթի շրջանում հպատակ ժողովուրդների նկատմամբ թուրք իշխանությունների քաղաքականության «լիբերալիզացիայի» մասին կարծիքը, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի գնահատականը ամբողջությամբ վերցրած: Կարելի է արդյոք անվերապահորեն պնդել, որ թանգիմաթական նորամուծությունները առաջադիմական էին, էթե նրանք ուղղված էին քրիստոնյա ժողովուրդների ազգային ոգու ճնշմանը»:<sup>71</sup>

\*\*\*

Այսօր՝ Գյոքալփի ապրած ժամանակաշրջանից մեկ դար անց, գրականագետները թե՛ Թուրքիայում, թե՛ Արևմուտքում, թե՛ Ռուսաստանում հաճախ են հղում «Թյուրքականության հիմունքներում» տեղ գտած անառարկելի պնդումն այն մասին, որ հանճարեղ է միայն այն արվեստագետը, ում պատկերացումները համահունչ են ժողովրդի գեղարվեստական ճաշակին: Գյոքալփը նախ և առաջ վկայակոչում էր նաև իր ձևա-

կերպմամբ «ռուսների ամենամեծ բանաստեղծ» Պուշկինին, այնուհետև բերում «ազգային բանաստեղծներ» ("milli şairler") Դանթեի, Պետրարկայի, Ժան-ժակ Ռուսոյի, Գյոթեի, Շիլլերի, Դ'Անունցիոյի օրինակները, ովքեր «արվեստի հանճարներ» են դարձել՝ տոգորվելով ժողովրդականությամբ: Ապա Գյոքալփը փաստում էր, որ օսմանցի թուրքերը չունեն հանճարեղ արվեստագետներ, ինչի պատճառն էլ տեսնում է նրանում, որ իրենց արվեստագետները գեղագիտական ճաշակը ժողովրդի կենդանի թանգարանից չեն վերցրել<sup>72</sup>... «Թյուրքականության հիմունքներում» Գյոքալփը մանրամասնում է «Դեպի ժողովուրդ» գնալու թուրքական «նարողնիկական» (Halkçı) կոնկրետ ծրագիրը մշակույթի ասպարեզում: Անհրաժեշտ է ուշադիր լսել ժողովրդի գործածած բառերն ու նախադասությունները, առածները և ասացվածքները, ավանդությունները, հասկանալ մտածողության կերպն ու զգալու ձևը, տոգորվել ժողովրդական բանաստեղծությամբ, երաժշտությամբ, պարերով ու խաղերով, ընկղմվել հասարակ ժողովրդի կրոնական կյանքի ու բարոյական ընկալումների մեջ, վայելել նրա հագուստի, ճարտարապետության ու կյանքի պարզ գեղեցկությունը, սովորել ժողովրդական առասպելները, հեքիաթները, կարդալ ժողովրդի սիրելի գրքերը՝ «Քորքութ Աթա»<sup>73</sup>, աշուղական ստեղծագոր-

<sup>72</sup> Տե՛ս "Türkçülügün Esasları", էջ 32-33:

<sup>73</sup> «Քորքութ Աթա» կամ «Դեղե Քորքութ» (Kitab-ı Dedem Korkut alâlisân-ı Taife-i Oğuzan) էպոսում պատմվում է ինչպես հույների, հայերի ու վրացիների, այնպես էլ գերբնական արարածների դեմ իսլամ ընդունած օղուզական ցեղերի վարած պատերազմների ու ներքին բախումների մասին: Հավանաբար գրի է առնվել XIV դ. վերջից XVI դ. սկիզբն ընկած ժամանակաշրջանում: Դերգդեղենում պահվող ձեռագիրն ամփոփում է 12 էպիկական պատում (հերոսական դեսթան), վատիկանյանը՝ 6 պատում, որոնք հետաքրքիր տեղեկություններ են պարունակում օղուզների կրոնական հավատալիքների, հասարակական ու տնտեսական կյանքի, ինչպես նաև պետական կառուցվածքի մասին: Թուրք գրականագետները կարևորում են Օրհան Շաիք Գյոքայի (1973) ու Մուհարրեմ Էրգինի (1958-1963) աշխատասիրությամբ հրատարակությունները: Ռուս. հրատ. տե՛ս Книга моего деда Коркута, Москва-Ленинград, 1962 (с критич. Статьям В. В. Бартольда, А. Ю. Якубовского и В. М. Жирмунского): Զիյա Գյոքալփը էպոսին անդրադառնում է «Թյուրքականու-

<sup>70</sup> Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 71:

<sup>71</sup> Նույն տեղում:



ծութուններ, Յունուս էմբեի ու թեքքեի իյահիները, Նասրեդ-  
դին Խոջայի գվարճապատումները, նոր կյանք հաղորդել երե-  
խաների կողմից ամեն տարի անհամբերությամբ սպասված ու-  
րախ տոներին<sup>74</sup>: Օտարերկրյա արևելագետներն էլ անդրա-  
դարձել են թուրք մտավորականության ու ժողովրդի միջև  
ձևավորված անջրպետին, թուրքական յուրօրինակ «նարողնի-  
կությանը»: Վ. Ա. Գորդլևսկին ընդգծում է, որ թուրք-օսմանյան  
գրականության մեջ միայն 19-րդ դարում է ձևավորվում ազգա-  
յին հոսանքը՝ «յուրօրինակ նարողնիկություն»՝ որպես հա-  
կազդեցություն արևմտյան, «գյավուրական» ազդեցության  
ուժգնացման դեմ<sup>75</sup>: Այնուհետև ճանաչված օսմանագետը գրում  
է. «Օսմանյան մտավորականությունը չափազանց երկար էր  
ապրել ժողովրդից անջատ - մեկուսացած կյանքով, ուստի  
դժվարին էին ժողովրդի աշխարհայացքի սահմանները գծելու  
և նրան գեղարվեստական արտահայտություն տալու փորձե-  
րը»<sup>76</sup>, իսկ ժողովրդի ազգագրական ուսումնասիրությունն ար-  
գելակվում էր օսմանյան մտավորական շրջանակներում տի-

թյան հիմունքների» տարբեր հատվածներում թե՛ ազգային-մշակույթի  
արմատների վերհանման, թե՛ համաօղուգականության (Öğuzculuk) պրո-  
պագանդման նպատակներով: Հմնտ. նաև Ziya Gökalp, Makalleler (Hazırlayan:  
Abdulhalûk Çay), Ankara 1982, s. 269, ինչպես նաև Boratav P. N., Halk Hikâyeri  
ve Halk Hikâyeciliği, Ankara, 1946: Զիյա Գյոքալփի՝ որպես «Դեղե Բորքուքի»  
ուսումնասիրողի մասին տե՛ս նաև Alptekin A. B., Dede Korkut Hikâyeri ile  
Halk Hikâyelerinin Münâsebetleri, Türk Kültürü Araştırmaları (Prof. Dr. Şükrü  
Elçin'e Armağan), Yıl XXIXII-2-1991, Ankara, 1993, s. 22-23, «Դեղե Բորքուք»  
էպոսին հայ հեղինակների անդրադարձներից տե՛ս Միրզոյան Հ., Էպոսը  
որպես տվյալ ժողովրդի ինքնության ուսումնասիրության աղբյուր (օղուգա-  
կան էպոսի օրինակով), - «Հայոց ինքնության հարցեր», Երևան, 2012, էջ 22-  
35, նույնի Մեր հարևանները ծանոթ և անծանոթ, - «Հայկական հարց», №  
1(2), 2013, էջ 80-86, Мирзоян Г., Гончар Н., Азербайджанская версия истории  
национальной литературы в критическом рассмотрении, - «Вестник  
Ереванского Университета» (Общественные науки, Арменовидение), № 134.1,  
Ереван, 2011, стр. 40-59:

<sup>74</sup> St 'u "Türkçülüğün Esasları", էջ 32-33:

<sup>75</sup> St 'u Гордлевский В., О турецком собрании в Константинополе (تورک درنگی),  
- Избранные сочинения, т. III, История и культура, Москва, 1962, стр. 287.

<sup>76</sup> St 'u նույն տեղում:

րապետող այն մտայնությունը, որ «ստոր» ժողովուրդը իսլամի  
կողմից մերժված երկակի հավատքի ու ցնորամիտ գաղափար-  
ների կրող է<sup>77</sup>:

Եթե թուրքերենի ու թուրք գրականության բարեփոխման  
ցյոքալփյան տեսլականը համահունչ էր Հանրապետական  
Թուրքիայի կայացման հրամայականներին, ապա Ստամբուլի  
խոսակցական թուրքերենը և նրա հենքի վրա ձևավորվող գրա-  
կանությունը՝ որպես «համաթուրքական լեզու» և «համաթուր-  
քական գրականություն» բոլոր «թուրքերին» (իմա թուրքական  
ժողովուրդներին) պարտադրելու պանթուրքիստական գաղա-  
փարները անիրականանալի էին, քանզի բախվելու էին թուր-  
քական տարբեր ժողովուրդների արդեն իսկ ձևավորված ազ-  
գային ինքնագիտակցությանը, նրանց՝ հարուստ գրական  
ավանդույթներ ունեցող լեզուների<sup>78</sup>, մշակութային-պատմա-  
կան զարգացման իրողություններին: Հիշարժան են, մասնավո-  
րապես, թաթարական ուրույն մշակույթի, մայրենի թաթարե-  
րենի պաշտպանությամբ և պանթուրքիստների համարձակ  
քննադատությամբ հանդես եկող, թաթարական գրականու-  
թյան դասական Տուկայի<sup>79</sup> հետևյալ տողերը. «Մենք թաթարներ  
էինք և մնացել ենք թաթարներ: Թուրքերը Ստամբուլում են,  
իսկ մենք՝ այստեղ: Բարի երթ... Մեր ժողովրդական երգերն են

<sup>77</sup> St 'u նույն տեղում: Վլադիմիր Գորդլևսկին նաև նշում է, որ ինչպես Օս-  
մանյան կայսրության քաղաքական պատմության մեջ պետական համա-  
կարգի արդիականացումը կապվում է եվրոպական միջամտության հետ,  
այնպես էլ թուրքական ազգագրության առաջին էջերում գրվելու են եվրոպա-  
կան (հունգարական ու գերմանական) այն գիտնականների անունները, ով-  
քեր հետաքրքրություն էին հարուցել «ոչ միայն Արևմուտքում, այլև Արևել-  
քում մտոացված ժողովրդի հանդեպ»: St 'u նույն տեղում, էջ 288:

<sup>78</sup> St 'u Talât T. M., Pantürkizm Ülküsü ve Dilde Birlik "İddiası", "Türk Dili"  
(Ayhk Dil ve Yazın Dergisi), Yıl 27, Cilt XXXVI, Sayı 310, 1 Temmuz 1977, s. 15-18:

<sup>79</sup> Տուկայ (Թուրքայ, Գարդուլլա Սուհամեդգարիֆովիչ Թուրքան, 1886-1913):  
Տուկայի ու նրա հակապանթուրքիստական հայացքների մասին մասնա-  
վորապես տե՛ս Գանիևա Ք., Сатирическое творчество Г. Тукая, Казань, 1964,  
стр. 20-27, Агишев Я., Творчество Габдуллы Тукая, Казань, 1948, Халий Г.,  
Тукай и его современники, Казань, 1966, Габдулла Тукай (сборник статей),  
Казань, 1968.



հանդիսանում իրապես ազգային, ազատ ամեն կողմնակի (արաբական, թուրքական, ուզբեկական<sup>80</sup>) ազդեցությունից, այդ պատճառով եմ ես նրանց պատմական նշանակություն տալիս, սիրում դրանք...»<sup>81</sup>:

## ЗИЯ ГЕКАЛЬП - О ТУРЕЦКОМ ФОЛЬКЛОРЕ И ЛИТЕРАТУРЕ

*Александр Сафарян*  
(резюме)

В статье представлены взгляды видного идеолога пантюркизма Зии Гекальпа (1876-1924) на фольклор и литературу, отраженные в его фундаментальном труде «Основы тюркизма» и стихотворениях разных лет.

## ZIYA GÖKALP – ON TURKISH FOLKLORE AND LITERATURE

*Alexander Safaryan*  
(summary)

The article presents ideas and views on Turkish folklore, literature and poetry expressed by a featured ideologist of Pan-Turkism Ziya Gökalp in his fundamental work “Principles of Turkism”.

<sup>80</sup> Ուզբեկ և այլ ժողովրդների նկատմամբ հարգանք տածող Տուկայր այստեղ ակնհայտորեն նկատի է ունեցել մեռած չաղաթայերենը, որի արհեստական կենդանացման փորձերը քննադատվել են նաև ուզբեկական դեմոկրատական մտավորականության կողմից: Տե՛ս История литератур народов Средней Азии и Казахстана, стр. 154-157:

<sup>81</sup> Тукай Г., Избранное в двух томах, том второй, (Публицистика, критика, фельетоны, автобиографические очерки и заметки, избранные письма), Казань, 1961, стр. 19-20.

## ՌՈՒԲԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՖՐԱՍՅԱՆ

Արևելագետ-թուրքագետ, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ծնվել է 1955 թ. Երևանում՝ օսմանագետ Արամ Սաֆրասյանի ընտանիքում: 1977 թ. ավարտել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը և 1980 թ.՝ Հայաստանի ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան:

1981 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ համակարգում: Եղել է Արևելագիտության ինստիտուտի կրտսեր, հետագայում՝ ավագ և առաջատար գիտաշխատող, Թուրքիայի բաժնի վարիչ: 1988 – 1991 թթ. աշխատել է փոխտնօրեն ՀՀ ԳԱԱ Սփյուռքի ու ցեղասպանության ուսումնասիրման կենտրոնում: 2006 թ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենն է:

Երկար տարիներ վարում է դասախոսական աշխատանք Երևանի բուհերում: ԵՊՀ պրոֆեսոր է, 2015 թ. համատեղության կարգով Խ Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն է: Դասավանդում է Թուրքիայի պատմության և ներքին ու արտաքին քաղաքականության, ցեղասպանագիտության և տարածաշրջանային հետազոտությունների հետ առնչվող առարկաներ:

1990-ական թթ. եղել է Հայաստանի Գերագույն Խորհրդի միջազգային հարաբերությունների գծով ավագ փորձագետ, ՀՀ Նախագահի աշխատակազմի վերլուծական բաժնի վարիչի տեղակալ, ինչպես նաև վարել է դիվանագիտական աշխատանք Գերմանիայում՝ աշխատելով Բոննում ՀՀ դեսպանատան խորհրդական:

1998 թ. վերադարձել է գիտական աշխատանքի: Հաղթել է միջառք հեղինակավոր միջազգային գիտահետազոտական մրցույթներում՝ Հումբոլդտի անվան (Գերմանիա, 1999 թ.),



Ֆուլբրայթի անվան (ԱՄՆ, 2001 թ.), Միջազգային քաղաքականության ուսումնասիրման (Հունգարիա, 2003 թ.) և հետազոտական աշխատանք է տարել այդ երկրների առաջատար համալսարաններում. Ռուսիի համալսարան (Բոխում, Գերմանիա), Բրքլիի Կալիֆորնիական համալսարան (Բրքլի, ԱՄՆ) և Կենտրոնական Եվրոպական համալսարան (Բուդապեշտ, Հունգարիա):

Հիմնադիրն է ու խմբագիրը «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» և «Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականների: Մի շարք արտասահմանյան գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է. *Asiatica* (Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստան), *Россия и новые государства Евразии* (Մոսկվա, Ռուսաստան), *Sociology and Anthropology* (Ալիսաբրա, ԱՄՆ), *International Journal of Research and Humanities Studies* (Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ): 2012 թ. ընտրվել է Կանադայի Կանկուվեր քաղաքի Նոր Վեստմինստերյան քոլեջի պատվավոր ավագ դասախոս:

Հեղինակ է հարյուրից ավելի գիտական աշխատությունների, որոնք նվիրված են Թուրքիայի պատմության և արտաքին քաղաքականության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ուսումնասիրման հարցերին:

Վարում է նաև հասարակական աշխատանք: ՀՀ Հանրային խորհրդի Կրոնի, սփյուռքի և միջազգային ինտեգրման հանձնաժողովի նախագահն է:

Պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով և մի շարք այլ պարգևներով:

## ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՖՐԱՍՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Գիտական հրատարակումներ

1. Օսմանիզմի դոկտրինան Նամըք Քեմալի գաղափարախոսության մեջ, - Երիտասարդ գիտաշխատող, ԵՊՀ, 1981, 1, էջ 42-46:
2. Формирование доктрины османизма, - Современные проблемы востоковедения: Материалы востоковедческой секции научной конференции молодых ученых-обществоведов. Москва: ИНИОН АН СССР, 1981, с. 28-41.
3. Доктрина османизма в документах эпохи Танзимата, - Тезисы докладов 2-ой Всесоюзной школы молодых востоковедов в Москве, СССР, 1982. Том 1, Часть 1. Москва: ИВ АН СССР, 1982, с. 38-40.
4. Օսմանացման քաղաքականության պատմությունից, - Արևելագիտության հարցեր, 1983, 1-2, Երևան, ԵՊՀ, էջ 193-202:
5. Отражение положений доктрины османизма в законодательных актах Порты, - В: Научная конференция в связи с 60-летием Турецкой Республики: Тезисы докладов. Москва: ИВ АН СССР, 1983, с. 76-79.
6. Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.), - Ереван: АН Арм. ССР, 1985, 147 с.
7. Концепция "османской нации" у "новых османов", - Вопросы востоковедения, 1987, 3-4, Ереван, ЕГУ, с. 67-76:
8. Эволюция османизма в период младотурок, - Тезисы докладов конференции аспирантов и молодых научных сотрудников, Москва, СССР. Том 1: история, идеология, экономика. Москва: ИВ АН СССР, 1987, с. 54-57.



9. О некоторых аспектах освещения проблемы геноцида армян на Западе, - Вестник общественных наук, АН Арм.ССР, 1988, 5, с. 3 - 12 (соавтор А. Киракосян).
10. Отражение доктрины османизма в законодательных актах Порты, - Турция: история и современность. Москва: Наука, 1988, с. 196 - 203.
11. О решении Европейского парламента по вопросу геноцида армян, - Вестник архивов Армении, 1988, 2, с. 54-58 (соавтор А. Киракосян).
12. Ottomanism in Turkey in the Epoch of Reforms in the 19<sup>th</sup> Century: Ideology and Policy I, - Etudes balkaniques, Sofia: BAN, 1988, 4, p. 72 - 86.
13. Օսմանիզմի դոկտրինան երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում (1908-1916 թթ.), - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XV, Երևան, ՀՄՄՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ, 1989, էջ 239 - 252:
14. Ottomanism in Turkey in the Epoch of Reforms in the 19<sup>th</sup> Century: Ideology and Policy II, - Etudes balkaniques, Sofia: BAN, 1989, 1, p. 34 - 44.
15. Национальный вопрос в программных документах партий "османских демократов" (1909-1911), - Историко-филологический журнал, 1996, 1-2 (143-144), Ереван, АН Арм.ССР., с. 65-72:
16. Арабы и младотурецкое движение на рубеже XIX-XX вв.: турецко-сирийский комитет, - Вопросы арабистики (сборник статей): Ереванский государственный университет, факультет востоковедения, кафедра арабистики. Ереван, Айастан, 1996, с. 43-54.
17. The Political Party and Genocide: The Committee of Union and Progress at the Threshold of the "Final Solution" - Problems of Genocide: Proceedings of the International Conference on „ Problems of Genocide“, April 21-23, 1995,

- National Academy of Sciences, Yerevan, Republic of Armenia. - Toronto: The Zoryan Institute of Canada, 1997, p. 191- 200.
18. Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ., - Իրան-Նամե. Արևելագիտական հանդես, 1997, 4-5-7, էջ 7:
19. Ցեղասպանության ակունքները միջնադարյան Օսմանյան կայսրությունում. 1, - Պատմա - բանասիրական հանդես, 1998, 1-2 (147-148), էջ 105-112:
20. Արդուլ Համիդի հակահայկական քաղաքականության գիտական բնութագրման հարցի շուրջ, - ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի 30-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսների ժողովածու, Երևան, ԵՊՀ, 1998, էջ 7-8:
21. Турецкие оппозиционные партии и национальный вопрос в Османской империи в 1908-1909 годах (анализ партийных документов), - Вестник общественных наук, АН Арм.ССР, 1998, 2, с. 80-90.
22. К вопросу о методологии сравнительного исследования геноцида армян и геноцида евреев, - Страны и народы Ближнего и Среднего Востока, XVIII, Институт востоковедения НАН РА, Ереван, Зангак-97, 1999, с. 49-54.
23. Die Armenier und der Prozess der politischen Modernisierung des Osmanischen Reiches im 19. Jahrhundert - aktive Teilnehmer oder Zaungaeste? - DAVO-Nachrichten, 2000, Heft 11, Februar, S. 24.
24. Армянские либералы и конституционное движение в Османской империи: 1867-1876 гг., - Страны и народы Ближнего и Среднего Востока, XX, Институт востоковедения НАН РА, Ереван, Зангак-97, 2001, с. 125-142:
25. Turkey and Eurasia in the Aftermath of the September 11 Tragedy: Some Observations on Geopolitics and Foreign



- Policy, – Caucasus and Central Asia Newsletter: The Caucasus and Central Asia Program at the University of California, Berkeley, 1, Winter 2001-2, p. 3-8.
26. Թուրքիայի քաղաքականությունը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո (2001թ.), – Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, I, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, Զանգակ-97, 2002, էջ 89-103:
  27. Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания, - Страны и народы Ближнего и Среднего Востока, XXI, Институт востоковедения НАН РА, Ереван, Зангак-97, 2002, с. 147-155:
  28. Армяно-турецкие отношения: попытка теоретической интерпретации с позиций реалистической школы (Вводные замечания), – Ориентиры внешней политики Армении. Сборник аналитических статей под редакцией Гаянэ Новиковой. Ереван: Антарес, 2002, с. 39-48.
  29. 11 Eylül trajedisi sonrası Türkiye ve Avrasya: Jeopolitik ve dış siyaset üzerine bazı gözlemler, – Teori, Nisan 2002.
  30. “Հնարավոր չէ 21-րդ դարում պատկերներ ստեղծել հարևանների միջև...”. Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում (2001-2003 թվականների հոդվածներ ու հարցազրույցներ, Երևան, Զանգակ-97, 96 էջ:
  31. Հայերը և Օսմանյան կայսրության արդիականացման գործընթացները (XIX դ. 30-70-ական թթ.), – Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները. Զեկուցումների դրույթներ. Սեպտեմբերի 15-20-ը, 2003, էջ. 74-75:
  32. Armenien & Turkei - Zwischenstaatliche Beziehungen / Eine Interpretation. - ADK, 119/120, Jg. 2003, Heft 1 & 2, S. 23/24.
  33. On the Ideological Substantiation of Turkey’s Regional Policy: Concept of Eurasia. – The South Caucasus: Regional Security and Stability: Conference Papers. Editor: Gayane Novikova, Yerevan: “Amrots Group”, 2004, pp. 63-70.
  34. Возвращение “серых волков”: Консервативная партия в политической жизни Турции (1983-1985). - Страны и народы Ближнего и Среднего Востока, XXIII, Институт востоковедения НАН РА, Ереван, Зангак-97, 2004, с. 254-276.
  35. Թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876 թ. բուլղարական ապստամբությանը. նոր մոտեցում. – Արևելագիտական ժողովածու, հատոր V: Խմբագրությամբ Գուրգեն Մելիքյանի, Երևան: Իրանագիտական Կովկասյան Կենտրոնի հրատարակչություն, 2004, էջ. 310-318:
  36. Armenian-Turkish Relations: From Interstate Dispute to Neighborliness. - Center for Policy Studies, Central European University and the Open Society Institute, 2003-2004 IPF Program.
  37. Reunification of Cyprus: Another Failure. - Spectrum: Center for Strategic Analysis, May 26, 2004.
  38. Реформы в Османской империи и армяне (кон. 18-го – 70-е годы 19-го веков). - International Congress of Asian and North African Studies, Moscow, 2004: Abstracts: I. Moscow, 2004, p. 283-284.
  39. South Caucasus: Some New Trends and the Role of Turkey. - The Agonist: thoughtful, global, timely, August 30, 2004.
  40. Հայ-թուրքական սահմանի նշանակությունը. – Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն. Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան, 2005, էջ 63-67.



41. A Test of Maturity: The Genocide Factor in Armenia's Foreign Policy. - In Depth Analysis, Policy Papers of Center for Strategic Analysis Spectrum, Issue No.2, Yerevan, 2005, 10 p.
42. The Concept of Eurasia and Turkey's Regional Strategies. - Global Politician, Brooklyn, NY, USA, May 24 2005.
43. Russia and Turkey in South Caucasus: A Geostrategic Armistice. - Global Politician, Brooklyn, NY, USA, June 6 2005.
44. Նախացեղասպանություն (Proto-Genocide). տեսության և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով). - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ III, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. Ռուբեն Սաֆրաստյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան: Լուսաբաց հրատարակչատուն, 2005, էջ 26 – 47:
45. The Genocide Issue as a Factor of Armenia's Foreign Policy. – Turkish and Ottoman Studies III, Armenian National Academy of Sciences, Institute of Oriental Studies, Yerevan: Lusabats, p. 95-110.
46. Проблема признания геноцида во внешней политике Армении: разноуровневый анализ. – 21-й век: информационно-аналитический журнал фонда “Нораванк”. 2005, 1, с. 3 – 11.
47. Դիտավորության հանգամանքի տեղը ցեղասպանության համապարփակ հայեցակարգում. – Մեծ Եղեռն 90. Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2005, էջ. 18 – 23.
48. Die armenischen liberalen und die konstitutionelle Bewegung im Osmanischen Reich, 1867 – 1876. – Osmanismus, Nationalismus und der Kaukasus: Muslime und Christen, Türken und Armenier im 19. und 20. Jahrhundert. Hg. von Fikret Adanir und Bernd Bonwetsch. Wiesbaden: Reichert Verlag, 2005, S. 153 – 164.

49. Turkey, the European Union and Armenian-Turkish Relations in June 2005: Discussing the Geo-Strategy. – In Depth Analysis, Issue #5: Turkey in the New Geopolitical Situation: Expectations in Armenia. Special Edition, September 2005, p. 5 - 11.
50. Օսմանյան կայսրությունում ցեղասպանության քաղաքականության ակունքների հարցի շուրջ. հակազդեցություն 1876թ. բուլղարական ապստամբությանը. – Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր: Գիտական աշխատություններ, 10-11, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ: Երևան, 2005, էջ 65 – 77:
51. Ցեղասպանության ծագումնաբանության հարցի շուրջ. դիտավորության հանգամանքի կիրառումը. – Հայոց Մեծ Եղեռն 90: Հոդվածների ժողովածու: Երևան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 2005, էջ. 366 – 378:
52. Օսմանյան կայսրություն. ցեղասպանության երկու ծրագիր, - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXIV, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան: Զանգակ-97, 2005, էջ. 236 – 254:
53. Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառաջնավարական զինադադար. – 21-րդ դար. տեղեկատվական – վերլուծական հանդես, 2005, 4(10), էջ. 34 – 46:
54. Турция и Кипрская проблема: эпизоды “большой игры”. – 21-й век: информационно-аналитический журнал, 2005, 2, с. 54 – 66.
55. Геостратегическое сотрудничество между Русия и Турция в Южен Кавказ. - Геополитика и Геостратегия, София, 2005, Година втора, Брой 6, с. 94 - 97.
56. Թուրքիան, պանթուրքիզմը և Հայ Դատը. Թուրքիայի պետական-պաշտոնական դոկտրինան, այլախոհ մտավոր



- րականության և կազմակերպությունների դիրքը: Թուրքիան, Եվրամիությունը և Հայոց ցեղասպանությունը. - Հայ Դատն այսօր. 3-րդ Խորհրդածողով: Թեհրան. Հայ Դատնի Թեհրանի հանձնախումբ, 2005, էջ. 46 - 58:
57. Եվրամիություն, Թուրքիա և Հայաստան. պատմական աղերսներ և իրական շահեր. - "Ալիք" օրաթերթի հավելված, 31 դեկտեմբերի 2005, 75-րդ տարի, թիվ 279, էջ. 175 - 179:
58. Թուրքիան և Կիպրոսյան հիմնախնդիրը. "մեծ խաղի" դրվագներ, - 21-րդ դար, տեղեկատվական - վերլուծական հանդես, 2006, 2 (12), էջ. 74 - 87:
59. Turkey: Opposition within the Ruling Party, - Global Politician, Brooklyn, N.Y., USA, 2 August 2006.
60. Թուրք - հայկական պատերազմի շրջանի թուրքական վավերագրեր (1920թ. նոյեմբեր). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXV, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան: Զանգակ-97, 2006, էջ 412-442:
61. Armenians and Turks: Contacts in History from Seldjukides Times up to the End of the 19th Century. - Turkish and Ottoman Studies IV, Edited by R. Safrastyan, Institute of Oriental Studies, Armenian National Academy of Sciences, Yerevan: Asoghik, 2006, p. 197 - 206.
62. "Քուլեիի իրադարձության" աղբյուրագիտության հարցեր. ներգրավելով հայկական մամուլի հաղորդագրությունները. - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ IV, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. Ռուբեն Սաֆրաստյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան: Ասողիկ, 2006, էջ. 270 - 277.
63. In Search of a New Role in the Middle East: Turkey and Aggravation of the Middle East Conflict in Summer 2006. - Regional Security Issues: 2006: Collection of Articles. Edited by Dr. Gayane Novikova, Co-Edited by Sergey Sargsyan,

- Translated by Ashot Melyan. Yerevan: Amrots group, 2006, p. 56 - 60.
64. Россия и Турция на Южном Кавказе: динамика геостратегического противостояния. - Кавказ без конфликтов и терроризма: диалог цивилизаций на Кавказском перекрестке. Сборник материалов I Международной конференции. Ереван: Айастан, 2007, с. 159 - 165.
65. Turkey as Mediator and Peacekeeper during Middle East Conflict: Analyzing Events of Summer 2006. - Global Politician, Brooklyn, N.Y., USA, June 13, 2007.
66. Modernizing Ottoman Policy towards Christian Subjects during Tanzimat: Concept of Merger: Paper Represented to the International Conference of Asian and North-African Studies ICANAS-38, Ankara, September 10 - 15, 2007. Yerevan, 2007, 19 p.
67. Patterns of Ottoman Politics towards Christians during Tanzimat: From Equal Rights to Ottomanization and to Genocidal Intent. - Journal of Oriental and African Studies, Athens, 2007, Volume 16, p. 247 - 270.
68. Օսմանյան կայսրությունում 1859 թ. դավադրության բնույթի հարցի շուրջ. - Գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում: Դասախոսների գիտական զեկուցումների ժողովածու՝ նվիրված համալսարանի 15-ամյակին /պրակ երրորդ/: Երևան: Երևանի "Հրաչյա Աճառյան" համալսարան, 2007, էջ 154 - 159:
69. Օսմանյան կայսրության 1915թ. "Տեղահանության օրենքը". - Պատմա - բանասիրական հանդես, 2007, 2 (175), էջ 72 - 81:
70. "Kuleli Incident": Armenian Sources. - Armenian Folia Anglistika: Armenian Association for the Study of English, Reviewed International Journal, Yerevan, 2007, 2 (4), p. 174 - 180.



71. Ottoman Policy Towards Christians During Tanzimat: New Tendencies. – Turcic and Ottoman Studies V. Editor: Ruben Safrastyan, Yerevan: Institute of Oriental Studies, Armenian National Academy of Sciences, 2008, p. 56 – 77:
72. Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը. – Վեմ համահայկական հանդես, 2009, թիվ 1 (26), էջ 48-62:
73. Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում. - Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտահետազոտական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ. Գիտական զեկուցումների ժողովածու, Երևան, Արևմտահայերի ազգային համագումարի նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտե, 2009, էջ. 150 – 155:
74. Борьба Турции против международного признания и осуждения геноцида армян на данном этапе: новая тенденция. - Основополагающие правовые требования западного армянства (Международная научно-практическая конференция), Кипр-Никосия, 18-19 апреля 2008 г.: Сборник научных докладов. М.: ЮниПресс СК, 2009, с. 161 – 166.
75. Turkey's Struggle against International Recognition and Condemnation of the Armenian Genocide at the Current Stage: A New Tendency. – The Main Issues of Western Armenian's Claims (International Research and Practical Conference), Cyprus, Nicosia, April 18 – 19, 2008: Collection of Conference Papers. Yerevan: International Organizing Committee for the Preparation of the Western Armenian National Congress, 2009, p. 148 – 153, 278 – 279.
76. Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, Լուսակն, 2009, 248 էջ:
77. Օսմանյան պետություն. ծագումնաբանության որոշ առանձնահատկություններ, - Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ VI, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ, Երևան, Լուսակն, 2009, էջ. 20 – 31:
78. 1915 թ. “Տեղահանութեան օրէնքը”. կարեւոր ճշդումներ, - Ազդակ Բացառիկ, 2010, 83-րդ տարի, թիվ 244 (23349), էջ 96 – 104:
79. Հայոց ցեղասպանության քեմալականների ծրագիրը, - Ազդակ, Բացառիկ, 2010, 24 ապրիլի, էջ 86 – 93:
80. Հայոց ցեղասպանության համիդյան ծրագիրը, - Հայոց պատմություն, հ. III, Նոր Ժամանակաշրջան (XVII դարի առաջին կես - 1918 թ.), զիրք առաջին (XVII դարի առաջին կես – XIX դարի վերջ), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Չանգակ – 97, 2010, էջ 506 – 510:
81. El plan estatal del genocidio de los Armenios: Análisis comparado de tres documentos turcos, - <http://www.cna.org.ar/wp-content/uploads/2010/03/VEM-II.pdf>
82. Ottoman Empire: The Genesis of the Program of Genocide (1876 - 1920), Yerevan: Zangak-97, 2011, 175 p.
83. Օսմանյան կայսրությունում 1890 թթ. կեսերի Հայկական կոտորածների գիտական գնահատականի հարցի շուրջ, - Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ VII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ, Երևան, Լուսակն, 2011, էջ 134 – 140:
84. Genocidal Programs against the Armenian People, - Raum der Begegnung: Perspektiven der Bildung, Forschung und Lehre im Spannungsfeld multikultureller und multireligiöser



- Gesellschaft: Festschrift für Kurt Willibald Schönherr, Herausgegeben von Friedrich Erich Dobberahn und Peter Schierz, Wambach: via verbis verlag, 2011, S. 180 – 212.
85. Ottoman Empire: Program of Genocide (1915), - The Crime of Genocide: Prevention, Condemnation and Elimination of Consequences: Proceedings of International Conference, Yerevan, December 14-15, 2010, Yerevan: Ministry of Foreign Affairs, 2011, p. 204-216.
  86. Empire Ottoman: la genèse du programme de génocide (1876-1920), Erévan: Zangak Publishing House, 2012, 232 p.
  87. Թուրքիայում աշխարհաքաղաքական մտքի ծագումնաբանության հարցի շուրջ. Մուսթ Իլհանի “Վտանգի տեսությունը”, - Աշխատանքային տետրեր, 2012 թ., հմ. 3, էջ 110-115:
  88. Middle Eastern Scholar as Cultural Diplomat: Helping to Transform The Levant into a More Secure Region, - Bucharest Forum: *Levant*, Cradle of Cultural Diplomacy. Rediscovering the Mediterranean, Bucharest, May 23-25, 2013, Academy for Cultural Diplomacy, Berlin, p. 34.
  89. Les programmes du génocide dans l'Empire Ottoman, 2<sup>ème</sup> édition revue et corrigé, Erévan: Zangak Publishing House, 2013, 232 p.
  90. Թուրքական պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության նախապատրաստման մասին, - Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով “Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները”, 17-19 հոկտեմբերի, 2013. Զեկուցումների դրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ “Գիտություն” հրատարակչություն, 2013, էջ 287-288:
  91. Геостратегия Турции и Южный Кавказ, - Материалы международного стратегического форума “Динамика региональной безопасности на Южном Кавказе (29-30

- ноября 2012г.): Рабочие тетради, приложение к военно-научному журналу “Айкакан банак” Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА, специальный выпуск, 2013, Ереван, 2013, с. 135-144.
92. Les programmes de génocide du peuple arménien dans l'Empire Ottoman, - Journal of Armenian Studies: International Review of Armenian Studies, National Academy of Sciences of RA, Yerevan : 2013, N 1 (1), p. 107-134.
93. Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915 թ. մայիսի 30), - Հայագիտության հարցեր. հանդես, Երևանի պետական համալսարան, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, 201-4, 1, էջ 5 – 19:
94. Modern Conservatism as a World Perception and Political Movement: The Case of American Neocons and Paleocons, - Wisdom, The Armenian State Pedagogical University after Khachatour Abovyan, 2014, 1(2), p. 96 – 102.
95. Թուրքական պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության նախապատրաստման մասին, - Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով: Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: 17-19 հոկտեմբերի, 2013: Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2014, էջ 473-475:
96. Հայկական Հարցը ներկա փուլում և Թուրքիան, - Քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողով. Համաժողովի նյութեր 19-20. 11. 2012, Երևան, ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2014, էջ 235-239:
97. Az oszmán politika keresztényellenes mozzanatai a tanzimat reformok idején: az egyenjogúságtól az oszmánosításig és a népirtás tervéig, - Rubicononline, 2015/5-6, - [http://www.rubicon.hu/magyar/oldalak/onlineplusz\\_2015\\_5\\_6/](http://www.rubicon.hu/magyar/oldalak/onlineplusz_2015_5_6/)



98. Analysis of the Turkish Program of the Armenian Genocide, - Fundamental Armenology: Journal in the English language, 2015, Issue 1, - <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/10.pdf>
99. The Decision of the Ottoman Government on the Deportation of Armenians (May 30, 1915), - Fundamental Armenology: Journal in the English language, 2015, Issue 1, - <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/103.pdf>
100. Россия и армяне Кавказа и Ближнего Востока: вопросы геостратегии, - Религия и политика на юге России: аспекты взаимодействия (Международная конференция, г. Москва, 8 июня 2015 г.), Москва: Научное общество кавказоведов, ИП Лобанов В.И., Книжный мир, 2015, с. 49-56.
101. Ottoman Empire: The Genesis of the Program of Genocide (1876 - 1920), Second Edition, Yerevan: Zangak-97, 2011, 175 p.
102. Deux programmes ottoman de génocide (1876 et 1915) : Un analyse comparative, - Du Génocide des Arméniens à la Shoah: Typologie des massacres du XX siècle. Sous la direction de Gérard Dédéyan, Carol Iancu, Toulouse: éditions Privat, 2015, p. 185-208.

*Ուսումնամեթոդական գրականություն, դասագրքեր*

1. Օսմանյան կայսրություն. ցեղասպանության երկու ծրագիր (1876 և 1915 թթ.): Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: Լուսակն, 2007, 46 էջ:
2. Համաշխարհային պատմություն. Նորագույն շրջան: Դասագիրք տասներկուամյա հանրակրթական դպրոցի համար: IX դասարան: Երևան, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Ջանգալ – 97, 2008, 192 էջ (Համահեղինակներ՝ Ա. Ստեփանյան, Ա. Նազարյան):

3. Համաշխարհային պատմություն. 10 ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, Երևան, Ջանգալ – 97, 2009, 176 էջ (Համահեղինակներ՝ Ա. Քոսյան, Ե. Գրեկյան, Գ. Հարությունյան, Վ. Ղլեյյան):
4. Համաշխարհային պատմություն 11 ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, Երևան, Ջանգալ – 97, 2010, 160 էջ (Համահեղինակներ՝ Վ. Ղլեյյան, Վ. Պետրոսյան, Ա. Նազարյան):
5. Համաշխարհային պատմություն 11 հումանիտար հոսք, Երևան, Ջանգալ – 97, 2010, 256 էջ (Համահեղինակներ՝ Գ. Հարությունյան, Վ. Ղլեյյան):
6. Համաշխարհային պատմություն. Նոր դարեր. Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար. 8-րդ դասարան, Երևան, Ջանգալ, 2013, 176 էջ (Համահեղինակներ՝ Ա. Ստեփանյան, Ա. Նազարյան):
7. Թուրքիայի Հանրապետության պատմություն. Բուհական դասագիրք, պատասխանատու խմբագիր Ռուբեն Մաֆրաստյան, ԵՊՀ-ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, 386 էջ (Համահեղինակներ՝ Ռ. Մելքոնյան, Ա. Դումանյան, Վ. Տեր-Մաթևոսյան, Հ. Չաքրյան, Ա. Հովհաննիսյան):



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**  
**(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)**  
**№ 10**

**Էջադրող՝ Ա. Վարդանյան**  
**Սրբագրիչ՝ Ա. Վարդանյան**  
**Կազմի ձևավորող՝ Մանյա Լալայան**

Չափեր՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 12 տպ. մամուլ:  
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

---

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում  
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28  
E-mail: [vmv\\_print@yahoo.com](mailto:vmv_print@yahoo.com)  
[www.vmv-print.am](http://www.vmv-print.am)